891.99
Ц-81

ԱՏՐՊԵՏ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ Թ.



ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ, ՊԱՏԿԵՐՆԵՐ, ՊԱՏՄՒԱԾՔՆԵՐ
ԵՒ ՎԻՊԱԿՆԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
ՏՊԱՐԱՆ
«ՇԻՐԱԿ»
ՌՉԺԱ
(118)

69. Շխենց, Նախիջևան 1898 թ.
70. Շշմածներ, Ախուրեան № 40 1906 թ.
71. Ոսկեզեղուն մաճ, » № 42-46 1910 թ.
72. Ոսկեորդին, Գաղափար № 1-2 1894 թ.
73. Որդեսէր հայր, Թիֆլիս 1911 թ.
74. Պարտիք, Զ. Հայրենեաց 1902 թ. № 163/170 և Թաւրիզ 1905 թ.
75. Ջաւահիր, Թաւրիզ 1905 թ.
76. Սարդանաբալ, Ապագայ 1907 թ. № 24 և Ալէքս. 1911 թ.
77. Սալարենց Սամսոնը, Ախուրեան № 88 1908 թ.
78. Սարբազ, Տարազ 1903 թ. № 3—4 և Թիֆլիս 1911 թ.
79. Սպանդանոց, Ախուրեան 1907 թ. № 11 և Ալէքս. 1911 թ.
80. Սեւ քաղաք, Տարազ 2—25 1898 թ.
81. Սոֆրա, 1893 թ. Մուրճ 7/8 և Թաւրիզ 1905 թ.
82. Վեզուֆ, Ախուրեան 1908 թ.
83. Վիճակ, Թաւրիզ 1906 թ.
84. Վիշապ, Լումա 1905 թ. № 9—10 և Ալէքսանդր. 1911 թ.
85. Տոյժ, Ախուրեան № 83 1908 թ.
86. Փաշա, Տարազ № 32—34 և Թաւրիզ 1905 թ.
87. Փարիսեցի, Ախուրեան № 26—30 և Թիֆ. 1911 թ.
88. Վիւքեալայի գաղտնիքը, Տարազ 1899 թ. և Թաւրիզ 1905 թ.
89. Քիւք, Ախուրեան № 65—66 և Թիֆ. 1911 թ. 1910 թ.
90. Քուլնաբէկի, Տարազ 1893 թ. № 14—16 և Թաւ. 1905 թ.
91. Քոռ-Եղիկ, Թիֆլիս 1898 թ.
92. Օրինական ժառանգ, Թաւրիզ 1905 թ.
1910 թ.
93. «Надѣжда» расказъ. Баку № 24

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԵՒ ԶԱՓ...

94. Ջուշան, Ս. Պե... 1890 թ.
95. Սարրաֆ, Թ... 1893 թ.
96. Կուռք, Ա... № 2—8 1897 թ.
97. Տան գանգատը ... 1...3 թ.
98. Կամպիրը ու կրանները » № 2
...առն ու գազանները, » № 10
100. Ողորմած հարսը »

891.99
Ա-81
01 JAN 2009
19 NOV 2010

Թ.

ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

21164
21 FEB 2013
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3842-48

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
1. Աւագների գոմերը	8
2. Կուռքապանդ	15
3. Սարդանապալ	27
4. Կոյրերի և համրերի կրկէս	40
5. Գեներալ Աբբա	58
6. Բոյկոտ	72
7. Գապուս	82
8. Սպանդանոց	86
9. Ասրեկատուր	94
10. Դահիճ	100
11. Լիա	111
12. Ռաքէլ	129
13. Հիւանի Շիրազի	238
14. Բարեկենդան	249
15. Վիշապ	253
16. Արեգաթող	283
17. Ջաւակ	289
18. Հայրուրաց	292

891.99
Ա-81

ԱՏՐՊԵՏ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թ. ՀԱՏՈՐ

ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

ՊԱՏՄԵՐՆԵՐ ԵՒ ՎԻՊԱՍՆԵՐ

ԱՐՏԱՏՊՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԼՐԱԳՐՆԵՐԻՑ ԵՒ ՀԱՆԴԷՍՆԵՐԻՑ

Տպարան «ՇԻՐԱԿ» Ալէքսանդրապոլ
1911

ԱՏՐՊԵՏՆ ՈՒՍՈՒՑԻՉ

1881 ԿԱՐՍՈՒՄ *1888*

Ա.

ԱՒԱԳՆԵՐԻ ԳՈՄԵՐԸ

«Ախուրեան» № 1—1907 թ.

— I —

ՈՍԿԻԱՄԱՅՐԸ կորցրել էր քունը, որովհետև նկատում էր, թէ ինչպէս օրէցօր աճում էր Արամազդի սէրը դէպի Երկրամայրը։ Սրա զաւակ Վահագնը գրաւել էր Աստուածահօր սիրտը մինչ այն աստիճան, որ իր սիրասուն դուստր Անահիտին ուզում էր կնութեան տալ այդ հողածնին։ Ոսկիամայրը առաւօտից մինչև իրիկուն միջոցներ էր խորհում ու մտածում Աստուածահօր քաղցր աչքից գցել Վահագնին, որը իր քաջագործութիւնով և խորամտութիւնով գերազանցում էր եղբայրակիցներին։ Ամեն օր նորանոր հերոսական գործերով սքանչացնում և ապ-

շեցնում էր Վահագը անմահներին ուշիմ և օգտաշատ գործերով։

Այս դառն մտածութեան մէջ ընկղմած միջոցին, Ոսկիամօրը ներկայացան Դպրեվանքի մշտավառ ճրագների վերատեսչուհիներն և համբուրելով Նրա քղանցքն ասացին.

—Բախտի և երջանկութեան պարգևատու, աղերսում ենք մեզ ազատել Աւագների դժոխային նախանձներից, որոնցով լցրել են մեր վանքի կողքի Գոմերի ձորը և մեզ սպառնում են հեղձել այդ գարշահոտով։ Ահա եօթանասուն դար է, այնքան աղբ ու նախանձ են կուտակել Գոմերի ձորում, որ ամբողջ հովիտն ու դաշտը Արագածից մինչև Զարիշատ բռնել է գարշահոտը։ Եթէ անմահներդ որևէ միջոց ձեռք չառնէք, մենք ամբողջապէս հոտահեղձ կը կոտորւենք և անմահութեան նւիրւած ջահերի սրբազան հուրը բորբոքող ու հսկող չի մնալու ո՛չ միայն Դպրեվանքում, այլ ամբողջ դաշտում։

—Ի՞նչի չէք բողոքում Արամազդին, ինչի չէք թախանձում, որ նա բարձրագոյն կամքովը մի անճառելի զօրեղ ձեռք ուղարկէ մաքրելու Գոմերի ձորը, ասաց ներքնապէս ուրախացած Ոսկիամայրը։

—Մենք շատ ենք թախանձել, բայց մեր աղերսը մնացել է անուշադիր։ Դուք, Ոսկիամայր, որ ձեր անհուն շնորհներով լիացրել էք երկնքի և երկրի հրեշտակների և մարդերի դասերը, կեանքն ու կենդանութիւնը անսպառ սփռել էք ամեն կողմ, մի՛ խնայէք, երանութեան եղջիւրի բերանը դարձրէք և՛ մեր կողմը։ Դպրեվանքի քրմուհիներն ամբողջապէս կը փրկւեն և կը բարեբարւեն ձեր անսահման բարութիւնից, եթէ...։

—Ո՛չ, դուք, սիրելի դստրիկներ, մշտավառ կրակիս պաշտօնուհիներ, Աստուածահօրը ներկայացէք հանդիպակաց հովիտում, նա իր գահաւորակին նստած, լսում է աղերսաւորներին։ Կարապե՛տ, սրանց առաջնորդիր Մշտադալար դրախտը։

Վերատեսչուհիներն հետևեցին Կարապետին, ներկայացան Արամազդին և նոյն խնդիրը կրկնեցին։ Ոսկիամայրը չը կարողանալով կրքերը զսպել, նրանց ետևից մտաւ Մշտադալար դրախտը, լսելու Աստուածահօր վճիռը։

Արամազդը յուզւած լսեց աղերսաւորներին և երբ մոլորւած չէր իմանում ի՛նչ պատասխանել, Ոսկիամայրը առիթից օգտւելով մտածեց տապալել Վահագնին և Նրա մօրն ու ասաց.

—Ուղարկի՛ր քաջ Վահագնին Գոմերը մաքրելու և իմ մշտավառ ճրագների սպասուհիներին ազատելու այն դժոխային նախանձքից, որը սպառնում է ոչնչացնել Շիրակի դաշտում ամեն տեսակ կեանք։

—Գնացէք, ասաց Արամազդը վերատեսչուհիներին, Գոմերի աղբը կը մաքրւի և դուք կազատւէք Աւագների բռնութիւնից ու ապականութիւնից։

—Կարապե՛տ, կանչի՛ր Վահագնին, ասաց Արամազդը, առանց տեղից շարժւելու։

II

Արամազդը նստած էր իր եռաստիճան գահի վրայ, գաւազանը ձեռքին, աչքը գետին յառած ու խոհուն դէմքով ասում էր խօսակցին, որ առաջը կանգնած էր գրահաւոր և ուշիմ նայւածքով։

—Սիրելի՛ Վահագն, ես համոզւած էի քաջու-

թեանդ վրայ, գիտէի, որ երակներումդ հոսում է հօրդ արիւնը։ Փաստերով ցոյց տուիր խելամտութիւնդ, կատարեցիր պարբերաբար այն բոլոր յանձնարարութիւնները, որոնք առաջարկեցի, այժմ մնում է, որ խոստումս կատարեմ։ Ինքը, Ոսկիամայրն էլ, ինչպէս նկատում եմ, արդէն հաշտուել է աղջկաս՝ Անահիտին քեզ տալու մտքի հետ։ Բայց ես այս րոպէիս մնացել եմ տարակուսած։ Արագածի ստորոտում, Ծիրակի գաւառում, մեր Աւագները դարևոր աղբով ու ապականութեամբ լցրել են Գոմերը, որը նեխւել, բորբոքւել, սպառնում է բնաջինջ անել ժողովրդին։ Ահաւոր է գործը, բայց թշւառ է ժողովուրդը, անհրաժեշտ է նրան փրկել այդ նեխուած ապականութիւնից, Գոմերն ազատել Աւագների աղբիւսից։ Քեզ հրամայում եմ, գնա, մաքրիր այդ Գոմերը, տար ու թափիր ծովն այդ նեխուածքը. ազատիր ինձ մտատանջութիւնից և այն ժամանակ եկ հարսանեկան ուրախութիւնդ կատարենք։ Արժանացիր յաղթական պսակիդ և վրանդ տար մեր դուստր Անահիտին։

—Տէր, ասաց Վահագնը բոցավառուած աչքերը Արամազդին յառելով,—թէև կամքդ անդառնալի և սուրբ է ինձ համար, բայց ներիր, որ յանդգնում եմ վիշտս չծածկել։ Հայր, բոլոր հրամաններդ արդէն կատարել եմ, իսկ երբ եկել եմ խոստմանդ համաձայն երջանկութիւնս ստանալու, Դուք հակառակորդիս թախանձանքին զիջանելով, հրամայում էք ինձ եօթանասուն դարի ապականութիւնը մաքրել։ Տէր, այդ նեխուածքի դարշահոտութիւնը թէև սպառնում է թունաւորել կեանքս, բայց ապացուցանելու համար, որ ընկճուող չեմ հակառակորդներիս թակարդից, գնում եմ այն ահաւոր աղբակոյտերը քանդելու, Կասպիա-

կան կրելու և թափելու։ Միայն խոստացիր ինձ, Հայր, որ սրանից յետոյ էլ չպիտի լսես թշնամիներիս և չպիտի առաջս բարձրացնես նորանոր պատնէշներ։

—Սա իմ վերջին յանձնարարութիւնն է, ասաց Արամազդը և նշան տուեց, որ ճանապարհ ընկնի քաջը, յետևից շարունակելով.

—Դարձիդ քեզ պիտի դիմաւորէ Անահիտը, որի հետ կներկայանաք օրհնութեանս։

Բայց Վահագնի քայլերը ծանրացան, նա որքան առաջ էր գնում, այնքան թուլանում էին նրա ջղերը և չէր իմանում՝ թէ ինչ հնարով այն ահաւոր Գոմերը մաքրէ դարևոր ապականութիւնից։

Եւ նա տխուր սրտում մտաւ իր վրանը, ուր իրեն ծնող մայրը գառն էր խորովել քաջին կերակրելու համար։

—Ի՞նչի ես տխրել, իմ աչքերի լոյս, ասաց սրտադող եղած մայրը,—ի՞նչ է պատահել, էլի խոստումը դրժեց Հայրդ։

—Ա՜հ, մայրի՛կ, մայրի՛կ, ես քանի՛ տարում պիտի կարողանամ մաքրել Աւագների ապականած Գոմերը և ապականութիւնը ծովը կրել, որ կարողանամ մուրազիս հասնել։

—Այդ այն չարանախանձ Ոսկիամօր խարդաւանանքն է, սիրելիս, ասաց մայրը քնքշաբար,—բայց ինչի՞ ես յուսահատուել, ի՞նչ մեծ գործ է Գոմերը մաքրելը։

—Եօթանասուն դարի ապականութիւնն ու աղբը ես ինչպէս կարող եմ շուտով մաքրել և գնալ մուրազիս հասնել։

—Կարող ես, զաւակս, կարող ես, մի յուսահատուիր, նստիր հացդ կեր և հնար մտածիր։

Մի յուսահատուիլ, Արամազդը գիտէ, որ հողածինն աւելի հնարագէտ միտք ունի, քան թէ երկնային հոգիները և այդ բանը փորձով ուզեցել է քո ձեռքով հասկացնել վերնականներին։

Երբ նախաճաշն էր կատարում քաջը և անհամբեր նայում մօր աչքերին, վերջինս ասաց.

—Գնա, Ախուրեանի առաջը կտրիր, ճամբէն փոխիր, տար Գոմերի ձորով։ Վեր առ այս հորսելին և երբ Ախուրեանի ջուրը կհասնի Գոմերի առաջ— աղբակոյտերին, խառնիր գետի հոսանքին աղբն ու ապականութիւնը, թող տանի ու թափէ Կասպիական ծովը։

Այս խօսքերը հեռացրին Վահագնի ճակատից կուտակուած ամպերը։ Նախաճաշը նա կիսատ թողեց, թողեց Բիւրականում մօրը, անցաւ Սուկաւէտ, մտաւ Շիրակ, հասաւ Ախուրեանի ձորը, նայեց, զըննեց։ Ահաւոր ժայռերը քանդեց, կրեց, լցրեց այնտեղ, կտրեց ճանապարհը և ջուրը դարձրեց դէպի Գոմերի ձորը։ Երբ ջուրը Գոմերը լցւեց, թէև շատ կատաղեցին Աւազները, շատ մրթմրթացին, բայց հնար չկար, հեղեղից վախեցան, թողին հեռացան։

Իսկ Վահագնը հորսելին ձեռքը, մտաւ Գոմերի մէջ, քանդեց աղբակոյտը, Ախուրեանի հոսանքին տւեց ապականութիւնը, քշեց դէպի ծով։ Աղբակոյտը ջրի յորձանքի մէջ լուծւած անվերջ գլորւեց ու գնաց դէպի Կասպիական։

Երբ Գոմերն ազատեց աղբից, հորսելին ձեռքին, յոգնած ու խոնջած գնաց, գտաւ Անահիտին, միասին ներկայացան Արամազդին, որն էլ ականջ չդնելով Ոսկիամօր քսութիւններին, օրհնեց նրանց և ճանապարհ դրեց դէպի Բիւրական։

Բ.

ԿՈԽՈՒՔԱՍՊԱՆԴ

Լեգէնդա

«Ապագայ» № 7 — 1907 թ.

Եդեմի պարտիզում Ոսկիամայրը կանգնել էր Արամազդի գահի առաջ, գոհարակուռ վարսակալով զարդարուած։ Ոսկեգոյն մազերը ծփում էին ուսերի, թիկունքի վրայ և կապոյտ աչերը յառած Լուսահօր դէմքին, մռայլ կնճիռները այլափոխում էին նորա նայուածքը, որից նկատելի էր, թէ աշխարհի Տիրուհին սրտատրոփ սպասում էր Աստուածահօր վճռին։

Արամազդը արձանացած ամփոփուել, ընկղմել էր իր անհուն խոհերի ովկիանը և խորհրդաւոր լռութեամբ էլ աւելի բորբոքում էր Տիրամօրը, որ զըննում էր սաստիկ յուզուած և տատանումներով։ Անցոք ժամանակի անիւները անվերջ պտոյտներով այնպիսի յուսակտուր տեսարաններ էին առաջացրել, որ աշխարհի զանձերի պարգևատուն մոլորուել, մնացել էր։ Եւ այդ բոլորից այնպէս արմացել ու քարացել էր Լուսահայրը, որ չէր սթափւում ցնորքներից։

Իսկ Ոսկիամայրը չէր էլ յանդգնում այս վճակից սթափեցնել Երկնի և Երկրի դատաւորին։

Հէնց այս միջոցին Թիլ աւանից պատգամաբերը հասաւ Եդեմ, Արամազդի ոտքերի տակ թափեց աստւածների անդրիների ջարդուած գլուխները և Ոսկիամօրը երկրպագելով ասաց ցած ձայնով.

Կամախի բովերի ուրացող բանւորները գիշերս փշրեցին այս անդրիները։ Այդ անկրօնների դէմ բողոքում են Երիզայի սրբակրօն քրմերը և բարեպաշտ իշխանները։ Ողբում են իրանց վիճակը քրմուհիներն ու իշխանուհիները և աղերսում են Ամենազօր հօր օգնութիւնը և վրէժխնդրութիւնը։

—Դարձեալ աստուածները խայտառակւած են։

—Այո, թէ խայտառակւած և թէ անարգւած։ Ինչպէս Տարօնի այգեպանները և Բիւրականի խաշնարածները բողոքում էին, թէ կարիք չունին ոչ աստուածներին, ոչ նրանց շնորհին, նոյն խօսքն են կրկնում և հանքերի բանւորները։ Չեն կամենում խոնարհւել ոչ աստուածներին, ոչ դիւցազներին, քրմապետներին, թագաւորներին։ Դարբնոցապետը կռանը ձեռքին առաջ էր ընկել և աղաղակում էր.

—«Էլ կարիք չունինք այն աստուածներին, որոնք քաշւում են սանում, բաժանում են մեր անդրանիկներին, արուն թէ էգին, ստորացնելու, ձրիակերների բանակ կազմելու։ Այլևս պէտք չեն մեզ այն կուռքերը, որոնք մեր անասունների առաջին ծինը զոհ են պահանջում, մեր այգիների առաջին բերքը խլում են, որ լափեն մեզկ, ծոյլ ու անպէտք արարածները։ Թող Արամազդը, եթէ հզօր է, իր գերդաստանով խռովի մեզանից, արևը բռնէ, անձրևը կապէ, ցօղը չղթայէ, օդը անջատէ, մեր ցանած սերմը ծիլում սառցնէ, անասուններին սաղմում փռեցնէ, մեր կիների արգանդը կապէ, նրա շնորհը էլ մեզ պէտք չէ։ Աւելի լաւ է քաղցից կոտորւենք, սովից սատկենք, քան թէ մեր դառը քրտինքի բերքը տանենք ու յանձնենք պորտաբոյծ դիւցազներին, աստւածազարմ թագակիրներին, իշխանականին, քրմապետներին, ցոփ ու վաւաշէր ազախիններին։

Էլ ինչի՞ մշակենք, եթէ մեր մանուկները պիտի անվերջ կարիքներից խեղդւեն, մեր սիրելիները քուրձում պլլւեն, մեր կեանքը խռովեն ու թունաւորեն։ Անզգայ կուռքերին էլ կարիք չունինք, ընկերնե՛ր, փշրենք, ուր որ պատահենք, ամեն մի արձան։ Թող այս աշխարհում չմնայ կանգուն և ոչ մի մեհեան և ոչ մի տաճար, ուր բուն է դրել ապականութիւնը։ Այդ որջերի վամպիրները հերիք ծծեն բանւորի ու մշակի արիւնը։ Թող ջնջւի դրանց հետքըն անգամ, որպէսզի թշւառի աչքի արտասուքը ցամաքի և վշտալու հառաչանքը դադարի»։

Թիլը կործանեցին և քար-քարի վրայ չթողին, հիմքն արեգակ հանեցին։

—Շտապի՛ր, գնա Մցխէթ և իմ անդրի գլուխը բեր, որ չապականեն անաստուածները։

Արամազդի հոգին խռովել, թափառում էր տիեզերքի խորքերը, որ ապահով տեղ գտնի աթոռը փոխադրելու, բայց Մասիսի քաջերը գահն էլ էին մտածում յափշտակել ու փշրել։

—Դու այդ ինչ արիր, ասաց Արամազդը, երբ տեսաւ Վահագնին առաջը կանգնած։—Դու կործանում ես կուռքերը, անդրիները և տաճարները։ Միթէ չես սարսափում, որ դարե՛ր, դարե՛ր արարածները քեզ պիտի անարգեն։ Դու կործանում ես այն ձեռակերտները, տաղանդի ու հանճարի արտադրութիւնները, մարդկային ձիրքի, մտքի ու մատների ստեղծագործութիւնները, որոնք հոգածնին բարձրացնում, երկինք են հասցնում, աստւածացնում։

—Տէ՛ր, չարաստանջ մշակը, կեղեքւած բանւորը, հարստահարւած ազախինը չեն կարողանում տոկալ

3849-48

աստուածների, իշխանների, քրմերի դրած ծանր հարկի տակ։ Պորտաբոյծները քո անունից ամբոխին ըսպառնալիք են կարդում, անէծք են տեղում և կաշին մաշկում, ճարպը պոկում, միսն են ուտում, մինչև իսկ ողնաշարից ծուծն են մրզում։ Ժողովուրդն էլ այդպիսի կողոպտիչ կուռքերի չի հաւատում և նրա տոհմիկ ներկայացուցիչներին չի հպատակւում։

—Բայց չէ՞ որ այդ բռնութիւնը նրան վայրենութեան կտանի, սէրը աշխարհից կվերանայ և բանականը կգազանանայ։

—Ո՛չ, ո՛չ, առանց կուռքերի էլ կարելի է ապրել, ասում է ամբոխը,—առանց իշխանների կրթւել ու զարգանալ։ Եթէ միայն քրմերն ու դիւցազները պիտի մեզ աւանդեն սէրն ու խիղճը, ամբոխն իսպառ կզրկւի այդ առաքինութիւններից։ Աւելի լաւ է այդ կեղեքիչներին, ձրիակերներին երկինք հրաւիրէք, աշխատաւորին փրկէք դրանց ճիրաններից, քան թէ դրանց ձեռքով մշակի—բանւորի սրտից դուրս քաշէք ազնիւ կրքերը, վեհ զգացումները և սուրբ ձգտումները։ Այդ ձրիակերները միայն այլանդակում են մարդկային սեռը։

—Նկատողութիւններդ իրաւացի են, բայց ո՛չ շահաւոր մարդկութեան համար։ Ես համոզւած եմ, որ պաշտօնեաներս թէ հոգևոր և թէ մարմնաւոր՝ չեն կանգնած իրանց բարձրութեան վրայ, ուստի վճռել եմ բոլորին գլորել։ Բայց ամբոխին պէտք է հմուտ ղեկավար, որ կառավարէ և չթողնէ ժողովրդին դարձեալ հեծեծեցնեն անարժանները։ Սիրելի որդի, գնա՛, տու՛ն դարձիր և կառավարիր քո ընկերներին։ Իսկ երբ անդրիներս նորից կանգնեցնել տաս, խաղաղացնես երկիրը, եկ, հարսանիք անենք. ցանկութեանդ հասի՛ր, տա՛ր քո ապարանքը՝ մեր Անահիտին։

—Ո՛չ, Լուսափառ հայր, ո՛չ, սխալւում էք։ Երկրի գործերը պիտի տնօրինէ մարդկային սեռը և նա կարօտ չէ երկնից շնորհւած դիւցազուններին։ Թէ հովիւները, թէ մշակները, նոյն իսկ բովերի մէջ այրւած ու խանձւած բանւորները էլ չեն զիջանում, որ այս աշխարհի տնտեսութեան մէջ չմարդ միջամտի։ Չեմ կարող խօսք տալ առաջարկդ կատարելու, իսկ Անահիտին, ինչպէս բարեհաճէք...։ Միայն լաւ գիտցէք, որ որդիդ երբէք չի դաւաճանիլ իր ընկերներին։ Էլ բաւական է, որքան խաբւեցանք. աշխարհը մեզ ծնունդ է տւել, ուրեմն հողը մեր մայրն է, մենք էլ հողի որդին։ Էլ ո՞վ կարող է մեզ իրարից բաժանել։ Էլ մեր դատումը չեն կարող կլանել մութ էակները, էլ խոստումները երբէք չեն կարող աշխատաւորին խաբել...

—Ես որ շնորհել եմ, էլ կասկած չկայ, թէ Անահիտը քո նշանածն է։ Հայրական կամքս, դու շատ լաւ գիտես, անդառնալի է։ Բայց նա սգում է, որ դու փշրել ես նրա անդրիները... Ահա թէ ինչ բանն է ձեզ հեռացնում...

—Ո՛չ, հայր, ո՛չ, երբէք... Մեր աշխարհի աշխատաւորները վճռել են ընդմիշտ փշրել կուռքերը։ Մենք մեր ուխտին երբէք չենք դրժիլ։

—Այդ էլ ձեր կամքն է, որ ես ազատ եմ ըստեղծել և ո՛չ ոք չունի իշխանութիւն բռնանալու։ Գնա՛, արա՛, ինչ որ կամենաս։

Եւ Վահագնը վերադարձաւ մօր վրանը մռայլ ու յուզւած։ Նա չէր կարողանում իշխել ո՛չ կրքերին, ո՛չ էլ դատողութեանը։ Նա չէր կարողանում վճռել որը գերադասել՝ զգացումնե՞րը, թէ՞ բանականութիւնը։

Մօր աչքերն իսկոյն նկատեցին Վահագնի սրտի

ալեծուփ փոթորիկները, բայց նրա շրթունքներից չը կարողացան դուրս բերել հոգին տառապող գաղտնիքը։

Եւ որդու վշտի պատճառն իմանալու և նրան սփոփելու տենչով դուրս եկաւ քնքշասիրտ մայրը, մահակը ձեռքին, պարկը ուսերին, և ճանապարհ ընկաւ դէպի Եդեմ։

Անահիտը նրան դիմաւորեց և յայտնեց հօր անդառնալի վճիռը, անդրիների կանգնեցնելու առթիւ, որը խռովել էր Վահագնի հոգին։ Վշտաբեկ մայրը էլ տուն չվերադարձաւ. Նա թափառեց աւանից աւան, շէնից-շէն, քաղաքից-քաղաք։

—Մայրի՛կ, մայրի՛կ, երգի՛ր, պատմի՛ր, թէ ինչպէս Վահագնը և ընկերները հերոսաբար փշրեցին կուռքերը, կործանեցին մեհեանները և ժողովրդին ազատեցին կեղեքիչների ճիրաններից, բռնաւորների մորակներից,—խնդրում էր ամբոխը մի բոշայից, որ թափառում էր փողոցից փողոց և թաղից թաղ երգելով ու հառաչելով։

Բոշան երգում էր գրաւիչ ձայնով, քաղցր ու հաճելի ելեւէջներով, զգացումներով ու խոր մտքերով։ Նա նկարագրում էր, թէ ինչպէ՜ս Վահագնը փշրել էր բռնութեան շղթաները, կործանել էր կուռքերը և ազգը փրկել։ Եւ այս երգերին միշտ յարակցում էր, թէ ազատողները փրկչին մոռացան, ապերախտացան, չանմահացրին քաջի գործերն ու ազատութիւնը մի հսկայ կոթողով։

Եւ այս բառերը այնքան կրկնեցին, այնքան բաղխեցին ամբոխի ականջներին, ուղեղին, սրտին, որ նա շշմեց, կախարդուեց...

Մի օր ժողովեցին ամբողջ երկրի ծերերը և

որոշեցին հին վճիռը քանդել և իրանց քաջի գործն անմահացնել մի վիթխարի արձանով։ Եւ գործի կըպան։ Տարօնի Անահիտի տաճարի որմերը վերականգնեցին և այդտեղ անկեցին քաջի արձանը։

Բոշան սկսեց քարոզել, թէ հարկաւոր է մի պալատ շինել և աշխատել, որ Վահագնը գայ այդտեղ ապրի, կառավարէ ու դատէ ժողովրդի գործերը։ Այս էլ լսեցին ու կատարեցին։

Բոշան խրախուսուած շարունակ թափառում էր, դարձեալ ժողովում ամբոխին և քարոզում ու հիպնոսում, թէ նրանք քաջին արժանաւորապէս չյարգեցին և նա վշտացած յետ է քաշուել գործից։ Պէտք է նրա սիրտն առնելու համար քաջի նշանածի՝ Անահիտի անդրին էլ կանգնեցնել և հրաւէր կարդալ, որ Վահագնը ինքնիշխան կառավարէ ու դատէ ժողովրդի գործերը։ Այս երգերն էլ կախարդեցին ժողովրդին և կուռքապաշտները վճռեցին Անահիտի արձանն էլ դնել իր նշանածի դէմուդէմ։

Այսպէս կախարդի քարոզներից հրապուրուած, կուրացած ամբոխը նորոգեց ու կանգնեցրեց հետզհետէ Անահիտի ծնողների և ազգականների անդրիները, նորոգեց տաճարները և մեհեանները։ Տաճարների մէջ կամաց-կամաց ներս սողացին Վահագնի արձանը խնկարկող քուրմերը, անշէջ հրի պաշտպան քրմուհիները և Վահագնը սկսեց քմահաճոյքներով սաստել ամենին, հրամաններ արձակել, բռնանալ և իր կամքը օրէնք հրատարակել։

Բռնակալութիւնը օրէցօր առաջ էր գնում, արդարութիւնը անհնար լինում, ճշմարտութիւնը քօղարկւում. բայց քաջի սիրուց դեռ համբերում էին նրա աջակիցները։ Բռնութիւնը օրէցօր հսկայ քայլերով առաջ էր գնում և հասաւ նուազագոյնից չափա-

զանցութեան, բայց փրկչի խաթեր համար լռում, համբերում և իրանց օրերը քաշ էին տալիս նրա մարտակիցները։ Ո՛չ ոք չէր ուզում ապերախտ դառնալ, ո՛չ ոք չէր մտածում քաջին վիրաւորել։

Սակայն զիջումները աւելի սաստկացրին բռնութիւնները, որոնք սրտեր էին մրրկում, աչքեր էին ծակում և ամեն մէկը իր զգացածը խուլ ձայնով— շշուկով բողոքում էր ընկերին և հառաչելով պարզում իր ներքին վիշտը։ Այս շշուկները, հառաչանքները տարածւում էին, այս տրտունջները բորբոքում էին մանուկներին և երեխաներին։

Իսկ Արամազդը դեռ դժգոհ Վահագնից, չէր ուզում հարսանիք անել և Անահիտին նշանածին տալ։ Անահիտը անվերջ պահանջներով դեռ թափառեցնում էր բոշային քաղաքից աւան, շէնից գիւղ։ որ արծարծեն երկնքի հուրը մարդկային սրտում, այրեն նրա ազնիւ ձգտումները։ Վահագնը հրապուրւած իր քաջ գործերով, Անահիտին հանելու տենչից մոլորւած, ժողովրդի գովասանքով, ամբոխի կեցցէներով, անվերջ պահանջներն էր սաստկացնում, նորանոր կռատուններ էր շինում, արձաններ կանգնեցնում, քուրմեր հաւաքում, կոյսերից երկրպագւած, շռայլում էր ժողովրդի գանձը։ Նա իր ներքին կուից յուզւած, բորբոքւած, բարկութիւնը թափում էր Ծերակոյտի գլխին, զօրականների գանգին, որոնք դեռ տանում էին անսահման համբերութեամբ։

Այսպէս անընդհատ տարիներ անցան, ամբոխը շշմած քաշեց շատ դարդ, ցաւ, և իրերի դրութիւնը աւելի սաստկացաւ։ Կործանւած գիւղացիների տեղերը բռնեցին Վահագնի սիրելիները, Ծերակոյտն անարգւեց, վերադարձան հին կամայականութիւնները, արդարութիւնն խապառ հեռացաւ, ճշմարտութիւնը

ծաղրւեց, յափշտակութիւնը խնկարկւեց և ամբոխի հառաչը օրից օր աւելի այրւած սրտի խորքերից բղխեց։ Հացկատակները բոշայի պօէմաները գրի առան և սկսեցին տարածել ամեն կողմ և էլ աւելի կուրացնել ամբոխի միտքը։

Մի օր երկաթահանքի բանւորները նորից հաւաքւեցին դարբնոցի սալի չորս բոլորը։ Այնտեղ աչքի էին ընկնում իրանց ահեղ կռաններով այն քրտնաթոր բանւորները, որոնց քրտինքն ու մուրը շաղախւել, շերտ-շերտ զանգւածով կպել էին նրանց մաշկին։ Այնտեղ էին այն կոշտուկներով թանձրացած ձեռքերը, որոնք գործիք էին մատակարարել աշխարհին և պարկով օդ իրանց զաւակներին։ Այնտեղ էին քայքայւած կուրծքերը, ախտաժէտ թոքերը, նիհարած սրունքները, տափակած փորերը և ճզմւած գլուխները, որոնք ծիւրել էին իրանց կիների հառաչանքներից, իրանց սոված մանուկների նւոցից։ Կարծես նրանց հալածել ու այնտեղ հաւաքել էին իրանց սիրելիների ուրւականները, որոնք նրանց մղում էին դէպի իրանց պարտականութիւնը։

Սրանք անմռունչ կանգնած էին, տաքբոբիկ, մերկ կրծքով ու սրունքով, պատառոտած շապիկներով, աչքերը մրոտ պատերին յառած, փուքսերին ու կրակարաններին յենած։ Նրանց շրթունքներից թէև ձայն չէր բարձրանում, բայց նրանց աչքերի շարժումներն ու ցոլքը, կիզող հառաչները արտայայտում էին ու բացատրում նրանց հոգեկան աշխարհի վշտերը։ Առանց բառերի մտքեր էին փոխանակում։

Յանկարծ առաջ եկաւ մի դեռահաս բանւոր, կռանը շպրտեց և խուլ ձայնով սկսեց բողոքել.—

Ընկերնե՛ր, էլ բաւ է, էլ անհնար է այս վիճակը տանել սոված ու զրկուած։ Մինչ Երբ պիտի շղթաներ կրենք, նետ, տէգ ու դաշոյն շինենք մեր հարազատներին—նմաններին մահացնելու համար. զէնք, պայտ ու մեխ կոփենք մեզ հալածողների այրուձիի համար։ Է՛լ անհնար է դիմանալ զաւակներիս տանջանքներին, էլ ույժ չունիմ այս կեանքը շարժելու։ Ահա ես ուխտում եմ ձեռքս սալին դրած, մինչև չփշրեմ Թիլի արձանները, Ոսկիամօր, Անահիտի և Վահագնի անդրիները, գերեզման չեմ մտնելու, քուն չեմ ընկղմւելու...։

—Վահագնի կուռքը, միաբան շշնջացին ընկերակիցները...

—Էլ ինձ համար կուռք չկայ։ Էլ մեզ պէտք չեն կուռքերը, իրանց հոգևոր և մարմնաւոր պաշտօնեաներով։ Հերիք մեզ կեղեքեն այդ ձրիակերները. ույժ չմնաց...

—Բայց չէ՞ որ Վահագնը մեր ընկերն էր, ազատարարը, հարստահարուածի փրկիչը։ Նա ազատել է մեր ծնողներին։

—Մեզ կուռքեր պէտք չեն. նա կատարել է իր պարտքը և այժմ դաւաճանել սկզբունքներին։ Նա մեզանից էր, քանի անդրի չունէր, կառավարիչ դառնալուց յետոյ բռնաւոր դարձաւ։ Ո՛չ, ընկերներ, ո՛չ, մեզ կուռքեր պէտք չեն։

—Տէ՛ր, չեմ յանդգնում ձեզ դուժել։

—Ի՞նչ է պատահել, Քսուկ. ասա՛ համարձակ։ Կուռքաքանդները իմ արձա՞նն էլ փշրեցին։

—Այո՛, տէ՛ր, դժբախտաբար։ Այդ անօրէնները խիղճ չունին, ապերախտ են...ձեզ...ձեր...

- Առանց արձանի էլ կարող եմ ապրել։ Էլ ի՞նչ ես խօսում։

—Չեմ համարձակւում, բայց որ հրամայում էք. ասում են, որ էլ արձան չի մնացել։ Նոր քրմապետին էլ գիշերս...

—Ի՞նչ, սպանեցի՞ն։

—Չեմ յանդգնում, բայց որ հրամայում էք. ասում են, որ այնտեղ օթևան է բռնել և սպասում է...

—Ի՞նձ...

Ինչպէս ասում էք...

—Ո՛չ, Քսուկ, ո՛չ։ Դու գիտես, որ Ոսկիամօր կաթով սնուածը, Բիւրականի աւազանում մկրտուածը, միշտ թարմանում է։ Ախուրեանի կպրի ծովում տապակուած մարմինս անխոցելի է, արիւնս էլ թոյնից անապակ։

—Այո՛, այդ ես լաւ գիտեմ. բայց դարբնապետի լաճերը սպանդարապետից են սովորել իրանց խրատները և այդ պատճառով...

—Է՛հ, Քսո՛ւկ, մի՞թէ կհամարձակւեն...

—Կուռքաքանդնե՞րդ...

—Այո՛, Քսուկ, այո՛... Մի՞թէ նրանք մոռացան, որ ես...

—Ասում են, պարտքդ ես կատարել, էլ ի՞նչ ես պահանջում երախտագիտութիւն...

—Որդիս, ասաց մայրը ներս մտնելով Վահագնի սրահը,—գնա՛նք։ Նրանք կրակ տուին, վառեցին ապարանքը։ Գնա՛նք, եթէ ո՛չ, բորբոքուած ամբոխը կարող է ամեն բռնութիւն գործ դնել...

—Գնա՛նք, մայրիկ, բայց ո՞ւր գնանք։

—Այնտեղ, որտեղից եկանք։

—Հապա գործերս... Անահիտս...

—Այժմ դրանց մասին չի կարելի մտածել։ Առաջ անցիր, գնանք...

—Գնանք, ասաց Վահագնը,—մերկացաւ ծիրանուց և առիւծի մորթն ուսին գցած, հետեւեց մօրը դէպի Բիւրական։

Իսկ այդ օրւանից յետոյ Կամախի դարբինները բոլոր արձանները փշրեցին և էլ չթողին, որ Հայոց Աշխարհում կուռքեր շինւեն։

Գ.

ՍԱՐԴԱՆԱԲԱԼ

ԼԵԳԵՆԴԱ

Տիգրիսի աջ ափին բարձրանում էր Սարդանաբալի արքունիքը, որի երկնամերձ աշտարակների ոսկեզօծ գմբէթները արևի ճառագայթների տակ պըսպղում, շողքեր էին արձակում։ Եօթը փարսաղ հեռաւորութեամբ դաշտի միջից անցնողի աչքերն անգամ խտտացնում էին նրա ճառագայթները։ Արքունիքի յախճապակ ճակատի աղիւսները իրանց գոյնզգոյն և քանդակւոր նկարներով ներկայացնում էին Ասորեստանի աստուածազարմ արքայատան գահակալների պատկերները, իրանց զրահաւոր արդ ու զարդով, նիզակներով, սրերով, Ասորեստանի զօրութիւնից ընկճւած և հարկատու դարձած իշխանների շղթայակապ և կորագլուխ նկարներով։ Պալատի չորս արտաքին որմերը, ամբողջ ներսից թէ դրսից մի մեծ թանգարան—գրադարան էր, որի վրայ ճարտար մատները կանգնեցրել, անմահացրել էին Սարդանա-

բալի պապերին իրանց պատերազմներում կատարած քաջագործութիւններով։

Ամբողջ արքունիքի ներքին թէ արտաքին ամեն մի զարդը, կարասին, դոները, պատուհանները, անկիւնները, պատշգամբները մի-մի յիշատակարան— կոթողներ էին, որոնք սահմանւած էին յաւերժացնելու Նինոսի և Նաբուբալդասարի յաղթողների հրակայական պատերազմները, գերած ժողովուրդները, աւերած քաղաքներն ու աւանները, կործանած բերդերն ու մարտկոցները, կողոպտած գանձերը, յափշտակած կոյսերը, կորզած հարկերն ու տուրքերը։ Այս արքունիքը չորս բոլորից պատած էր ընդարձակ պանէշներով, մշտադալար դափնիներով և մրտենիներով, որոնք աւազոտ անապատի մէջ դրախտի էին վերածել այդ հսկայագործ ապարանքը՝ աչքեր շոյող և հրապուրիչ տեսարաններով։

Եւ այս արքունիքում ապրում էր Ասորեստանի Սարդանաբալ թագաւորը, որ տիրում էր Արևելքին, Կասպիականի ափերից, Պոնտոսի ջրերից, մինչև Միջերկրական ծովի արևելեան եզերքը, մինչև Արաբական մեծ անապատը։

Այդ երկրի վրայ ապրող ժողովուրդը երկրպագելու պարտաւորւած էր աստւածացրած Սարդանաբալին, որ ընդունւած էր որպէս աստւածայայտնութիւն՝ աշխարհին պատգամ տալու, ազգերին կառավարելու և ժողովրդին դատելու համար։

Եւ ամբողջ աշխարհի դառն քրտինքով դաղածը բերում կեդրոնացնում էին Նինւէ, աստւածացրած Սարդանաբալի դուռը, որպէս տուրք, որպէս հարկ, որպէս պարտիք։

Սարդանաբալը իր երեք հազար կիների, երեսուն հազար աղախինների, եօթանասուն հազար մանկլա-

ւիկների, զօրականների և պալատականների հետ, այդ ահաւոր բերքով ու տուրքով ապրում էր մեծ շքեղութեամբ, անցկացնում էր զւարճալի օրեր և կատարել էր տալիս արտակարգ և նորահնար այնպիսի տեսարաններ, որ աշխարհի տաղտուկից ազատւի և անվերջ զւարճանայ։

Սարդանաբալը անվերջ շռայլում էր ահաւոր գանձեր, անսպառ բերքեր, պտուղներ ու գործւածքներ. արտասովոր խաղեր և տեսարաններ ստեղծողներին վարձատրում էր առատաձեռն նւէրներով։ Նա միայն մի ցաւ ունէր, այդ տաղտուկն էր, որից ազատւելու համար անձնատուր էր եղել անընդհատ զբօսանքի, զւարճութեան, գինու և կաքաւիչների։

Նրա պալատում հազարաւոր նւագողներ ու կաքաւիչներ կային, այնքան պարողներ ու երգեցողներ էին կայտառում, որ անվերջ ամեն կողմից միայն նւագարանների, ներդաշնակ եղանակների և քաղցր երգերի ձայներ էին գալիս։ Բայց Սարդանաբալին այսքան լիութեան և զւարճութեան ընթացքում շատ ժամեր դարձեալ տաղտուկն էր տիրում և նա վըրդոված նորանոր պաշտօնեաներ էր ուղարկում իր պետութեան հեռաւոր սահմանները, որպէսզի գեղանի կոյսեր, քաղցրաձայն երգչուհիներ, զւարճացնողներ բերեն, իրան զբաղեցնեն և զւարճացնեն։

Բռնակալի մորակը, սատրապների սարսափը, աստւածյայտնութեան հրամանները անմիջապէս գործադրւում էին և անվերջ զոհեր էին գալիս Նինւէի արքունիքը, որպէսզի Սարդանաբալի տաղտուկը անցկացնեն, նրան հրճւեցնեն, վայելելիքը ճոխացնեն։ Այսպէս աշխարհի բոլոր բարին բերում էին՝ գրկելով, սովի ու կրակի մատնելով խեղճ ու կրակ

գիւղացիներին և արհեստաւորներին։

Սարդանաբալը վատնելով այնքան կարողութիւն, աշխարհին դառն արտասունքի ու տանջանքի մատնելով, չէր հասնում իր ըղձացած և երազած երջանկութեան։ Նա քանի լսում էր երկրի ժողովրդի վայնասունը, ողբերի ու կոծի աղաղակը, աւելի էր բորբոքւում դրանցից զգացած տաղտուկից. այնպէս էր զգւում այդ հառաչանքներից, որ անվերջ անձնատուր էր լինում զւարճութիւններին, անհաշիւ ծախսեր էր կատարում, որպէսզի ժամանակը անցկացնի, մեռցնի միմիայն զբօսանքների մէջ և մտքից հեռացնի հոգին խռովող տեսարանները, ականջները դադարեն քստմնելի արկածների նկարագրութիւններից։ Բայց գինարբութեան ներգործութեամբ անասնացած և անզգայացած րոպէներումն էլ, նրան խռովում էին մուրացկանների, տանջւածների, խմբական այրւածների աղիողորմ ճիչերը, որոնք անվերջ իրանց կրակի ճարակին էին մատնում, բոցերի մէջ մոխիր դարձնում իրանց չորացած կզկթած մարմինները։

Եւ այս զարհուրելի տեսարանները երբեք չէին դադարում Սարդանաբալի մտքերը յուզելուց։

Բայց Սարդանաբալը ոչ յագենում էր, ոչ էլ տաղտուկը դադարում, և նա անվերջ զւարճութիւն էր որոնում։

Մի գիշեր Սարդանաբալին ասաց իր կաքաւողներից մէկը.

—Արքայ, ես գեղեցիկ եմ և ճարպկօրէն եմ կայտռում ու պարում, իսկ այդ ձեզ շատ է դիւր գալիս, բայց եթէ կարողանայիք Իբէրէտացի կոյսեր բերել տալ, նրանք ձեզ այնպէս կզւարճէին իրանց

պարերով, խաղերով և ցնցումներով, որ դուք անչափ գոհ՝ կբերկրէիք։

—Սալտօբա՛լ,—ասաց Սարդանաբալը իր ներքինապետին, որ կառավարում էր ամբողջ թագաւորութիւնը.—իսկոյն քառասուն պաշտօնեայ ուղարկիր Իբէրէտա, գրի՛ր այնտեղի սորուկ կառավարչին, որ անպատճառ մի տասնեակ գեղանի կաքաւիչներ ինձ ուղարկի։ Թո՛ղ ամենագրաւիչներին և ամենաքնքոյշներին ընտրի իմ պալատին։

—Տէ՛ր...

—Ո՛չ մի պատասխան, Իբէրէտուհիներ, Իբէրէտուհիներ, իմացա՞ր, Սալտօբա՛լ։

—Տէ՛ր, ախար Հայոց երկրից չեն թողնիլ, որ մեր պատգամաւորներն անցնեն ու գնան Իբէրէտա։ Ապստամբել են այդ խառնակիչները, սպանել են մեր սատրապին և ինչ որ աւազակ Սէդէկի իրանց առաջնորդ են ընտրել։ Դժւար թէ կարողանամ։

Ո՛չ մի պատասխան, Սալտօբա՛լ. ինձ հարկաւոր են կաքաւիչներ։ Մարդ ուղարկի՛ր, թո՛ղ ջարդեն այդ ապստամբ հայերին, թո՛ղ կոտորեն բոլորին, թո՛ղ կործանեն քաղաքները, թո՛ղ հեղեղեն սև հողը այդ ըմբոստների կարմիր արիւնով։ Նրանք բորբոքում են իմ հոգին իրանց ճիչերով, թո՛ղ իրանք էլ մասնակցեն իմ տանջանքներին։ Զօրք ուղարկի՛ր, բանակներ ուղարկի՛ր, միայն շուտ այրեն ու մրկեն Հայաստանի անտառները և նրանց կրակի մէջ խորովեն և ուտեն այդ հրէշների միսը, ոսկորն էլ գայլերին թողնեն։ Ջնջւեն, գուցէ նրանց ստւերները անհետանան իմ մտքերից և հոգիս ազատւի նրանց ալէկոծութիւնից։

—Տէ՛ր, ախար...

—Սալտօբա՛լ, պատասխանում ես։

—Տէ՛ր, ախար չափն անցել է։ Է՛լ հնար չկայ զսպելու։ Է՛լ չեն լսում։ Սէգէկը Հայաստանում կոտորել է մեր բանակը, ցրուել է քառասուն հազար զօրքը և առաջ...

—Նորից զօրք հաւաքի՛ր, նորից բանակ կազմի՛ր, հաւաքի՛ր այրուձին, ուղարկի՛ր թող այրեն այդ ըմբոստներին։

—Տէ՛ր, ախար տանը մաճ բռնող չի մնացել, կիները տղամարդի կարօտ են, ծերերը կուրացել ու կորացել են, չեն կարող սուր շարժել, այն ինչ Հեթացի Սիրաքն էլ իր աւազակներով մտել է Կորդուի երկիրը...

—Այդ իմ գործս չէ, Սալտօրմլ, այդ քո բանն է։ Բա՛ց գանձարանը, փո՛ղ վերցրու, ինչքան կամենում ես, փոխատութիւն արա, որքան կարիք լինի։ Ահա կնիքս, գնա՛ այն հրէաներից փող վերցրու, ի՞նչ վաշխ որ կամենան, տուր, ծախի՛ր Լիբանանի անտառները, Բաբելոնի արմաւենի այգեստանները, Կիլիկիայի ձիթենիների պարտէզները, միայն թէ զօրք ու այրուձի հաւաքի՛ր, բռնի՛ր այդ աւազակներին և կախի՛ր։ Կրակ տո՛ւր այդ ապստամբների խրճիթները, վառի՛ր և մարդ հասցրու Իբէրէտա, որ կաքաւիչներ բերեն։ Իմացա՞ր, կաքաւիչնե՛ր։

—Ախար չէք ուզում լսել, տէ՛ր, ես ո՞ր մէկը ձեզ ասեմ։ Բաբելոնի Կադմոս իշխանը գլխին թագ է կապել և իրան անկախ է հրատարակել։

—Սալտօրմլ, դու ուզում ես, որ գլուխդ ուղարկեմ Տիգրիսի ձկներին։

—Տէ՛ր, լաւ է շրթունքիդ այդ պատգամը կատարէք և ինձ ազատէք Մարերի Վարբակ առաջնորդի ձեռքից, որ անապատ է մտել և գալիս է Նինուէ, ստրուկիցդ վրէժ լուծելու։

—Դու յանդգնում ես գլուխդ վտանգի ենթարկել, Սալտօրմլ, դու փոխանակ դրանց առաջն առնելու, ինձանից մահ ես խնդրում. բայց ոչ, դու չես մեռնելու։ Դու պիտի ապրես, որ ինձ այս նեղ օրում, երբ բոլոր ստրուկներս ըմբոստացել և զէնք են բարձրացրել, նեցուկ դառնաս և կրծքովդ իշխանութիւնս պաշտպանես։ Բայց ամեն գործից առաջ մտածիր ինձ տաղտուկից ազատել, Իբէրէտացի կաքաւիչներ գտնել։

– Ի՞նչ անեմ, տէ՛ր, երբ երկրի մի ծայրից մինչև միւս ծայրը բռնկել է խռովութեան հուրը։ Հրդեհը արծարծուել է, լափում է ամեն բան, հնարաւորութիւն չի տալիս խոհեմութեամբ մտածելու և չարիքը արմատախիլ անելու։

—Բռնի՛ր ու վառի՛ր, փշրի՛ր ու քամուն տո՛ւր Սէգէկի էլ, Սիրաքի էլ, Վարբակի էլ, Կադմոսի էլ մարմինները, թո՛ղ յաւիտեան անհետանայ այդ ըմբոստ ապստամբների յիշատակը։ Ամբողջ աշխարհը տեսնի աստուածազարմ արքայի ահեղ վրէժխնդրութիւնը։ Թող զարհուրին մարդիկ աստուածորդուն բորբոքելուց և նրա պատգամներին ընդդիմադրելուց։

—Տէ՛ր, աշխարհի ո՛չ մի անհատական ոյժ միայնակ չի կարող դիմադրել լուսորդուդ զօրութեանը։ Բայց միայն չորս մարդիկ չեն, որ այսօր հրդեհել են ձեր ընդարձակ պետութիւնը, այլ չորսերին շրջապատել են քառասուն բիւր Սիրաքներ, Սէգէկներ և Վարբակներ, որոնք փոթորկել ու մրրկել են ամբոխային ծովերը, որի ալիքները մռնչում են Նինուէի պարիսպներին բախուելով և սպառնում են կործանել աստուածաշէն բուրգերն ու աշտարակները։ Ամբողջ Հայաստանի գաւառները միաբերան աղաղակում են՝ պէտք է կործանուին Ասորեստանի աստուածները, անդրին-

րը, որ ազատենք նրանց կեղեքումներից։ Ահա երրորդ տարին է, որ ոչ միայն դուրս են արել մեր հարկահաններին, ոչ միայն սև փող չեն տուել, այլ մինչև անգամ փշրել են ուղարկուած բոլոր բանակները, որոնք գնացել էին ապստամբութեան արմատը վառելու նրանց սրտի մէջ։

—Աւելի լաւ, ժամանակ մի՛ տար, որ նրանք հնարաւորութիւն ունենան զօրանալու։ Գնա՛ ամբողջապէս կոտորի՛ր ու վառի՛ր, տո՛ւր հրդեհի բոցերին, որ յաւիտեան անհետանայ նրանց ըմբոստ ոգին և ջնջուի վարակիչ յիշատակը։

—Բայց. տէր, ի՞նչ ոյժով սպարապետներիդ ուղարկեմ, երբ նոյն իսկ Նինուէն ոտքի է կանգնել և քաղաքի բանակն էլ միացել է երկրի չորս կողմից արքունիքի վրայ գրոհ տուող խուժանին։ Արդէն մեր լրտեսներից սուրհանդակ հասաւ և իմացրեց, թէ առաւօտ ապստամբների ամբոխը կպաշարէ արքունիքը, որին միացած է Նինուէի խուժանը։

—Ուրեմն բոցերը մօտեցել են արքունիքին էլ. արքունիքին էլ սպառնում է այդ անիծեալ հրդեհը։ Ի՞նչ են կամենում այդ ըմբոստները, հեռացրու դրանց։

—Ազատութիւն, անկախութիւն, հաւասարութիւն։ Չեն ուզում այլևս հարկերը վճարել։

—Գնա՛ նրանց առաջ, խոստացի՛ր կատարել պահանջները. ահա՛ քեզ իմ մատանին, մագաղաթ, գրի՛ր ու շնորհի՛ր ինչ որ ուզում են, խաղաղի՛ր առայժմ և հեռացրու փորձանքը արքունիքից։ Բայց մի՛ մոռանար, որ աստուածայայտնութիւնը տաղտկութիւնից ձանձրանում է. բերել տուր Իբէրէտուհիներ, որ ինձ ազատեն այս անձկութիւնից։

—Տէ՛ր, արդէն աշտարակների դիտարաններից երևում են ահեղ բոցերը, նրանց լուսով երևում է, որ դէպի արքունիք են ուղղւում ըմբոստները, ասաց հևալով մի լրաբեր զօրական, որ զրահաւորուած ներս մտաւ քրտինքը ճակատին։

—Եւ չո՛րս կողմից, ասաց Սարդանաբալը, երկրի չորս կողմից։

—Ամբողջ հորիզոնը պատած է բոցերով, երկինքն անգամ բոցավառուել է արիւնի գոյնով. կարծես գիշերային խաւարն ուզում է պատառել դիւական հրով։ Քաղաքում ամեն կողմից ահեղ շեփորներ են փչում, խուժանը զարթնել է, աղաղակը պատել և մեռելային քունը խանգարուել է կատաղի գոչումներից։

—Նոյն իսկ Նինուէն ինձ դաւաճանել է, ա՛յն Նինուէն. որին կեանք ու արիւն են մատակարարել իմ նախորդները իրանց դիւցազնական գործերով։ Ապրուստ, կեանք եմ տուել ես ինքս քսանհինգ տարի։

—Նոյնիսկ Նինուէն, տէ՛ր, ասաց լրտեսը, շուարած կանգնած։

—Ապերախտնե՛ր, ապերախտնե՛ր, մրմնջաց Թիկնապահ Գօդարը, որ այդ միջոցին խոհուն դէմքով լսում էր լրաբերին։

—Տէ՛ր, արդէն քաղաքի պարիսպների դռներն էլ փշրեց ամբոխը և ընդառաջ է վազում հայրենիքի թշնամիներին, ցնծղաներով ու երգերով, ասաց երկրորդ զօրականը, որ ներս ընկաւ գունատ ու դողդոջուն։

—Քաղաքն է՞լ արդէն, ասաց առանց տեղից տատանուելու Սարդանաբալը։ Էլ կրակի առաջ չէ՞ կարելի առնել։ Գնա՛, Սալտօբալ, շտապի՛ր և առանց կանգ առնելու կրակ տուր մեծ աշտարակի հրաբոր-

բոք մթերանոցին. տամ հաւատարիմներիս, թող նաւթի ու կուպրի շտեմարանների ծորակները բաց թողնեն և անմահ կրակը թող լափէ այդ ապերախտներին, որոնք էլ երբէք չեն արժանանալու իմ շնորհներին:

—Տէ՛ր, աստուածազարմի բերանից այդ անողորմ վճիռը…

—Սալտօրմ՛լ, գոռաց զօրականը, սուրը բարձրացնելով.—Սալտօրմ՛լ, այդ տարուկների ըմբոստ ապստամբութեան համար դեռ ողորմածութի՞ւն ես հայցում Լուսահօր բերանից:

—Ուրեմն դու էլ դաւաճաններին միացար, ապերախտ: Գնա՛, կրակ տուր Տմալի մթերանոցին, գնա՛, անյապաղ, մինչև չվառեն այդ ապերախտները, մոխիր չդառնան, մեզ խեղդող ծուխն ու բոցերը չեն հանդչելու և անդորրութիւն չեն տալու աշխարհին: Գնա՛ Տմալի, շտապի՛ր: Աստուածյայտնութեան պատգամը եթէ իր ժամանակին չգործադրուի, չենք կարող փրկել մեր հայրենիքը ապերախտ խուժանի արհաւիրքներից: Որքան ուզում ես, դու գառանցիր, Սալտօրմ՛լ, միայն գառանցանքներդ էին, որ մեզ այս օրը հասցրին, ցմքած ներքինի:

—Զսպի՛ր, սանձի՛ր չարախօս լեզուդ, Մալախսար, չափաւորիր սպառնալիքդ: Այս շփոթութիւնը, այս բոցերի արհաւիրքը ո՛ւմ չէ շփոթեցրել, որ ինձ, քեզ և մեզ նման մահկանացուներին չմոլորեցնէ: Բայց մահկանացուն միշտ սխալական է, արհաւիրքները կարող են նրան ահաբեկել և բթժեցնել, այն ինչ Աստուածյայտնութիւնը չի կարող սխալուել և իր սեղծածներին հրի ու սրի անգութ բոցերին մատնել: Ահա՛, տեսնո՞ւմ ես քո բորբոքումն ու դողդողը արտայայտում են քո յուզմունքն ու առողջ

դատողութեանդ խանգարումը: Քո բերանից ոչ թէ երկնքի, այլ գժոխային ուժերն են խօսում:

—Զափաւորի՛ր, Սալտօրմ՛լ, քեզ կտոր կտոր կանէի, եթէ Աստուածյայտնութեան աչքերը չգպէին իմ կրքերը: Բայց չեմ կարող չնկատել, որ քո կեղծած անդորրութեան դիմակի տակ աւելի մեծ փոթորիկ է բարձրացրել խուժանի աղաղակը և դու խելակորոյս ձգտում ես անձնատուր լինել ճահիճի ադմին:

—Տէ՛ր, արդէն փշրուեցին արքունիքի դռներն էլ, այնտեղից դուրս պրծան ձեր արինակիցներն ու դաւակները, ձեր կիներն ու աղախինները, ընդառաջ են թռչում ապստամբներին…

—Ուրեմն ինձ դաւաճանեցին նոյնիսկ հարազատնե՛րս, նոյնիսկ զաւակնե՛րս…

—Սալտօրմ՛լ, ահա քո խնդրած ողորմածութեան շնորհների պտուղը,—մէջ ընկաւ զօրականը,—ահա քո աղերսների արդիւնքը: Մենք կործանուած ենք:

—Մենք չենք կործանուած, Աստուածյայտնութիւնը չեն կարող կործանել երկրային ոյժերը, եթէ մենք մեզ չկործանենք:

—Սալտօրմ՛լ, գնա՛, առաջ գնա՛, տար կնիքս, տուր ինչ որ ուզում են, խոստացի՛ր, ինչ որ կամենում են, միայն թէ հանգցրու այդ կրակի բոցերը: Երբ կրքերն իջնեն, մենք նրանց աւելի հեշտութեամբ մոխիր կդարձնենք:

—Ուշ է, տէ՛ր, ուշ է, առաջ ընկաւ Մալախսարը, հարկաւոր է աւելի խիստ միջոցի դիմել:

—Հրձիգները մտան արքունիք, ասելով ներս ընկաւ մի մանկլաւիկ, գունատ և սարսափահար:

—Սալտօրմ՛լ, Սալտօրմ՛լ, ո՞ւր փախչենք, գոռա-

ցեն թիկնապահները, որոնք խուժեցին աստուածորդու սրահը սարսափահար։

—Սալտօրմ, դու մեզ ո՞ւր հասցրիր, գոռաց Մալախսարը...

Ամբոխը հետզհետէ առաջ էր գալիս արքունիքը շրջապատած։ Աղաղակներն արդէն լսւում էին պալատում ամեն կողմից, Փողերը փչում էին, կրակը բոցավառել էր արքունիքի սրահները և Նինուէի հըրդեհի բոցերը ճարճաթում էին ահեղ որոտումներով։ Արդէն ո՛չ միայն ծուխը թափանցում, ներս էր հոսում արքունիքի թանձր որմերից, այլ ճենճահոտը շշմեցնելու աստիճան ապականել էր օդը և արբեցրել պալատականներին։

—Ո՞ւր փախչենք, Մալախսա՛ր, ո՞ւր պահուենք, որ ազատուենք, գոռում էին թիկնապահներն ու զօրականները։

Պարիսպները թափւում էին, գլորւում ապստամբների մեքենաների բոմբիւններից ու կրակից, թշուառ կիների վայնասունից, մանուկների աղիողորմ ճիչերից ճմլւում քարացած սրտերն անգամ։ Միայն այս աղիողորմ տեսարանը տանում էր քարացած սառնասրտութեամբ Ասորեստանի պատգամատուն, որ արձանացած չէր գիջում ընկճուել, չէր ուզում տատանուել։

Եւ երբ լեղապատառ կաքաւիչների խումբը ներս խուժեց Սարդանաբալի սրահը, մահուան տագնապով, սրտաճմլիկ ողբով, կնճռոտած դէմքերով, երբ նրանք բոլորուեցան Սարդանաբալի գահոյքին և պատուանդաններին յարեցան, սկսեցին կեանք խընդրել կենսատու արևի երկրային պատկերից.

Սարդանաբալը վերցրեց գահի ետև կախուած

ճրագը; մօտեցրեց իր գանձարանին կից ամբարուած դիւրաբորբոք նաւթի ու ձիթի շտեմարանների պատրոյգներին, բռնկեցրեց, կրակի մատնեց իր ձեռքով այն արքունիքը, որտեղից աշխարհին դարերով պատգամ էին կարդացել նրա պապերը։

—Տէր, փախչենք, տէր, գնանք,—գոռում էին ամեն կողմից աղախիններն ու հարճերը, աղիողորմ հեծկլտանքով։

Բայց Սարդանաբալը դարձեալ իր գահոյքի վըրայ անխռով արձանացած, դրկած իր կաքաւիչներին, որոնց շուտով լափեցին ու կլանեցին հրդեհի ահաւոր բոցերը անընդհատ կրկնում էր.—Երբ պիտի անցնի այս տաղտո՛ւկը...

Դ.

ԿՈՅՐԵՐԻ ԵՒ ՀԱՄՐԵՐԻ ԿՐԿԷՍ

Մուրադ Գ.-րդը թագաւորութեան երրորդ ամսին ծպտեալ դուրս եկաւ իր հաւատարիմ թիկնապահ Սադըրգի հետ քաղաքը շրջագայելու և անձամբ լսելու, թէ ինչ է խօսում ժողովուրդը իր համար և ինչպէս են վերաբերւում նրա հրատարակած կարգերին Ստամբօլցիները:

Նրանք երկուսն էլ դէրվիշի շոր էին հագած, ձեռքերին քէշքիւլ կար, երկուսն էլ իրանց թիկունքները զարդարել էին եղջերուի մորթով: Մուրադը գլխին եօթն անկիւնանի աւեղնագործ և սրածայր գտակ ունէր, իսկ Սադըրգը գլխին թաղիքէ գաւլուղ էր դրել, որ ցոյց էր տալիս, թէ նրանք երկու տարբեր աղանդի հետևող մաքրիմներ էին, որով աւելի ծածկւում էին իրանց զննող աչքերից:

Ամբողջ մի ժամ մանգալով նրանք Էքսի-Սարայից հասել էին Էյուբ, քաղաքի ամենահեռաւոր թաղը, որտեղ ազգաբնակութիւնն անչափ նօսր էր և

բնակիչները բոլորն էլ արհեստաւոր, պարտիզպան և այգեպաններ էին: Որովհետև ծպտեալները սաստիկ յոգնել էին, Մուրադն ասաց.

—Սադըրգ, գնանք մի-մի ֆինջան ղայֆա և մի-մի թաս էլ ջուր խմենք, քիչ հանգստանանք:

—Լաւ կլինի, ասաց Սադըրգը, բայց զգուշացէք, Սուլթան. այս թաղեցիք շատ սակաւախօս մարդիկ են, և խիստ կասկածոտ: Այս պատճառով խնդրում եմ այնպէս բան չարտասանէք, որ մատնւենք:

—Ինչի՞ սակաւախօս ու կասկածոտ են, ասաց Մուրադը լուրջ խորհելով:

—Սրանք անչափ խեղճ են, հազիւ կարողանում են հացի փող ճարել: Բայց որովհետև անկարող մարդիկ են, միշտ ենթակայ են տուժերի և կողոպուտի, որի պատճառով լռակեաց ու կասկածոտ են դարձել:

Այսպէս խօսելով նրանք սրճարանի դռանը փայտի պարզ աթոռներին նստան և պատւիրեցին իրանց սուրճ բերել: Դեռ սուրճերը չէին խմել, որ մատըուակը պատից կախած աշտանակները վառեց, որպէս զի խիստ լուսաւորութիւնը մութ սենեակների մէջ տանջւող բանւորներին հրապուրէ դէպի սրճարան և հնարաւորութիւն ունենայ մի երկու սև սառկ կորզել այդ ողորմելիների լղար քսակից:

Մի քանի ծերուկներ մտան սրճարան: Բոլորն էլ լուռ ու մունջ նստան: Մատըուակը առանց հարցնելու, եռացրեց սուրճ և մի շարք ֆինջաններ ձախ ձեռին բռնած իրար ետևից լցրեց սև ջուրը և բաժանեց բոլորին:

Սուրճերը դեռ ձեռքերին բռնած մի մրոտ պայտառ դարձաւ ընկերակիցներից մի մաշկակարի ու ասաց.

—Փեյլո՛ւլ, գիշերս ի՞նչ էք ներկայացնելու։

Մաշկակալը իբր թէ չլսեց հարցը, բայց այնպիսի կնճռալի հայեացք ուղղեց հարց տուողին, որ վերջինս ըմբռնեց, թէ անտեղի էր օտարականների ներկայութեամբ այդպիսի հարց ուղղելը։

Ծպտեալները թէև այնպէս ձևացրին, թէ չնկատեցին դրանց նշանները, բայց երկուսն էլ համոզուեցին, որ կեղեքուած բանուորների շրթունքները շղթայուեցին Փեյլուլի ակնարկից։ Էլ յոյսերը կտրեցին ծպտեալները լրտեսելուց, ուստի ելան մի-մի ստակ վճարեցին ու հեռացան։

Մուրադը փողը վճարելիս նկատեց, որ սրճարանի միջից ներսի սրահը մտնող դռան ճակատին գրուած էր.

«Կոյրերի և համրերի կրկէս»։

Այս բառերը կարդաց Սադըղը, որի աչքերն աւելի սուր էին և տառերի մէջ ծաղկագրով զարդարուած միւս հանելուկային բառերի միտքն էլ ըմբռնեց։

Երբ բաւական հեռացան, Մուրադն ասաց.

—Սադըղ, ի՞նչ է նշանակում՝ կոյրերի և համրերի կրկէս։ Կոյրն ի՞նչ կարող է տեսնել, համրն ի՞նչ կարող է լսել ու խօսել, որ այդ կրկէսում հաճոյք զգան.

—Ո՛չ թէ կոյրեր պիտի յաճախեն այդ կրկէսը, Սուլթա՛ն, այլ ուզում են ասել, որ մտքով կոյրերի և համրերի համար է այդ կրկէսը։ Իսկ ծաղկատառ հանելուկի մէջ գրած էր, որ այդտեղ տեսածն ու լսածը ուրիշ տեղ խօսելը խստիւ արգելւում է, որպէսզի ժողովրդի բարեկամները չմատնեն ոստիկանների անողոք տանջանքներին։

—Բայց այս ի՞նչ կրկէս է, որ սրա մասին վեզիրս ինձ և ոչ մի զեկոյց չէ տուել։

—Վէզիրները միայն իրանց հաճոյքին ծառայելու համար ձեր գանձարանն են կողոպտում։ Նրանք ձեր առաջ մինչև գետին խոնարհուելով կիսում և ուզում են ձեզ հաւատացնել, թէ ձեր գահին ծառայելու համար պատրաստ են գլուխները զոհելու, այն ինչ նրանք միայն ձեր գանձարանի յափշտակողներն են, որ խժռում են փեթակի մեղրը լափող արջերի նման։

—Լաւ ես ասում, Սադըղ. նրանք միայն իրանց գրպանին և հաճոյքին են ծառայում։ Բայց ինչպէս անեմ, քանի որ նրանց օգնութեանը միշտ կարօտ եմ։ Ում որ նշանակեմ, բոլորն էլ արջեր են, դունչ էլ ունեն, ժանիքներ էլ, թաթեր էլ, ճանկեր էլ ունեն։ Բայց ես ուզում եմ գիշերս այդ Փեյլուլի ներկայացումը տեսնել։ Ի՞նչպէս անենք, որ կարողանանք ներս սողալ և լսել Փեյլուլի երգիծանքները։

—Գնանք, մեր նաւաստիներն այժմ հասած կը լինեն նաւամատոյցին։ Նրանց հետ շորերս փոխենք, վերադառնանք և ներս մտնենք։

—Եթէ բռնուեցանք։

—Պիտի զգուշութեամբ նրանց հետևել։

Այսպէս էլ արին։

Մի ժամ յետոյ Մուրադն ու Սադըղը մօտեցան սրճարանին, որի դուռը դարձեալ բաց էր։ Սրճարանում մարդ չկար, հանդիսականները ամենքն էլ ներսի սրահն էին մտել։ Այդ ժամանակ մի պարտիզպան առաջ եկաւ, մի սև ստակ ձգեց սրճարանի մէջ դրուած կոնքում, աչքերը փակեց և ներս մտաւ։

—Բերաքեա՛թ (առատութիւն) կոչեց մատրուակը, շտապեց, վարագոյրը բարձրացրեց և ներս հրամցուց յաճախորդին։

Սրան հետևեցին նոյնպէս ծպտեալները, գցեցին իրանց լուման, իրար յետևից ներս մտան ու առանց նկատելու տեղ բռնեցին սրահի շուրջը մեխուած բազմոցի վրայ։ Ամենի աչքը բեմի կողմն էր, որ նօսր ու թափանցիկ վարագոյրի ետևը ասխական կատակերգուները ներկայացնում էին իրանց երգիծական արկածները։ Անմռունչ այցելուները նստած հետևում էին խաղին, ամենքի ուշքը գրաւած էր ներկայացումով։

Մուրադն ու Սադըղը կրկէս մտնելիս տեսարանը նոր էր փոխուել։ Փէյլուլը նստել էր թանկագին գորգերով զարդարուած մի բազմոցի վրայ, ծխում էր ագահաբար և պատմում, պատասխանում ընկերակիցներին։ Փէյլուլը ծուխը մեծ քուլաներով ծխելուց, կուլ տալուց և օդի մէջ բաց թողնելուց յետոյ, հարցրեց իր ընկերակցին, որ առաջը կանգնած սպասաւորի դեր էր կատարում.

—Ղուլի, որ այդքան գիտուն ես, կրծքիցս դուրս տուած ծուխը, որ երկինք է համբառնում, ինչի՞ է նման։

—Այդ ծխախոտը, աղա Փէյլուլ. ասաց միմոսը, այդ բոցերը նման են մեր գիւղացիներին, որ տարին տասներկու ամիս այրւում, բոցավառւում են և նրանց աղաղակի, ողբի ու կսկծի ձայնը երկինք է բարձրանում յաւիտեան կորչելու։ Բայց ոչ քո ծուխըն է պակասում, ոչ էլ նրանց ողբը։ Իսկ ծխողները կուլ են տալիս այդ թշուառների տարին տասներկու ամիս դատածներն ու չեն կշտանում։ Այնքան են ծծում աշխատաւորների արիւնն ու ծուծը, որ հարբում, էլ չեն զգում իրանց դաժանութիւնը։

—Նրանց ո՞վ է ասում, որ ծխախոտ դառնան և իմ չիբուխս մտնեն։

—Եթէ աչք ունենան, չիբուխիդ բոցերը տեսնեն շնչածդ և արձակած ծուխի քուլաները նկատեն, քեզ կրակ կտան և մոխիր կշինեն։ Բայց ո՛չ աչք ունին, ո՛չ լոյս, ո՛չ էլ լեզու, խոտի պէս բան են։ Ինչպէս դու ծխախոտը ոլորում, լցնում ես չիբուխիդ լուլան, այնպէս էլ ենիչերիները նրանց աշխատածը կոլոլում, քիւֆթա են շինում, լցնում են իրանց պղինձը։ Դու հրճւում ես ծխելով, ենիչերիները բերկրում են պղնձում եփուած տաք ապուրով, փլաւով և կարմրացրած գառներով։

—Նրանց ո՞վ է ասում, որ ենիչերիների ճանկն ընկնեն, որ նրանց մանրեն ու խժռեն, նրանց մսից տոլմայ ու թասա եփեն։

—Ծխախոտն էլ, որ իրան արմատի վրայ էր, երբեք չէր ցանկանալ, որ կտրւի, չորանայ, գայ քեզի համար ծխի քուլայ դառնայ ու հաճոյք պատճառէ։ Բայց նրան ցանողն ու պատրաստողը քո չիբուխի համար կտրեց ու բերեց, որ քեզանից փող ստանայ։ Ենիչերին էլ ժողովրդի աշխատանքը բերում, լցնում է պղինձը, որ ապրի Սուլթանը և ապրեցնէ խժռողներին։

—Մ՛ս, չափդ մի անցնիր. այստեղ ո՛չ աչք կայ, որ տեսնեն, ո՛չ էլ ականջ, որ լսեն։ Բայց այժմ ո՞վ ինչ յանցանք գործէ, մեղքը ենիչերիներին է։

—Աղա ջա՛ն, աղա Փէյլուլ, Ալլահի սիրուն, ինձ օգնի՛ր, ինձ ազատի՛ր, գոռում էր մի կանացի ձայն, որ բաղխում էր բեմի դուռը։

—Ի՞նչ է պատահել, ի՞նչ կայ, հարցրեց ներսից Փէյլուլը, այս ժամանակ այդ ո՞վ է։

—Աղա՛ Փէյլուլ, բա՛ց, ես եմ, ձու ու ճուտ ծախող Անշա՛ն, բա՛ց։

—Մեզի ձու պէտք չէ. այս ժամանակ ինչի՞ս է

պէտք քո ճտերը... Գնա՛, մենք պիտի քննենք, ասաց բարձր աղաղակելով, ապա դառնալով հանդիսականներին ցած ձայնով մրմնջաց.

—Ա՛յ, սատանի պառաւ, ինձ ուզում ես յիմարացնել, բայց չե՞ս իմանում, որ ես աշխարհին ներկում եմ իմ խաղերով, պիտի թողնեմ, որ դու գաս ու մեզի լրտեսե՞ս։ Ներիր, ես այնքան ապուշ չեմ, որ չհասկանամ միտքդ։ Առաւօտ իրիկուն Սթամբօլ ղաղին սուտմնցայ՝ թարմ ձու ես ծախում, բայց խռկապէս լուր ես տանում։ Շաբաթը մի անգամ վէզիրի կնոջ ճուտ ես տանում, բայց նրբանցքում վէզիրի հետ ժամերով խօսում և ժողովրդի մէջ անցածն ու դարձածը նրան պատմում ես։

—Աղա Փէյլուլ, բա՛ց, բան ունիմ ասելու, Ալլահի սիրուն, բա՛ց, խօսք պիտի հարցնեմ։

—Ախար քիչ սպասի՛ր, գոնէ շորերս հագնեմ։ Ա՛խ, այս անիծուած վհուկը. կախարդ է, մինչև ներս չհրաւիրեմ, ձեռքից ազատելիք չունիմ։ Բայց աղաներ, աղաչում եմ, դուք այնպէս ձևացրէք, որ իբր կոյր էք և ոչինչ չէք տեսնում, խուլ էք, ոչինչ չէք լսում, համր էք և ոչ մի բան չէք կարող արտասանել։ Արձանի նման նստէք և սպասեցէք մինչև գնայ այդ ջադուն։

Այս ասելուց յետոյ ծառային էլ թաքցրեց մառանում և մօտենալով դրանը բացեց ու ասաց.

—Անշա խանում, հրամմեցէք, ներս հրամմեցէք։

—Այս որքա՜ն բազմութիւն կայ, ասաց Անշան առաջ գալով և զննելով այցելուների դէմքերը։ Ա՛խ, ես ինչպէս խօսեմ։

—Ի՞նչ ունիս, ի՞նչ ես ասում, վերջացրու, ես գործ ունիմ։ Խօսի՛ր, ի՞նչ էիր ասում։

—Ի՞նչ պիտի ասեմ այսքան վկաների առաջ,

ուզում ես վաղը Ենիչէր աղան ինձ կառափնէ՞լ տայ։ Ա՛խ, Փէյլուլ աղա, այրւում եմ...

—Դու մի վախենալ, սրանք բոլորն էլ կոյր են ու խուլ։ Լեզու էլ չունին, որ իրանց վիշտը խօսեն։ Ասա՛, միայն ես կարող եմ քեզ լսել ու պատասխանել։

—Ախար ամօթ է, ես քեզ մէհրեմ չեմ, այսքան մարդու առաջ ինչպէս ցաւս յայտնեմ։ Կրակս ինձ այրեց ու մոխիր դարձրեց...

—Դու գիտես, որ ճշմարտութիւնը արևի տակ միայն ես կարող եմ խօսել։ Սրանք բոլորն էլ արձաններ են, ո՛չ զգացմունք ունին, ո՛չ էլ կարող են քո խօսքերն ըմբռնել։ Ասա՛, հաւատա՛ ինձ։ Դու չգիտե՞ս, որ աշխարհում մարդիկ այժմ քարացել են և զգայարանքներից խպառ զրկուել։

—Գիտեմ, գիտեմ, որ մարդիկ այժմ փայտս են դարձել, ո՛չ թասիբ ունին, ո՛չ էլ կիրք։

—Դէ՛հ, ասա՛, հերիք ինձ տանջես։ Ախար գիշեր է անցել, ես ուզում եմ հանգստանալ։

—Հա, Փէյլուլ աղա. գիշերս եկաւ բոստանջիբաշին, ճուտս, ճտիկս տարաւ։

—Է՛յ, ճուտի եղածն ինչ է, որ դրա համար ինձ այսքան տանջեցիր։ Տարաւ, թո՛ղ ուտէ, խօ քեզ չկախեց. ինչ է, հոգիդ դո՞ւրս է գալիս։

—Ա՛խ, Փէյլուլ աղա, ճտիկս տարա՜ւ, ճտիկս, ասաց հեկեկալով պառաւը։

—Ալլահի սիրուն, ես քեզ երկու ճուտ կտամ, ձայնդ կտրէ, գնա՛, ինձ հանգիստ թող։

—Ա՛յ Փէյլուլ, միայն քո սրտումն էր մնացել ազնիւ զգացմունք, դու էլ քարացար։ Ախար ամենից փոքր ճտիկս՝ աղջկանս—Ֆաթմէխս էլ տարան...

—Ֆաթմէիդ տարա՞ն... Ո՞ւր տարան։

—Սարայ տարան. ամէն Սուլթանին պէտք է, Սուլթանն է ուզել:

—Որ պէտք է, որ ուզել է, էլ ի՞նչ կարող ենք անել: Մի աշխարհ, մի էլ խալիֆ: Նրա կամքը մեր օրէնքն է, նրա շրթունքից դուրս թռած ամեն մի խօսքը մեզ համար պատգամ է: Տանդ որ մնար, շատ անգամ քաղցած պիտի գիշերէր: Աղօթիր, որ խալիֆին Ալլահը երկար կեանք տայ, որ աղջկադ հաց տայ և հագցնէ:

—Փէյլուլ, մի՞թէ քո էլ սրտից խիղճը թռել է: Երեք աղջիկս տարան երեք տարուան մէջ, մէկը Սուլթան Ահմէդի համար, միւսը Սուլթան Օսմանի համար, երրորդը Սուլթան Մուստաֆայի համար:

—Վնաս չունի, այս էլ տարան Մուրադի համար: Չէ՞ որ նոր թագաւորի համար միշտ նորատի կոյսեր են տանում:

—Երեք տարուան մէջ չո՞րս աղջիկ, Ալլահի սիրուն, դու խիղճ չունի՞ս, ո՞ւր է քո մխիթարական խօսքերը:

—Երեք տարուան մէջ երեք սուլթանի գլուխը կտրտեցին ենիչերիները: Մեծ բան է, որ երեք սուլթան էլ քո երեք աղջիկներին իրանց կանանոցը տանեն...

—Ա՜յ Փէյլուլ, Ալլահի սիրուն, ինձ հնար սովորեցրու, աղջիկս ազատիր, ինձ ետ դարձրու վերջին մխիթարիչս:

—Յիմար կնիկ, ախար ինչի՞ չես մտածում, որ աղջիկդ քոնը չէր, այլ խալիֆինն էր: Ճակատագիրը աղջիկդ ստեղծել էր, որ խալիֆի պալատը զարդարէ, Սուլթանին զւարճացնէ: Նա էլ գնացել է, էլ ինչ ես ուզում: Ճակատագիրը կարո՞ղ ես փոխել: Չէ՞ որ ղուրանը հրամայել է, մենք էլ պիտի խոնարհւենք ճակատագրին:

—Աղա Փէյլուլ, սիրտս ո՛չ ղուրանն է հասկանում, ո՛չ էլ ճակատագրի հաւատում: Սիրտս դատարկեցին: Անշահիս տարան, էհ, ասացի, ճակատագիրս էր, համբերեցի: Այիշէիս տարան, լացի, լացի, լռեցի: Խադիջէիս տարան, ամբողջ սիրտս ամփոփւեց, սէրս կենտրոնացաւ Ֆաթմէիս վրայ: Ես այժմ ի՞նչ անեմ, երբ սիրտս բոլորովին դատարկեցին:

—Գնա, աղօթք արա, Ալլահը երկար կեանք տայ Մուրադին, թէ չէ՝ նոր սուլթան գահ բարձրանալուն պէս կգան վերջին աղջկադ էլ կտանեն:

—Էլ չունիմ, որ տանեն. ի՞նչս պիտի տանեն:

—Ասում ես չունիմ, բայց ես տեսնում եմ, որ փորդ չափից դուրս գիրացել է: Կունենաս և կտանեն: Չունեցողի ի՞նչը պիտի տանեն:

—Աղա Փէյլուլ, մի՞թէ կատակելու ուրիշ նիւթ չգտար: Ախար դու զգացող սիրտ ունէիր, մեզ ճանապարհ էիր ցոյց տալիս, մեզ նեղ վիճակից դուրս գալու հնար էիր ցոյց տալիս:

—Ա՜յ կնիկ, ես քեզ ի՞նչ հնար ասեմ, երբ դու բոլոր ճանապարհները գիտես: Քո առաջ Սթամբօլի ղադու դուռն էլ բաց է, ենիչեր աղայի պարտէզն էլ. վէզիրի կանանոցն էլ ես մտնում, սուլթանի ներքինատունն էլ. գնա, նրանցից ճար խնդրիր:

—Աղա Փէյլուլ, քար ես գցում: Ես ինչպէս անեմ, որ այդ դռները ման չգամ: Ազիզիս գլուխը կտրեցին սուլթան Ահմէդին խեղդելու գիշերը: Չիտայիս փորոտիքը թափեցին սուլթան Օսմանին Թօփղափու բանտարկելու ժամանակ: Մուսայիս գնդակահար արին Աթ-Մէյդանի ենիչերիների պղնձները դա-

տարկելու օրը, երբ սուլթան Մուստաֆային գահից իջեցրին և Օսմանին բանտից դուրս հանելով նորից գահ բարձրացրին։ Երեք որդիքս երեք տարւան մէջ սուլթանների հետ գետին մտան, տասներեք որբեր թողին վզիս, որոնց այրիացած մայրերին անգամ յափշտակեցին ենիչերիները, երեք անգամ տունս թալանելով։ Ասա՛, տեսնեմ, եթէ դու լինէիր իմ տեղը և տասներեք մատաղ մանուկներ քեզ շրջապատէին, քցէին, հաց մրմնջային, դու կարո՞ղանաէի՞ր քարանալ և թողնել, որ այդ անմեղ երեխաները մորեխի նման ոտնատակ կոտորւէին։ Ծօ շան կուտակներ չե՛ն, մարդու մանրունք են։ Օձի ձւից խո դուրս չե՛ն սողացել, իմ որդիներիս վաստակներն են։ Սիրտս խո փայտից չէ՞ շինած, միս է, մսի կտոր, ջիգարի կտոր է։ Ես ի՞նչպէս անեմ, եթէ այդ դռներում ձու ու ճուտ, կաթ ու մածուն չծախեմ, ի՞նչով կերակրեմ այն անմեղ երեխաներին, որ ենիչերիները գլխիս թափեցին, երեք որդիներիս դիակները փողոցներում տարածեցին, որոնք խռովարարների ոտքերի տակ տրորւեցին։

Լա՛ւ, գնա՛ հաց ճարէ և դրանց մեծացրու, որ սուլթան Մուրադին բանտարկելուց կամ խեղդելուց յետոյ, երբ նոր սուլթան նստի, բօստանջի-բաշին նորից գայ, հասած աղջիկներ ունենաս նրան տալու, որ կրկին պալատ տանէ։ Թոռներիդ մեծացրու, որ գնան մտնեն ենիչերի օջախը։ Էլ ի՞նչ ես մտածում Ֆաթիմէիդ վրայ։

—Դու խելագարւել ես, Փէյլո՛ւլ, ախար ես քեզ ասում եմ, սիրտս դատարկւեց։ Իմ բերածներից ո՛չ մանչ մնաց, ո՛չ աղջիկ, որ ինձ մխիթարէ ու քաջալերէ։ Դատարկ սրտով էլ ոյժ չունեմ աշխատելու և պահելու այն մանուկներին։

—Թոռներիդ մեծը կհասնի, քեզ կօգնէ ու կը մխիթարէ։ Ճակատագրիդ հնազանդւիր, այդ է մարգարէի հրամանը։ Մէկ էլ, որ մի՛ մոռանալ, ինչ որ ունինք, բոլորը մերը խո չէ, Ալլահը շնորհել է Խալիֆի վայելքի համար։ Էլ մի՛ գանգատիր, մի՛ էլ մտածիր, գնա՛, գլուխդ կախիր, հնազանդւի՛ր ճակատագրիդ։ Քիչ յիմար դարձիր, շրթունքներդ շղթայիր, համրացիր, որ էլ չբողոքես, կուրացիր, մի՛ տեսնիր, թէ ինչ է կատարւում շուրջդ, խլացիր, ձևացրու թէ ոչինչ չես լսում։ Ինչպէս աշխարհն ապրում է, դու էլ այնպէս եօլա գնա։

—Աղա Փէյլուլ, դու է՛լ փչացար, քո՞ էլ խիղճդ մեռել է։ Ախար ես ինչպէս համբերեմ, երբ երեք աղջիկներիս կորատեցին սուլթաններին խողողած օրերը, Ֆաթիմէիս էլ նոյն վիճակն է սպառնում, եթէ վաղը Մուրադին էլ խեղդեն։

—Դու աղօթք արա՛, որ Ալլահը երկար կեանք տայ Մուրադին, այն ժամանակ աղջի՛կդ էլ պալատում երկար քէֆ կանէ։

—Մի՞թէ Ալլահը իմ աղօթքովս կարող է փոխել Մուրադի ճակատագիրը, եթէ նրա համար կանխահաս մահ է սահմանւած։

—Ճակատագիրը խեղճերի համար է. իսկ սուլթանների համար Ալլահը կփոփոխէ ամեն ճակատագիր, քանի որ նրանք իր տեղապահներն են։ Քո ինչի՞դ է պէտք այս մանրամասնութիւնները, քեզ ինչ ասում են, դու հաւատա, կատարի՛ր. ժողովուրդը պէտք է միայն հնազանդւի ու խոնարհւի։ Մենք իսլամ, այսինքն «հնազանդւողներ» ենք։

—Եթէ Ալլահը փոփոխում է սուլթանների ճակատագիրը, աղա Փէյլուլ, դու էլ կարող ես միջոց գտնել, որ Ֆաթիմէիս ճակատագիրը փոխւի։ Ես ա-

ռանց աղջկաս չեմ կարող ապրել։ Իսկ եթե ես մեռնեմ, իմ տասներեք թոռներիս կուտեն հիւնքեարի ենիչերիները, ինչպես բորենիները ուտում են գերեզմանների դիակները։

—Դու զրպարտում ես, Անշա, ենիչերիները մուսուլմաններ են, նրանք մարդու միս չեն ուտում, նրանց համար Ալլահը պարգևել է անհամար ոչխարներ։

—Յայտնի բան է, ճիշտ ես ասում, մարդու գեշ չեն ուտում, բայց երբ երեք տարվան մեջ երեք անգամ տունս թալանեցին, երեխաներիս քաղցած թողնելով, նրանց միսը կերան։ Տանս հետ ամբողջ մայրաքաղաքի, քաղաքների, գավառների և շեների տները ավարի մատնեցին, որպեսզի հարյուր հազար ենիչերիներից ամեն մեկին քսան-քսան ոսկի տան։ Երեք անգամ, երեք տարվան մեջ քերթեցին ամբողջ ժողովուրդը, երկիրը, որպեսզի ենիչերիներին դահակալող սուլթանից իբրև պարգև ստանան այդ գումարը և ամեն անգամ քաղցի մատնվածների միսը կերան, սովից կոտորվողների գլուխը կրծեցին...։

—Նրանք թող չը յիմարանային և չը թալանվեին։

—Ես էլ ուզեցի դռնից վռնդել կեղեքիչներին, բայց երթիկից ներս թափեցին, ոչ միայն պղնձեղենս, այլ մինչև անգամ անկողիններս տարան և այսօր ծերունի մարդս ու մատղաշներս խսիրի վրայ են պառկում։

—Վնաս չունի, թող վարժվեն, մեծանալուց յետոյ կգնան սարայ, փետուրի վրայ կպառկեն։ Կամ ենիչերիները նրանց ցցի վրայ կնստեցնեն։

—Ա՜խ, Փեյլուլ, Փեյլուլ, դու ինձ ծաղրում ես, փոխանակ ճարը ցույց տալու։

—Ճակատագրի չես հավատում, ասել է, դու քեաֆիր ես (հայհոյող)։

—Այս բողչիս եթէ կրակ տամ ու քեզ այրեմ, դա էլ եղավ ճակատագիր։ Ինձի կրակ են տվել, հոգիս են վառել, դու ասում ես ճակատագիր է։

—Այո, ամեն բան ճակատագիր է։

—Իսկ ճակատագիր գրողն ով է։

—Նա, ով որ աղջիկներիդ սուլթանի կանանոցը ուղարկեց, զավակներիդ խռովարարների ոտքի տակ տրորեց, տունդ ենիչերիների ձեռքով կողոպտեց։

—Իսկ այդ Նա-ն ով է։

—Աչքդ հանողն է։ Բռնակալությունն է, այն անսահման ենիչերությունը, որ ինչպես քո տունն է ավարի մատնում, նույնպես կողոպտում է վեզիրների, բեգերի, խուջաների ապարանքները և սուլթանի սարայը։ Ենիչերիի համար միևնույն է, քո որդիդ էլ յափշտակումէ, ռայայի զավակներն էլ, թշնամու երեխաներն էլ։ Նա առևանգում է ինչպես ռայայի, նույնպես իսլամի և պալատականների աղջիկները։ Սարայի անունով հավաքած կոյսերի չորս բաժինը իւրացնում են բռնավորները, մի բաժինը միայն սուլթանի կանանոցն են տանում։ Աշխարհի կողոպուտի ինը բաժինը ենիչերիները, վեզիրները և խուջաներն են կուլ տալիս ու միայն մի բաժինը պալատ են տանում։

—Ապա ինչու է թողնում Մուրադը, որ այդ արինարբու ենիչերիները կողոպտեն և զրկեն ժողովրդին։

—Նա եթե ենիչերիների հետ հակառակ վարվի, իրան էլ կը կոտրեն, ինչպես կոտրել են իր եղբայրներին, հօրն ու պապերին։ Եթե ենիչերիներին արգելէ, որ չկողոպտեն, ինքն էլ ցամաք հաց չի կարող

վաստակել, որ իր ընտանիքը կերակրէ։ Այն ժամանակ նա էլ կով պիտի պահէ, որ քո Ֆաթմէն կթէ և ինքն էլ շալակած դռնից դուռ անվերջ ման գայ, որ կաթը ծախէ և հաց գնէ իր ընտանիքի համար։

—Է՜հ, նա ինչի՞ կով պիտի պահէ, թուխս պիտի նստացնէ։ Մուրադը եթէ պալատական խանումների գոհարներից մէկը ծախէ, մի տարի կարող է ապրուստ գտնել։

—Եթէ ենիչերիներին չպաշտպանէ, նրանք այդ բոլոր հարստութիւնը կը կողոպտեն, կանանոցի կնիկներին իրանց զարգերով կյափշտակեն։ Իսկ Անատոլուի ժողովուրդը կխուրացնէ բոլոր խալիֆի անձնական անտառները, արօտները և այգեստանները։ Էլ ո՞վ նրան մի սատկ հարկ կտայ։ Ա՜յ, սրա համար հարկաւոր են՝ սուլթանը ենիչերիներին, ենիչերիները՝ խալիֆին։ Նրանք միաւորեալ և անբաժան բռնութիւն են, մէկն առանց միւսի չի կարող իր գոյութիւնը պահպանել։

—Ուրեմն Ֆաթիմէխ...

—Դու թոռներիդ մեծացրու, չաղացրու, ինքդ քաղցած կեցիր, պատառոտած ման եկ, նրանց կըշտացրու և հագցրու, որ բռնութիւնը անվերջ տանի և վայելէ...

Ծպտեալները էլ չկարողացան համբերել, դուրս եկան կրկէսից։

* * *

—Բօստանչի, ասաց բորբոքուած Մուրադը, ո՞րտեղ է վէզիրը։

—Սուլթանին դուրբան, ասաց պալատի վերատեսուչը, եթէ հրամայում ես, անմիջապէս քառա-

սուն զոյգ թիավարով նաւակը ուղարկեմ, որ գնան բերեն։

—Ինքդ գնա՛, ա՛ռ ու բե՛ր։

Ամբողջ կէս ժամ Սուլթանն ու Սադըղը ման եկան Էյուբի ծովափում, սպասելով վէզիրին։ Նրանք սաստիկ զայրացած էին։ Մտայոյզ անվերջ ծխում էին ազա Փէյլուլի կատակների ներգործութեան տակ, չկարողանալով որևէ եզրակացութեան հանել։

—Մահմուդ,—ասաց երկար լռութիւնից յետոյ Սուլթանը պալատի մանկլաւիկների հրամանատարին.—գնա՛, ենիչեր ազային ա՛ռ ու բեր։

—Քեզ մատաղ, ասաց Սադըղը,—արդեօք լաւ մտածե՞լ ես այդ հրամանը տալուց առաջ։ Նա այժմ գինով կլինի և վտանգաւոր է նրան իր քէֆից հեռացնել։

—Այդպէս է նա կատարում իր հաւատարմութեան երդումը։ Ա՜յդ է նրա խոստումները, որով վայելում է իմ անչափ ողորմած շնորհները։

—Նրանք միայն իրանց հաճոյքին են ծառայում, Սուլթան, նրանք միայն իրանց զւարճութեանն են անձնատուր եղած։ Այս կոչի համար նա վաղը կըորբոքէ ենիչերիների օջախները և պղինձները հրապարակ կհանէ։

—Մի գնալ, Մահմուդ։ Ուրեմն ես եմ նրանց գերին, ոչ թէ նրանք իմ ստրուկները...

* * *

—Վէզի՛ր,—ասաց Մուրադը, երբ նաւակից դուրս եկաւ աշխարհի սարսափի լիազօրը.—Էյուբի Միսելէհ փողոցի մզկիթի դիմացը ինչ զայֆա կայ, որտեղ ամեն երեկոյ Փէյլուլը զարգեօզ է խաղացնում։

—Ձեզ մատաղ իմ գլուխս, ի՞նչ է հրամանդ և ցանկութիւնդ։

—Ինչի՞ ինձ այդ մասին զեկոյց չես տուել։

—Ձեր ոտքերին կպած հողը իմ ուղեղից շատ բան կարող է զգալ ու իմանալ։ Ձեր հրամանը։

—Գնա, Փէյլուլին բռնիր, բեր սարայ։

—Այս բոպէիս, ասաց ու առաջ անցաւ վէզիրը։

—Վէզի՛ր, կա՛ց, կրկնեց Մուրադը. Ասշա անունով մի կին երեսը բաց խաղեր էր կատարում այնտեղ, նրա էլ գլուխը կբերես։ Ես այդ հրէշին կստիպեցնեմ չերիաթը ոտնատակ տալ և ճակատագիրը ծաղրել։

Վէզիրը խոնարհութիւն ցոյց տուեց ու գնաց։

—Վէզի՛ր, նորից գոռաց Սուլթանը. այնտեղ մի երկու հարիւր հոգի ունկնդիրներ կան. աւելի լաւ է կրակ տուր և ամբողջ դայֆան վառիր, որ Փէյլուլի արծարծած մտքերը իրանց սաղմի մէջ խեղդուին, բոլորին կրակ տուր, վառիր և մոխիր դարձրու։

—Մաշալաները վառեցէ՛ք, գոռաց վէզիրը և առաջ ընկաւ։

Սուլթանը հեռուից դիտում էր։

Սուլթան Մուրադը ամբողջ երեք ժամ սպասեց բլրի վրայ կանգնած և գննեց կրակի բոցերը, որոնք լափեցին ոչ միայն Փէյլուլի կրկէսը, այլև շրջակայ ամբողջ թաղը։

Բայց Սուլթանը նպատակին չհասաւ, քանի որ ժողովուրդը այնպիսի հրդեհների և կրակների էր վարժուել, որ վէզիրի բոցերը նրան անզօր էին վառելու։

Ամենքն էլ կարողացան խոյս տալ, փախչել։

Սուլթանը երեք ժամ յետոյ՝ իբր հրդեհի առաջն առնելու նպատակով, սկսեց շրջել տաք մոխրակոյտերը։ Նա խառնել տուեց Փէյլուլի կրկէսի մոխիրը, որ համոզուի, թէ արդեօք իսկապէս այրուե՞լ էին հանդիսականներն ու կատակերգուները իրանց ըմբոստ մտքերով, թէ ոչ։

Ոչ մի դիակ չգտան մոխրի մէջ. բորբոքուած Սուլթանը երբ զգաց՝ թէ նպատակին չէ հասել, հրամայեց.

—Բոստանչի, վէզիրից կնիքս ետ առ, գլուխը այդ կրկէսի մոխրի վրայ կտրիր, որ այդտեղի մտքի կայծերը իսպառ հանգչեն։ Նա կրակ տուեց, ամբողջ թաղն այրեց, բայց չկարողացաւ մի խռովարարի անգամ կրակի մէջ խորովել, որպէսզի խռովութեան կայծերը գուցէ այդ արիւնով հանգչէին։

Ե.

ԳԵՆԵՐԱԼ-ԱԲԲԱՆ

Գարուն էր, մարտի վերջերը։ Եղանակը մեղմացել էր, լեռներն անգամ դալարել էին։ Պարտէզների բոլոր ծառերն ու ծաղիկները բացուել էին, անուշ բոյրը ամեն կողմից տարածւում էր։ Սարեակները ծառից ծառ թռչկոտելով ճռուողում էին, հաւերը կըչկչում, ճպուռը մեղմիկ ճրճռացնում և կեանքը ամեն տեղ եռում էր։

Մարդիկ ուրախ և յուսալի թափել էին իրանց այգիներն ու պարտէզները, փափկացնում էին ծառերի արմատների հողը, պարարտացնում, աւելորդ ամեն ճիւղ ու ոստ կտրում, թափում, մատղաշ ծառերը պատուաստում, բների վրայ նստած ճճիների սերմերը դեղերով կոտորում, անվերջ տքնում էին բարւոքել իրանց պտղաբեր ծառաստանները։ Ամեն կողմից լսւում էր երգի ու նւագի ձայնը, ամենքն էլ ձմրան սառնամանիքից ազատ շունչ քաշած, դիմաւորել էին յուսաբեր գարնան։

Աղջիկներն ու կիները ալ ու կանաչ հագնուած, կապուած, խոնաւ տնակներից դուրս էին եկել, մաքուր օդի մէջ, արևի ճառագայթների տակ իրանց կարն էին կարում, լւացքն անում, կերակուր պատրաստում, երեխաներին լողացնում և կամ ընտանի անասուններին կթում, դարմանում էին։

Նորաբողբոջ գարնան դալարագեղ ծառերի մէջ ծածկուած, Դոմինիկոսի վանքի և տաճարի թուխ պատերը ծածկուած էին սև-սև դրօշներով, որոնք օդի մէջ ծածանւելով, բնութեան հակառակ ուզում էին վանքի սուգը իրանց շուրջը և ժողովրդի սրտի մէջ տարածել։ Բաւական չէին այդ մռայլ դրօշները, վանքի բոթաբեր զանգակը ծանր հարուածներով մեռելային սարսուռ էր ուզում սփռել ամեն կողմ։ Ամբողջ մեծ պասի սկզբից ճիզւիտների գեներալ Աբբայի մահւան օրից մինչև Աւագ հինգշաբթի օրը, անընդհատ ղօղանջել էր այդ չարագուշակ զանգը, իր ամեն մի հարուածով ցնցելով ժողովրդի ջղերը։

—Ա՜հ, ասաց մռնչելով պարտիզպան Զէզարէն իր հարևան ծերուկին,—միթէ դեռ չվերջացրին իրանց ընտրութիւնն ու սուգը այս տխրականչ բուերը։

—Համբերիր, սիրելիս, համբերիր, այսօր կվերջանայ ամեն բան, այսօր կազատւենք այդ մահաչւի կռւոցից, ասաց Գաբրիօլան, ոստերը կտրատելով։

—Երևի այս սևագլուխն էլ այնտեղ է գնում, ասաց Զէզարէն ցոյց տալով մի թանձրամարմին ճիզւիտի, որ հաստատ քայլերով բարձրանում էր դարիվերը, անընդհատ ցուպը փողոցի մայթին խփելով։

Հոգևորականը հասնելուն պէս. իսկոյն վանքի դռան փեղկերը բացւեցին և նա գաւթում չոքեց սալայատակի վրայ իր աղօթքը մրմնջալու։

Դեռ աղօթքը չվերջացրած, կրօնաւորները ներսից մի խաչելութիւն բերին աւետարանի հետ, որի վրայ աղօթողը ձեռքերը դնելով, կրկնեց.

—Երդւում եմ հօտի փրկութեան համար խաչւածի անունով և նրա աւետարանով, որ պիտի առաջնորդւեմ միմիայն արդարութեան և ճշմարտութեան ձայնով, առանց որևէ աշխարհային, ցեղական, ազգակցական, կուսակցական կամ շահագիտական միտումների, ընտրելու մեր միաբանութեան Գեներալ-Աբբային, որի համար հրաւիրւած եմ այս Նւիրական տաճարը։

—Ներս հրաւիրեցէք Հայր Զօրաբաբէլին, ներսից ձայն տւին և տաճարի դռան փեղկը ճռնչալով ետ բացւեց, ուր մտաւ թանձրամարմին աբբան։

Ընդարձակ էր սւնազարդ տաճարը, որի դասի եռաստիճան աթոռների վրայ բազմած էին երեք հարիւր վաթսուն ճիգւիտ հոգևորական՝ կարդինալները, արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, աբբաները ներքին կարգում, վանահայրերը, աւագ և հեղինակաւոր անդամները վերջին դասում, իսկ ընտրւած քարոզիչները և վարդապետները վերին աստիճանում։

Տաճարի դասում, սեղանի առաջ նստած էին միաբանութեան եօթը աւագ խորհրդականները և նրանց աւագ քարտուղարը։ Մեծ Ինկվիզիտորը և իր երկու օգնականները ձախ կողմն էին բազմած։

Աջ կողմը, գահաւորակի վրայ նստած էր Պապի Նւիրակը, որ իբրև նրա փոխանորդ նախագահում էր ժողովին, որպէսզի օրինական կարգերը չխանգարւեն։ Սրա կողքին բազմած էին երեք կարդինալներ և երեք մետրապոլիտներ, որպէսզի վկայ հանդիսանան արդարութեան իրագործման։

Պապական Նւիրակը խաչակնքեց և յայտարարեց ժողովի բացումը։

Ինկվիզիտորը աղօթք արտասանեց, իսկ աւագ խորհրդականը նշան տւեց քարտուղարին կարդալ օրակարգը։

—Վերապատւելի միաբաններ, սկսեց քարտուղարը։

Այսօր միաբանութեանս երեք հարիւր վաթսուն արժանընտիր պատւիրակներդ հաւաքւած էք հանգուցեալ Գեներալ-Աբբա երջանկայիշատակ Իգնատիոսին յաջորդ ընտրելու։ Ուստի աւագներիս խորհուրդը ընտրութիւնից առաջ հետևեալ հարցերի որոշումը խնդրում է ժողովականներիցդ, որպէսզի ընտրւելիք Գեներալ Աբբան ձեր ծրագրած շաւղով առաջ վարէ միաբանութեան գործերը։

Ա. Գեներալ Աբբան անկա՞խ, թէ մեր աւագ խորհրդականների որոշումներին պիտի ենթարկւի, որևէ հարց վճռելիս։

Բ. Գեներալ Աբբան անկա՞խ, թէ Պապի իշխանութեան պիտի ենթարկւի ներքին և արտաքին գործավարութեան ընթացքում։

Գ. Գեներալ Աբբային պիտի ենթարկւի Մեծ Ինկվիզիտորը, թէ՞ սա անկախ պիտի վարէ բոլոր դատաստանական քննութիւնները։

Դ. Գեներալ Աբբան արդեօք կարո՞ղ է իր վարած գործերի համար ճշմարիտ խոստովանութիւն չըտալ, թէ Մեծ Ինկվիզիտորին և թէ Պապին։

Ե. Գեներալ Աբբան միաբանութեան սնդուկից վեր առած դրամների համար գանձապահին հաշիւ տալու պարտաւո՞ր է, թէ ոչ։

Զ. Գեներալ Աբբան իրաւունք ունի՞, առանց Մեծ Ինկվիզիտորի գիտութեան, մեղաւորներին դատապարտելու, թէ ոչ։

է. Գեներալ Աբբան պիտի ընտրէ Մեծ Ինկվիզիտորին, աւագների խորհուրդը, թէ՞ միաբանութեան պատգամաւորութեան խորհուրդը»։

«Աւագների խորհուրդը Հռոմից ստացած սոյն հարցերի որոշումը անհրաժեշտ գտնելով, սպասում է ձեր արդար վճռին»։

—Սրանք այնպիսի խնդիրներ են, ասաց Մեծ Ինկվիզիտորը, որ ձգտում էր Գեներալ Աբբա ընտրուելու, որոնք երկու դարով սրբագործուած են միաբանութեանս աւանդութիւններով։ Մեր Գեներալ Աբբան չի կարող ենթարկուիլ որևէ խորհրդի, Պապի, Ինկվիզիտորի, գանձապահի, դատաւորի և թէ միաբանութեան պատգամաւորութեան։ Գեներալ Աբբան եղել է և կմնայ անկախ, անսահման իշխան և միահեծան պետ միաբանութեանս։ Նա չի էլ ենթարկուելու նոյն իսկ Պապին, քանի որ Գեներալ Աբբայի բոլոր գործունէութիւնը եղել է, պիտի լինի միշտ որպէս գլխաւոր սպարապետ, բարձրացնել և ընդհանրացնել աշխարհի ամեն կողմ Պապի գերիշխանութիւնը։

Մեծ Ինկվիզիտորը մեղանչում է, ասաց Պապի Նուիրակը,—միայն Փրկչի փոխանորդին՝ Պապին պիտի ենթարկուեն անպայման նրա բոլոր հետևորդները։ Ո՛վ չի հնազանդուի հիմնական քարին, Պետրոսի գահին, նա բաժանւում է Քրիստոսի եկեղեցուց։

—Ո՛չ, ասաց Ինկվիզիտորի առաջին օգնականը, —եթէ մեր բանակը որևէ ձգտումով Պապի վարդապետութեան հակառակ ընթացք բռնէր, եթէ դուք կասկած ունենայիք մեր ուխտի զօրականների մասին, այդ դէպքում գուցէ կարողանայիք պահանջել մի այդպիսի ենթարկութիւն։ Բայց չէ՞ որ միաբանութիւնս և նրա մարմնաւորուած գլուխը, միայն Պա-

պի և իշխանութեան նեցուկն է կազմել և նրա տարածման ու հաստատման միակ զօրաբանակը։ Այս բոլորից յետոյ Գեներալ Աբբան անսահման տէր իշխան է և ոչ պատասխանատու որևէ իշխանութեան։ Միայն Ինկվիզիտորը և նրա դատարանը պիտի պահպանեն իրանց անկախութիւնը և այդ Ինկվիզիտորի վճռով միայն կարող է մահուան դատապարտել Գեներալ Աբբան որևէ մեղաւորի։

—Ո՛չ, սխալւում էք, ասաց Մեծ Ինկվիզիտորի երկրորդ օգնականը, որ ձգտում էր իր մերձաւորին յաջորդել,—Մեծ Ինկվիզիտորը որպէս Գեներալ Աբբայի ստորագրեալ՝ դատում և վճռում է բոլոր մեղաւորներին։ Հետևաբար Մեծ Ինկվիզիտորը միշտ ենթարկուելու է Գեներալ Աբբային և ո՛չ թէ Գեներալ Աբբան Մեծ Ինկվիզիտորին։ Ուստի Գեներալ Աբբան, որ ինքն է միակ իսկական դատաւորը, կարող է իր քմահաճոյքի համաձայն անձամբ կամ փոխանորդով մահուան դատապարտել տալ մեղաւորներին։ Միայն Գեներալ Աբբայի թելադրութեամբ և խղճի ներգործութեամբ կարող է դատաւորը ճշմարտութեամբ ծառայել իր կոչմանը։

—Ո՛չ, ես բողոքում եմ, ասաց Պապի Նուիրակը, ամէն իշխանութեան աղբիւրն է և պիտի մնայ մի-միայն Պապը, եկեղեցու մարմնաւոր գլուխը։ Գենե-րալ Աբբան էլ, Մեծ Ինկվիզիտորն էլ, ամենքն էլ պիտի հաստատուեն և հպատակուեն միմիայն եկեղեցու անսահման քահանայապետին։

—Ես բողոքում եմ, ասաց վերնատնից Հայր Ալէքսանդրը։—Դուք իւրացրել էք բոլոր իշխանութիւնը, մեզ էլ հրաւիրել էք ծաղրելու։ Եթէ անսահման իշխանապետ է և պիտի մնայ Գեներալ Աբբան, էլ ինչի՞ ենք մենք հրաւիրուել։ Եթէ պիտի անսահ-

ման թելադրութիւն կարդայ Գեներալ Աբբան Մեծ Ինկվիզիտոր դատաւորին՝ ամեն մի դատաստանական գործի համար, էլ մենք ինչի՞ ենք ընտրում, թող ինքն ընտրէ դատաւորին, մեղքն էլ, վարձքն էլ իր վզին։ Եթէ Պապի հաճոյքից է կախւած մեր ընտրած Գեներալ Աբբայի և Մեծ Ինկվիզիտորի հաստատութիւնը, էլ ինչի՞ մեզ քաղաքից-քաղաք, Ֆրանսիայից, Գերմանիայից, Սպանիայից, Սիկիլիայից հաւաքել էք այստեղ, որպէսզի ծաղրէ՞ք։ Ո՛չ, գերապայծառ հայրեր, ո՛չ, միաբանները և հօտը նոր կարգեր են պահանջում։ Նրանք զզւել են ձեր սանձարձակ ընթացքից։ Եթէ մեզ ընտրել են միաբաններն ու հաւատացեալները, ուրեմն նրանք են իշխանաւորը, մենք էլ նրանց լիազորը։ Հետևաբար մենք պիտի իշխենք, մենք պիտի ընտրենք բոլոր պաշտօնականներին, որոնք մեր սահմանած օրէնքով պիտի ծառայեն հաւատացեալներին։

Մեծ Ինկվիզիտորը բորբոքւած իսկոյն հրամայեց սպասաւոր եղբայրներին.

—Սրբապղծութիւն կատարեց Հայր Ալէքսիանոսը։ Ես, համաձայն կոչմանս և իշխանութեանս, հրամայում եմ կալանաւորել Հայր Ալէքսիանոսին և ներքնատան մութ բանտը նստացնել։

Սպասաւորներն իսկոյն բռնեցին, քաշեքաշ իջեցրին բազկաթոռից դատապարտւած Հայր Ալէքսիանոսին և տարան գնդան։ Այս տեսարանը այնպէս սարսափեցրեց ժողովականներին, որ բոլորը քարացած, շնչասպառ սպասում էին վախճանին։

—Եղբայրնե՛ր, ասաց աւագ խորհրդականը,—ես գտնում եմ, որ հարցը պարզ է, ուզում եմ քւէարկել։ Նախ՝ գրաւոր քւէ գրեցէք և անպայման ուղարկեցէք ինձ։

«Գեներալ Աբբան պիտի՞ ենթարկւի որևէ իշխանութեան, Պապին, աւագների խորհրդին, Ինկվիզիտորին, թէ՞ նա անսահման միահեծան իշխանաւոր է։

—Ես բողոքում եմ, ասաց Պապի Նւիրակը։ Նախ բոլորդ ստորագրեցէք, թէ Պապի գերիշխանութեան անպայման պիտի հպատակւի Գեներալ Աբբան, ապա թոյլ կտամ, որ միւս հարցերին միջամտէք։ Հակառակ պարագային վերին հրաման ունիմ փակել ձեր ժողովը, ցրւել միաբանութեանը և ձեզ բանադրել։

—Ո՛չ, ասաց Մեծ Ինկվիզիտորը, երկու հարիւր տարուց աւելի է, մենք վայելել ենք մեր եկեղեցու Պետի վստահութիւնը. նոյնը մեզ չեն կարող զլանալ։ Մեր Գեներալ Աբբան անպատճառ անսահման անկախ պիտի լինի, լիազօր իշխան։ Մենք պիտի տնօրինենք մեր ներքին խնդիրները, իսկ դուք իրաւունք չունէք միջամտելու։ Նստեցէք, գննեցէք, և տեսէք, թէ օրինազանցութիւն չենք կատարում։ Իսկ մեր իշխանութեան դուք երբէք չէք կարող միջամտել։

—Ո՛չ, ասաց Նւիրակի օգնական կարդինալը,—դուք անպայման եկեղեցու մարմնաւոր գլխին՝ Պապին պիտի հնազանդւիք։ Հակառակ պարագային պիտի ցրւիք։

—Ո՛չ, ասաց աւագ խորհրդականը,—մենք անկախ ենք, մեր ժողովին պիտի ենթարկւի ամեն մի իշխանութիւն, թէ Պապը, թէ Գեներալ Աբբան, թէ Մեծ Ինկվիզիտորը և թէ բոլոր հիմնարկութիւնները։

—Օրինազանցութի՜ւն։

—Ապօրինութի՜ւն։

—Մեզանչեցի՛ր, ներում խնդրիր։

—Լռութի՜ւն։

—Բանադրանքի կենթարկուէք... Ամեն կողմից աղաղակներ բարձրացան։

Խառնաշփոթը տիրեց բոլորին։ Աղմուկ, զանգահարութիւն։ Վերջապէս խաղաղուեցին և լռեցին, երբ Մեծ Ինկվիզիտորը նորից խօսեց.

—Ես յուզուած եմ, ես չեմ կարող տանել այսպիսի ժողով։ Միաբաններ, նախ մենք պիտի յարգենք ժողովը և մեծաւորներին, որպէսզի կարողանանք կանոնաւոր ընթացք տալ գործին։

– Նախ, Մեծ Ինկվիզիտոր, ասաց Պապի Նուիրակը, դու յարգի՛ր մեծաւորիդ, եկեղեցու Պետին, ապա յարգանք պահանջիր ստորադրեալներից։

—Մենք մեր քահանայապետի ամենաքաջարի զինուորներն ենք. նա մեզ ճանաչում է, մեզ փորձել և ապա տուել է անսահման իշխանութիւն, որով երկու հարիւր տարի է, յատուկ արտօնութիւն ենք վայելում։

—Ո՛չ, նա է իշխանութիւն տուողը, առանց նրա իշխանութեան... ասաց Նուիրակը։

—Մենք չենք կարող կողմնակի և միջնորդ իշխանութեան ենթարկուել, ասաց Մեծ Ինկվիզիտորը նրա խօսքը կտրելով։ Դուք նախ լռեցէք, այդ է ձեր պարտականութիւնը։

—Նախ դուք լռել սովորեցէք, ասաց կարդինալը, ձեզ նման մի Մեծ Ինկվիզիտոր իրաւունք չունի եկեղեցու Պետի լիազօրին յանդիմանութիւն կարդալու։

—Դուք բոլորդ էլ քիչ համբերութիւն ունեցէք, ես պիտի քուէարկեմ խնդիրը։ Եթէ պատգամաւորները խօսք ունին, վերջին խօսքը նրանցն է։

—Գերապայծառ հայրեր, ասաց վերին ատիճաններից Հայր Զօրաբաբէլը, որ քիչ առաջ էր եկել

կանգնել միւս շարքերի գլխին։ Ես այստեղ մտնելուց առաջ երդուեցի, որ պիտի առաջնորդուեմ միմիայն ճշմարտութեան ձայնով և խղճիս թելադրութեամբ։ Եկեղեցին սահմանեց Փրկիչը հաւատացեալների փրկութեան և ոչ թէ Գեներալ Աբբայի, Պապի, Մեծ Ինկվիզիտորի և կարդինալների հաճոյքին ծառայեցնելու համար։ Փրկիչը թագաւորելու, իշխելու, տիրելու, ամբողջ ազգաբնակութիւնը կեղեքելու, հարստահարելու ո՛չ մի իրաւունք չէ տուել, այլ Նա Պետրոսին ասաց, որ հաւատացեալներին ծառայէ, ոտքերը լուանայ, նրանց պէտքերը մատակարարէ։ Ծառան թագ դնելու, գաւազան կրելու, մատանի, բեհեզ հագնելու իրաւունք չունի։ Փրկիչն ասաց, թէ մի՛ դատէք։ Մեծ Ինկվիզիտորը, Պապը, Գեներալ Աբբան և ուրիշները իրաւունք չունին դատելու։ Փրկիչն ասաց եօթանասունը եօթն անգամ յանցանք անողին էլ ներիր։ Մեր դատաւորները մահուան դատապարտելու իրաւունք չունին։ Բայց մեր առաջնորդները գերագոյն իշխանութիւնն իրար ձեռքից խլելու նպատակով, մեզ այստեղ հաւաքել են ծաղրի առարկայ դարձնելու համար։ Ո՛չ, գերապայծառ եղբայրներ, ո՛չ, սիրելի ընկերներ, ո՛չ ոք իր մէջ անսահման իշխանութիւն չի կարող կրել, միահեծան զօրականութիւն երազել։ Դուք, բոլորդ կանչուած էք եղբայրներին ծառայելու, Փրկչի շնչաւոր կենդան եկեղեցուն նուիրուելու։ Այսօր մենք ենք լիազօրը, քանի որ մենք եկել ենք ամբողջ եկեղեցու, կենդան եկեղեցու կողմից, և մեզանից պիտի իշխանութիւն ստանաք բոլորդ էլ՝ թէ Պապը, թէ Գեներալ Աբբան և թէ միւսները...

—Հայր Զօրաբաբէլ, Հայր Զօրաբաբէլ, դուք մեղանչեցիք Սուրբ Հոգու դէմ։

—Ո՛չ, չեմ մեղանչել, դուք էք մեղանչում, որ Փրկչի կենդան եկեղեցին էք սպանում, ոչնչացնում։ Դուք էր մեղանչում, որ ձգտում էք Գեներալ Աբբա դառնալ և տանջել Թշւառին։

—Ես եկեղեցին բարձրացնելու կոչումն ունիմ... լռեցէք... ես ձեր լեզուն արմատից հանել կտամ...

—Դուք դահիճի կոչումն ունիք... եկեղեցու սպանդապետն էք...

—Բռնեցէք, գոռաց Մեծ Ինկվիզիտորը, շուտ, տարէք առանձին զնդան գլորեցէք այդ ցնորածին...

Եւ դահիճները Հայր Զօրաբաբէլի բերանը բռնած, տարան ծեծելով և գլորեցին ներքնատուն, գրեթէ շնչասպառ։

* * *

Աւագ-շաբաթ կէս գիշերին, նախկին Մեծ Ինկվիզիտորը՝ անսահման իշխանապետ և եզւիտների Գեներալ Աբբա ընտրւելուց յետոյ, հրամայեց, որ դատարան առաջնորդեն Հայր Զօրաբաբէլին։

Մռայլ դատարանի ահաւոր սրահը լուսաւորւած էր երկու ճրագով, որոնք դրւած էին Ինկվիզիտորի երկու կողքին։ Պատերից կախւած էին տանջանքների գործիքները, սիւներից քարշ էին տւած հաստ շղթաներ, առաստաղից կարթեր, կախաղանի թոկեր, մտրակներ և ձողեր։ Ստորերկրեայ էր դատարանը, ոչ լուսամուտ ունէր, ոչ յատակն էր տախտակած, ոչ էլ որմերը ծեփած։

Միաբանները կողքի ներքնատան անցքերից առաջնորդեցին Հայր Զօրաբաբէլին դէպի այս սրահը, ստիպեցին չոքել դատաւորական սեղանի առաջ։ Շղթայակապ դատապարտեալը ակամայ ենթարկւեց

դահիճների հրամանին, ուր մի ժամ այդ դիրքի մէջ սպասելուց յետոյ, հազիւ դատաւորները վերնատնից ցած իջան և անցան իրանց յատկացրած բազկաթոռները գրաւելու.

Նորընտիր Գեներալ Աբբան կողմնակի բազկաթոռի նստեց, որպէս ունկնդիր, որպէսզի իր հակառակորդի դատաստանական վճիռը Նորընտիր Մեծ Ինկվիզիտորը տայ և իր խիղճը չծանրաբեռնի։

Երբ քարտուղարները, վկաները և միւս պաշտօնեաները գրաւեցին իրանց տեղերը, Մեծ Ինկվիզիտորն ասաց.

—Մեղադրեալ Զօրաբաբէլ, ասացէք ինձ, եկեղեցին դատելու և դատապարտելու իրաւունք ունի՞։

—Փրկիչը ջնջեց բոլոր դատարանները։ Ով որ անմեղ է, թող նա քարկոծէ այս պոռնիկ կնոջը, ասաց մեր Վարդապետը։

—Եկեղեցին մարմնաւոր գլուխ՝ աշխարհի վրայ անսահման իշխանաւոր ունի՞։

—Եկեղեցին՝ կենդան հաւատացեալների ժողովը կազմում է անսահման իշխանութիւնը, որին պիտի ծառայենք բոլորս։

—Պապը երկրի վրայ Փրկչի փոխանորդը չէ՞։

—Պապն էլ, Գեներալ Աբբան էլ, դու էլ, ես էլ սպասաւոր ենք, բայց ոչ թէ տէր ու տնօրէն։

—Դուք պնդո՞ւմ էք երեկւայ ասածներիդ վրայ։ Արդեօք նրանք բողոքման և խելացնորութեան հետևանք չէ՞ն։

—Ոչ մի բողոքում, ոչ մի խելացնորութիւն չունիմ։ Սատանասիրտ ասել եմ և պարձեալ կրկնելու եմ մինչև մահս։

—Բայց չէ՞ որ դուք մեղանչում էք միաբանութեան հիմնական օրէնքների դէմ։

—Ես նրանց չեմ ընդունում, չեմ ենթարկւում։ Ես եղբայրութեան աւետարանը թողած՝ չեմ կարող ենթարկւել եղբայրասպանութեան զառանցանքներին։

—Դուք երդւել էք հպատակւել միաբանական օրէնքներին։

—Ամենից առաջ երդւել եմ Փրկչիս Աւետարանին հպատակւիլ և խղճիս ձայնին չդաւաճանել։ Իսկ սրանց հակառակ ամեն բան զզւելի է ինձ համար՝ ինչպէս ձեր հարցերը, նոյնպէս և ձեր բանտերը։

—Դուք դո՞ւրս էք գալիս Պապի օրէնսդրութիւնից։

—Եթէ այդ օրէնքները, ինչպէս ասացիք ժողովում, պարտաւորեցուցիչ չեն Գեներալ Աբբայի համար, ինչի՞ էք ստիպում, որ ես նրանց հպատակւեմ, քանի որ ես դրանք չեմ ընդունում։

—Դուք ուրացող և նոր հերետիկոս էք։ Այս պատճառով ես ձեզ երեք բոպէ իրաւունք եմ տալիս խորհելու և զղջալու։ Հակառակ պարագային դուք պիտի դատապարտւէք։

—Դուք միայն կարող էք բռնանալ ինձ վրայ, բայց սկզբունքներս երբեք չէք կարող ճնշման ենթարկել։ Սպանեցէք, այրեցէք, այդ բռնութիւնը դուք իւրացրել էք, միայն մտքերովդ թող չանցնի, թէ դուք կարող էք իմ մտածողութիւններս փոխել։

—Կախեցէք գլխի վրայ Հայր Զօրաբաբելին և հարիւր ձողի հարւած տւէք,—ասաց Մեծ Ինկվիզիտորը։

Դահիճները իսկոյն կատարեցին մեծաւորի հրամանը, որ այդ ժամանակ մօտեցել էր Գեներալ Աբբային խորհրդակցելու։

Երբ դանակոծումը վերջացաւ, Մեծ Ինկվիզիտորը հրամայեց, որ առաջ տանեն դատապարտեալին։

—Մեղադրեա՛լ Զօրաբաբել, ասացէք, հպատակւելո՞ւ էք ձեր անմիջական անսահման իշխանութեան։

—Ես ոչ մի անսահմանականութեան չեմ կարող ենթարկւել։

—Ուրեմն դժոխքին չէ՞ք հաւատում։

—Ձեր ներկայութեանը ահա արդէն դժոխքի մէջ եմ և չեմ կարծում, որ սրանից զարհուրելի դժոխք գտնւի։

—Հնոցը վառեցէք, գոռաց Մեծ Ինկվիզիտորը։

Երբ պատրաստւում էին բորբոքւած կրակի մէջ գլորել Հայր Զօրաբաբելի տանջւած մարմինը, ահաւոր գոռում գոչիւններով, դռները ջարդելով ներս մտան միաբանները, զինւած մահակներով, դանակներով, բահերով և փէտատներով։

—Բռնեցէք այդ անողորմ դահիճներին, այդ անսահման իշխանաւորին և դատաւորին, գոռում էին ամեն կողմից։ Դրանք ուզում են բռնանալ ամբողջ միաբանութեան դէմ։

—Վառենք այս դահիճներին, գոռում էին միւս կողմից միաբանները բռնակալներին կալանաւորելով։

—Ո՛չ, ասաց Հայր Զօրաբաբելը,—ազատ թողէք, գուցէ դրանց մեռած խիղճը յարութիւն առնէ։

Զ.

ԲՕՅԿՕՏ

Պետերբուրգ, 30 յունուարի 1919 թ.

Կարսի վսեմաշուք և ազնւազարմ ընտրողներիս։

Մի զարմանաք, բարեկամներս, զեկուցումս ստանալիս, այլ մտածեցէք, թէ ինչ արտակարգ վիճակի մէջ եմ, որ ստիպւել եմ այս երկար նամակս հեռագրով ձեզ հասցնելու։ Ճգնաժամի մէջ ենք, ուստի հրաւիրում եմ ձեր լուրջ ուշադրութիւնը կենտրոնացնել զեկուցմանս վերայ և չարիքի առաջն առնելու համար ուղեղներդ յոգնեցնել, որ կարողանանք նահանգի ազգաբնակութիւնը փրկել սպառնացող ահռելի վտանգից։ Յառաջաբանս կարճ եմ կապում, որ համբերութիւններդ չսպառեմ, բայց նախապէս զգուշացնում եմ, պապերիդ անսպառ համբերութիւնով ամբարէք ձեր սիրտը, որ կարողանաք դիմանալ այն սոսկալի Բօյկօտի գործին, որին ակամայ բօթառու եմ դարձել։ Մեղքն իմս չէ, որ ինձ վիճակւեց այս տխուր համբաւը ձեզ դուժելու,

այլ ձերն է, որ ինձ պետական խորհրդի անդամ ընտրեցիք և այս սարսափելի ցրտերին Պետերբուրգի սառնամանիքների մէջ դողացնելուց յետոյ, ստիպւեցի այնպիսի նիստերին ներկայ լինելու, որ վտանգի սարսուռը մանի ամբողջ ջղերս և ինձ քայքայէ։ Ես համառօտեցի, իսկ դուք մտքով ընդարձակեցէք և շատ ու շատ մտածեցէք, որ կարողանաք չարիքի առաջն առնել։ Բանն այնտեղ է, որ աղերսն ու կաշառքը չեն օգնում, ոսկին էլ ոյժ չունի։

Պետական խորհրդի սրահում խորամանկ խորհրդականները ինձ դիմաւորեցին և մռայլ դէմքերի կնճիռները ծամռելով, իբր թէ ժպտացին ու սկսեցին հալիս, քէֆիս, մեր ազնւականութեան մասին զանազան հարցեր առաջարկել։ Աջ ու ձախ նրանց բաւարարութիւն տւի, յայտնեցի, որ մեր վսեմաշուք հին էֆէնդիները, բէգերն ու աղաները, բոլորն էլ վերնականների մօտ չւեցին. այնտեղ սպասում են մայրաքաղաքի լուսոպայծառներին, պարզեցի, որ Կարսում վսեմաշուքները կորցրին իրենց նախկին փայլը։ Այս խօսքս նրանց բոլորովին վշտացրեց։

—Ափսոս, ափսոս, հառաչեցին զառամեալները արտասուքներ թափելով, անշուշտ յիշելով, որ իրանց էլ պիտի հետևէր դասակիցների վիճակը։

—Դրանք թողէք,—ասաց մի ոչ շատ երիտասարդ խորհրդական, որ այդ օրը նախագահի աթոռն էր գրաւել.—այժմ գործի շրջանն է, մտէք ձեր դերի մէջ։ Վաղուց ձեզ ենք սպասում։ Ի նկատի առնելով, որ դուք տնտեսագէտ էք, ձեզ ընտրել ենք մեր խորհրդի այդ մասնաժողովին անդամ։ Տապեցէք, ձեր մասնաժողովը նիստ ունի, որտեղ այս

բոլէխս Կարսի նահանգի մասին որոշումներ պիտի տրւէին:

—Գնացէք, գնացէք, ծայրի գաւառացիներ, ասաց մի գառամած խորհրդական, դուք մեզ չէիք հաւանում, տեսնենք այս ձեր նորագոյն ճետերն ինչ պողպատի կակալներ պիտի կոտրեն ձեր գլխին:

Հա՛, այդ չարախնդացի տունը քանդւէր ու ինձ չմղէր այդ տնտեսական մասնաժողովի դահլիճը: Ինձ տեսնելու պէս յայտարարեցին.

—Կարսի նահանգի պատգամաւորը, Կարսի կործանւած ազնւականութեան պարագլուխը և թիկնաթոռս ցոյց տւին, որ տեղս գրաւեմ: Նստայ:

Աչքերս արտասուքով լցւում է, չեմ կարողանում գրել ձեզ այն բոլորը, ինչ որ այդ րոպէին ես զգացի: Թէև փշաքաղւում եմ, բայց լսածներս զեկուցանելու պարտքից ստիպւած պիտի ինձ ամփոփեմ և գրեմ:

Նախագահը շարունակեց.

—Ողորմած տէրեր, ամբողջ Ռուսաստանում ահա մի ձրիակեր նահանգ, մի պարազիտ շրջան, որ կլանում է ամբողջ երկրից—բոլոր նահանգներից, ահագին քանակով արդիւնաբերական և արդիւնագործական նիւթեր, իսկ ինքը դրանց փոխարէն ոչինչ, ոչնչից ոչինչ մեզ չի վերադարձնում: Պետական Դուման որոշել է այդ նահանգի դէմ բօյկոտ հրատարակել և ուրիշ նահանգներից էլ ոչ մի կենսական պիտոյք չուղարկել: Եթէ ուզում են ուրիշ նահանգներից կենսական պիտոյքներ ստանալ, թող իրենք էլ իրանց նահանգում մշակւած այլևայլ նիւթեր դէպի դուրս արտահանեն: Մթերքների փոխարէն մի միմիայն մթերքներ, նիւթեր, նոյն իսկ հանքեր, մի բան դուրս տան:

—Ամենաողորմած իշխան, ձայն խնդրելուց յետոյ պատասխանեցի,—ինչ՞ է Պետական Դուման այդքան զայրացած, որ մի այսպիսի անարդար վճիռ է արձակել մեր ժողովրդի դէմ: Միթէ այն բոլոր կենսական մթերքները, որ գնւել են մեզ համար զանազան գաւառներում և քաղաքներում, չե՞ն վճարւել ոսկով:

—Ներողութիւն, պատասխանեց աթոռակիցներից մէկը, ակնոցներն ինձ ուղղելով, այդ ոսկին Կարսի նահանգի ո՞ր գաւառի և ո՞ր աւանի հանքերից էք հանում և տարածում ուրիշ գաւառներ:

—Մենք ոսկու հանքեր չենք բանեցնում, ասացի զայրոյթս չզսպելով, մենք բոլոր ապրանքները փոխարինում ենք հնչիւն դրամով—փողով:

—Իսկ հնչիւն դրամ օտար աշխարհից կամ գաւառներից ներմուծելու համար, ինչ արդիւնագործական կամ արդիւնաբերական ապրանք էք արտահանում:

—Ողորմած տէրեր, ասացի ուղղակի բարկութիւն արտայայտելով, ինչ՞ էք մի ամբողջ նահանգի ժողովրդին անպատւում այսպիսի մթին ակնարկներով: Մենք մեր սեփական փողով ենք գնում ամեն բան, մեր գանձով ենք ձեռք բերում մթերքներ, ապառիկ ապրանք չենք ստանում, ժամանակին վճարում ենք գնած նիւթի արժէքը: Դուք էլ ինչ էք ցանկանում, ինչ՞ էք անպատճառ ուզում իմանալ, թէ որտեղից ենք փող գանում: Ներողութիւն, մեր նահանգում յափշտակիչ կամ պարազիտներ չկան, վճարում և այնպէս ենք ուտում և ադմինիստրացիան այդ կարող է հաստատել ստատիստիկով:

—Խնդրում եմ սառնասիրտ խօսէք, ասաց նախագահը: Դուք որքան էլ մեծ հարստութիւն ունե-

նաք, այդ բոլորը կսպառի հինգ-տասը տարում, եթէ ուրիշ տեղից պակասորդը չկարողանաք լրացնել, Ես կուզենայի ֆինանսի մինիստրի լիազօրից իմանալ, թէ ինչ աղբիւրից է լրացրել Կարսի նահանգի ժողովուրդը այս երեսուն տարուայ ընթացքում դրսից ըստացուած ապրանքի բացը, որ նա չի սնանկացել և դեռ մի կերպ գոյութիւնը քաշ է ածել, ասաց խօսքը մի ուրիշ պատգամաւորի ուղղելով.

—Պատիւ ունիմ խորհրդիդ յայտնելու, ասաց այդ կուրծքը ոսկով զարդարած ֆինանսիստը,—որ Կարսի նահանգի ժողովրդի արդիւնաբերած ցորենն ու գարին, իւղն ու պանիրը, ոչխարն ու եզը, Կաղզմանի և Օլթիի միրգը, նրա ժողովրդին չբաւականացնելով, նրանք ստիպուած են Երևանից բամբակ, բրինձ ու մրգեղէն ստանալու, Թիֆլիսից ու Գանձակից՝ գինի, Բագուից՝ նաւթ, Բաթումից՝ ձէթ ու ձիթապտուղ, Վլադիկաւկազից՝ եափունջի, Ռուսաստանից ամեն տեսակ պաշար՝ ալիւր, բիսկւիտ, շաքար, չայ, սուրճ, կակաօ. շօքօլադ, կօնֆէտներ, հագուստի կտորներ՝ բամբակի, բրդի, մետաքսի. կաշւեղէն, երկաթեղէն ամեն տեսակ գործիքներ, ապակեայ, յախճապակեայ, կաւի, ոսկի, արծաթի ամաններ, զարդեր, թուղթ, պաստառ, օճառ, անուշահոտ իւղեր և օծելիքներ: Ո՛չ երկրամշակութիւնն են զարգացրել, ո՛չ անասնապահութիւնը, ո՛չ հանքեր են մշակում, ո՛չ էլ գործարաններ ունին: Իսկ նահանգի բացը ծածկւել է երեսուն տարուայ ընթացքում գանձարանից դուրս թափուած դրամով, որը ծախսուել է պատերազմի ընթացքում և ապա այդ նահանգում շինուած մարտկոցների, բերդերի, զօրանոցների, ճանապարհների վրայ և այդ նահանգում պահուած մօտ երեսուն հազար զօրքի և նրանց սպաների համար:

—Ուրեմն, ազգաբնակութիւնը քաջ որմնադիր և հիւսն է, ասաց նախագահը խօսքն ինձ ուղղելով. պատասխանեցի, չգիտէի թէ ինչ ասեմ, այն ինչ նախկին զեկուցանողն ասաց.

—Տարաբախտաբար ո՛չ: Թէև գիւղերում կան բաւական քարաշ յոյներ, բայց մեր գործերի վրայ աշխատել են գլխաւորապէս տաճկաստանցի վարպետներ կամ Ալէքսանդրապօլցիներ: Բնիկները այնքան էլ արհեստի սիրահար չեն և ամեն մէկը ջանում է խանութ բանալ և առևտուր անել: Կարսի նման փոքրիկ քաղաքում 7—800 խանութւոր կայ, չնայելով, որ նահանգի գրեթէ ամեն մի գիւղումն էլ առանձին խանութւորներ կան:

—Ուրեմն դրանք վազում են դէպի հեշտ աշխատութիւն նկատեց մի ուրիշը:

—Կարո՞ղ էք ինձ ասել, հարցրեց նախագահը, այս երեսուն տարուայ ընթացքում ո՞րքան փող է ծախսել կառավարութիւնը այդ նահանգի ամրութիւնների վրայ, և ո՞րքան ծախս է եղել զօրքի ապրուստի մասին:

—Մօտաւորապէս տարեկան մէկ ու կէս միլիօն րուբլի ծախսուել է շինութիւնների վրայ, երկու միլիօն րուբլի էլ զօրքի ապրուստի, թօշակների և զինւորական մթերքների մասին է վատնել:

—Ողորմած տէրեր, ասաց նախագահը հարցն ամփոփելով, արդէն Պետական Դուման որոշել է, որ Կարսի վիճակում էլ ո՛չ մի կոպէկի զինւորական շինութիւններ ու ամրութիւններ չշինել, զօրքն էլ անմիջապէս հեռացնել, թողնելով բերդի պահապաններ երեք հարիւր մարդ, որոնց ծախսն էլ պիտի հոգայ նահանգը: Ուստի, իմ էլ կարծիքս այն է, քանի որ էլ չենք կարող արտասահմանից մեծագումար փո-

խարինութիւններ անել, լայնարձակ ծախսել, Կարսի չաբչիներն էլ չպիտի կարողանան իրանց ծախսի բացը մեր հաշւից լրացնել. անհրաժեշտ է անմիջապէս բոլոր գործարաններին և վաճառատներին յայտարարել, որ նրանք ոչ մի ապրանք էլ բաց չթողնեն Կարսեցիներին, քանի որ վերջիններս անպատճառ շուտով սնանկանալու են: Ուստի թող էլ ոչ մի նիւթ չմատակարարեն Կարսի նահանգին, մինչև Կարսեցիները նրանց չառաջարկեն իրանց հում կամ արդիւնաբերած ապրանքները, հանքերը կամ անասունները:

—Պէտք է համակերպւել Պետական Դումային և բօյկօտ հրատարակել Կարսեցիներին, ասացին ամեն կողմից և պետական խորհուրդը հաստատեց վճիռը:—Ո՛չ, մենք էլ չենք կարող կենսական մթերք մատակարարել կրկնեցին բոլորը, մի այնպիսի նահանգի, որը և ոչ մի բերքով—հանքով չի ուզում փոխարինել մեր նահանգներից ստացած բարին:

—Բաւական է, ինչքան մենք աշխատեցինք, նրանք վայելեցին, գոռում էին ամեն կողմից:

Աղմուկ, ժխոր, անկարելի էր բան լսել, բան հասկանալ. անվերջ «բօյկօտ» էին գոռում: Այնքան տանջւեցի, այնքան այս ու այն կողմ ընկայ, այնքան ձեռքով, գլխով նշան տւի, որ վերջապէս նրանց լռեցուցի և ամբիոն բարձրանալով ասացի.

—Ողորմած տէրեր, աթոռակիցներ, այս ինչ անգութ և անխիղճ վճիռ էք արձակում հայրենակիցներիս դէմ: Ի՞նչով են մեղաւոր, որ դատապարտում էք այսպիսի աննկարագրելի զրկանքի ու տանջանքի: Հարեկցութիւն ունեցէք, մտէք մեր դրութեան մէջ, ի՞նչ պիտի անեն այնքան ծնողները, տեսնելով իրանց զաւակների տանջանքները: Ի՞նչպէս կարող

ենք առանց շաքարի, թէյի, սուրճի, բիսկւիթի ապրել: Ի՞նչով պիտի ծածկենք մեր մարմինը, եթէ չուղարկէք մեզ կտաւ և մահուդ: Գոնէ առժամանակ փոխեցէք ձեր վճիռը. մեր նահանգը ինչպէս միշտ, նոյնպէս սրանից յետոյ կանխիկ կվճարէ գնած ապրանքի գինը: Ի՞նչի էք վճռում խլել մեզ զրկել աշխարհի բարիքից ու վայելչութիւնից, ինչի՞ էք մեզ դատապարտում զրկանքներից տանջւելու: Դուք րոտացէք ձեր ապրանքի գինը միշտ հնչուն դրամով... գոռում էին

—Ձենք ուզում, չենք ուզում լսել, ամեն կողմից, մեզ պէտք չէ ձեր դրամը, ձեր արծաթն ու ոսկին հալեցէք և կուլ տւէք: Առանց հում կամ բանւած ապրանքի ոչինչ չէք կարող ձեռք բերել: Ինչպէս մենք մեր ձեռքերով պատրաստած կենսական նիւթը ձեզ ենք տւել, դարձրէք դուք էլ մեզ ձեր ձեռքի ու ճակատի քրտինքով պատրաստած նիւթը—ապրանքը, այն ժամանակ պատրաստ ենք փոխանակելու:

—Այդ դէպքում, ասացի բարձր գոռալով և նրրանց ստիպելով, որ ինձ լսեն,—բացէք մաքսատան դռները, վերցրէք ուղեփակները, թողէք ազատ առևտուր անենք Եւրոպայի հետ, այնտեղից ստանանք մեր պակասորդ գործւածքները:

—Արդէն Եւրոպայի հետ դաշինք է կապել Դուման, ասաց ծանրութեամբ նախագահը, որ փողով ոչ մի ապրանք էլ ո՛չ արտահանւի և ո՛չ էլ ներմուծւի: Ինչքան և ինչ գնի որ հում նիւթ մատակարարենք նրանց, նոյն գնի չափով էլ արդիւնագործութիւններ պիտի ստանանք: Տւէք դուք էլ բերք, ստացէք փոխարինաբար: Զարդիւնաբերող, չարդիւնագործող նահանգը իրաւունք չունի ուրիշ նահանգից կամ աշխարհից պատրաստւած նիւթ ստանալ: Ես

ժողովի մեծամասնութեան վճռով ընդդէմ մէկի բօյկոտ եմ հրատարակում կարսեցիների դէմ։

—Ստորագրենք ու հեռանանք,—ձայն տւին ամեն կողմից։

Վսեմաշուք ընկերներ, արդէն բոյկոտի որոշումը յանձնեցաւ պաշտօնական օրգաններին, որ հրատարակէ։ Մի քանի օրից թերթերը պօստով կտարածեն այս սոսկալի բօթը ամբողջ աշխարհ։ Որոշումը գործարաններին և երկաթուղու կառավարիչներին հասնելուց յետոյ, վա՜յ մեզ։

Ասացէք խնդրում եմ, մի այսպիսի ճգնաժամում ի՞նչ կարելի էր անել, որ չարի։ Թէ չէք հաւանում, խնդրում եմ մի ուրիշը ընտրեցէք, թո՛ղ գայ, այս անբաններին բան հասկացնէ, ես վերադառնամ և այդ նահանգին սպառնացող բոբոլական կրակից ազատեմ ընտանիքս, փախչեմ Եւրոպա։ Այժմ չգիտեմ, թէ ի՞նչ կարող ենք անել, ի՞նչպէս կարող ենք ապրել առանց դրսից անհրաժեշտ մթերք ստանալու։ Մեր նահանգում ի՞նչ բերք, կամ ի՞նչ հանք ունինք, որ կարողանանք դուրս հանել և այնքան ապրանք դուրս թողնել, որ կարողանանք մեզ պէտք եղած նիւթերը ձեռք բերել։ Բօյկոտը չենք կարող վերցնել տալ, մինչև որ դուրս տալիք նիւթերի ծրագիրը չը ներկայացնենք Պետական Դումային։ Էլ քնելու ժամանակը չէ, ի՞նչ որ անուրջների մէջ անցուցիք, հերիք է։ Օր առաջ գործի սկսեցէք, կամ երկաթի, պղնձի, արծաթի, ոսկու հանքեր գտէք, որ աշխատենք և մետաղ դուրս տանք, կամ երկիրը պարարտացրէք, որ ցանուած սերմից 30—40 անգամ աւելի բերք ժողովէք և Օսմանցու ժամանակի պէս ցորենի թէջերը տանենք գարկենք կարախանը, Ախուրեանի ափին և կամ այնպիսի ապրանքներ պատ-

րաստեցէք, որ ուրիշ տեղերից գան տանեն և մեր նահանգի կարիքները փոխանակեն։

Այս բօյկոտը ինձ մոլորեցրեց։ Ինձնից, Պետերբուրգից ձեզ էլ օգուտ չի հասնիլ, ճարը պիտի անէ ամբողջ ազգաբնակութիւնը, թէ չէ, ոչ միայն աշխարհի բարուն կարօտ պիտի մնանք, այլ մինչև անգամ չիլ կտորներ չպիտի կարողանանք գտնել, որ մեր մաշուած, կտրուած շորերը կարկատենք։ Մեր օղլուշաղը չպլախ պիտի մնայ։ Ես իմ մեղքից պրծայ, ձեզ իմաց տւի, գլուխներդ ազատելու ճարը գտէք։

Ով որ ծախսած ապրանքի չափով եկամուտ չունենայ, այսինքն բերք չարտադրէ, բացը պիտի մնայ։

Ձեր պատւիրակը՝ ԱԴԻԼԲԷԳ

Է.

ԳԱՊՈՒՍ

Կօսմար

Կէս օր էր. ջերմութիւնը տարածուել էր,
օդը ներս էր լցւում խանութիս մէջ և չէր
թողնում ազատ շնչելու։ Քամի բոլորովին չկար,
իսկ արևի ճառագայթների տակ տների թիթեղեայ
տանիքները այնպէս էին բորբոքուել, որ կարծես թէ
բռնկել էին և աւելի սաստկացնում էին քաղաքի
ջերմութիւնը։ Փողոցների անցուդարձը նւազել էր,
անգործութիւնից ու շոգից գործակատարներս նըս-
տած կամ կանգնած տեղերը քնել, մնացել էին։

Ես խանութիս մի անկիւնը՝ կասսի առաջ նըս-
տած էի թիկնաթոռիս, մտածում էի։ Ուշքս կենտ-
րոնացրել էի, որ հինգ հազար ռուբլի լրացնեմ մինչև
իրիկուն, որպէսզի կարողանամ առաւօտ վաղ մուր-
հակս բանկից ազատել և չխայտառակւել։ Այս միտ-
քը և օդը միախառնւած այնպէս էին ինձ բորբո-
քել, որ շնչառութիւնս դժւար էի կատարում։ Բայց
մտովի համարում էի, որ արդէն կասսում կուտակ-
ւել էր չորս հազար վեց հարիւր քառասուն ռուբլի,
մնում էր միայն երեք հարիւր վաթսուն ռուբլի ևս
ստանալ և ազատ շունչ քաշել։ Յաճախորդներս շատ
հազիւ մտնում, ապրանքի գինն հարցնում և առանց
գնելու հեռանում էին։ Նեղութիւնս այն աստիճանի

էր, որ խօսել անգամ չէի ուզում, նշաններով էի
պատասխանում գործակատարներիս։ Ձայնս չէր էլ
բարձրանում կոկորդիցս, լեզուս չորացել էր և դառ-
նացել։ Ինքս անչափ անհանգիստ էի, տենչում էի
մի բան փխսով էլ ծախել, փող ստանալ և բանկի
վճարը պատրաստել, քան թէ առաւօտ վաղ դըրացի-
ներիս դիմելու պարտաւորւել և նրանց թիզ ու կէս
կախւած մռութները չափել։

Այս մտքերի մէջ սուզւածս ժամում, յանկարծ
ահաբեկիչները խանութս խուժեցին, ինձ պառկեցրին,
դըրկծքիս վրայ նստան, ոտքերը դրին կոկորդիս, գըր-
պանիցս հանեցին բանալիներս, բացին կասսը, դուրս
հանեցին դրամները, մի քանի թանկագին քարեր,
ռսկի ապրջաններ, խաղաղատմսեր, մի քանի ռեն-
ոսկի ապրջաններ, խաղաղատմսեր, մի քանի ռեն-
տա, հաւաքեցին, դրպանները դրին ու գնացին։

Սարսափս այնքան սաստիկ էր, որ հնարաւո-
րութիւն չունէի տեղիցս շարժւելու, ուզում էի վեր
կենալ և հետամտել սրիկաներին, անդամալոյծի նը-
ման չէի կարողանում տեղիցս վեր բարձրանալ։ Ու-
զում էի գոռալ, խօսել, ձայնս կոկորդիցս դուրս չէր
գալիս, բառեր էի թոթովում, բայց ձայնս իմ ական-
ջիս էլ չէր հասնում։ Ուզեցայ դիմել ոստիկանու-
թեան և խնդրել, որ չարագործներին բռնեն ու
պատժեն, բայց հնարաւորութիւն չունէի։

Կառք բերին, ինձ նստեցնելով տուն տարան։
Կինս, աղջիկս, որդիս ինձ շրջապատեցին, փեսաս
դիմեց բժշկի, ծառաներս դեղատուն, որ ճար հաս-
ցնեն, ինձ փրկեն։ Շրջապատողներս անզօրութիւնից
լուռ լալիս էին, այնքան վշտացած էին, որ արտա-
սուքի կաթիլները առանց աչքերից դուրս թափւելու
գլորշիանում—ցնդում էին։ Այնպէս էին ինձ շրջա-
պատել, որ կարծես թէ ես հոգևարք հիւանդ լինէի։

Խօսում էին, հարցեր էին տալիս, առաջարկներ անում, ամեն բան լսում, զգում, ըմբռնում էի, բայց չէի կարողանում շրթունքներս շարժել և ձայնս կոկորդիցս բարձրացնել։

Դեռ չէի խաղաղել, տանս այդ իրարանցման մէջ, անհաբեկիչները կրկին յարձակւեցին ինձ վրայ, ներս մտան, սկսեցին կողոպտել արկղներս, թանկագին իրերս, հազւագիւտ առարկաներս հաւաքել։ Բաց արին կնոջս և աղջկանս արկղները, գզրոցները, դուրս տւին զարդերը, հագուստները, կապեցին ու տարան։ Արիւնս բորբոքւեց, խաղաղութիւնս կորւեց, բայց ինչ, անօգուտ՝ մի թիզ, մի մատնաչափ անգամ տեղիցս բարձրանալու ույժ չունէի։ Սրիկաներն ինձ վրայ գոռում էին։

—Գո՛ղ, աւազա՛կ, բաւական չէ, որ եռեսուն տարի է կողոպտում ես մեր քաղաքացիներին, սարդի—մորմի նման բռնում ես խեղճերին, արիւնը ծծում. խանութդ մի ոստայն է, մի թակարդ, ուր գլորւում և բռնւում են բոլոր թոյլերը, արնաքամ դառնում, իսկ այժմ մեր ընկերներին, որոնք եկել էին ու տարել թշւառներից պոկածդ, դեռ յանդգնել ես նրանց մատնել ոստիկանութեան, որ կախաղան բարձրացնեն։

Ո՛չ միայն ամբողջ գոյքս տարան, այլ յափշտակեցին, փախցրին տղայիս էլ, աղջկանս էլ, կնոջս էլ, ինձ թողին մենակ և կողոպտւած, տանս էլ կրակ տւին ու հեռացան։

Կրակի բոցերը հետզհետէ ինձ էին մօտենում, սենեակս ծխով լցւել էր, ձգւում էի բոլոր ջղերովս և ոսկորներովս, որ մի կերպ դուրս գամ կրակից, բայց այնքան տանջանքից յետոյ, զննում էի, որ հազիւ հազ մի թիզ վեր էի բարձրացել տարածւածս

թիկնաթոռից։ Սեղմում էի կուրծքս, բոլոր ույժս հաւաքած ուզում էի գոռալ և օգնութիւն կանչել, բայց ձայնս կոկորդիս մէջ խեղդւած, չէի կարողանում անգամ ճչալ։

Այս տառապանքի մէջ յանկարծ ախոռապանս ձիս առաջ բերեց, ինձ գրկեց, նստեցրեց թամքին ու փախանք։ Մենք գնացինք միասին. անցանք լեռներ, ձորեր ու դաշտեր, առուներից ու գետերից, դալարների վրայից ու կանաչ անտառների կողքով և գնում էինք մոռացած ամեն բան։ Անցանք քաղաքներ, գիւղեր, պատահեցինք կառքերի և ճեպընթաց շոգեկառքերի, նաւահանգիստների, որտեղ կանգնած էին մի քանի տասնեակ նաւեր, բայց մենք առանց կանգնելու գնում էինք անվերջ։

Երբ մի սաղարթախիտ անտառի տակ նստանք հանգստանալու և բացինք մեր պաշարը կշտանալու, դարձեալ վրայ տւին նոյն անհաբեկիչները, մերկ սրերով և պողպատների սուր ու սառը ծայրերը յենեցին մարմնիս։ Նրանցից մէկն էլ փայլուն դաշոյնը բարձրացրեց, որ գլուխս ճեղքէ։ Երկիւղից այնպէս սոսկացի, որ մահւան քրտինքը պատեց ամբողջ մարմինս, ջուր կտրեց շորերս, սարսափից այնպէս ցնցւեցի, որ սթափւեցի, աչքերս բացի, գլուխս չորս կողմս դարձրի, ձեռքերս շարժեցի և ըմբռնեցի, թէ երազիս մէջ գապուս էի եղել (մղձաւանջ)։

Ե.

ՍՊԱՆԴԱՆՈՑ

Բախտի խաղը, պարագաները այնպէս էին դասաւորել, որ ինձ նշանակել էին մեր քաղաքի սպանդանոցի տեսուչ։ Թէև անողոք վիճակիս դէմ տրտնջալու և բողոքելու անչափ իրաւունք ունէի, աշխարհք էլ կարող էր վկայել, որ դա իմ տեղս չէր, բայց ինչ կարող էի անել, երբ փրկութեան, ապրելու ուրիշ միջոց չունէի.։ Պիտի խոնարհւէի անգութ դահիճներիս քմհաճոյքին, ինչպէս հազարաւոր մարդիկ ընկճւած կատարում են այնպիսի գործեր, որոնց դէմ են խղճով և համոզմունքով։

Դատաւոր-դահիճներս այնպիսի դաժան վճիռ էին տւել, որ ես գիշեր-ցերեկ ապրեմ ու աշխատեմ սպանդանոցում։ Անւանական կերպով տեսուչ էի, բայց իսկապէս՝ սպանդ։ Մտէք դրութեանս մէջ, ես որ կեանքիս մէջ ոչ զէնք եմ կրել, ոչ մի հրացան կամ ատրճանակ չեմ կրակած, ոչ մի հաւ չեմ մորթել, պարտաւորւած էի հանդիսատես լինելու այն անմեղ արիւնի հոսանքին, հեղեղին, որ զոհերի կոկորդից, վզից, աղբիւրի, շատրւանի նման ցայտում և շուրջս կարմիր ներկելուց յետոյ, սահում էր առւի միջից՝ գնում—թափւում գետը։ Փախչել չէի կարող, ինձ կեանքի մէջ տեղ ու բաժին չէին թողել։

Ակամայ հանդիսատես պիտի մնայի շուրջս կատարւածներին, պիտի գնէի այդ դաժան տեսարանները։ Բայց չկարծէք, որ դահիճներս հաւ, բադ, սագ, խոզ կամ ուլ էին մորթում, ոչխար ու եզ զենում, ոչ, ոչ, ոչ։ Գուցէ ես կարողանայի մորթել այդ անասուններին, թշւառներին կերակրելու համար, գուցէ ես հաշտւէի այդ վիճակի հետ, քանի որ դա ծառայելու էր մարդկութեան բարօրութեանը, տառապեալների վիշտն էր ամոքելու, սովածներին մահից փըրկելու։ Երանելի կլինէի, եթէ պաշտօնավայրս սովորական սպանդանոց լինէր և ես մսածախներին օգնէի... փոխանակ գեռահաս մարդիկ մորթելու, նմաններիս զենումը դիտելու, ջահել—ջիւաններին լոյս արևից զրկելու։ Դահիճներս իմ միջոցով, իմ անմիջական ներկայութեանը, կեանքից զրկում են մեր մատաղահաս ազնիւ զաւակներին, ընտիր ույժերին, ընաձիր սերնդին։

Ո՜հ, սոսկում եմ, երբ յիշում եմ այն զարհուրելի րոպէները, երբ մեքենայի ճախարակը պտտւում էր, դանակը վեր բարձրանում և մեքենայի մէջ հըրւած անմեղ գլուխը մարմնից անջատելու համար, յանկարծակի վար էր ընկնում գժոխային գործիքը և զոհի վիզը կտրում...

Կարող էք երևակայել, թէ ինչ հոգեկան տանջանքների էի դատապարտւած այդ զարհուրելի ժամերին, երբ իրար ետևից մեքենայի միջից դուրս էին գալիս ծանօթներիս, ընկերներիս, հոգեկիցներիս և մխիթարիչներիս գլուխները, որոնք մռայլ, հազիւ գննում էին դէմքս և իսկոյն անզգայ գլորւում...

Եւ ինչ անգնահատելի գլուխներ էին, ինչ հրաշալի ապագայ խոստանում այդ բոլոր դէմքերը, ինչ վսեմ յոյսեր էին ներշնչում։

Դրանցից առաջինը մի հրաշալի արձանագործ էր, քսան տարեկան, որն արդէն եօթը տարի առաջ մեծ հռչակ էր ստացել իր քանդակած Անահիտի անդրիով, որի մասին մի գեղեցիկ առաջնորդող էր գրել մեր հրապարակախօսներից մէկը, դրւատել ու ներբողել նրա ունեցած տաղանդը։ Ամբողջ եօթը տարի նա քանդակել էր, կերտել հրաշալի անդրիներ, որոնք բոլորն էլ տաղանդաւոր արձանագործի տանն էին մնացել, ոչ մի մարդ չէր փնտրել, որ գնահատէ և վարձատրէ այդ ստեղծագործողին։ Արհեստաւորը չկարողանալով վճարել Եւրոպայից բերել տուած գործիքների և մարմարիոնի գինը, պարտատէրերի հալածանքից ապաստան էր մտել սպանդանոց... Եւ այդ ապաստանի դիմողին պիտի գլխատէի։

Երկրորդ դէմքը մի դերասանի գլուխ էր, որն ինն տարի ծառայել էր բեմին։ Նրա խաղը ոգևորել էր հազարաւոր ամբոխին, որն առատութեամբ նրան ծափ էր շռայլել և այնքան սովորացել էր որ գրաստացած նրա կառքին էր լծւել։ Նրա գրաւիչ դէմքը, թափանցող աչքերը, քաղցր ձայնը, խորհրդաւոր դիմագծերը յուզել ու մրրկել էին հազարաւոր հոգիներ, արտասուք էին քաղել ապառաժ բիբերից, հառաչներ կորզել երկաթի թոքերից, փոթորիկներ բարձրացրել ճահճացած գանգերում և գութ էին ծլեցրել փայտի սրտերում։ Բայց ամբոխը նրա խաղը վարձատրել էր փունջերով և «կեցցէ»-ներով, իսկ նա թատրոնի կապալառուի, դերասանների, խանութպանների պահանջներից հալածւած, կարիքներից խեղդւած ընկաւ սպանդանոցի կացնի տակ...

Երրորդը մի ճարտար պատանի էր, որ գիմնազիոնը ոսկի մեդալով էր աւարտել և պատրաստւում էր մտնել գեղարւեստի ճեմարանը։ Նրա տուշանկար-

ները հեղեղել էին ամեն կողմ։ Նա նկարել էր հայ նշանաւոր կղերին ու աշխարհականներին, երկրամշակին ու գարբնին, քարտաշին ու հիւսնին իրանց աշխատութեան մէջ, քրտնաթոր և մրոտ։ Նրա նկարների մէջ կեանք կար, տեսնողին թւում էր, թէ նկարները շարժւում, գործում, խօսում և քարոզում էին։ Նա գրչի, մատիտի մի շարժումով թղթի, պաստառի վրայ կանգնեցնում էր սրընթաց հայդուկին, արագահոս ջրվէժին, փոթորկած ալիքներին, ամպերին, հողմերին, անձրևի կաթիլներին և նրա հանճարի առաջ խոնարհւել էին ոչ միայն իր ուսուցիչները, ընկերները, ճանապարհորդները, այլ նրա գործերը նկատելիս նախանձում էին աշխարհահռչակ նկարիչները։ Բայց նա ձգտելով իր կատարելութեան հասնել, բնութիւնը զննել և ուսումնասիրել՝ ծախել էր հայրական տունը և ծախսել մօր թանկագին զարդերը։ Նա չգիջանելով մուրալ, դիմել էր եկեղեցու երիցփոխին ու երէցին, որ նրան տան նկարելու տաճարի պատկերները, որպէսզի թէ կենդանացնէ այլանդակւած սուրաթները և թէ հնարաւորութիւն ունենայ գեղարւեստի ճեմարանները յաճախել։ Բայց նախանձոտները և անտարբերները մերժել ու վիրաւորել էին նրան և նա յուսահատ դիմել էր սպանդանոց...

Չորրորդ դէմքը մի քնքոյշ օրիորդի էր, որի երգը և ձայնը ես լսել էի մի մեծատան հրաւէրքում։ Նա իր քաղցր ձայնով և հրեշտակային շրթունքներով մեզ ոգևորեց, կաշկանդեց և մտքով տարաւ հասցրեց Եդէմի երանութեան պարտէզը։ Նա երգում էր և՛ ուսումնարանում, և՛ եկեղեցում, և՛ ակումբանոցում, և՛ հարսանիքներում։ Ամենքը կախարդւած էին

նրա ձայնով, ամենքն էլ հրապուրուած էին նրա եղանակներով, ամենքն էլ խոնարհւում էին նրա երկնատուր շնորհքի առաջ, երկրպագում էին նրան, բայց ոչ ոք չէր ցանկացել քսակը բանալ և նրան իր նպատակին հասցնելու համար, հնարաւորութիւն տալ կօնսերւատօրիա գնալու: Նրա հմայքից հիպնոսածները երազում էին նրան տիրանալ, նրան կին ունենալ իրանց ապարանքներում, նրա շնորհքը՝ բլբուլի մեղեդիները միայն-միս մենակ վայելել: Եւ այս հետամտողներից հալածուած, զզուած, նա նախապատիւ համարեց անձնատուր չլինել այդ մոլեգնածներին և մտել էր սպանդանոց...

Հինգերորդ դէմքը իմ ամենասիրելի ընկերոջս էր, որն աւարտել էր Վարշաւայի կօնսերւատօրիան առաջին մրցանակով: Նա մի նշանաւոր երաժիշտ էր, տաղանդաւոր կօմպօզիտօր, մի հանճարեղ աւանդող: Նրան ամեն կողմից հրաւէրներ էր գալիս զանազան պաշտօնների, իսկ նա մերժում էր, իր կոչումը այդ բոլորից շատ բարձր համարելով: Նա ձգտում էր արեւելեան մուզիկայի քաղցրութիւնը եւրոպական երաժշտութեան նրբութեամբ կանոնաւորել և քառաձայնի վերածել, ներդաշնակել և սքանչացնել արեւմուտքի կրթուած հոգիները: Նա ժողովրդական և աւանդական երգերի եղանակներն էր ձայնագրում, ներդաշնակում, դրանցով օպերաներ էր հեղինակում և նւագներ հարթում: Նա բաւականանում էր տարեկան ներկայացրած չորս հինգ համերգի հասոյթով, որով ապրում և շարունակում էր նախագծած ուղին — դէպի նպատակակէտը: Բայց մեր անընդունակ քաղաքացիները նրան ծաղրեցին, անտարբեր մնացին դէպի նրա վեհ գործը, չյաճախեցին նրա համերգներին, նրա դասերը մերժեցին, խռովեցին նրա հոգին

և նա առանց նեցուկի, դատարկ քսակը աղբանոց շպրտեց, հսկայաբար մտաւ սպանդանոց և անձամբ գլուխը կախեց մեքենայի տակ, որի ճախարակը անվերջ պտտում էր և ես ույժ չունէի կանգնեցնելու...

Վեցերորդ գլուխը մի բանաստեղծի էր, որի խոր մտքերով արձակ ու չափաւոր երկերը երկինք էին բարձրացրել մեր քննադատներն ու բանասէրները: Նրա երգերը ժողովուրդը բերնից բերան աւանդում էր, քաղաքից քաղաք և գիւղեց գիւղ տարածում: Ամեն մի սեղանի վրայ տաքացած գլուխները երգում էին ոգեւորուած նրա բանաստեղծութիւնները: Նրա վէպերը նիւթ էին մատակարարել բոլոր աշուղներին ու նւագածուներին, որոնք իրենց սազն ու թառը շալակած գիւղից գիւղ թափառում և պատմում էին հողագործին, ոգևորում, սթափեցնում և զարթեցնում էին լեթարգիական թմրութիւնից: Իսկ գովաբանուած բանաստեղծի տպած արձակ ու չափաւոր երկերի հատորները փթում էին գրավաճառների մթերանոցներում և ոչ ոք լուրջ րոպէներում չէր էլ մտածում մի ռուբլի վճարել և այդ երկերը ձեռք բերել: Նա այնքան նեղ վիճակում էր մնացել, տպարանատէրերը և թղթավաճառները այնպէս էին նրան հալածում, որ անարգանքից խուսափելու համար նախապատիւ էր համարել ապաստան գտնել սպանդանոցում:

Եօթերորդ գլուխը մի հանճարեղ ճարտարապետի էր, որը նոր էր աւարտել Պադուայի համալսարանը և ինչպէս գիտութեան այդ տաճարից, նոյնպէս և Միլանի գեղարւեստի ցուցահանդէսից առաջին մրցանակն էր կորզել իր շնորհքով: Նա մերժել էր պաշտօններ, առաջարկներ, դիմել էր Շիրակ՝ պեղելու աւերակ գանձարանները, որ հրատարակի աշ-

խարհին մեր գաւառի քառասուն դարի ճարտարա-
պետութեան ելևէջները։ Նա կիսակործան տաճար-
ներին սրբութեամբ մօտեցած արտանկարում էր և
դասաւորում նիւթերը, զիջանելով շինականի հետ
չոր հացով ապրել…

Բայց մեր կոպիտ և անզգայ սրտերը այդ դարի
հայը և գոմերի տաք սենեակը նրան մերժեցին և
նա նա սովից հալածուած, եկել էր գլուխը մեքենայի
տակ դնելու։

Եւ այսպէս մեր քաղաքի բոլոր հալածուած հան-
ճարները, անգնահատելի տաղանդները, առատաձիր
արհեստաւորները, գիտնականները, բանաստեղծնե-
րը, բուսաբանները, գիւղատնտեսները, նորութիւն
բերողները և արևմուտքը արևելք փոխադրելու տեն-
չով բռնուածները, մեր կեանքի ուղն ու ծուծը՝ իրար
ետևից դիմում էին սպանդանոց և անվերջ։

Սիրտս մաղձով ու ժահրով լցուած պիտի
զննէի այդ սիրելիներիս թախծալի դէմքերը, պիտի
թափանցէի դրանց տակ թագնուած վշտի ծովերը,
պիտի կարդայի դրանց սրտի խոր վէրքերի աս-
տիճանները, պիտի խրուէի այդտեղ լճացած ժահրի
ծովերում և արձանի նման պիտի զննէի ճախարակի
պտոյտները, պարբերաբար ընկնող կացինը և այդ
հանճարաւոր գլուխների մարմնից անջատումը։ Եւ ես
անզգայաբար մեքենայ դարձած՝ անտարբեր զննում էի
դաժան բախտի այդ հրէշային անիւը, հեղեղի նման
հոսած անմեղների կարմիր ու կապոյտ արիւնը, որ
ցայտում էր շառաչելով, խշխշալի սահում, անցնում
էր ասֆալտէ յատակի մէջ ձգուած առուից և գնում
դէպի Ախուրեան,

Այս արիւնի հեղեղները ինձ շշմեցրել, գինով-

ցրել էին, վարժւել էի դժոխային տեսարանները ան-
տարբեր դիտելու, գութը փախել էր կրծքիցս, կա-
րեկցութիւնը երկինք համբարձել, իսկ իմ և շրջա-
պատի ժողովրդի իսկական շահի, օգտի պահանջը
ըմբռնելու և գնահատելու ընդունակութիւնից զրկ-
ւել էի։

Թ.

ԱՍՐԵԿՏՈՒՐ

Գնացել էինք ԵաՀնիները, գրեթէ սրանից քառասուն տարի առաջ։ Այն ժամանակ Թուրքի ձեռքի տակ էր մեր վիճակը և Օսմանլուի «զուլումից» լալիս էին ոչ միայն մարդիկ, այլ նոյն իսկ անասունները, մինչև անգամ ախոռի ձիերը, աղլի շները և գոմերի առիքներին բուն դրած աղաւնիները։ Թէև շատ փոքր էի, եօթը տարեկան, բայց քանի որ առաջնորդող հօրեղբայրներս մենծ-մենծ աղաներ էին, ես էլ փոքր աղա էի։ Իսկ աղաներին տեսնելու պէս ռայաթի, կովերի, ձիերի, շների և աղաւնիների լաց ու կոծը է՛լ սաստկացաւ, է՛լ բորբոքւեցաւ։ Որ կողմը որ գնում էի, արտասուք էի տեսնում, ով մեզ մօտենում էր, արտասւում էր։

Աղաների տներում լաց, արտասուք շատ էի տեսել, բայց շւան, կական այս առաջին անգամն էր որ տեսայ ԵաՀնիների եայլաւորների մէջ։ Մեր օրօրոցի երեխաների այդպիսի հեկեկանքով լացը երբէք չէի լսել։

Մեզ ծառայողները, լւացւելու ջուր տւող աղջիկները, կերակուր բերող երեխաները, ձիերին դարմանողները եայլայում, բոլորը ողբում էին իրանց վիճակը։ Սա մի այնպիսի սգի տեսարան էր, որին ես առաջին անգամ միայն ականատես եղայ կեանքումս և այնքան վատ ներգործեց ջղերիս վրայ, որ դա ինձ մտածութեան նիւթ դարձաւ։

Մենք ամառանոց գնացել էինք սարեկտուրի։ ԵաՀնիներում տասը հօտ ոչխար ունէինք և այդ ըղբօսանքի տեսարանը երբէք չի անհետացել իմ յիշողութիւնից։ Թէպէտ մինչև այս իրիկուն ես դրա մասին չէի էլ այնքան հետաքրքրւել, բայց գիշերւանս արտախաքական թատրոնի արտասուքները յիշեցրին ինձ այդ արտասուքի տեսարանները, արտասւող շինականներին։

Ես չեմ նկարագրելու մեր վրանները, պաղ աղբիւրները, նուրբ դալարները, ընդարձակ արօտները, արծաթափայլ Մշկօյի լճակը, մանաւանդ գոյնզգոյն և անուշահոտ ծաղիկները, որոնցից թարմ փնջեր էի շինում, նւիրում հարազատներիս և դարձեալ վազում, թաւալւում այդ գրաւիչ ծաղիկների մէջ։

Բայց ուր որ գնում էի, երբէք առաջիցս չէին հեռանում արտասւաթոր աչքերը, լալկանների ողբերը չէին կտրւում ականջիցս։ Մենք սեղան էինք նստում, առաջներս սեր էին բերում, կաթնապուր հրամցնում, հաւի կուրծք տալիս, գառ էին կարմրացնում, խորովածներ անում, բայց ոչ մի պատառ չէի կարողանում կուլ տալ առանց մտածելու այդ արտասուքների ու ողբերի պատճառների մասին։

«Զուլում է,» հառաչում էին, «զուլում է» ու անձրևի կաթիլների նման արտասուք էին թափում բիբերից։ Ես յուզւած դարձայ հօրեղբօրս և հարցրի, թէ—այդ գիւղացիները ինչի՞ են լալիս։

—Նրանք ոչխար են, սաստ ծիծաղելով ծերուկը,—ոչխար են, լալիս են։

Այս բացատրութիւնից ես բան չհասկացայ: Բայց հօրեղբայրս այնքան էր զբաղւած ոչխար գնող չողարների հետ, որ նա էլ ժամանակ չունէր ինձ ընդարձակ բացատրելու: Մարդիկ ինչպէս էին ոչխարացել, ես այդ չէի հասկանում և ինձ հետաքրքրում էր այս խնդիրը:

Այս մտքով զբաղւած էի, երբ քաղաքից մշակներն եկան և մկրատները ձեռքերին նստան դալար խոտի վրայ ու սկսեցին մէկ-մէկ բռնել ոչխարներին, խուզել: Հովիւները բերում էին ոչխարներին, ծառաները մէկ-մէկ բռնում և տալիս էին մշակներին, որ խուզեն: Մեծ մեծ բարդանները լցնում էին բուրդը և դիզում: Այնքան շատ էր բուրդը, որ ջուալները հատան, իսկ մնացորդը բաց օդում լցին, քո վերը և վրան քար շարեցին, մինչև քաղաքից նոր բարդաններ բերելը:

Այս ժամանակ մօտեցայ խուզողներին և հարցրի, թէ ինչու՞ են մկկում ոչխարները, խօ միսերը չի ցաւում խուզելուց:

—Ո՛չ, ախին,—չի ցաւում, բայց չեն ուզում խուզենք, որպէսզի չմրսեն:

—Էլ ինչի՞ էք խուզում, մեղք չե՞ն անասունները:

—Մեծ աղան այդպէս չի ասում, ժպտացին մշակները.—եթէ չխուզենք, այն ժամանակ ինչո՞վ պիտի թանկագին կերպասներ գործեն, որ աղաներն հագնեն:

—Ուրեմն մեծ աղա՞ն է հրամայել, որ խուզում էք, ասացի:

—Այո, հրամայած է, պէտք է որ խուզենք:

Ամբողջ օրը խուզեցին: Ես մտածում էի, որ թշւառ ոչխարները գիշերը լեռան պաղ օդին պիտի մրսեն, իսկ մեծ աղայի հրամանին ո՞վ կարող էր հա-

կառակ կանգնել: Եւ ինչպէս խռնւում, իրար վրայից ցատկոտում էին խուզւածները:

Երբ առաջին հօտի հազար ոչխարը խուզեցին պրծան, հովիւը շւին առաւ և սկսեց նրանց հաւաքել: Նկատեցի, որ այս ու այն կողմը ցրւած ոչխարները շւիի ձայնը լսելու պէս յետ դարձան և արագ քայլերով եկան շրջապատեցին հովիւ Հարունին:

Հովիւը անվերջ փչում էր շւին նոյն եղանակով և խաղացնում խումբը, Ոչխարները իրար էին կպչում և առաջ մղւում: Հարունը փոխեց իր մելօդիան, իսկ ոչխարները քարացած մնացին: Վերջապէս մի նոր եղանակով նրանց լացացրեց և ոչխարները եայլաւորների նման սկսեցին հեկեկալ:

Ես ծիծաղում էի, թէ ինչի էին լալիս ոչխարները: Անհագին հօտին ինչ եղաւ, որ շւու ձայնից սկսեցին այդպէս յուզւել և հեծեծել: Զարմանքս յայտնեցի մեր սեննկապանին, խնդրեցի որ ինձ բացատրէ, թէ ինչի՞ էին լալիս ոչխարները:

Գրիգորը թէև հասակաւոր մարդ էր, բայց նա էլ ինձանից շատ բան չգիտէր և պատասխանելու համար ասաց.

—Հարունը ոչխարների վարդապետն է, ոչխարներն էլ նրա ժողովուրդը: Ոչխարը լեզու չունի, նրանց քարոզում է շւիով և նրանք նրան լսում և հետեւում են: Ես Հարունից խնդրել եմ, հիմի ոչխարին ջուրը պիտի տանի. տես, ինչ խաղեր կանի մեր Հարունը, ինչպէս կխաղացնէ ոչխարին, ինչպէս նր-րանք կհնազանդւեն իրենց առաջնորդին:

Անմիջապէս Հարունը փոխեց եղանակը և ոչխարները դարձան դէպի Մշկօների լիճը: Հարունը անվերջ փչում էր, իսկ ոչխարները զինւորների նր- ման երկու կարգ շարւում էին լճի ափին և տարած-

ւում։ Հարունը փչում էր շարունակ նոյն եղանակը, իսկ ոչխարները շարւում, բայց շարքերում անշարժ դեռ կանգնած էին։

Յանկարծ Հարունը նոր եղանակ ածեց և բոլոր ոչխարները ծնկաչոք բերանները մօտեցրին լճի ափին։ Շուրից մի բարձր եղանակ թռաւ, ոչխարները բերանները յետ քաշեցին։ Էլի մօտեցրին, էլի յետ քաշեցին, այնպէս որ Հարունը նրանց խաղացնում էր այն տեսակ, ինչպէս համշարինները քաղաք բերած կապիկներին։

Վերջապէս թողեց, որ ջուրը խմեն. էլի յետ դարձրեց, խմեցին, յետ քաշւեցին, ցնցւեցին, վեր վեր թռան, յետ դարձան, առաջ գնացին, ճիշտ այնպէս, ինչպէս ուզում էր Հարունը։

Ես զարմացած մօտեցայ Հարունին, հարցրի, ոչխարները քեզ ինչի՞ են լսում, ինչպէս ես սովորեցրել, որ այսպէս հնազանդւում են։

—Ոչխար են, էլի աղա ջան,—ասաց Հարունը,—ինչպէս ածեմ, այնպէս էլ կը պարածեմ։

—Ուրեմն կարող ես բարձրացնել այս ապառաժի գլուխը և նրանց լիճը թափել։

—Եթէ ուզում ես, ինչի՞ չէ։

—Բարձրացրու տեսնեմ, ասացի և Հարունը փչեց շւին, ոչխարներն սկսեցին բարձրանալ և այդտեղից մոլեգնած մի քանիսը թռան դէպի լիճը։ Ես զարմացայ, իսկ Գրիգորը խփեց Հարունին և ասաց.

—Յետ տուր ոչխարը, թէ իմանայ մեծ աղան, քեզ կախել կտայ։ Ախար նրանք խեղճ անասուն են, ինչպէս որ ուզենաս, այն կողմը կդարձնես։

—Ախար ինչի են գնում ու լիճը ցատկում,—հարցրի Գրիգորից,—նրանք չե՞ն իմանում, որ կը խեղդւեն։

—Ախար դրանք անբան անասուն են, գիտակցութիւն չունին. ինչպէս որ ածէ Հարունը, այնպէս էլ կը պարածէ։ Թէ խելք ունենային, գիտակից լինէին, ինչի՞ ջուրը կը թափւէին։

Ժ.

ԴԱՀԻՃ

Օրը ցերեկ էր, ճաշից քիչ անցած։ Ամառ էր և շոգն ինձ անչափ նեղել էր։ Ես սովորական պաշտօնատեղս էի, դարձեալ ինձ շրջապատել էին նախկին պաշտօնակիցներս և դարձեալ նըստած էի այն թիկնաթոռիս վրայ, ինչպէս նստում են փշերի խուրձին։ Մտածում էի դաժան բախտիս այն անողոք վիճակի մասին, որն իմ ձեռքով փշրում, ջախջախում էր համոզումներս, սկզբունքներս։

Եւ ես դատապարտուած էի անմռունչ տանել այդ սոսկալի հարուածները։

Երբ սիրտս բաբախումի սաստկութիւնից քիչ էր մնում տրաքուէր, երբ գանկս բռնկումից էն էր, որ պիտի բոցավառուէր, յանկարծ սրահի դուռը շառաչելով բացուեց և անդրանիկ աղջիկս աղաղակելով ներս փախաւ, ուզում էր ապաստարան որոնել իմ յետևս, որ կեանքը փրկէ իրան հալածողից։ Ես յուզուած զննեցի դստերս դէմքը, այնպէս որ նա ստիպուեց պատասխանել.

—Հայրիկ, ինձ փրկիր, հայրիկ, ինձ ազատիր դահիճներիս ձեռքից, հայրիկ, ուզում են արիւնս թափել, արևս խաւարել։

Աչքերս մթնեց, սրտիս տրոփիւնի առաջն առնելու, կսկիծներիս դիմադրելու համար պարտաւորուեցի երկու ձեռքով կուրծքս պինդ սեղմել և շըրթներս փակել, որ չը նկատեմ շուրջս կատարուածները։ Աղջիկս անընդհատ շարունակում էր իր աղերսը, իսկ ես այնպէս էի ընկերակիցներիցս—պաշտօնակիցներիցս սանձահարուած, որ պարտաւոր էի զսպել բոլոր զգացումներս, դատապարտուած էի դէմքիս կնճիռներին անգամ շղթայել, որ չարտայայտեն սրտիս խորքերի մէջ կատարուածները։ Զսպելու էի շըթունքներս, լեզուս, պնչներս, շունչս, որ կարեկցութիւնս կամ տկարութիւնս չնկատեն և սառնասրտութիւն էի կեղծում այն վայրկեանին, երբ ջղատւում, քայքայւում էին մկաններս ու ոսկորներս, աղջկանս—հոգւոյս հատորի վայնասունից։

Եւ դերս աւելի հմտութեամբ կատարելու, շըրջապատներիս ապշեցնելու տենչով սառնասրտութիւն ձևացնելով, հարցրի։

—Մաքրուհի ջան, այդ ինչ է պատահել, ով է ուզում արևդ խաւարեցնել։

– Եղբայրս, հայրիկ ջան, եղբայրս,—Անկախը, մեր խելաբժուժ Անկախը և ընկերները։

—Այդ ինչ է պատահել, ինչի պիտի հարազատ քեզ այդպէս հալածէ... Անկա՛խ, ինչ ես ուզում Մաքրուհուց։

—Հայրիկ, լեզուս չի դառնում, չեմ կարողանում խօսել... Քոյրս՝ Մաքրուհին մեզ դաւաճանեց, մեր դատը խայտառակեց։ Նա ինձ խայտառակելով ջախջախեց մեր այնքան տարուան եռանդի և տքնու- մի արդիւնքը։ Մաքրուհին պատռեց այն բոլոր մութ

վարագոյրները, որի տակ ծածկուած էին մեր խորհրդաւոր տենչերն ու ձգտումները։ Նա մեր գաղտնիքը և թոյլ կողմերը պարզեց աշխարհին, էլ չենք կարող ծածկել մեր հեռաւոր նպատակը հակառակորդների աչքից։ Մենք և մեր քանհինգ տարուան տանջանքով կառուցածը կործանուած է։

—Այս ինչ դաւաճանութիւն է, Մաքրուհի, ինչի՞ է քեզ ամբաստանում եղբայրդ, ասա՛ ճշմարտութիւնը, ես հաւատացած եմ, քո շրթունքներից յաւիտեան կեղծիք չի բղխիլ։

—Հայրի՛կ, ես բոլորովին անմեղ եմ, եթէ ճշմարտութիւնը խոստովանելով յանցանք եմ գործել, դրա մեծ բաժինը քեզ է հասնելու, քանի որ դու ինձ Մաքրուհի անուանելով, մանկական հասակից վարժեցրիր ճշմարտութեան շաւղից երբէք չը հեռանալ։ Ճշմարտութեան եմ ձգտում, այդ է իմ որոշ դաւանանքս և եթէ դրա համար դատապարտուեմ, այդ էլ թող լինի իմ փառքս—միակ պսակս։

—Բայց հանգամանքները... պարագաները... ժամանակը...։ մանրամասնութիւնները,—թոթովեցի ատամներս կրճտացնելով։

—Ես բոլորովին հանգամանքներ ու պարագաներ ի նկատի ունենալու պարտաւոր չեմ։ Երբ յանկարծ ինձ ներկայացան երեք անմեղ կոյս և հարցրին. Մաքրուհի, մենք քո խօսքի վրայ պիտի հիմնենք մեր վճիռը, ասա մեզ ճշմարտութիւնը, հայկական վեց վիլայէթում քանի՞ տոկոս հայ կայ և որքա՞ն մահմեդական։—Ես առանց տատանուելու և հեռաւոր մտքերի մէջ թափանցելու պատասխանեցի, թէ—անկասկած հայերի կրկնապատկից աւելի շատ մահմեդականներ են ապրում այդ նահանգներում։ Ահա իմ յանցանքս, ահա ինձ վերագրուած ոճիրը։

—Այդ որքա՜ն դու անգէտ ես, Մաքրուհի, որ միևնոյն յանցանքդ պարզում, կրկնում ես հօրդ և նրա ընկերակիցների շրջանում, առանց զգալու թէ՝ ինչ սարսռեցուցիչ ազդեցութիւն է թողնում քո խօսքերը շրջապատողներիդ սրտերում։ Համարձակ չաւ ես անում այն անհերքելի ճշմարտութիւնը, որը հայրենասիրութեամբ բոցավառուած հազար ու բիւր ընկերներիս սառեցնում, թուլացնում ու բաժանում են ինձանից և քայքայում ես կեանքս ու ուժս։

—Հայրի՛կ, դաւաճանը անձամբ խոստովանեց իր յանցանքը, սպասում եմ անողոք վճռիդ։

—Բայց ես չգիտէի, եղբա՛յրս, չէի կարող ենթադրել, թէ դուք ինչ ծրագրներ ունիք, ինչ հիմունքով էք առաջնորդւում։ Մանաւանդ, որ ես համոզուած եմ, թէ կեղծիքը չի կարող իր գոյութիւնը պահպանել. միայն ճշմարտութիւնն է անյաղթելի և ամենակալ։

—Հայրի՛կ, պապանձեցրու սրա շրթունքները, կործի՛ր սրա լեզուն, ապա թէ ոչ... բոլոր հայրենասէր ընկերներս երեսները թեքելով պիտի անջատուեն, մեր դատը, 61-րդ յօդուածը օդը պիտի ցնդի։ Հա՛յր, մեր գործը զոհ է պահանջում, մենք առանց մեծամեծ զոհաբերութեան չենք կարող հասնել մեր ձրգտումին։ Ընկերակիցներս պահանջում են, որ Մաքրուհու ձայնը խաղաղ կորչի։

—Հայրի՛կ, սխալւում է եղբայրս, հայրի՛կ, կեղծիքը չի կարելի յաւիտեան ծածկել։ Նա ինչպէս պիտի կարողանայ խաղաղութիւն և անդորրութիւն պահպանել մի երկրում, ուր ուզում է փոքրամասնութեան հպատակեցնել մեծամասնութիւնը։

—Մաքրուհի, ասացի արձանացած թիկնաթոռիս վրայ,—դու դաւաճանեցիր ազգիդ, պապերիցդ ժառա-

ցած ժառանգութեան դատին։ Պէտք է ընկերակիցների դատավճիռը գործադրելի, անհրաժեշտ է ձայնդ իսպառ կտրել…

—Հայրի՛կ, ասաց աղջիկս աւելի համարձակ առաջ գալով, չէ՞ որ աշխարհի ամենագեղեցիկ մանեակս, մաքրութեան դրօշմս—ճ շ մ ա ր տ ո ւ թ ի ւ ն ն է, որը որևէ գնով ծախելու, փոխելու և ծածկելու արտօնութիւնից դու ես ինձ զրկել։ Ես ի՞նչպէս սըտէի, կեղծէի։

—Այժմ գործի յաջողութիւնը պահանջում է քո իսպառ լռութիւնը, առաջ արի, ասացի և նշան տուի, որ պաշտօնակիցներս նրա գլուխը մտցնեն մեքենայի տակ և դարձնեն անողոք ճախարակը…

Ես անզգուելի դիտում էի զարհուրելի տեսարանը. Սիրտս կտոր կտորեղաւ, անդրանիկիս արիւնը խաւարեցրեց աչքերիս լոյսը, հոգիս։ Ճնշւեց սիրտս, ցընցւեցին ջղերս, բայց անճարացած պիտի լռէի և անզգւելի հայրենասէր հօր դերը պիտի կատարէի, քանի որ այդ էր պահանջում անողորմ վիճակս, այդ էր թելադրում տոհմական և անձնական շահս։

Բայց այս արձանացումը երկար չտևեց։ Չեմ կարող ասել, թէ որքա՞ն միջոց էր անցել Մաքրուհուս մարմինը գետը շպրտելուց, երբ ահաւոր աղմուկով ներս վազեց երկրորդ աղջիկս՝ Իրաւունին, իր հուժկու ձայնով սրահս դղրդացնելով, փոթորկելով իմ և ընկերներիս սիրտը։ Իսկոյն զգացի, որ գտնւում եմ չարագուշակ ժամում։

—Հա՛յր, ասաց ոռնալով, հա՛յր, եղբայրս՝ Տիրանը ուզում է նիզակը կուրծքս մխել։ Ազատիր ինձ նրա բռնութիւնից, որը չի զիջանում լսել արդարութեան ձայնին և խոնարհւել։

Ես սարսափեցի, լեզուս բռնւեց, անկարող էի

շրթունքներս շարժել կամ ձայնս կոկորդիցս դուրս հանել։ Ամբողջ մարմինս ծակոտեցաւ, կարծես ասեղներ էին խրւում ամեն կողմից և փշաքաղւում էի ողջ անձով։

Տիրանը զինւած ներս խուժեց, յարձակւեց քրոջ վրայ, ուզում էր նիզակը նրա կուրծքը մխել, երբ նրա ձեռքերը բռնեցին պաշտօնակիցներս։ Այդ ճընշումից ընկճւած, Տիրանը սթափւեց և չորս կողմը քննելուց յետոյ, ասաց.

—Անգո՛ւթ…

—Տիրան, ինչի՞ ես բռնանում քրոջդ վրայ, ի՞նչ է պատահել, ասաց պաշտօնակիցներիցս մէկը, որ որդուս բորբոքումից սաստիկ վրդովւած, չէր կարողանում կրքերը սանձել։

—Դա մեզ մրեց, դա մեր դատը ոչնչացրեց, դա մեզ դարևոր իրաւունքներից զրկեց. դա չը պէտք է ապրի…

—Օրիորդ Իրաւունի, ճշմարի՞տ է այս ամբաստանութիւնը, ուղի՞ղ է, որ դու հայրենի դատը թըշնամիներիս օգտին ես վճռել։

—Երբէք ես ի նկատի չեմ ունեցել բարեկամ կամ թշնամի, երբէք ինձ չեն առաջնորդել ազգականներիս և օտարների շահերը։ Երբէք ես չեմ կարող զանազանել մերձաւորիս՝ հեռաւորից, զօրաւորին անզօրից։ Ամեն քայլափոխում ինձ ուղեկցում է միմիայն ա ր դ ա ր ո ւ թ ի ւ ն ը։ Ինձ ներկայացան երեք երիտասարդ՝ մի հայ մի քրդի և մի թուրքի հետ, խնդրեցին, որ իրանց դատը արդարութեամբ վճռեմ։

Հայը ներկայացրեց կալւածագիր, որը հազար տարի առաջ վաւերացւած էր Բիւզանդիոնի կայսրից։

Այս կալուածագիրն հաստատում էր, որ Եփրատի ափի այգին նրա մեծ հօրից մնացած ժառանգութիւն էր և պահանջեց քրդին ու թուրքին այգուց հեռացնել: Թուրքը մի ուրիշ հրովարտակ դուրս բերեց, որով սուլթան Մուրադ Գ-ը այդ այգիները նրա իսլամն ընդունած պապերի վրայ էր հաստատել և պահանջում էր այգուց հեռացնել հային ու քրդին: Իսկ քուրդն ասում էր, թէ ինքն այդ այգեստանը ժառանգութիւն էր ստացել հօրից և յիսուն տարուց ի վեր մէջն էր ապրել, հայից ու թուրքից հարկ ստանալով, վարձ առնելով:

Ես չէի կարող երևակայել, որ այս հարցի տակ թագնուած էր ուրիշ մեծ խնդիր, կամ ուրիշ գրագ, ուստի վճռեցի, որ երեքն էլ հաւասար իրաւունքով այգու տէրերն են, այգու մէջ մաս ունին երեքն էլ հաւասար ձայնով: Բացատրեցի, թէ այգին այնքան ընդարձակ էր, որ կարող էին երեքն էլ միջից ապրուստ վաստակել և ընտանիք պահել: Այս բոլորն ի նկատի առնելով, այգին երեքի բաժանեցի և համոզեցի, որ խաղաղութեամբ մշակեն ու ապրեն եղբայրաբար: Սրա վրայ բարկացաւ Տիրանը, կրակ կտրած գնաց զինուեց ու յետևից ընկաւ:

—Դու ցեղիդ ժառանգական իրաւունքի դէմ մեղանչեցիր, գոռաց Տիրանը,—դու մեր դարևոր դատը ոտնակոխ արիր, լռի՛ր, և ինձ դառնալով աւելացրեց յուզուած.

Հա՛յր, այն լեզուն, որ դրժեց տոհմի իրաւունքների դէմ, պիտի արմատահան լինի: Նա որ հայրենի հողի վրայ ուրացողին և եկւորին հաւասար իրաւունք է տալիս, նա այդ երկրի երեսին ման գալու իրաւունք էլ չունի:

—Ուրացո՞ղ թէ եկւոր, ասաց Իրաւուհին, քանի

որ ապրում և աշխատում է մի երկրի վրայ, նա իր ապրուստը պիտի ստանայ նոյն հողից, այն իրաւունքով, ինչ արտօնութեամբ որ նա ծծում է օդը, խմում է ջուրը, տաքանում է արևի ջերմութիւնից, ստանում է ցօղ և ցուրտ: Մի՞թէ քո պապերն էլ մի քանի անգամ չեն փոփոխել իրանց կրօնը, իրանց դաւանանքը, կամ ինչի՞ց գիտես, որ նրանք էլ չեն եկել այս երկիրը և չեն յափշտակել այս հողերը աւելի հին բնիկներից:

Ամենքի աչքը դարձան իմ կողմը, ամենքն էլ սպասում էին վճռիս: Ամբողջապէս ուժս կենտրոնացրի, որ խօսեմ, բայց հնար չգտայ, ձայնս չբարձրացաւ, ուստի մատիտը վերցրի և գրեցի:

«Ոչ է պարտ առնուլ զհաց մանկանց և արկանել շանց», և նշան տւի, որ Իրաւուհուս գլուխը մըտցնեն մեքենայի տակ:

Պաշտօնակիցներս անմիջապէս իրանց գործը կատարեցին: Իրաւուհուս կտրուած գլուխը փոխանակ գետին թաւալելու, բարձրացաւ, կանգնեց իր ուրւականի վրայ և կարդաց ինձ դառը դատավճիռ: Կտրած գլխի շրթունքների շարժումից. և ձայնից սարսափած լսեցի:

—Ո՛չ, դու էլ հայր չես, ո՛չ, դու ոչ միայն որդեսպան գազան ես, այլ աւելի քան հրէշ, որը կարող է երևակայել մարդկային միտքը: Դու ինձ Իրաւուհի անւանեցիր, դաստիարակեցիր, որ արդարութեան շաւղից դուրս չգամ: Եթէ ես կեանքի ամեն քայլափոխին պարտաւորուած էի արդարութիւնից չըշեղուել, ինչի՞ եղբօրս անիրաւ ընթացքի համար, հայրենի ժառանգութեանս պատճառով, արդար վճիռ տալուց պիտի խուսափէի: Եթէ կեանքի անիրաւին պիտի քամահրէի և արդարին երկրպագէի, ինչի՞

դլուխս կտրել տւիր, ո՛վ հրէշ, որպէսզի անարգել կարողանաս ոտնատակ տալ արդարութիւնը։ Ո՛չ, դու չես կարող արդարն սպանել, հրէշ դու չես կարող Իրաւը պապանձեցնել, չես կարող խղճիդ խթանները փշրել։ Գիշերը քունդ, ցերեկը հանգստութիւնդ կորեցիր. ծանրաբեռնւած խիղճդ ամեն օր քեզ սպանդանոց պիտի բերէ, որպէսզի առաքինութիւնները մահացնես, բայց Նպատակիդ չպիտի հասնես, արդարութեան դահիճ։

—Լռի՛ր, քոյրիկ, լռի՛ր, ասաց առաջ գալով երրորդ աղջիկս՝ Սիրանոյշը, մի՛ դժոխացնիլ հայրիկիս թունաւորւած կեանքը։ Նա իր հարազատների անհուն սիրուց արբած, իր նախորդների անջինջ յիշատակներից հրապուրւած, ձգտում է միմիայն սէր, խաղաղութիւն և կուլտուրա տարածել հայրենիքում։ Նա ի՛նչ մեղաւոր է, եթէ նրա տկարացած միտքը յափշտակութիւնից շշմել, ընկերների անվերջ տրտունջներից բթացել, Նպատակին զոհ է բերել իր սիրասուն զաւակներին...

—Հայրի՛կ, ասաց այս միջոցին ներս վազելով երրորդ որդիս՝ Աւվրէժը,—հայրի՛կ, մենք խայտառակւեցինք, մենք կործանւած ենք։ Սիրանոյշը իր սէրն ու սիրտը տւել է մի վայրենի քրդի, որն եկել է նրան իր վրանը տանելու։

—Այո՛, հայրիկ, դու ինձ Սիրանոյշ անւանելով վարժեցրիր ոչ միայն հարազատներիս սիրելու, այլ ընտելացուցիր թշնամիներիս անգամ անկեղծ հոգով գուրգուրալու և պաշտելու։ Ի՞նչ յանցանք եմ գործել, եթէ ես սիրել եմ Մուսա-բէկի որդուն՝ Իսաբէկին, որն ինձ պաշտում է իր բուռն սիրով և անսահման յափշտակութեամբ։ Ես համոզւած եմ հա՛յր, որ դու չես դրժիլ սկզբունքներիդ դէմ, չես սպանիլ

անմահ սէրը, որն հիմնւած է քո հաւատքի աւանդած անլուծանելի և անբռնաբարելի վարդապետութիւնով։

Երբ ես ճիգ էի թափում աղջիկս փրկելու, բայց լեզուս չէր պտտում, ձայնս չէր բարձրանում միտքս արտայայտելու, Աւվրէժը գուշակեց միտքս և ասաց.

—Հա՛յր, Սիրանոյշը չի կարող թշնամուս՝ Իսայի կինը դառնալ, նրան մի թոյլ տայ, որ անարգէ հայրենի օջախի պատիւը, անունը արատաւորէ և ձեռքերս նրա արիւնովը ներկւի։

—Ո՛չ, ասաց յանկարծ Մաքրուհուս ուրւականը, ո՛չ, հա՛յրիկ, Սիրանոյշը չպիտի մեռնի։ Սիրանոյշը պիտի մխիթարէ վշտակոծ հօրը և չարքաշ մօրը։ Բաւական է խելաբժուժ եղբայրներ, բաւական է որքան անմեղ արիւն թափեցիք, ասաց և խլեց եղբօր ձեռքից մերկ դաշոյնը։

Այնպիսի սոսկալի քրտինք թափւեց վրաս այս քստմնելի տեսարանից, որ սթափւեցայ, զգացի, որ ազատւել էի Գալուսից։



ԺԱ.

Լ Ի Ա

Արկած

Գիշերս յանկարծ հիւրանոցի մէջ մի սոսկալի աղաղակ բարձրացաւ։ Գրիչս վայր դրի և իսկոյն պատշգամբ վազեցի։ Դուրս էին թափուել բոլոր խուցիկներից օթևանողները և ամենքի աչքերը յառած էին այն թշուառի կողմը, որ իրեն պատշգամբից պասաժի մէջ էր գցել։ Տարաբախտաբար տանջուածը փոխանակ ուղղակի յատակ ընկնելու, մի անգամից փշրուելու և մահանալու, նախ ընկել էր մի փայտաշէն կրպակի կտուրի վրայ, կողն ու թևը ջարդել և ապա ցած էր գլորուել ազդրը փշրել, բայց չէր մահացել։ Նա մռնչում ու մրմռքում էր ցաւից, բայց չէր կարողանում շնչասպառ լինել ու ազատուել։

Իսկոյն նրան վերցրին, շալակեցին և չորս մարդու օգնութեամբ կրկին բարձրացրին վերի յարկը — իր խցիկը, մինչև ոստիկանութեան և բժշկի հասնելը։ Ոչ միայն գլխի, արմունկի, ազդրի վէրքերից անվերջ արիւն էր հոսում, այլ նոյն իսկ բերանից էլ արիւն էր գալիս։ Հեռախօսով իսկոյն բժշկին ու ոստիկանութեան լուր տուին, բայց մինչև նրանց գալը կարևոր էր մի կերպ հանգստացնել թշուառին անկողնի վրայ, կապել վէրքերը, որ արիւնը դադարի։ Տեսայ, որ շրջապատողները շշմել են, իսկոյն ծառանե-

րին հրամայեցի սառոյց բերեն, որը սպիտակ անձեռոցիկների մէջ փաթաթեցի և դրի վէրքերի վրայ։

Գլուխը և վիրաւոր անդամները այնպէս դասաւորեցի բարձերի վրայ, որ ցաւը քիչ մեղմանայ և կամաց-կամաց սկսեցի շորերը հանել, որ պատրաստ լինի բժշկի քննութեան և վիրակապին։ Վիրաւորը մի երկու անգամ աչքերը բացեց և ինձ նայեց տխուր հայեացքով, որով կարծես ուզում էր ասել, թէ զուր ես տանջւում, րոպէներս արդէն համրուած են։ Բայց ես անվերջ տքնում էի թշուառին ազատել, մանաւանդ որ նա դեռ երիտասարդ էր, 45 տարեկան, կեանքի ամենալաւ շրջանում։

Վերջապէս եկաւ ոստիկանը, նոյնպէս բժիշկը, կազմեցին արձանագրութիւն, և բժիշկն սկսեց վէրքերը կապել։ Ես անճարացած՝ չէի կարողանում հեռանալ թշուառի մօտից, կարծում էի, թէ չարատանջը աչքերով աղերսում էր, որ իրան մենակ չթողնեմ։ Յայտնի բան է, հիւանդապահ չէի կարող դառնալ, բայց մինչև պահանջուած ֆելդշերի գալը պարտաւորուած էի վիրաւորի մօտ նստել և հովհարել։ Կէս գիշեր էր, անկարելի էր հիւանդանոց փոխադրել, մինչև ֆելդշերի գալը բժշկի տուած դեղերն էլ պիտի տայի թշուառին,

Անցաւ մի ժամ, մի քանի անգամ հեռախօսով պահանջեցին, բայց անկարելի դարձաւ քաղաքում գտնել ֆելդշերին։ Թէև սաստիկ էլ քունս տանում էր, բայց չէի կարողանում թողնել վիրաւորի խցիկը։ Եկած բժիշկն էլ ասաց, որ անյուսալի է նրա վիճակը և նա հազիւ թէ լուսացնի, բայց ես կարծում էի, որ նա պիտի կարողանար այդ ճգնաժամը անցկացնել ու ապաքինուել։ Երբ ամենքը հեռացան և ես մնացի մենակ խորտակուած թշուառի մօտ, նա մրմըն-

ջաց, կարծես մի բան էր ուզում ասել, բայց անհնար էր նրան հասկանալ:

Խորտակուածը շարունակաբար տքում, հառաչում և անվերջ աչքերիս էր նայում, կարծես թէ ուզում էր մի բան խօսել, բայց ցաւը նրան չէր թողնում միտքն ամփոփել ու բացատրել: Երբ բժշկի բոլոր պատուէրները կատարեցի, արիւնի հոսումը դադարեց և ջերմութեան աստիճանները բարձրացան, ջարդուածն սկսեց զառանցել: Նա անվերջ խօսում էր բայց բառերի մէջ կապ չկար:

—Երևի դու էլ, դրացի, ինձ յիմար ես համարում, կարծում ես կեանքի պայքարից ճնշուած անվերջ պարտութիւններս չկարողացայ տանել և յուսահատ անձնասպանութեան դիմեցի: Ո՛չ, երբէք, կեանքում ոչ մի հրէշ ինձ չէր կարող ընկճել: Յաջողութեան թէ ձախորդութեան ես անտարբեր եմ դիմաւորել: Ո՛չ հարստութիւնն է ինձ հրճուեցրել և փքացրել, ոչ էլ ձախորդութիւնը տխրեցրել ու ընկճել: Ճակատս բաց, խրոխտ և անվեհեր ներկայացել եմ հակառակորդներիս, որոնք նոյնիսկ չեն կարողացել իմ սառնարիւնութիւնը չգնահատել և աննուաճութիւնս չխոստովանել:

Այս խօսքերը նրան այնպէս յուզեցին, որ շունչը կտրուեց և նա ակամայ ձայնը կտրեց:

—Սիրելի՛ս, ասացի, այդ բոլորը վաղը, միւս օր կպատմես. քիչ հանգիստ պահի՛ր գիշերս որ կազդուրուիս:

Խորտակուածը ժպտաց և քիչ յետոյ ջուր ուզեց:

—Բժիշկը արգելել է, ջուր չեմ կարող տալ, բայց մի կտոր սառոյց կարող ես կլանել, ասացի և բերանը դրի մի ընկոյզի չափ սառոյց:

Մի երկու րոպէ լռեց և ապա շարունակեց:

—Կարծում ես, թէ կարո՞ղ եմ առողջանալ, երբէք: Ես գիտեմ վաղն էլ ուշ կլինի: Այլևս կեանքն այնպէս է դառնացել, որ էլ չեմ կարող ապրել: Լաւ է մի ժամ առաջ մեռնեմ և ազատուեմ այս սոսկալի կացութիւնից: Բայց որպէսզի հակառակորդներս չը հրճուին, խնդրում եմ, որ իմ միակ կտակս կատարես: Գրի առնես և մամուլին յանձնես իմ վերջին խօսքս: Ես կեանքի պայքարում չընկճուեցի, ես մեռնում եմ, ես անձնասպան եղայ բոլորովին այլ պատճառով: Հոգեկան տագնապս այնքան մեծ էր, գանգիս մէջ այնպիսի փոթորիկ բարձրացաւ, որ ոչնչով չէի կարող առաջն առնել: Պէտք էր մեռնել, պէտք էր դիակնանալ այս մրրկած սիրտս դադարեցնելու համար:

Խորտակուածի ձայնը նորից կտրուեց և նա մի քանի րոպէ աչքերը փակելուց յետոյ դարձեալ ըսկսեց կիսատ պատմութիւնը:

—Դու ինձ լսո՞ւմ ես, ասաց աչքերիս մէջ նայելով. ուզում եմ ասել, թէ անկապ նախադասութիւններիս միտքը կարո՞ղ ես ըմբռնել:

—Մի օր, սանդուխներից ցած գալիս տեսայ եւրոպական տարազ հագած մի տասնեւութ տարեկան աղջիկ, որը Թուրքերի հետ խօսում էր: Դու անշուշտ նրան նկատած կլինես, գիտես թէ որքա՛ն գեղեցիկ և կայտառ աղջիկ է: Աչքերը, ունքերը, դէմքը ինձ այնպէս յուզեցին, որ ակամայ կանգնեցի և զննեցի նրան ոտքից գլուխ: Թուրքերը չախորժեցին իմ հետաքրքրութիւնից, բայց ես մեխուեցայ ու մնացի: Որքան նրանց դրութիւնն էր անտանելի, նոյնը և իմս: Ճշմարիտ է, 45 տարեկան արարածիս անվայել է այդպիսի հետամտութիւն, բայց այն գեղանի պատկերը ինձ հիպնոսեց և քարացրեց: Երբ

նկատեցին, որ ես ցած չեմ գալիս, նրանք աղջկայ հետ վեր բարձրացան։

Ես իջայ սանդուխներից հանգիստս կորցրած, բայց բակից չկարողացայ դուրս գալ։ Սպասեցի մի քանի րոպէ, մինչև որ Թուրքերը եկան, իջան ու դուրս գնացին։ Թուրքերի դէմքերը, աչքերը պնչները լաւ զննելուց յետոյ, եկայ այն համոզման, որ սիֆիլիսը նրանց արիւնը ապականել էր։ Իսկոյն վեր բարձրացայ, խփեցի աղջկայ դուռը, որը բացեց և ասաց.

—Ի՞նչ էք կամենում։

Ձայնն ինձ բոլորովին ծանօթ թւաց, բայց երբէք չկարողացայ յիշել թէ որտեղ եմ լսել։ Դէմքն էլ, շարժումներն էլ ծանօթ էին ինձ, բայց անկարելի էր մտաբերել։

—Գիտէք, ասացի, ես ինձ պարտք համարեցի ձեզ զգուշացնել։ Ինչպէս նկատում եմ, օտարական, դուք ջահել և անփորձ աղջիկ էք, կարող էք ձեր ամբողջ կեանքը դառնացնել։ Ես կամենում էի ձեզ մի քանի բան պատմել...

—Եթէ կարելի է, գնանք հինգ րոպէով ձեր խցիկը, մինչև աղախինը սենեակս մաքրէ։ Այնտեղ կարող ենք խօսել ոչ թէ նրբանցքում, որտեղ աչքերը մեզ տեսնում են և ականջները լրտեսում։

—Գիտէ՞ք, ի՞նչ կայ, ասացի. Բագւի, Կովկասի Թուրքերը եւրոպական տարազով կիների համար խելագարւում են, պատրաստ են մեծամեծ գումարներ վճարել կրքերը յագեցնելու համար, բայց պէտք է զգուշանալ...

—Մի՞թէ հայերդ էլ այդպէս չէք։ ասաց աչքերիս նայելով։ Մի՞թէ հայերդ էլ պատրաստ չէք գլուխներդ դնել մի աղջկայ ոտքերի տակ ձեր քակի

հետ։ Մի՞թէ ընդհանրապէս մարդիկ այդպէս չեն, ասաց աչքերիս մէջ հայեացքն ուղղած։

- Ճշմարիտ է, դրան տարակոյս չկայ, բայց տարբերութիւն շատ կայ կրթւած և կիսակիրթ ժողովրդի մէջ։ Բայց ես այս մասին չէի ուզում նկատել, իմ միտքս բոլորովին տարբեր է,—ասացի։

—Լսում եմ, ասաց. պատմեցէք։

—Այդ բէկերի արիւնն ապականւած է վեներական բորբոքումներով։ Դուք մեղք էք, ափսոս է ձեր կեանքը։ Մի կարծէք, որ լպիրշ կրքերն են ինձ խօսեցնում, այլ ուղղակի կարեկցութիւնս։

—Շատ շնորհակալ եմ ձեր նախազգուշութեան համար, բայց դուք բոլորովին սխալ էք։ Ես նրանց ընդունում եմ որպէս բարեկամների, որոնք պիտի վկայեն նահանգական դատարանում իմ ապահարզանի խնդրի մասին, ասաց կինը և նստեց։

—Գուցէ ես սխալւում եմ, բայց նրանք այնպիսի գազաններ են, որ եթէ մի գառը ճանկեն, մինչև չլափեն, չեն հանգստանալ։ Ես ձեզ նախազգուշացնելը ինձ պարտք համարեցի, իսկ սրանից յետոյ ձեր կամքն է։

—Ես ընդհանրապէս հայերին ատում էի մինչև այս րոպէն և հաւատացած էի, որ նրանց մէջ ազնիւ մարդ հազւադէպ է, ասաց աթոռը ինձ մօտեցնելով, բայց դէպի ձեզ չեմ հասկանում, թէ ինչից ստիպւած համակրութիւն եմ տածում։ Ես թէև դեռահաս եմ, բայց երեք տարի է, որ ամուսնացած եմ և շատ դառն օրեր տեսած։ Ամուսնուս յաճախորդների շըրջանում հայերը պակաս չէին, բայց նրանցից ոչ ոք ինձ հետ այնպէս չվարւեց, ինչպէս դուք։ Ոչ միայն իմ առողջութեանս և պատւիս մասին աւելի շատ

մտածեցիք, այլ նոյն իսկ ոչ մի ցանկութիւն չարտայայտեցիք։

—Տիկին, ասացի աչքերին նայելով,—դուք իմ աղջկայ տեղը կարող էիք լինել, եթէ ես ամուսնացած լինէի։ Բայց ամուրի լինելս ինձ իրաւունք չի տալիս մի այդպիսի դեռափթիթ վարդ փետրելու, ցեխի մէջ տրորելու։ Ես մեծ հաճոյք զգացի, երբ սանդուխների վրայ դէմս ելաք. սիրտս տրոփեց, երբ զգացի, որ դարմանի փոխարէն ցուլերի կեր պիտի դառնաք։ Ինձ համար, հաւատացէք, ազգն ու կրօնը բոլորովին նշանակութիւն չունին։ Եթէ մի ինտելիգէնտ առողջ թուրք ձեզ հետ զոյգ կազմէր, ես բոլորովին չէի յանդգնիլ միջամտելու։ Բայց այդ նեխուած և անկիրթ արարածները ձեզ հիւանդանոց հասցնելուց յետոյ, յաւիտեան կմոռանան և մի ուրիշը կորոնեն, որպէսզի ձեզ մօտ ուղարկեն։

—Դուք ինձ այլափոխեցիք, ասաց գլուխը ուսիս դնելով և աջ թեւս գրկելով.—ես զգում եմ, որ չի կարելի որևէ ազգ ստել անհատների պակասութեան համար։ Դուք դարձաք օտարութեան մէջ իմ մշտնջենական բարեկամս և նեցուկս։ Ես այստեղ եկել եմ վրէժս լուծելու այն մակլէր գազանից, որ ինձ հետ ամուսնացաւ և Կիևից Բագու բերեց, որպէսզի իմ մարմինս գնով իրեն գանձ դիզէ։ Ինձանով ուզում էր գրաւել արդիւնաբերողներին և նրանց գրպանները կտրել։ Յայտնի բան է, ես բողոքեցի, գործը հասցրի պրօկուրօրին, և դատարանը կպատժէ չարագործին։ Բայց միայն պատիժը բաւական չէ. նա պիտի իմ կեանքս էլ ապահովէ, ցմահ ապրուստ տայ։

—Հարուստ է այդ մարդը…

—Հարիւր հազար րուբլի Վօլժսկի-Կամսկի բան-

կում փող ունի, բացի առևտրի մէջ դրած գումարներից։

—Նա արդէն թագցրած կը լինի այդ գումարները, ասացի։

—Ես այնպիսի փաստեր ունիմ, որ եթէ թագցնէ, նրան բանտարկել կտամ։

—Ուրեմն պէտք է աշխատենք ձեզ ապահովել, որ գլուխներդ առնէք և հեռանաք ապականուած նաւթի շրջանից։

—Միասին, այնպէս չէ՞, բարեկամս, ասաց ու ինձ համբուրեց անզգայաբար։

—Չի կարող ես էլ չհամբուրել նրան, որից յետոյ թողեց ու գնաց իր խցիկը ասելով.

—Կարծեմ, սենեակս մաքրեց, գնանք այնտեղ, աւելի ընդարձակ է և կարող ենք շարունակել մեր ընդհատուած խօսակցութիւնը։

Գնացինք։ Նա բացատրեց, թէ որքա՜ն մեծ նշանակութիւն ունի նրա համար թուրքերի վկայութիւնը, որոնց ցուցումից կախուած ունի դատարանի վճիռը։ Ես նրան բացատրեցի, թէ նրանց իր կողմը ձգելու համար ինչ ընթացք պէտք է բռնել։ Ծրագիրը տւի և դուրս եկայ, որ գնամ Սուրախանի՝ գործիս ընթացքին նայեմ։ Հակառակի նման այդ օրը այնպիսի գործեր ունէի, որ անհրաժեշտ էր Սուրախանի գնալ և անձամբ հսկել նաւթի հորը, որը մեծ յոյս էր տալիս ֆանտան խփելու։ Երբ դուրս էի գալիս, հանեցի ծոցիցս երկու հատ հինգ հարիւր րուբլիանոց և մեկնեցի կնոջը ասելով.

—Վերցրու, գուցէ փող չունիս հետդ բերած։ Չլինի կարիքը քեզ գլորէ աղտեղութեան գիրկը։

—Ապահով եղիր, բարեկամ, ես գլուխս, պատիւս սև փողով չեմ ծախիլ։ Դեռ փողի պէտք չու-

նիմ, երբ կարիք ունենամ, ինքս կարող եմ օգնութիւնդ խնդրել։

Փողս էլ չառաւ ու ինձ ճանապարհ դրեց։ Գիշերը ուղղակի դարձայ քաղաք և մտայ նրա սենեակը։ Դարձյալ այնտեղ էին առաւօտեան ճանապարհածս հերոսները, որոնց հիւրասիրել էր մանկահասակ տիկինը։ Իմ մուտքս տիկնոջ ուրախութիւն պատճառեց և նրանց կատաղութիւնը բորբոքեց։ Լաւ էր, որ թուրքերը ինձ չէին ճանաչում, թէև քսան տարուց իվեր տարեկան երկու երեք անգամ գալիս եմ Բագու, 8—10 օր մնում և վերադառնում եմ Թիֆլիս։ Տիկինը գործն այնպէս հարթեց, որ բոլորիս սիրտն առաւ։ Նա ասաց.—խնդրում եմ ծանօթանանք, քեռիս է։ Այս խօսքերը նրանց սթափեցրեց իրենց խմած բենեդիկտինի ազդեցութիւնից։ Կարծես գլուխներին սառը ջուր ածեցին, որից յետոյ կամաց-կամաց հեռացան։

Մենք դարձեալ մենակ մնացինք և այնպէս յափշտակւեցանք խօսակցութիւնով, որ կէս գիշերն անցաւ։

— Ես ընթրելու ցանկութիւն ունիմ, ասացի։

—Ես թէև թուրքերի հետ շատ եմ կերել, բայց քո ախորժակը գրգռելու համար պատրաստ եմ, պատասխանեց և հնչակի կոճակը սեղմեց։

—Լաւ չի՞ լինի, որ ինձ մօտ ընթրենք, ասացի,—քանի որ այնտեղ պահարանումս լաւ գինի ունիմ։

—Ես ձանձրանում եմ իմ սենեակիցս դուրս։ Կարող էք հրամայել, որ բերեն այստեղ։

Զուգեց սեղանատունս գալ, իսկ ես այնպէս էի հիպնոսւել, որ հեռանալու հնարաւորութիւն չունէի։ Ցանկացածներս բերել տւինք և երկար ընթրեցինք։ Գինու ազդեցութեան տակ համարձակ բացինք սրտերս իրար և նա խոստովանեց, որ իր միակ ցանկութիւնն է վրէժ լուծել այն ցեղակից հրէայից, որը իրենց արիւնի ծարաւի, հրէաների հալածող օտարականների նման հարստահարել է նրան, օգտւել է նրա գեղեցկութիւնից և նրան ստիպել է իրանց կեղեքողների գիրկն ընկնել, որ ինքը կարողանայ միջնորդութիւններ կատարել, սպեկուլիացիաներ սարքել, մեծ դրամ կորզել։ Նա մօր կամքին հակառակ ամուսնանալով այդ վամպիրի հետ, Բագու էր եկել, բայց ոսկեպաշտ ամուսինը նրա զոհողութիւնները և սէրը արհամարհել էր մինչ այն աստիճան, որ նրան մի իրի նման, մի անասունի նման շահագործել էր և դուրս շպրտել։

—Ինձ տանջելը բաւական չէ, սիրտս դաղելը իրան մեծ հաճոյք էր շինել մինչ այն աստիճան, որ վշտահեղձ մօրս մահւան էլ պատճառ դարձաւ։

Այս ասաց ու վրդովւած գնաց բերանքսիվայր տարածւեց անկողնին և սկսեց հեկեկալ։ Նա այնքան մեծասիրտ էր, որ երբ կրքերի բորբոքումը չկարողացաւ զսպել, գոնէ երեսն ու աչքերը պահեց, որ ես արտասուքը չտեսնեմ։

Այս վիճակը չկարողացայ տանել և մի քանի րոպէից յետոյ մօտեցայ, գրկեցի, բարձրացրի։ Նա իսկոյն աչքերը լւաց և նորից բռնեց իր տեղը։ Ես խօսք չէի գտնում նրան մխիթարելու համար։ Երբ անվերջ հառաչում էր, ասացի.

—Լիա, այս է ամբողջ մարդկութեան վիճակը։ Այս է նոյնպէս ամբողջ աշխարհի կենդանական և բուսական աշխարհի վիճակը. ուժեղը թոյլին պիտի կլանէ։

Ո՛չ, ես թոյլ չեմ տալ, որ ինձ կլանեն։ Ես էլ ժանիքներ և ճանկեր ունիմ։

—Մարդիկ ժանիքները ադամանդով են փշրում, իսկ ճանկերը՝ ոսկով։ Մի բուռ շողակը կարող է ատամները ամբողջապէս թափել, մի փութ ոսկին էլ ամենասուր ճանկերը բթացնել։ Եթէ մարդու սիրտը գրանիտից էլ լինի, ոսկին նրան բամբակի պէս կը փափկացնի։

—Այո, նրան կարող են վանդակ ու թակարդ գլորել, ով ապրուստ ճարելու ճանապարհը չգիտէ, իսկ Լիան կեանքը շատ լաւ է սերտել։

—Եսսէի նման մի ուրիշը նոյնպէս կարող է այնպիսի ծուղակ դնել, որ դարձեալ գլորւես, ասացի։

—Ո՛չ, Եսսէի նման հրէան որ չկարողացաւ ինձ գլորել և ես նրան շուտով կնստացնեմ ոճրագործի աթոռակին, Թուրքը կամ հայը ի՞նչ կարող են ինձ փասել։

—Գուցէ, ասացի և մտախոհութեան մատնւեցի։

Լիայի աչքերը, ձայնը ինձ վրայ այնքան քաղցր տպաւորութիւն էին թողել, որ ոչ միայն ընկճւել էի, այլ չէի կարող ազատ բացատրել մտքերս։ Երբ մի քանի րոպէ խոհերիս մէջ ընկղմած մտածում էի, Լիան հարցրեց.

—Ձեր անունն ի՞նչ է։

—Արամ Ֆադէյիչ, ասացի։

—Արամ Ֆադէյիչ, ինչ՞ տխրեցիք, մի՞թէ ձանձրացաք իմ ներկայութիւնից։

—Ընդհակառակը, ասացի, բայց կեանքի քաղցրութիւնը քաղցր մտքեր է զարթեցնում և ես ցաւում եմ, որ....

—Ցաւում էք, ո՞ր... կրկնեց հարցը Լիան։

—Ցաւում եմ, որ տարիքս անցկացրել եմ...

—Դուք քանի՞ տարեկան էք։

—Ձեզանից քսան և հինգ տարով մեծ եմ։

—Քառասուն երե՞ք, քառասուն չո՞րս...

—Այո, քառասուն չորս...

—Բայց դուք 35-ի տպաւորութիւն էք թողնում, ոչ ոք չի կարող ենթադրել, որ դուք աւել էք։

—Այո, եթէ ես ամուսնացած լինէի, ձեր չափ աղջիկ կունենայի։

—Աւելի լաւ, ես մի հովանաւոր կունենամ, որն ինձ իր կնոջ նման կսիրէ և աղջկայ նման կպաշտէ։

—Այո, բայց...

—Ի՞նչ բայց... մի՞թէ դուք ամուսնացած էք։

—Բարեբախտաբար ո՛չ...

—Կարելի է սիրային կենակցութեամբ զաւակնե՞ր ունիք։

—Բարեբախտաբար ո՛չ...

—Երևի քո՞յր, եղբա՞յր ունիք։

—Ո՛չ, ո՛չ, ո՛չ, մենակ եմ, մեն-մենակ այս փուչ աշխարհում։

—Հապա ի՞նչ ունիք։

—Այն, որ հոգիս գրաւեցիք, իսկ ես հնարաւորութիւն չունիմ ձեզ բախտաւորեցնելու։

—Ես ձեզ գրաւեցի՞, ասացէք, աղերսում եմ անկեղծաբար։

—Դուք այնչափ գեղանի էք, որ ամբողջ աշխարհին կարող էք հիպնոսել ու հրապուրել։ Անիծում եմ բախտս, որ տասը տարի առաջ չէք ծնւել դուք, կամ տասը տարով ուշ եմ ծնւել ես։

—Ասացէք ինձ, Արամ Ֆադէյիչ, ասաց վզիս փաթաթւելով, դուք ինձ սիրո՞ւմ էք։

—Խելագարի նման, բայց ի՞նչ օգուտ, որ չեմ կարող ձեզ բախտաւորեցնել։

—Ես անչափ բախտաւոր եմ, ասաց շրթներս համ-

բուրելով վզիցս կախ ընկած։ Կեանքումս սիրտս ոչ ոքի այնպէս չի փարել, ինչպէս քեզ, Արամ։

—Դու ինձ գժւեցնում ես, Լիա՛։

—Ասա՛, սիրո՞ւմ ես ինձ, Արամ։

—Դեռ կեանքումս ո՛չ ոքի սիրտս այնպէս չի յարել, ինչպէս քեզ, հոգիս։

Ցիրաւի, կեանքումս այն քաղցրութիւնը երբէք չեմ ստացել ոչ մի արարածի ներկայութիւնից, ինչ ներշնչում էր Լիան։ Վերջապէս ծրագրեցինք, մինչև դատավարութիւնը սպասել Բագւում, որը տեղի պիտի ունենար դեկտեմբերի 1-ին և ապա փոխադրւել Թիֆլիս իմ տունս։

—Ինձ մկրտել կտաս, այնպէս չէ՞, Արամ, և ապա ձեր եկեղեցում կպսակւենք։

—Ինչպէս կամենում ես, ինձ համար բոլորովին նշանակութիւն չունի կնունքն ու պսակը։ Ես միայն անկեղծ սէր էի փնտրում և գտայ։

—Ո՛չ ես ուզում եմ յաւիտեան կապւել և ազատ մուտք գտնել ամեն տեղ։

—Ինչ որ մտքիցդ անցնի, կարող ես պահանջել հոգիս. Ուղիղ է, առայժմ նման երկու-երեք միլիոն հնչիւն դրամ չունիմ, բայց Սուրախանիի հողերս տասնեակ միլիոն են խոստանում։

—Ես ոչ քո միլիոնն եմ ուզում, ոչ էլ հողերը. ինձ հարկաւոր է սիրտդ։

—Այն արդէն քեզ տւի։

—Իմն է, ասաց և այնպէս գրկեց ու համբուրեց կուրծքս, որ ես խելագարւեցի։

Լուսը բացւել էր. ժամը 9-ին զարթեցի։ Թէև ուշ էինք քնել, ժամը 5-ից անց, բայց սովորութեանս համաձայն վաղ վերկացայ։ Չուզեցի Լիային զարթեցնել, կամաց հագնւեցի, ճակատը համբուրեցի, դուրս եկայ և իմ սենեակում լւացւեցի։ Դուռը վրան փակեցի, բանալին աղախնին տւի, որ զանգահարելու պէս բաց անի և պահանջները կատարէ։ Գնացի Սուրախանի։ Երկար չկարողացայ համբերել, ժամի 5-ին վերադարձայ։ Լիան նոր էր վերկացել, ննջարանի վերնազգեստով նստել, թէյ էր խմում։ Ինձ տեսնելուն պէս թռաւ, գրկեց և համբուրեց։ Այնքան զօրեղ էին նրա զգացմունքները, որ կեղծիքների մասին կասկածելը յանցանք էր։

Հազար ու մի հարց տեղաց, ո՞ր մէկը յիշեմ։ Յօժարութեամբ և հաճոյքով պատասխանեցի բոլորին։ Ինձ մի բաժակ թէյ տւեց, նստանք իրար մօտ, աջս սրտի տակ, ձեռքովս մէջքը գրկած։ Նրա ձեռքերը անվերջ շոյում էին մօրուսիս թելերը և ես ագահաբար ծծում էի նրա բոյրը։

Յանկարծ մերկ աջ թևը դուրս եկաւ գիշերազգեստի լայն թևերից և ոսկի բազպանը աչքովս ընկաւ։ Բազպանի միջի եռանկիւնի հմայիլը շրջանակի տասնուչորս շողակով և միջի եռանկիւնի զմրուխտով ինձ այնպէ՜ս ծանօթ էր, որ մինչև գերեզման մոռանալու հնարաւորութիւն չունէի։ Հետաքրքրութիւնս խիստ բորբոքւեց, իսկոյն թևը քաշեցի, համբուրեցի և սկսեցի զննել հմայիլը։ Կասկած չկար այն էր, իմ շինել տւածս, իմ նւիրածս…

—Քեզ ո՞վ տւեց այդ բազպանը, հարցրի Լիային։

—Իմն է, մօրս յիշատակն է։

—Մօրդ անունն ի՞նչ էր։

—Ռաքէլ, Կիւցի Լազանսօնի աղջիկն էր,

—Բաց տեսնեմ, ասացի, աչքերիս չհաւատալով։

—Ես չեմ կարող քակել։ Մայրս կապել է, դու էլ կարող ես քակել և նորից կապել։

Գաղանիքն ինձ յայտնի էր, իսկոյն թևից արձա-

կեցի և ներքին մէդալիօնի պտուտակներն սկսեցի յետ ոլորել։

—Այդտեղ բան չկայ, ասաց Լիան անմեղութեամբ, կը կոտրես, կփչացնես թշւառ մօրս յիշատակը։

--Ոչինչ չի լինի, անհոգ եղիր, ասացի և բացի և բացի այն մէդալիօնը, որը քան տարի առաջ ես էի ամրացրել։ Սիրտս տրոփում էր, շունչս կտրւում և երբ բացի ու ապակիների տակից ցոլաց Ռաքէլի և իմ պատկերը, գոյնս սփրթնեց։

—Արամ, ազգդ ի՞նչպէս է։

– Միրզայեանց, ասացի։

Նա մէկէն վեր թռաւ տեղից հրացայտ աչքերով։

—Ուրեմն դո՛ւ ես այն հրէշը, որ մօրս կեանքը թունաւորեց և ինձ աշխարհի երեսին թողեց անհայր, առանց եղբօր և հովանաւորի։ Ծնունդս թունաւորեցիր, այժմ էլ եկել ես հոգի՞ս թունաւորելու։ Անխիղճ գազան, քան տարի առաջ մօրս երեսի վրայ թողնելուց յետոյ, հիմա էլ ուզում ես ինձ վշտի կրակներին մատնել։ Ո՜վ, մայրիկ, դահիճդ ճանկերումս է, ես նրանից ի՞նչպէս վրէժդ լուծեմ։ Սադայէլ, վերջապէս պէտք է դիմակդ պատռեմ։ Մօրս էլ խաբեցիր քո գանձերովդ։ Երբ պահանջեց օրինաւորապէս պսակւել հետդ, խրատներիդ ընկերակից դառնալ, դու չզիջար բազմոցիդ վրայ ընկեր ունենալ։ Տքնեցիր նրան հաճոյքներիդ ստրուկ պահել և երբ չհամաձայնեց, գլորեցիր անդունդը...։ Ո՜հ, ես այս ո՞ւր գլորւեցի, այս ո՞րքան ճիւաղային են բախտի անողորմ խաղերն ու հարւածները։ Միրզայեանց...

—Զգում եմ, զաւակս, յանցանքս, ինձ խփի՛ր, մեռցրո՛ւ, նա՛ւթ լից վառիր և մոռացիր ամեն բան։ Ոտքերդ ընկած աղաչում եմ, Լիա՛, ինձ սպանի՛ր, ես

էլ չեմ կարող տանել այս անարգ կեանքը։ Քսան տարի փնտրելուց յետոյ, քսան տարի քեզ ու մօրդ որոնելուց յետոյ, այսօր, այս վիճակում։

—Քսան տարի որոնելուց յետո՞յ... Ինչի՞ անարգեցիր, ինչի՞ փոնդեցիր, որ ապա որոնես և այս վիճակին հասցնես կնոջդ ու զաւակիդ...

—Լիա՛, ես չեմ փոնդել, Լիա՛, ես չեմ...

--Յայտնի բան է, քեզ նման մի ազա արդիւնաբերողին ամսական մի աղջիկ է հարկաւոր, որ ակէ ու աղբանոց շպրտէ։

—Լիա՛, մայրդ ինձ չհասկացաւ։ Պսակւողների թշւառութիւնը տեսնելով, ես չուզեցի նրան պսակի թշւառութեան դատապարտել, այլ ուզեցի ցմահ սիրել։

—Ես ճանաչում եմ ձեզ նմաններին. բոլորդ էլ ձգտում էք միայն շահագործել անմեղ աղջիկներին. գլորել մազութի հորը և կրակ տալ, որ բոցերի մէջ տարիներով պտտրոյգի նման ծխան ու տապակւեն։

—Լիա, սխալւում ես, Լիա՛, ես մեղաւոր եմ, բայց ոչ քո ենթադրածի չափ, ու ձայնը կտրւեց։

Զառանցում էր խորտակւածը առանց հանգստանալու։ Յաճախ ձայնը կտրւում էր և որքան ոյժ էր գործ դնում ձայնը բարձրացնելու, միայն շշունջներն էին լսւում և որովհետև մասամբ ծանօթ էի պատմութեան հետ, խկոյն ըմբռնում էի միտքը։ Հինգտասը րոպէ լռելուց յետոյ, դարձեալ կրկնեց.

—Ա՜խ, մի բաժակ սառը ջուր, լեզուս խորովւեց բերանիս մէջ։

Կրկին մի կտոր սառոյց տւի, որը կլանելուց յետոյ յորեց.

—Լսո՞ւմ ես, բարեկամս, լսիր և ինձ մի դատապարտիր։

—Մոլո՛խ, մոլո՛խ,—գոռաց Լիան նորից,—քո՞նի

հազար աղջիկ պիտի կլանես։ Կորի՛ր, դուրս կորիր, երեսդ չտեսնեմ։ Դու զգուշացնում էիր ինձ, սուտ ճգնաւո՛ր, արիւնները վարակւած Թուրքերից, որ ինքդ հոգիս ու իղձերս վարակես։ Հազար անգամ գերադասելի չէ՞ Թուրքի արարքը քո գազանութիւնից։ Ու նա չի խաբում, թէ կամուսնանայ, այլ ժամանակաւոր հաճոյք է գնում և վճարում է առաջարկածի չափով և համաձայնութեամբ։ Աւելի լաւ չէ՞ տգէտ Թուրքի գրկի մէջ վարակւել և ապականւելով գերեզման իջնել, քան թէ քեզ նման մի հրէշի լեզւից Թունաւորւել և ցմահ տանջւել կեանքի բովերում։

—Ինձ ներիր Լիա, կրքերդ զսպիր, լսիր և ապա տուր վճիռդ։

—Ես չեմ Թոյլ տալ, որ դու քո նենգամիտ բացատրութիւններով Թունաւորես ականջներս և հարստահարես զգացմունքներս։ Գնա՛, դուրս կորիր, գնա՛ ճիւաղներին խաբիր, հրէշ... դո՛ւրս... Ա՜խ, ես ինչպէս քեզանից վրէժ լուծեմ, որ քսան տարեան մօրս տանջանքին և իմ բոցակալւած սրտին բաւականութիւն տամ...

—Սպանի՛ր ինձ, ահա ատրճանակ, Լիա՛, սպանիր և ազատիր։

—Ո՛չ, դու պիտի ապրես և երկար պիտի ապրես, որ ամէն օր աչքովդ տեսնես քո արիւնից ծնւածի ժահրակալած Թուրքերի ծոցին, տեսնես ու սիրտդ Թարախոտւի, որպէսզի զգաս, թէ որքան անգութ կերպով են տանջւում մարդիկ Թշւառ աղջիկներին։

Այս ասաց ու ձեռքիցս առնելով ատրճանակը, գցեց փողոցի միւս կողմի տան կտուրը։

—Դուրս, դուրս կորի՛ր, ապա Թէ ոչ ծառաների ձեռքով դուրս կհանեմ, ասաց ու զանգը տւեց։

Ներս մտնող սենեկապետին պատւիրեց, որ կանչել յանձնակատարին, յետոյ նստեց և իր այցետոմսի վրայ սկսեց գրել։ Ես գամւել էի աթոռիս, չէի կարողանում տեղիցս բարձրանալ։ Երբ յանձնակատարն եկաւ, Լիան ասաց,

—Վերցրու այս ծրարը, գնա գտիր Տամլուտղին, ասա, որ նրան եմ սպասում։ Թող հաւաքէ բարեկամները և գայ գիշերս ժամանակ անցկացնելու։

—Լիա՛, զաւակս, ես այլես չեմ կարող ապրել այս անարգանքից յետոյ։ Կանչիր նօտար և ամբողջ գոյքս քեզ յանձնեմ, վերցրու և ապրիր մարդավարի։

—Մարդու զաւակը միայն կարող է մարդավարի ապրել։ Աշխարհի երեսին նրանից մեծ վիշտ չը կայ, որ ես քեզ նման մի մօլօխից եմ ծնւել։ Արիւն ու ժահր է քո հարստութիւնը, բաժանիր այն Թըշւառներին, բարեգործութիւն արա, անուն վաստակիր։ Դո՛ւրս կորի՛ր, հեռացի՛ր, հրէշ...

—Լիա՛, ես ժառանգութիւն չեմ ստացել, այս բոլորը իմ արդար ջանքերով եմ դիզել...

—Լռի՛ր, դահիճ, 5—10 միլիոնի գոյքը առանց զրկանքի չի կարելի կուտակել քառորդ դարի ընթացքում։

Երբ ներս մտան Թուրքերը՝ Լիան ասաց։

—Աղանե՛ր, սա իմ քեռիս չէ, սա իմ հայրն է։ Գիշերս ձեզ խաբեց հեռացրեց, որ ինքը մենակ վայելի այն հաճոյքը, որը ձեզանից խնայում էր։ Սա մի այնպիսի հայր է, որ ինձ վաստակել, մօրս վզին է կապել և քսան տարի անուններս չի տւել։ Իսկ այսօր, երբ կարելի է նորից հաճոյք ստանալ, նա եկել, տիրել է ինձ, որ Թուրքերին բաժին չդառնամ։ Դո՛ւրս արէք դրան, որ ազատ զւարճանանք։

—Լիա՛, Լիա՛, ինձ սպանի՛ր...

—Ո՛չ, դու ապրի՛ր և տես, թէ Ռաքէլի աղջիկը ինչպէս է վրէժ լուծում։

—Սա ո՞վ է, հարցրին Թուրքերը իրար։

—Դա Արամ Միրզայեանցն է, որ Սուրախանի հարիւր չիսուն դեսեատին նաւթաբեր հող ունի, ասաց Լիան։ Դուրս արէք դրան։

—Թուրքերը չշարժեցին։

—Էլ պէտք չկայ ապրելու… Երբէք առօթից չեմ կարմրել ու չեմ ուզում խայտառակ ապրել…

Ասաց ու լռեց Արամը։ Քիչ յետոյ նորից աչքերը բաց արաւ և ասաց.

—Ես Ռաքէլին երեսի վրայ չեմ թողել, նա յամառեց և գնաց։ Ես վախենում էի դարիս պսակից, իսկ նա յամառած պահանջում էր օրինական պսակ։ Ես նրա հասցէն չունէի, իսկ նա վրէժխնդիր հոգւով տոգորուած՝ ո՛չ վերադարձաւ, ո՛չ էլ գրեց։ Ես նրան երբէք չեմ մոռացել, բայց որ տեղը չգիտէի…

Դարձեալ լռեց…

—Եւ իմ աղջիկս այսօրւայ Բագւի գեղուհիների թագուհին, հօրից վրէժ լուծելու համար, մեր քէնը շարունակելով, ինձ տանջելու համար իր գլուխն ապականի, ընկնի աղբի հորը…

Լռեց դարձեալ, էլ ույժ չունէր, շնչառութիւնը նուազել էր։ Հինգ րոպէից յետոյ աչքերը նորից բացեց, վերջին ճիգն արաւ, նորից մրմնջաց.

—Թող կտակս խղճութեամբ գործադրեն, ամբողջ կապիտալըս հասոյթով երկու սեռի մանուկներ դաստիարակեն և նրանց հասկացնեն, թէ որքան դառն է թշուառութեան պատճառ լինելը…

Եւ նա լռեց յաւիտեան…։

ԺԹ.

ՌԱՔԷԼ

Արկած

Արամ Միրզայեանցի դիակը և գոյքը Թիֆլիս ճանապարհելուց յետոյ, երբ տուն դարձայ, ինձ դիմաւորեց հիւրանոցի սենեկապանուհին մի տետրակ ձեռքին և ասաց.

—Այս թղթերը թողել էիք մահճակալի մօտի պահարանիկի գզրոցում։ Ուղարկեցէք սրանք ժառանգներին, գուցէ հարկաւոր փաստագրեր են։

—Շնորհակալ եմ, ասացի և ձեռքից առնելով տետրակը մտայ խցիկս։ Անչափ ուշքս գրաւեց այդ տետրակը, երբ տարածւեցի մահճակալիս վրայ թէ հանգստանալու և թէ հետաքրքրութիւնս գոհացնելու։ Այդ գրուածքը մի օրագրութիւն էր, որտեղ Արամ Միրզայեանցը գրի էր անցկացրել իրեն պատահած արկածները։ Ինչպէս երևում էր, Լիայի թևի ապարանջանի պարզւելուց և նրա հետ գժտւելուց յետոյ, Արամը աչքից անցկացրել էր այդ գրուածքը և մոռացել գզրոցում։

Որովհետև ինձ անչափ հետաքրքրեց այդ օրա-

գրութիւնը, անընդհատ մինչև լոյս կարդացի։ Կարծում եմ, որ այս արկածի բովանդակութիւնն էլ կարող է օգտակար լինել և հաճոյք պատճառել «Լիայի» արկածի ընթերցողներին։

1889 թ. 4 սեպտեմբերի, Բագու։

Այսօր Մարինսկի փողոցի վրայ Վարձեգուլովի տանը վարձեցի մի բնակարան երեք սենեակով։ Անմիջապէս կահաւորեցի ու տեղափոխուեցի, որպէսզի ազատուեմ հիւրանոցի ծառաների անուշադիր վերաբերմունքից։ Բնակարանս բաւականին շքեղ դուրս եկաւ։ Փողոցի վրայ մի քանի լուսամուտ և պատշգամբ ունիմ, գաւթի կողմից լոյսն ու արևը անպակաս է։

Բարեբախտաբար այնպիսի յարմարութիւններ ունի բնակարանս, որ ծառայի պէտք չունիմ։ Ճաշս, սուրճս և թէյս ընդունելու եմ ճաշարաններում։ Սենեակս մաքրելու և լուսաւորելու է հարևանուհիս։

Հարևանուհիս հրեա է։ Թէև համոզուած եմ, որ մաքրութեան հետ այնչափ էլ հաշտ չեն Յակոբի զաւակները, բայց այս տիկնոջ բնակարանի տեսքը բոլորովին ներհակ ներգործութիւն ունեցաւ ինձ վերայ, կարծես թէ հոլանդուհի է։ Դեռահաս է տիկինը, թէև մի աղջիկ և մի տղայ ունի, բայց տարիքը 22-ը չի անցել։ Ոտից գլուխ գննելուց յետոյ այնպիսի մաքրութիւն տեսայ, մանաւանդ խոհանոցում և նրբանցքում, որ համոզուեցի, թէ այդ բնակարանում զզուելի տեսարանի չեմ պատահելու։

Մանաւանդ որ դրացուհիս իր ծառայութիւնը պայմանաւոր առաջադրեց։ Նա ասաց.

—Փորձեցէք և եթէ ութ օրուայ ընթացքում գոհ

չմնացիք, այն ժամանակ վարձեցէք ձեզ համար աղախին։

Երբ տեղաւորուեցի, արդէն այնքան յոգնել էի, որ քաղց զգացի և իսկոյն հագնուեցի, ուղղուեցի դէպի ճաշարան։ Նրբանցքում ինձ դիմաւորեց մի դեռահաս օրիորդ, որի չքնաղ կազմն ու դէմքը ուշքս գրաւեց։ Այնպիսի հասակ ունէր, հաճելի առողջ կազմ, այնպիսի սև աչքեր ու մազեր, նռան ծաղկի նման կարմիր այտեր, ձիւնի նման մորթ, որ աչքերս իսկապէս պարարեց ու ինձ ապշեցրեց։ Որպէս անծանօթներ, ձևացրինք թէ իրարով բոլորովին չը հետաքրքրուեցինք և առանց բարևի անցանք։ Նա մտաւ դրացուհուս բնակարանը, իսկ ես դուրս ելայ փողոց։

Սոված էի և ուզում էի ուղղուել Պարապետի կողմը, որպէսզի Եւրոպա հիւրանոցում ճաշեմ, բայց քայլերս ինձ չէին հնազանդւում։ Սիրտս, զգացումներս ինձ յետ էին մղում, որ վերադառնամ տուն և մէկ անգամ էլ սրած աչքերով գննեմ այն գեղեցկութիւնը,որն այնքան մօտ անցաւ կողքիցս և մտաւ այն սենեակը, որտեղից դուրս էի եկել միմիայն կէս ժամ առաջ։ Իղձս, ցանկութիւնս ուզում էին տիրել դատողութեանս, որն յամառ եսականութեանս հետ միացած՝ տապալեց կրքերս և ես արագ քայլերով հասայ ճաշարան։

Շուրջս երկսեռ մեծ բազմութիւն կար, որոնք բռնել էին սեղաններն ու ախորժակով ճաշում էին։ Գանկումս բարձրացած փոթորիկը այնպէս էր ուշքս գրաւել, որ ոչինչ չէի նկատում։ Ճաշը աւարտելու պէս բարձրացայ և վերադարձայ տուն, անվերջ յուսալով, որ այն դէմքը երկրորդ անգամ տեսնելու բախտը կունենամ։ Բայց զուր։ Մի քանի րոպէ բաց-

մոցի վրայ տարածւելուց և սիգարս ծխելուց յետոյ, անրամայ բարձրացայ տեղիցս և ուղղակի դիմեցի դրացուհուս բնակարանը։

—Խնդրում եմ, ասացի նրան, եթէ կարելի է լամպաներս նաւթ լցնել և ապակիները սրբել տալ։

—Իսկոյն, ասաց տիկինը, վեր կացաւ, որ հրամայէ աղախնին լամպերը լցնելու։ Բայց ես փոխանակ անմիջապէս դուրս գալու, ուղղւեցի միւս սենեակի բաց դռան կողմը՝ ներսը գննելու։ Բայց զուր, նա, որին փնտրում էի, այնտեղ չէր։ Երևի հիւր եկել և հեռացել էր։ Երանի թէ մէկ էլ գար։ Գոնէ կրկին անգամ տեսնէի։

5 սեպտեմբերի։

Գիշերս փոթորկալի երազներով անցկացրի և առաւօտ վաղ մեկնեցի Սուրախանի։ Ամեն բան զըննում էի, որ կէտառկէտ կատարեն պատւէրներս և ինձ խաբելու յաւակնութիւն չունենան գործակատարներս։ Մինչև ժամը երեքը մնացի ու .ապա կառք նստած դարձայ տուն։ Թէև նաւթի հորի և գործարանի վիճակը թնձկւած էին գանկումս, բայց աչքերս թէ ճանապարհին և թէ տանը փնտրում էին այն չքնաղ պատկերը, որը նախորդ իրիկունը այնպէս ինձ գրաւել էր։

Լողացայ, փոխւեցի, դիմեցի ճաշարան. վերադարձայ և երբ հաճոյք չստացայ, դուրս եկայ դարձեալ զբօսնելու։ Գիշերը թատրոն գնացի, որտեղ ներկայացնում էին «Ֆաուստ» օպերետը։ Շպարած դէմքերը, ներկած աչքերը, ծարուրած ունքերը, տարազները, մանաւանդ խզւած ձայները ձանձրացրին։ Երրորդ արարւածին չսպասեցի ու տուն դարձայ։ Բնակարանիս բանալին ունէի, այնպէս որ ա-

ռանց մարդու օգնութեան ներս մտայ, լամպը վառեցի և սկսեցի ծրագրել այն բնակարանի շինութիւնը, որը պիտի յատկացնէի գործարանիս բանւորներին։ Զբաղեցնող էր գործը, մանաւանդ իր շահեկան կողմն էլ ունէր։ Ամբողջ երկու ժամ աշխատութիւնս այնպէս սահել անցել էր, որ ժամացոյցի 12 հարւածը միայն ինձ սթափեցրեց։

Երբ պատրաստւում էի քնելու, ննջարանիս միացած սենեակից, որը մի փոկ դռնով բաժանւած էր, բարձր խօսակցութեան ձայներ ականջիս հասան։ Այդ խօսակցութիւնը աւելի կռիւ էր քան թէ վիճաբանութիւն կամ ընդդիմախօսութիւն։ Զայրացած իրար նախատում էին։ Մինը կանացի, միւսը տղամարդի բարակ ձայն էր։ Անմիջապէս ուշքս ամփոփեցի լսելու նրանց բովանդակութիւնը և անզգայաբար մօտեցայ մեզ բաժանող դրան։

Տղամարդու ձայնը խրոխտաբար հրամայում էր.

—Ես քեզ քանի անգամ պատւիրեցի, որ դու այն հային մի բարևիր, հետը մի խօսիր, մի տեսակցիր, իսկ դու ինձ բորբոքելու համար ամբողջ երկու ժամ նրա հետ այգում ման եկար և այսպէս ուշ միայն տուն ես դառնում։

- Այդ քո գործը չէ, թէ ես ում հետ եմ տեսնւում և խօսակցում։ Դու կարող ես քո կնոջը արգելել, ինձ վրայ իշխանութիւն չունիս։ Պիտի գնամ, պիտի տեսնւեմ և պիտի շարունակեմ մտերմութիւնս։ Ի՞նչ անքաղաքավարութիւն կամ ինչ անպարկեշտութիւն դու նկատել ես իմ ընթացքի մէջ։ Միթէ ես վայրենի եմ, որ ծանօթներիս, մանաւանդ ինձ յարգողներին արհամարհեմ։

—Նա քեզ չի յարգում, նա մտածում է քեզ կործանել։

—Այդ քո նեղ հայեացքն է քեզ կուրացնողը։

—Ոչ միայն ես եմ նկատել, այլ նոյն իսկ Մէնդէլսօնն էլ նկատել է։

—Այո, նրա կրքերն էլ նրան են կուրացրել և առանց ամաչելու իր սպիտակ մօրուսից երազում է ինձ ճանկերի տակ գցել։ Ոչ, ես նրանցից չեմ, որ ինձ ամսական 35 րուբլիով կուրացնէ և ստրկացնէ։

—Նա քեզ դուրս կանէ։

—Շատ հարկաւոր է, Общій паркъ-ում չեմ ծառայիլ, կգնամ Նօբէլի գրասենեակում կծառայեմ, որտեղ ինձ հրաւիրում են աւելի բարձր ռոճիկով։

—Հրաւիրում են... Յայտնի բան է, հրաւիրում են, բայց ոչ թէ գործ կատարելու, այլ խայտառակելու։

—Ո՛չ, ո՛չ ոք չի յանդգնիլ իմ պատւիս հետ խաղալ։ Միայն դու ես, որ դողում ես հարիւր րուբլիանոց պաշտօնիդ վրայ և ձգտում ես ստրկացնել ինձ էլ, որ Մէնդէլսօնը քեզ վրայ քաղցր հայեացք գցէ և ամսականդ աւելացնէ։ Ես այսպէս եմ, չեմ ուզում ուրիշի շահերին ծառայել, հասկանո՞ւմ ես։ Եթէ Մէնդէլսօնը ազնիւ մարդ լինէր, վաղուց ինձ 50 րուբլի պիտի նշանակէր։ Բայց նա ինձ ճնշում է, որ ճիրանների տակ գցէ։ Դու էլ ինձ տանջում ես, որ ինձ գլորելով Մենդէլսօնի ճիրանների տակ, ինքդ լաւամարդ դառնաս։ Չեմ ուզում, չեմ ցանկանում գրասենեակի կառավարչի երեսը տեսնել, հասկացի՞ր։ Եթէ պնդէք, ես դուրս կգամ նոյն իսկ վաղը։ Ձեր տունն էլ չեմ ապրիլ, կգնամ ինձ համար ուրիշ տեղ բնակարան վարձելու։ Բաւական է ինձ տանջէք։

—Մի՞թէ պատիւդ պաշտպանելը քեզ տանջանք է թւում։ Դու իրաւունք չունիս ո՛չ մեր գրասենեակը թողնելու, ո՛չ էլ իմ տանից դուրս գալու։ Հայրդ

քեզ յանձնել է խնամքիս, ինձ է հաւատացել։ Ես քեզ չեմ կարող փողոց շպրտել։ Դու յատկապէս հրաւիրուած ես մեր գրասենեակի համար և այնտեղ էլ պիտի մնաս։

—Դու ինձ դժոխք ես ուզում շպրտել, ո՛չ թէ փողոց։ Քեզ նման խնամակալի կարիք չունիմ։ Ես կգրեմ հօրս, որ գայ ինձ ազատի քեզ նման նենգաւորի ճիրաններից։

—Ես էլ եմ մտածում, որ գայ ու տեսնի՝ թէ իր Ռաքէլը ինչ հսկայական թևեր է հագել ու թռչկոտում է։

—Այդ նենգութիւններով դու չես կարող հօրս խաբել։ Գրի՛ր, ես էլ եմ գրելու, որ գայ։

—Իսկ մինչև գալը ես արգելում եմ քեզ մինչև կէս գիշեր այգում թրև գալ հայ կաւալերների հետ։

—Այն հայերը քեզանից հազար անգամ ազնիւ են։ Ես կգնամ, տեսնենք ո՞վ կարող է իմ թևիցս բռնել։

—Փորձիր և կտեսնես, Ռաքէլ։

—Մէկ համարձակւիր...

Այս խօսքերի վրայ տանտիկնոջ ձայնը վրայ հասաւ, որն իր ամուսնուն խնդրեց, յանդիմանեց, համոզեց ու տարաւ։

—Խօսակցութեան ժամանակ դրան բանալու ծակից սկսեցի գննել և տեսայ, որ տանտէրը վիճում էր այն օրիորդի հետ, որն ամբողջ օրը իմ մտածմունքի առարկան էր դարձել։ Նրա ձայնը, շարժումները և հաստատամտութիւնը նրան հերոսացրին իմ աչքում և աւելի ու աւելի բարձրացրին նրա հմայքը։

6 սեպտեմբերի։

Գիշերս չկարողացայ քնել։ Ամբողջ ժամանակ երազումս մօտ էր գալիս այն գեղանի, մանաւանդ ինքնասէր օրիորդը, որը յուզել էր իմ ներքին աշխարհը։ Այդպիսի չքնաղ մարմնի մէջ, հոգեկան այդքան վսեմ բարձրութիւն ինձ ապշեցրել էր։ Երևում է, նա էլ հրէուհի է, քանի որ տանտիրոջս ազգականն է և նրա խնամքին յանձնուած։ Միտքս ուշքս այնպէս է յափշտակել այդ օրիորդը, որ անվերջ նրա մասին եմ մտածում։

Առաւօտ վաղ նրա հետ զարթեցի և միաժամանակ էլ լուացուեցինք։ Ինչ որ նրա սենեակում կատարւում էր, ես լսում էի և համոզուած էի, որ նա էլ ինձ էր լսում։ Մի քանի անգամ մօտեցայ մեզ բաժանող դռան, որպէսզի խփեմ և նրա հետ խօսակցութեան մտնեմ, բայց վախեցայ, թէ նրա յանդիմանութեան և հակակրութեան արժանանամ, ուստի յետ կեցայ այդ անխոհեմ մտադրութիւնից։

Համարեա թէ միասին դուրս ելանք մեր սենեակներից, նա ուղղուեց իր պաշտօնատեղին —Общій паркъ-ի գրասենեակը, իսկ ես նրան ընկերակցելու և ծանօթանալու միտումով ուղղուեցի միևնոյն կողմը։ Քայլերս արագացրի և յետևից հասայ։ Երբ արդէն քովէքով էինք գնում, դարձայ նրա կողմը և ասացի.

—Ներեցէք, օրիորդ, դուք իմ հարևանուհին չէ՞ք. դուք էլ կարծում եմ ապրում էք Լևէնսօնի տանը։

—Այո՛, քրոջս տունն է, այնտեղ եմ ապրում։ Դո՞ւք էք մեր նոր դրացին։

—Այո՛, օրիորդ, տարաբախտաբար ես եմ։

—Ինչի՞ տարաբախտաբար, ասաց օրիորդը։

—Որովհետև այս գիշեր ես հնարաւորութիւն չունեցայ քնելու։ Ձեր փեսան այնպէս տմարդ վարուեց ձեզ հետ, որ ես յուզմունքից քիչ էր մնում միջամտէի։ Բայց որովհետև չէի իմանում, թէ ինչ պայմաններ են ձեզ կապում, չուզեցի իմ միջամտութեամբ ձեզ արջի ծառայութիւն անել և աւելի լարել ձեր յարաբերութիւնները։

—Ափսոս, ընդհակառակը ձեր միջամտութեամբ ինձ հնարաւորութիւն կտայիք աւելի համարձակութեամբ պատռել նրա դէմքի դիմակը։

—Մանաւանդ որ նա շատ շուտ գիջաւ և ձեր քոյրը կարողացաւ նրան անմիջապէս հեռացնել ձեր առանձնարանից, թէ չէ համբերութիւնս կտրել էր, պիտի դուռը բանայի և յարձակուէի ձեր փեսայի անկիրթ վարմունքի դէմ։ Բայց վա՞ղուց է, որ այդպիսի լարուած յարաբերութիւն ունիք։

—Ոչ, արդէն երրորդ ամիսն է, որ ես Բաքու եմ եկել և ապրում եմ քրոջս մօտ։ Ինձ ընդունեցին ծառայութեան և իմ պատճառով Լևէնսօնի ռոճիկը քսանհինգ րուբլով էլ աւելացրեց կառավարիչը։ Բայց յայտնի բան է, նա նպատակի չը հասաւ։ Մէնդէլսօնը կարծում էր, որ իր դիրքով, ռոճիկս աւելացնելու պատրուակով, կամ ուրիշ խոստումներով պիտի կարողանայ ինձ սորկացնել։ Մանաւանդ որ Լևէնսօնը գիշեր ցերեկ տքնում է, որ ես հաճոյանամ Մէնդէլսօնին, որպէսզի իր դիրքը ամրացնէ և բարձրացնէ։ Նրա շա՛տ պէտքն է իմ անունն ու պատիւը։

—Դուք ինչ էք ստանում օրիորդ, այդ գրասենեակում, ասացի սրտատրոփ։

—Երեսունհինգ րուբլի, և այս չնչին վարձատրու-

թեան համար դեռ տքնում են ինձ գերել։ Գիմնազիա աւարտեմ, հաշւապահութիւն սովորեմ, դամ ծառայեմ օտար քաղաքում, ողորմելի ռոճիկով, դեռ սրանով չեն բաւականանում, տքնում են ստրկացնել ինձ։ Ահա թէ ինչն է աւելի տանջում ինձ։

—Եթէ ուրիշ տեղ աչքի առաջ չունիք, օրիորդ, եթէ մի ուրիշի խոստացած չէք, կարող էք գալ իմ գրասենեակը ամսական 75 րուբլի վարձով, բոլորովին անկախութիւնդ պահպանելով։

—Շնորհակալ եմ ձեր բարեսրտութիւնից, բայց վախենում եմ, որ դուք էլ մի երկու շաբաթից յետոյ բռնէք այն դիրքը, ինչպէս վերաբերւում է ամէն մի գործատէր։ Ահա այդ պարագան ինձ ստիպում է ձեզ դեռ չճանաչած, չընդունել ձեր առաջարկը։

—Այդ ձեր կամքն է, կարող էք իմանալ, թէ ես ով եմ և ինչ գործ ունիմ։ Երբ բնաւորութեանս հետ էլ ծանօթանաք և ցանկաք հաշւապահի օգնականի պաշտօն վարել, ձեզ համար միշտ տեղ պատրաստ է։ Հաճեցէք վերցնել այցետոմսս։

—Անչափ շնորհակալ եմ ձեզանից։ Միայն թէ լաւ է մտածեմ և ապա պատասխանեմ։ Ցտեսութիւն ասաց և մտաւ Общій паркъ-ի գրասենեակը։

Ես սառած մնացի փողոցում։ Ոչ կարող էի ներս մտնել, ոչ էլ յետ դառնալ։ Սիրտս ձգւում էր Ռաքէլի կողմը, բայց զգաստութիւնս արգելում էր։ Իսկոյն նստայ առաջի պատահած կառքը և հրամայեցի տանել վակզալ։

Ամբողջ օրը Սուրախանի—նաւթահորերում անցկացրի, համարեա թէ միշտ զբաղւեցի, թէ նոր փորողների հետ և թէ գրասենեակում, բայց և ոչ մի րոպէ աչքիս առաջից չհեռացաւ հրէշուհու պատկերը,

ականջիցս նրա խօսակցութեան ձայնի ղողանջը։ Գիշերը վերադարձայ տուն։ Երբ մտածում էի տեսնել Ռաքէլին փողոցում, կամ պատշգամբում, տանտիկինը ինձ դիմաւորելով ասաց․

—Սամաւարը դեռ տաք է, արդեօք թէյ չէ՞իք կամենալ։

—Շնորհակալութիւնս յայտնեցի, բաղնիս մտայ և շորերս փոխելով դիմեցի նահանգապետի այգին Ռաքէլին տեսնելու յուսով։

7 սեպտեմբերի։

Ինչպէս ենթադրում էի, նահանգապետի այգում պատահեցի Ռաքէլին։ Նրան շրջապատել էին երիտասարդներ, որոնք մեծ հաճոյքով լսում էին ինչ որ մի պատմւածք։ Հեռւից ես նրանց նկատեցի, բայց չկարողացայ ճանաչել այդ երիտասարդներին, թէև բոլորն էլ շէնքով-շնորհքով ջահել տղերք էին երեւում։ Երբ մօտեցայ, թէև չէի ուզում նրանց շրջանը մտնել, բայց Ռաքէլի հայեացքը աչքս ընկնելուն պէս չկարողայ ինձ զսպել, բարևեցի մտերմական ջերմ շարժումով։

Ռաքէլը սառնութեամբ ընդունեց ողջոյնս և ես պարտաւորւած թողի ու անցայ, զսպելով նրա հետ խօսելու անչափ ցանկութիւնս։ Սակայն քայլերս ուզում էին ինձ դաւաճանել, սիրտս թեքւած էր այն կողմը, որտեղ երիտասարդները շրջապատել էին նրան։ Մեծ ոյժ գործ դնելով հազիւ բարձրացայ ու հասայ այգու վերին ծայրը և դանդաղ քայլերով ըսկսեցի ցած իջնել։ Հրէշուհին այնպէս էր գերել սիրտըս, որ չէի կարողանում զսպել աչքերս, որոնք անվերջ ուղղւում էին նրա կողմը և ես անզգայաբար կրկին անցայ նրա մօտից։ Սիրտս ճաքելու տատի-

ձան տրոփիւնով թէև ինձ դրդում էր մի քանի խօսք ասել նրան, բայց լեզուս պապանձուել էր։ Երբ ես համրաբար անցնում էի նրա մօտից, հրէուհին տեղից բարձրացաւ ու ասաց.

—Պ. Միրզայեան, ձեզ երկու խօսք ունիմ յայտնելու։ Ներեցէք, պարոններ, ասաց ընկերակիցներին, ինձ ձեռք մեկնելով և միասին շարունակեցինք ցած գալ։

—Անչափ շնորհակալ եմ ձեզանից, որ եկաք և հնարաւորութիւն տուիք ինձ ազատուելու այդ երիտասարդներից, որոնք երկու ժամից իվեր ինձ շրջապատել մխիթարում էին։ Մեր գրասենեակի երիտասարդ ծառայողներն են, որոնք մեծ հաճոյքով ինձ ընկերակցում են ամեն քայլափոխ։

—Ես էլ շատ գոհ եմ, որ դուք նրանցից բաժանուեցաք ինձ ընկերակցելու համար։

—Այդ ինձ համար ոչ միայն անչափ հաճոյք է, պարոն Միրզայեանց, այլ ձեր կողմից եղած մեծ շնորհ։ Այս օտար քաղաքում ամեն բան անծանօթ է ինձ համար, իսկ ձեր մարդասէր վարմունքը այսօր ոչ միայն ինձ քաջալերեց, այլ համարձակութիւն տուեց չարամտութեան դէմ բացարձակապէս կռուելու։ Այսօր յարաբերութիւնս այնպէս խիստ լարուեց Մէնդէլսօնի հետ, որ նա ինձ առաջարկեց թողնել գրասենեակը։ Ես անմիջապէս գտակս դրի և դուրս եկայ իրեն սրտին հասցնելով այն վէրքը, որ երբէք չէր սպասել գձուձ վերատեսուչը։ Լևէնսօնն այն աստիճանի կատաղեց, որ քիչ էր մնում վրաս ծեծկելու գար։ Բայց վախեցաւ, քանի որ տեսաւ, թէ ամբողջ գրասենեակը իմ արարքն արդարացնելով, ինձ օգնութեան կանգնեց։ Երկու գձուձները անչափ ստորացան ու փոքրացան ամբողջ ծառայողների ա-

ռաջ, որ եթէ զգացումից զուրկ չը լինէին, արդէն հրաժարական պիտի ներկայացնէին։ Բայց նրանք պատուի մասին տարբեր հասկացողութիւն ունին, նրանց պատիւը փողն է, դրամն է։

—Ուրեմն իսպառ թողիք ձեր պաշտօնը։

—Նրանք հրճւում են, որ ինձ վռնդեցին, բայց ընկերակիցներս միաձայն վկայում են, որ ես նրանց ինձ տուած պաշտօնը թողի, արհամարհեցի, պատուիս, ազնիւ զգացումներիս չը դաւաճանելու համար։

Շատ լաւ էք արել։ Ես ուրախ եմ, որ չէք ստրկացել այդ մամուկների առաջ, որոնք ուզել էին ձեր արիւնը ծծել։ Բայց ինչ վճռեցիք, ինչ գործ էք բռնելու։

—Ես առաւօտ ձեզ չէի ճանաչում, բայց ձեր այցետոմսը ինձ բացատրեց ամեն բան։

—Ուրեմն վաղը կգաք մեր գրասենեակը։

—Անշուշտ, եթէ ձեր տուած ազնիւ խօսքը ընդմիշտ կյարգէք։

—Անկասկած, մի տարակուսիք։

—Վստահ եմ, որ իմ անկախութիւնս և պատիւս այնքան բարձր կպահպանէք, որ երբէք ձեր անուան արատ չէք հասցնիլ,

—Լիովին վստահացէք։

—Այսօրուանից ես ձեր գրասենեակի հաշուապահի օգնականն եմ։

—Ձեր պաշտօնը խոստացուած է և ապահովուած ձեր լիակատար անկախութիւնը։ Եթէ ճնշում կամ ձեր կամքին ընդդիմութիւն որևէ մէկի կողմից նկատէք, կարող էք անձամբ կամ երկտող տոմսով ինձ յայտնել, բոլորովին համոզուած լինելով, որ ես խոստմանս և պատուիս տէրն եմ։ Իսկ իմ կողմից…

—Ես արդէն համոզուած եմ ձեր ազնուութեան վրայ: Բառերի և կրկին խոստումների կարիք չունիմ:

Այս պատասխանը արդէն խօսակցութիւնն ընդհատեց և երկուսս էլ ակամայ լռելեայն շարունակեցինք մեր ճանապարհը մինչև այգու արևելեան ծայրը: Թէ ինչ էր մտածում Ռաքէլը, չեմ կարող գուշակել, բայց հաւատացած եմ, որ նա ամբողջապէս հմայուած էր այդ րոպէին ինձանով, ինչպէս որ ես գրաւուած էի նրանով: Սակայն վերոյիշեալ խօսակցութիւնից և փոխադարձ խոստումներից յետոյ, մոլորուած մնացել էի, չգիտէի, թէ ինչ ոլորապտոյտով սկսէի այն ճանապարհը, ուր հասնելը իմ միակ փափագս ու ցանկութիւնս էր:

Երբ մօտեցանք լապտերին, ժամացոյցս հանեցի և ասացի.

—Արդէն ժամը տասնմէկն է, չը գնա՞նք ընթրենք և վերադառնանք տուն:

—Ուրախութեամբ, ասաց Ռաքէլը և ուղղուեցինք դէպի ափնուղին:

—Ա՜հ, այս ժխորը չեմ սիրում, կարծես ինձ խեղդում են, ասացի, երբ բազմութիւնը հազիւ ճեղքելով ճանապարհ էինք բաց անում:

—Իսկ ես այս սուր և խէթ հայեացքները: Կովկասցին այնպէս է բիբերը սրած գննում անցորդին, մանաւանդ կիներին, որ կարծես թէ օձի նման տրքնում է նրանց հիպնոսել ու կլանել: Ներեցէք, ես չեմ ուզում այս խօսքերով ձեզ վիրաւորել, խօսքս այն բնիկ և կիսաքաղաքակիրթ տարրի մասին է, որոնք չտեսի նման յափշտակւում և աչքերի յարձակումով տքնում են յաղթահարել օտարուհիներին:

—Ձեր նկատողութիւնը շատ սուր է և լիովին ճշմարիտ, բայց դատապարտութիւնն անիրաւ: Կով-

կասցուն — այս ջերմ և լեռնային կլիմայի զաւակին որքան էլ կրթեն ու զարգացնեն, խօ արիւնը չեն կարող փոխել: Բորբոքուած արիւնը յուզում է զգացումները, և եթէ պողպատից էլ ձուլուած լինի սիրտը, չի կարող զսպել զարկերակների շրջանառութիւնը: Այդ խիստ զգացումները անշուշտ պիտի արտայայտեն: Մի միայն աչքերը կարող են զգացումի հայելին դառնալ և սրտի յոյզերը արտացոլացնել:

—Շատ իրաւացի է նոյնպէս ձեր բացատրութիւնը: Ամեն ազգի մէջ էլ զգացումները արտայայտում են աչքերը, ըմբռնում են դարձեալ աչքերը: Սրտի և հոգեկան իղձերի բանակցութիւնը ամեն տեղ կատարւում է աչքերով: Տարբերութիւնն այն է, որ մեզ մօտ մեղմ, իսկ ձեզ մօտ բորբոքուած չափերով է կատարւում այդ արտայայտութիւնները: Նոյնիսկ ներեցէք ինձ համարձակ ասելու, որ այդ արտայայտութիւնը վայրենաբար է կատարւում, երբ արտայայտողը Կովկասից դուրս աշխարհ չի տեսած, կամ կրթութիւնից զուրկ է:

—Այո, բայց դրանք էլ ունին իրենց պատճառները, ասացի այգու դռնից դուրս գալով և կառք կանչելով: Երբ կառքը մօտեցաւ, ու ձեռքս տուի Ռաքէլին հրամցնելու համար, մի այնպիսի սարսուռ անցաւ ամբողջ մարմնովս, որ չեմ կարող ենթադրել, թէ այդ ցնցումն ելեքտրական հոսանքի նման անցած չլինէր նրա էլ ամբողջ մարմնով:

—Դրանց պատճառները բազմաթիւ են: Նախ որ ամբողջ 8—10 դար մեր երկրին տիրել է Իսլամի օրէնքը, որը արգելում էր կնոջը օտար տղամարդուն համարձակ երևալ: Մարդիկ դարերով տեսել են միմիայն իրենց կանանոցի կիներին և ընկերական յարաբերութիւն չեն ունեցել դրացի, բարեկամ, նոյն

իսկ ազգական կիների հետ: Հրապարակներում, ըզբօսավայրերում, փողոցներում կնոջ երևալը անսովոր է եղել: Այսօր մեր պապերի թոռներն ու ծոռները պարտաւորւած են այնպիսի տեսարանների ներկայ լինել, որ նրանց կազմւածքը, ջղերը անսովոր են զգալու և սառնասրտութեամբ տանելու: Այն, ինչ կովկասցու բուռն կիրքը ստիպում է անելու, մեր քաղաքակիրթները ամեն օր կատարում են մայրաքաղաքներում և յայտնի զւարճութեան վայրերում աւելի մեծ չափերով: Միայն թէ այնտեղ կատարւում է ամեն բան մեղմ, քաղաքավարի և պատշաճութեամբ, այն ինչ մեր տաք գլուխները ձգտում են կատարել վայրենի կոպտութեամբ:

—Խնդիրն այնտեղ է, որ բուռն բորբոքումը նրանց մոռացնել է տալիս ամեն պատշաճութիւն: Նրանք ամեն մի ազատ կնոջ վրայ նայում են միևնոյն հայեացքով, ինչպէս վերաբերւում են կորած ու մոլորւած կիների հետ,

Կառքը կանգնեցրի «Եւրոպա» հիւրանոցի առաջ և մենք մտանք սեղանատուն, որտեղ երեսունից աւելի սեղանների շուրջը ընթրում էին օտարականներ և բնիկներ: Սպասաւորին ապսպրեցի կերակուր, քաղցրաւենի, միրգ, գինիներ և նստանք շարունակելու ընդհատւած խօսակցութիւնը: Ռաքէլը այնպէս էր պահում իրեն, այնպիսի սքանչելի դիրք էր բռնել դէմքով, կազմով և կապուստով, որ գերազանցում էր յիսունից աւելի տիկինների, որոնք արդէն վաղ տեղ բռնած ընթրում էին: Մի հայեացքով շուրջս գննեցի և այնպէս հրճւեցայ, որ կարծես թէ ես թագաւոր էի այդ սեղանատանը և Ռաքէլը թագուհի: Ճշմարիտ է, ես ամուսնացած չեմ, կին չունիմ, բայց այդպիսի մի ժամանակաւոր ընկերակցուհի,

որը գալու էր ծառայելու գրասենեակումս, ինձ անչափ ուրախացրեց, որ առժամանակ ինձ Բագուի ամենից երջանիկ երիտասարդը համարեցի: Ուսում ունիմ, փողս առատ, գործս միլիօններ խոստացող, կեանքով երիտասարդ և առողջ, վայելքից էլ չեմ զրկւում ինձ: Այս կեանքից, սրանից աւելի ինչ սպասելիք ունիմ:

Երկու սպասաւոր հինգ րոպէ չանցած բոլորեցին մեր սեղանը, զարդարեցին աղանդերով և ֆրանսիական ընտիր գինիներով: Երբ ձկնկիթը մօտից գննեցի և համոզւեցի, թէ թարմ է և թէ ընտիր, դանակս վերցրի ու ասացի.

—Ռաքէլ, վերցրէք, ձեր բախտից շատ լաւ ապրանք է:

—Շնորհակալ եմ, ասաց և սկսեց այնպիսի ախորժակով ուտել, որ ես հիացայ նրա պարզութիւնից և մի մի բաժակ շարտրեօզ լցնելով ասացի.

—Ձեր կենացը, շնորհաւորում եմ ձեր նոր պաշտօնը: Բարեմաղթում եմ, որ իրար տւած խոստումներս ցմահ յարգենք և դուք բախտաւոր կեանք ունենաք: Ձեր կենացը:

—Շնորհակալ եմ. ասաց և խմեց բաժակը մինչև տակը: Դեռ տապակածը չբերած նա լցրեց բաժակները և ասաց.

—Ես խմում եմ ձեր կենացը, ոչ որպէս տիրոջս, այլ որպէս ընկերակցիս, որը այնքան վեհ է սրտով, որ զիջում է իր բարձրութիւնից իջնել և հաւասարւել իր ծառայողի հետ: Ես յարգում եմ ձեզ, որպէս տիրոջ. բայց ձեր ընկերական վարմունքը ինձ ստիպում է, հիանալ ձեզնով: Ես զգում եմ, որ կատարելութիւնը ձեզ այնպէս է բարձրա-

ցրել, որ դուք ազնուութեամբ իջնելով ձեր դիրքից, բարձրացնում էք ինձ նմաններին դէպի կատարելութիւն: Ձեր կենացը, որպէս բարեհոգութեան մարմնացած տիպարի:

—Շնորհակալ եմ, Ռաքէլ, այդ ձեզ խօսեցնում է ձեր ազնիւ հոգին, որն ամեն տեղ միայն բարեհոգութիւն է տեսնում. Ես ձեզ կցանկանայի տեսնել միշտ այդ հոգեկան տրամադրութիւնով:

Բաժակները երեք—չորսն անցան: Ձեմ յիշում, թէ ինչ խօսեցանք, ինչ կերանք և ինչպէս շուտ անցաւ ժամանակը: Միայն ժամացոյցն յանկարծ նայեցի, տեսայ, որ մէկից քառորդ էր անցել:

—Գնանք, ասաց Ռաքէլը, արդէն ուշ է, քոյրս անհանգիստ կլինի:

—Լևէնսոնի կինը ձեր հարազատ քո՞յրն է, հարցրի:

—Այո՛, հարազատ քոյրս է: Խնդրում եմ շտապենք: Ես չեմ ցանկանում անհանգստացնել ոչ ոքի, մանաւանդ որ....

—Լևէնսոնը անշուշտ տրամադրուած է յուզուելու և բորբոքուելու:

—Ես ուշք չեմ դարձնում այն գձուձի խօսքերին, միայն երբէք ինձ չի պատահել գիշերը տասներկու ժամից ուշ տուն դառնալ: Իսկ աղջկայ համար անշուշտ բամբասանքի նիւթ կարող է դառնալ այսպիսի մի ընթացք: Միայն անչափ գոհ եմ, որ ձեզ հետ եմ:

Մենք դուրս եկանք, կառք նստանք և տուն հասանք: Բանալիով դուռը բացի և ներս մտանք: Երբ դահլիճից անցնում էի, տանտիրուհին դուռը բացեց և ասաց քրոջը.

—Ռաքէլ, մեր հօր անունը պատիւ չի բերիլ քո ընթացքը: Ժամը երկուսն է:

—Տիկին, ասացի առաջ գնալով,—ներեցէք, ես պատճառ եղայ նրա ուշանալուն: Մենք գնացինք ընթրելու և նրա նոր պաշտօնը շնորհաւորելու: Ահա թէ ինչի ուշացանք:

—Ձը ներելու ոչինչ չունիմ, պարոն, ասաց տանտիրուհին, մանաւանդ անչափ ուրախ եմ, որ նա ձեզ հետ է անցկացրել ժամանակը: Քրոջս դաստիարակութեան մասին ոչ մի կասկած չունիմ: Ձեր ներկայութիւնը բոլորովին ապահովեցնում է մեզ: Միայն թէ հաճելի չէ, որ մի օրիորդ կէս գիշերից ուշ տուն վերադառնայ: Ձեզ գիշեր բարի:

—Ձեզ բարի գիշեր, ասաց նոյնպէս Ռաքէլը և երկու քոյր մտան իրանց բնակարանը:

Եւ ես մտայ առանձնարանս, արձանագրեցի այս արկածը և ապա քնեցի:

8 սեպտեմբերի:

Երէկ գիշեր ժամը երեքին մօտ անկողին մտայ: Հազիւ քնել էի, երբ մի մեծ աղմուկ բարձրացրեց Լևէնսոնը: Հրէան Ռաքէլին ամբողջ քաղաքում որոնելուց յետոյ, ձեռնունայն տուն էր դարձել բորբոքւած: Երբ լսել էր, թէ օրիորդը արդէն ժամ ու կէս առաջ անկողին է մտել, առանց ուշք դարձնելու կրնոջ թախանձանքներին, մտել էր Ռաքէլի ննջարանը մի մեծ խայտառակութիւն բանալու: Լևէնսոնի աղաղակից սթափուած Ռաքէլը բարձր ձայնով գոռում էր նրա վրայ.

—Դո՛ւրս կորի՛ր ննջարանիցս, եթէ ոչ լուսամուտը բանալով ոստիկանութիւն կը կանչեմ:

—Դո՛ւ, խայտառակ անզգամ, կրկնում էր Լևէնսոնը, մինչև ժամը երկուսը փողոցներում և հիւրանոցներում հոմանիներիդ հետ զւարճանաս և ինձ

թափառեցնես փողոցներում այսքան ժամանակ։

Այլևս զայրոյթս չկարողացայ զսպել, էլ համբերելն անհնար էր։ Անմիջապէս խալաթ հագայ, դուրս եկայ սենեակիցս, ուղղակի դիմեցի Ռաքէլի ննջարանը և կտրելով հրէայի ճանապարհն, ասացի.

—Ի՞նչ էք փոթորկել բնակարանը։ Միթէ թոյլ չէ՞ք տալու, որ քնենք ու հանգստանանք... Ի՞նչ էք պահանջում այս օրիորդից, որ ամեն գիշեր աղմուկ էք բարձրացնում։

—Այդ ձեր գործը չէ, ինչի՞ էք միջամտում ուրիշների ներքին կեանքին։ Մի՞թէ դուք չարամտութեամբ մտաք այս բնակարանը։

—Չարամիտը դո՛ւք էք, ասացի և մի ուժեղ ապտակ հասցրի հրէային։— Մի՞թէ առաւօտ չէի՞ք կարող ասել այն բոլորը, ինչ գիշերս աղմկելով խայտառակութիւն էք բարձրացրել...

—Կարա՛ուլ... օգնութի՛ւն... սկսեց գոռալ հրէան պաշտպանւելով և լալով։

Օձիքից բռնեցի և դուրս հանելով կրկնեցի.

—Օրիորդն իմ պաշտպանութեան տակ է, չհամարձակւես այլևս նրան վիրաւորել։

—Նաժի՛շտդ է, հարճդ է...

—Ո՛չ, նա իմ գրասենեակում հաշւապահ է, նա իմ.....

—Ուրեմն դու նրան այս գիշեր հիւրանոց ես տարել...

—Դու սրիկայ ես, ասացի, կորիր և այլևս ինձ մի՛ բորբոքիր, նա իմ նշանածս է, հասկացա՞ր... Շատ շուտով մենք օրինաւորապէս կպսակւենք։

—Ես գիտեմ, ձեր պսակը մի ամիս միայն կարող է տևել...

Այս միջոցին կինը աղերսելով քաշում էր Լևէնսոնի թևից, որ տանի իրենց բնակարանը. բայց նա յամառած ուզում էր ինձ նախատել։ Ռաքէլը վերմակը փաթաթւած եկել կանգնել էր կողքիս և թեւիցս քաշելով աղերսում էր, որ վերադառնամ ննջարանս։

Ես մտայ Ռաքէլի ննջարանը, փակեցի բանալիով դուռը և ասացի.

—Եթէ այլևս որևէ աղմուկ բարձրացնէք, իսկոյն ոստիկանութիւն կհրաւիրեմ։ Ապա իմ և Ռաքէլի ննջարանի մէջ եղած դուռը բացի և գիշեր բարի մաղթելով Ռաքէլին, գնացի քնելու։

Առաւօտ ժամի 10-ին միայն արթնացայ։ Ռաքէլն արդէն կազմ ու պատրաստ մտաւ ննջարանս և սկսեց ներողութիւն խնդրել իրիկւան խայտառակութիւնների համար։ Լևէնսոնի կինը եկաւ նոյնպէս խնդրեց, որ սենեակս թողնեմ և ուրիշ բնակարան վարձեմ, քանի որ իմ պատճառով նրա փողապաշտ մարդը կարող էր կնոջը ապահարզան տալ։ Ես արդէն վաղ մտածել էի բնակարանս փոխել, բայց ինձ կապում էր Ռաքէլը։ Երբ վերջինս խօսք տւեց ինձ հետ գալ, հպատակւել կամքիս, ամուսնանալ ինձ հետ, ես արդէն վճռեցի նոյն օրն իսկ հեռանալ Լևէնսոնի բնակարանից։

Այդպէս էլ կատարեցի։

Ռաքէլը թախանձեց, որ նրան շուտով մկրտել տամ, օր առաջ դուրս բերեմ ինչպէս Լևէնսոնի, նոյնպէս և հօր խնամակալութեան տակից, քանի որ դեռ տասնեւութերորդ տարին նոր էր մտել։ Խոստացայ նրա ցանկութիւնը շուտով կատարել և այն օրը տուն կանչելով տէր Խորէնին, թախանձեցի, որ ամեն միջոց ձեռք առնէ օր առաջ Ռաքէլին իր բաղձանքին հասցնելու։

Ամբողջ օրը կառքով, երկաթուղով միասին անցցրի Թաքէլի հետ։ Մենք ման եկանք թէ քաղաքի գրասենեակս, թէ նաւթահանքերս, թէ փոխադրող կայարաններս և թէ գործարաններս։ Այս բոլորն այնպէս հրապուրեց Թաքէլին, որ նա անվերջ կրկնում էր, որ չի կարողանում այդ բախտին հաւատալ, և կասկածում է, թէ ինքը երազում է։

—Հոգիս, ասացի վերջապէս յուզւած և երկու ձեռքերը պինդ բռնած, ասա ինձ անկեղծ սրտով, ինձ հաւատո՞ւմ ես, ինձ սիրո՞ւմ ես...

Թաքէլը կարմրած, լռիկ, աչքերը խոնարհած գլուխը կրծքիս վրայ սեղմեց։ Իսկոյն գրկեցի և ճակատն համբուրելով ասացի.

—Հաւատացած եմ, որ հոգով սիրում ես, այնպէս, ինչպէս ես քեզ։ Բայց ես ցանկանում եմ շըրթունքներիցդ լսել այն, ինչ պատմում է սրտիդ բարձր բաբախոցը։

—Արամ, դու իմ փրկիչս ես... դու ինձ ազատեցիր...

Իսկոյն համբուրեցի շրթունքներն ու ասի.

—Դու էլ ինձ կեանք տւիր...

Զգացածս հրճւանքը չափ չունի։ Հազարաւոր օրիորդներ ինձ շրջապատել էին կեանքիս վերջի 10 տարւան ընթացքում, հարուստ, կրթւած, զարգացած և նրբաճաշակ, բայց ոչ մէկը ինձ այնպէս չէր գրաւել, ինչպէս գերեց Թաքէլս։ Ես գոհ եմ, որ 25 տարւան լրմանս պատահեցի Թաքէլին, նա ինձ այնպէս հրապուրեց, որ միայն այդ համբոյրը արժէ նրա համար զոհածս ազատութիւնը, անկախութիւնն ու անձնւիրութիւնը։

Գիշերս դարձեալ Եւրոպա հիւրանոցում ընթրեցինք։ Աչքիս տակով հետամտում էի, հանդիսականների աչքերը ուղղւած էին Թաքէլիս վրայ... Ամենքն էլ հրճւում էին նրա գեղով, հիպնոսւած աչքերը ամեն ծայրից յառել էին նրա վրայ... Այնպէս նախանձ բարձրացաւ սրտումս, որ չկարողացայ համբերել և ասացի.

—Թաքէլ, բաւական է, վեր կաց գնանք, հանդիսականների աչքերը կարող են քեզ հալեցնել։

—Գնանք, հոգիս, ասաց Թաքէլը աթոռից բարձրանալով, գնանք, ծածկւենք նախանձոտ աչքերից։

Երբ տուն եկանք, պատրաստւեցինք քնելու, Թաքէլը փաթաթւեց վզովս և թախանձագին ասաց.

—Արամ, մի խնդիր ունիմ, չե՞ս մերժիլ։

—Ասա, հոգիս, պատասխանեցի աչքերս բիբերին յառելով, մի՞թէ կարող եմ քեզ մերժել։

—Խոստացիր իմ և քո արևով, որ չես մերժիլ, չես բարկանալ։

—Արամը երբէք չի դրժել խոստման դէմ, ասա համարձակ։

—Մայրս ինձ երդւեցրել է, որ առանց օրինական պսակի անձնատուր չլինեմ նշանածիս։ Այժմ սիրտս տրոփում է, լեզուս չի դառնում, պիտի թոյլատրես ինձ երդումս պահպանելու։

—Ես պատւիս վրայ խոստանում եմ, որ մօրդ կամքը պիտի պահպանեմ։ Ես քեզ խօսք եմ տալիս, որ դու հարազատ և օրինական կլինես ես և 8—10 օրից յետոյ, պիտի պսակւենք, երբ պաշտօնական թղթերը մեզ հասնեն։

—Սրանից յետոյ կեանքս միայն քո բախտաւորութեան մէջ է, Արամ, միայն աչքերիդ լոյսը պիտի ջերմացնէ այս սիրտը։

9 սեպտեմբերի։

Գիշերս մեծ տանջանքի մէջ էի։ Օրագրութիւնս մինչև աւարտելը Ռաքէլս արդէն քնել էր։ Երբ պատրաստւեցի քնելու, մօտեցայ ճակատն համբուրեցի գիշեր բարին ասելով։ Նա թռաւ, զարթնեց և ասաց.

—Ա՜խ, որքա՜ն վախեցայ… Երազումս էի. իբր փուչ Մէնդէլսօնը ինձ հետամտում էր… Յանկարծ ինձ վրայ յարձակւեց ու փաթաթւելով ուզեց համբուրել։ Ուզում էի փախչել, այնպէս յուզւեցայ, որ զարթնեցի և աչքերս ընկաւ դէմքիդ։

— Յետո՞յ, բարկացա՞ր…

—Ո՛չ, հոգիս, դեռ սիրտս տրոփում, բաբախում է յուզմունքիցս։ Այդ հրէշն այնքան է ինձ տանջել, որ քունս անգամ վրդովւում է քստմնելի երազներով։

—Շուտով կանցնեն այդ տպաւորութիւնները և այնպիսի կեանքի մէջ կլինենք, որ կմոռանանք այդ բոլոր յիմարութիւնները։ Կեանքը լիքն է այդպիսի տխուր էջերով։ Քանի որ ազատ մրցման պայքարն է թագաւորում երկրիս երեսին, քանի որ մարդու արժանաւորութիւնը չափւում է իր անձնական կամ ժառանգական կարողութիւնով կամ ձեռք բերած օրավարձով, Լևէնսօններն ու Մէնդէլսօնները դեռ երկար ժամանակ տզրուկի նման պիտի ծծեն արդիւնաբերող և արդիւնագործող տարրին։ Դու նրանց ձեռքին մի այնպիսի զէնք էիր, որ քեզանով նրանք պիտի շահագործէին 150 նաւթագործարանատէրեր և հանքատէրեր, սրանց գրպանները պիտի խուզէին և իրենց համար դրամագլուխ պատրաստէին։ Բայց բարեբախտաբար դու նրանց համար չնչաւոր մեքենայ չդարձար և բախտը այնպիսի մի յորձանքի մէջ մեզ գլորեց, որ մենք իրար հետ կապւեցինք։

—Արդեօք սա էլ մի երազ չէ՞…

—Ամբողջ կեանքը, մարդու գոյութիւնը մի 40—50 տարւան երազ է։ Յայտնի բան է, նիհրած մարդու մաքից սահած խոլական երազի մէջ չենք։ Իրականութեան և իրար գրկի մէջ ենք։ Ցնորքը չէ մեզ պատկերաւորումների մէջ գլորել, այլ կենդանի կեանքը մեզ միաւորել է, բայց այս կեանքը ևս, որ մի օր պիտի հասնի իր վախճանին, կարելի է նոյնպէս երազի նմանեցնել…

Ամբողջ օրը հանքում և գրասենեակում անցկացնելուց յետոյ, հետևեալ գիշերը մենք մեր սեղանատանը ընթրեցինք, մեր խոհարարուհու պատրաստած համադամներով։ Երբ արդէն գինին իր ներգործութիւնը կատարել էր և մենք ստիպւած էինք Որփէոսին անձնատուր լինելու, Ռաքէլս ասաց.

—Ա՜խ, ես որքա՜ն բախտաւոր եմ…

—Ես ևս, հոգիս, ասացի ու գրկախառն տարածւեցինք, նիրհեցինք։

Առաւօտ շատ վաղ սթափւեցի։ Ռաքէլը քնած էր. չուզեցի նրան զարթեցնել։ Անմիջապէս խալաթս հագայ, որ զգացումներս ու արկածներս արձանագրեմ։ Ռաքէլը կողքիս անկողնի վրայ անուշ-անուշ մշալով շարունակում է իր քունը. Նրա ներկայութիւնը ինձ բոլորովին հրճւեցրել է, նրա բոյրը ինձ հարբեցրել է, վերմակի բացւածքից նկատւող նրա սպիտակ և ողորկ կուրծքը, նռան նման դուրս ցցւած ստինքները, փղոսկրի նման փայլուն վիզն ու կզակը ինձ խելագարեցնում էին։ Նոյն իսկ սրունքները, ոտքերի մատները, եղունգները այնքան համաչափ և գեղեցիկ են, որ կարծես արւեստագէտի ձեռքով փղոսկրից են կերտւած։ Հայեացքս ոտքերից դէմքին, գլխին էր ընկնում, այնտեղից կրծքին և ամբողջ կազմ-

ւածքին, որ փաթաթւած է մի նրբին քաթանի վերմակի մէջ, ոչ մի տեղ ներդաշնակութիւնը խանգարող գիծ ու կոշտ չեմ նշմարում։

Երբեմն սառնասիրտ փիլիսոփայի նման տքնում եմ քննադատել Ռաքէլի գեղեցկութիւնը, կամ, ուզում եմ համաչափութիւնը խանգարող որևէ պակասութիւն տեսնել, բայց չի յաջողւում։ Սև թերթիչներով փակ աչքերը նոյնքան գրաւիչ ու դիւթիչ են, որքան այն կենդանի սև աչքերը, որոնք ինձ կաշկանդեցին, սիրտս շղթայեցին և յետքից տարան։ Սաթի նման սև ու փայլուն մազերը, որոնք խառնխուռն սփռւած են ուսերին, կրծքին ու թիկունքին, նոյնքան և աւելի գեղեցիկ են, քանթէ նրանց գանազան ոլորածոյ հիւսւածքները և փաթաթւածները։ Բարձի վրայ յետ ընկած գլուխը, ցցւած քիթը և իրար միաւորւած վարդագոյն շրթունքները մագնիսից աւելի ուժով քաշում են սիրտս, քան թէ արթուն րոպէների գեղգեղանքը և կայտառ շարժւածքը։ Երկու մերկ թևերն այնպէս են բոլորել գլուխը պատած խառնւած արձակ մազերը, որ կարծես ողորկ փղոսկրից յղկւած շրջանակում պատած մի կենդանի պատկեր լինի։

Ես անկարող եմ ինձ հաշիւ տալ թէ ինչպէս կարողացայ ողջ գիշերս նրա հետ միևնոյն ննջարանում զուգահեռական մահճակալների վրայ քնած անցկացնել, կրքերս զսպել և խոստումս չդրժել։ Երկու օր առաջ, նոյն իսկ քառասուն ժամ առաջ, ես ամբողջ գոյութեամբ ցնցւում էի նրան տիրելու համար։ Ես որ պատրաստ էի ամեն զոհողութիւն անել, նոյն իսկ ոտնատակ տալ պատիւս ու անունս, չկանգնել ոչ մի սրբութեան առաջ, միմիայն զգացումներիս և կոյր կրքերիս գոհացում տալու համար,

անբացատրելի է մնացել, թէ ինչպէս սանձեցի անասնական կրքերս։ Ամբողջ գիշերը նրա ձեռքերը, կուրծքը թևերիս վրայ էր և ես կարողացայ քարացնել, անզգայացնել ջղերս, սանձել ցանկութիւններս, Ռաքէլին հասկացնելու, զգացնել տալու կամքիս ուժի չափն ու սահմանը։

Չգիտեմ, ինչի՞ն վերագրել, հաստատակամութեանս թէ սիրուս, որ ես կարողացայ Ռաքէլի ցանկութիւնը կատարել, կամ նրա մօր կամքն ու աւանդութիւնը յարգել։ Ես էի զսպել կրքերիս, թէ մի ուրիշ գերազանց ույժ սանձահարել էր ինձ չեմ կարող բացատրել։ Ռաքէլն ամբողջութեամբ նոյն իսկ հոգեկան զգացումներով ինձ անձնատուր է եղած, նա չի կարող գերիշխել կոյր կրքերիս։ Երևի այնքան բուռն է սէրս, որ չեմ յանդգնում սիրուս ցանկութիւնները չը յարգել։ Երևի այնքան զօրաւոր է սէրս, որ նա կարողացել է տիրել զգացումներիս և կրքերիս։

Ճշմարիտ է, հոգով սիրում եմ Ռաքէլին։ Նա իմ կուռքս է, նա իմ պաշտամունքս է, նրա կամքը ինձ օրէնք է։ Բայց չէ՞ որ սիրոյ հանգոյցն ու պսակը պիտի կազմէ զգացումներիս, կրքերիս յագեցումը։ Էլ ինչ սէր, էլ ինչ հոգեկան զուգաւորութիւն, երբ զգացումներս չեն բաւարարւելու, երբ իղձերս չեն լրանալու։ Հոգիս քաղւում է, ուզում եմ թողնել գրիչ, օրագրութիւն և գնալ ու գրկել Ռաքէլիս, բայց չեմ յանդգնում յուզել նրա հոգին մի այլանդակ նախապաշարում ոտնատակ տալով։ «Մօր կամքը, մօր միակ պատւէրն, աւանդութիւնը», տխմար նախապաշարում։ Այո, եթէ ես կասկածէի հաստատամտութեանս դէմ, կասկածէի վճռիս փոփոխելու մասին, անշուշտ չէի յանդգնիլ սկզբից այս քայլն անելու։ Բայց քանի որ վճիռս անդառնալի է, քանի որ չեմ

կարող ապրել առանց սիրուս, առանց Ռաքէլիս, էլ ինչի՞ սանձել զգացումներս, ինչի՞ ազատ յագեցում չտալ անզուսպ կրքերիս։

Երևի կասկածում է ինձ վրայ Ռաքէլս։—Ոչ յանցանք է այդ մտածութիւնը, քանի որ նա ոտքով գլխով ինձ անձնատուր եղաւ։ Ոչ միայն համաձայնեց տանս ապրելու, այլ գրկիս մէջ գիշերելու։ Էլ ինչ կասկած։ Երևի ինքն էլ յօժար չէ տանջւելու, կրքերը զսպելու, «բայց մայրական պատւէրը, աւանդական հրամանը» մխւել է գանկի մէջ և չի յանդգնում ոտնատակ տալու այդ որոշումը։ Երևի նախապաշարումը Ռաքէլիս գանկի մէջ փոթորիկ է բարձրացրել և նա էլ կռւում է զգացումներով այդ նախապաշարման դէմ։

Երդում, աւանդութիւն, նախապաշարում կամ ինչ որ ուզում էք համարեցէք, բայց ես զգում եմ, որ մի ներքին զգացմունք ինձ զսպում է, ինձ թոյլ չի տալիս խոստումս դրժել, ինձ սանձում է և չի թողնում, որ ոտնատակ տամ Ռաքէլիս միակ խնդիրը, միակ ցանկութիւնը, որի կատարման խօսքն առաւ ինձանից ինձ անձնատուր լինելուց առաջ։ Ա՜խ, որքան վսեմ է նրա հոգին, որքան ազդու նրա խօսքը, որ ես ամբողջ էութեամբս ջանում եմ կատարել նրա կամքը և սրբութեամբ պահպանել խոստումս։ Էլ չեմ կարող համբերել, գնամ ու նրան մէկ էլ համբուրեմ, որ զարթնի։

10 սեպտեմբերի։

Այսօր դարձեալ չկարողացանք իրարից բաժանւել ամոլներս։ Ռաքէլն ինձ հետ էր ամբողջ օրը, ամէն տեղ։ Առաւօտ գնացինք տէր-Խորէնի մօտ, որը ցոյց տւեց և կարդաց մեզ Մեսրոպ սրբազանի գը-

րած պաշտօնական թղթերը, Ռաքէլին մկրտելու, մեզ պսակելու թոյլտւութիւնն ստանալու առթիւ։ Տէրտէրն ասաց, որ կարիք չկայ Էջմիածնի հետ գրագրութիւն կատարելու, այդ բոլորը թեմակալի իշխանութիւնից կախում ունեցող խնդիր է։ Ռաքէլիս հրճւանքին չափ չկար, երբ տէր-Խորէնն ասաց, թէ անշուշտ մինչև երեք օրում կստացւի կարևոր հրամանը և կգործադրւի ծիսակատարութիւնները։

Ճաշից յետոյ, երբ վերադարձանք Սուրախանից, ոստիկանական աստիճանաւորը ներկայացաւ մեզ բացատրութիւններ ստանալու։ Սակայն Ռաքէլս որպէս հրեշտակ աղջիկ, այնչափ յուզւեց ոստիկանական աստիճանաւորի անակնկալ այցից և քննութիւններից։ Ինչպէս պարզւեց, Հէէնսօնը դիմել էր ոստիկանապետին և թախանձել էր, որ Ռաքէլին անշուշտ վերադարձնեն իր բնակարը մինչև հօրը Կիևից Բագու հասնելը։ Երբ մենք բացատրեցինք, թէ Ռաքէլը քրիստոնէութիւնը ընդունել է և մենք պսակւելու ենք, ոստիկանական աստիճանաւորը ապշած ներողութիւն խնդրեց։

Ես ներկայացրի հոգևոր կառավարութեան միջոցով կոնսիստորիա ուղարկւած թղթերի պատճէնները և բացատրեցի, թէ ինչ նենգամտութիւններով Հէէնսօնը ջանում է ինձ տանջել կամ ինձանից փող կորզել։

Երբ խորին յարգանքով, առանց ծանրանալու և առանց կաշառքի թողեց հեռացաւ ոստիկանական աստիճանաւորը, Ռաքէլը մնաց շւարած։

—Ի՞նչ հնարով այդքան հեշտ հեռացրիր տըդ-բուկներին, ասաց ժպտալով։

—Նա կարծում էր, թէ հրէայի տուն է եկել։ Երբ ինձ տեսաւ, արդէն ըմբռնեց, թէ ում հետ գործ

ունի։ Նա գիտէ, թէ որին կարող է կլանել և ում կուլ գնալ։

—Բախտաւոր ես, որ հրէա չես ծնւել, թէ չէ ամենքը համարձակ կը կարողանային քեզ էլ կլանել, ասաց հառաչելով Ռաքէլը։

—Ներիր, հոգիս, ասացի.—հրէային կուլ տալը հեշտ խնդիր չէ։ Ահա երեք հազար տարուն մօտ է, որ հրէաներին հալածում ու կլանում են աշխարհակալներն ու հզօրները, բայց և այնպէս այսօր դարձեալ ոչ միայն նրանց թիւը 15 միլիօնի է հասնում, այլ հրէաներն են տիրում ամբողջ մարդկութեան 1500 միլիօն ժողովրդին։ Մի հրէան հարիւր մարդու.....

—Վա՜յ այն տիրելուն, որ հրէաներին են վերագրում, ասաց Ռաքէլը։ Մի տեղ ազատ ապրելու արտօնութիւն չունին, օրական չորս անգամ խուզարկութեան են ենթարկւում, ամիսը չորս անգամ արտակարգ հարկ են վճարում վարչական իշխանաւորներին, տարեկան չորս անգամ բնակութեան տեղերն են փոխում, որ գլուխներն ազատեն և դուք նրանց 1500 միլիօն ժողովրդի կաշկանդող էք անւանում։

—Ո՛չ, հոգիս, այդ հալածանքը ամեն տեղ չէ, իսկ տիրելը ամեն տեղ է։ Հրէաներն են տալիս աշխարհին կապիտալ, հրէաների դրամներին տոկոս է տալիս ամբողջ աշխարհ... Հրէան է ծնեցնում տաղանդ ու հանճար, հրէան է ծրագրում ամեն մի ճարտար գործ...

—Մեծամեծ անհատներ, հանճարեղ գլուխներ, միլիարդի կուտակողներ ամեն մի մեծ ազգի մէջ էլ ծնւել են, կան ու կլինեն։ Բայց երեսուն դարի հալածանքը այնպէս է բթացրել հրէայի զգացմունքը, որ կեանքի ամեն մի փոթորկի դէմ նա միայն տըքնում է զինւել, պաշտպանւել, յարմարւել և անձնատուր լինել իրեն հետամտող բռունցքին։

—Ո՛չ, սիրելիս, դու սխալւում ես։ Երեսուն դարի հալածանքը այնպէս է սրել ու մարզել հրէային՝ նա այնպիսի բռնակալների է ընկճել, ուժասպառ արել, որ նրան չեն կարող ընկճել, բնաջինջ անել ներկայ վարչութիւնները։ Ընդհակառակը, բախտաւոր է հրէան, որ այս ծայրագոյն մրցման դարում ծնւած է այդպիսի տոկուն ժառանգութիւնով, օժտւած է դիմադրելու և պահպանւելու ունակութիւններով։ Միայն տոկացողը, ընկճողը և շահագործելու ընդունակը կարող է դիմանալ և սերունդը պահպանել։ Թուլամորթները յաւիտեան գլորւելու և զօրեղներին կեր են դառնալու 20-րդ դարի ընթացքում։

—Այո՛, ասածդ ճիշտ կլինէր, եթէ որ հրէայի օժտւած յատկութիւններից մէկն էլ աշխատելու ընդունակութիւնը լինէր։ Հրէան ընդունակ է, ճարպիկ է, խորամիտ է, բայց ծանր աշխատութեան, երկրամշակութեան, բանւորական կեանքին անպէտք է։ Նա ոքնում է չնչին ֆիզիքական, բայց անհուն մտաւոր աշխատանք գնել և ամենաչաղ բաժինը կլանել։

- Ուրեմն դրա համար դու հայ ամուսին ընտրեցիր, որ զաւակներս քո կողմից մտաւոր ընդունակութիւններ, իսկ իմ կողմից ֆիզիքական աշխատութեան կարողութիւն ժառանգեն։

—Լաւ անուշ տեղը կպցրիր, ասաց ծիծաղելով Ռաքէլը և եկաւ գրկեց գլուխս։ Երբ ճակատս, և շրթունքներս համբուրեց, ասացի.

—Ռաքէլ, չլինի վշտացել ես, որ պսակւելու համար պարտաւորւած ես մկրտւել և հայ եկեղեցու գիրկը մտնել։

—Է՜հ, անտեղի հարցեր չեմ ուզում։ Դու գի-

տես, որ ես սիրով, յօժար կամքով և բուռն ցանկութեամբ ուզում էի դուրս գալ ինձ ծնունդ տուող համայնքից։ Ո՛չ միայն քեզ հետ պսակւելու տենչից ըստիպւած ես մկրտւում եմ, այլ այդ շրջանից դուրս գալու բաղձանքից ես։ Մէնդէլսօններն ու Լևէնսօններն իրենց նենգամիտ և ստոր խարդաւանանքներով ինձ վաղ ստիպել էին հեռանալ նրանց համայնքից։ Ես առանց մկրտւելու էլ կարող էի քեզ հետ ամուսնանալ, առանց կրօնս փոխելու էլ քեզ հետ կենակցել։ Ինձ ստիպում է նրանց դէմ տածածս զզւանքը, թողնել ու հեռանալ։ Ես չեմ ատում ցեղս ու տոհմս, ես չեմ նախատում հրէական սերունդը, կրօնն ու դաւանանքները, այլ ես զզւում եմ այդ ցեղին ու կրօնին պատկանող ապականւած հասարակութիւնից, որը թեթև վաստակով տքնում է շահագործել փիզիքապէս ծանր աշխատաւորի արտադրութիւնները։ Ինքը իւրացնում է չաղ բաժինը, աշխատաւորին յաճախ զրկանքների դատապարտելով։

—Ուրեմն դու հոգով յարել ես հայութեան։

—Անշուշտ...

—Ճիշտ ասա, ինձ ես յարել թէ հայութեան։

—Յայտնի բան է քեզ, միայն քեզ, Արամիս... Իսկ Արամիս սիրոյ համար նրա ցեղին ու տոհմին։ Բայց մենք զուր ժամավաճառ ենք լինում, գնանք փողոց ապսպրած շորերս տեսնելու և կարևոր կարասիներ գնելու։ Մութն է։

—Գնանք, ասացի և փողոց դուրս եկանք։ Երբ գոհարավաճառի կրպակի առաջ կանգնած ցուցադրած գոհարներն էինք դիտում, Ռաքէլն ասաց.

—Որքա՜ն գեղեցիկ է այս բազպանը...

—Միթէ այդքան քեզ գրաւեց։ Դա սովորական մի շինւածք է, սուր սուր անկիւններով։

—Ես չեմ սիրում «րընեսանսի» խճողած ոլորածուները։ Այս բազպանի վրայ ամէն խազ արևելքն է արտայայտում։

—Հրէակա՞նը...

—Գուցէ և հրէականը. բայց եթէ չեմ սխալւում, զուտ հայկական են այդ սուր սուր անկիւնները, այդ ծայրահեղ հակադրութիւնները։

—Գեղեցիկ շողակներ էլ կան վրան։

—Ընտրովի և խորհրդաւոր։ Կենտրոնը վարդագոյն շողակից է, որին շրջապատել են եօթը սպիտակ ջրալի շողակներ։ Անկիւնների շողակները կանաչի են տալիս, սրանցից ճառագայթաձև հեռանում են դեղնաւուն շողակներ, որոնք իրար են բախւում։

—Բազպանդ ինչ արժէ, հարցրի կրպակի տիրոջը, որ մեզ նկատելով դուրս էր եկել Ռաքէլիս գեղը տնտղելու։

—Շատ թանկ չէ, եթէ կամենաք, ձեզ առքի գնով կարող եմ զիջել։ Ներս հրամեցէք։

—Աւելորդ է, ասաց Ռաքէլը, ինձ պէտք չէ։

—Գնանք, տեսնենք, կարող ենք և չառնել, ասացի և նշան տւի Ռաքէլին կրպակ մտնելու։

Ուղիղ որ մի հազւագիւտ գործ էր բազպանը, երբ երկար զննեցինք ներս մտնելուց յետոյ։ Մինչ մենք գոհարով էինք զբաղւած, գոհարավաճառը բացեց հաշւեգիրքը, գտաւ պահանջւած ապրանքի թիւն ու ասաց.

—Երեք հազար հինգ հարիւր րուբլի արժէ այս բազպանը, այն էլ ձեզ համար պ. Միրզայեան։

—Իսկ ուրիշի համար արժէ երկու հազար հինգ հարիւր րուբլի։

—Առևտուրը կատակ չի սիրում: Հրամայեցեք և գնեցեք:

—Այո, այստեղ տեսնում եմ 3200 թւանշան, բայց դա ֆրանկ է, մարկ է, կրոն է, ով կարող է իմանալ:

—Բայց Ռուսաստանում մատեաններում գործածում են ռուբլի, ոչ թէ օտար փողեր:

—Կարող է պատահել, որ հաշւեցուցակով 3200 ռուբլի են նշանակել, բայց ձեզ զիջել են քառասուն տոկոս:

—Կարող է ամեն բան պատահել, իսկ ձեզ կարող եմ ասել, որ 3500 ռուբլու ոչ մի տեղ չէք կարող այս ապրանքը գնել: Երեք ամիս է պահում եմ, մի ամիս էլ ճանապարհներին է մնացել: Տասը տոկոս մինչև չաշխատեմ, չեմ կարող կրպակի և գործակատարի վարձ տալ և ապրել:

—Այդտեղ քանի կարատ բրիլեանտ կայ:

—Աւելի քան քսան կարատ: Բայց այդ քարերը կարատով չեն ծախում, այլ հատով: Դուք գիտէք, որ գունաւոր շողակը քառապատիկ բարձր գին ունի, էլ ձեզ ինչ համոզեմ:

—Քսան կարատ, քսան հարիւրնոց: Հինգ հարիւր ռուբլի էլ վարձ շինողին, բերողին, ծախողին:

- Սխալ էք, ասաց խանութպանը կակազելով:

—Եթէ ձեռք կտայ երկու հազար հինգ հարիւր ռուբլիով, տւէք տանեմ, վաղը մտէք դրասենեակ և ստացէք դրամները:

—Մի ամիս էլ ուշ տւէք, միայն թէ...

—Դուք գիտէք... Ես աւելացնողը չեմ...

—Առևտուրի վատ ժամանակ է. փողի կարիքը խեղդում է: Ի՞նչ անեմ, գոնէ առքը տւէք տարէք:

—Չեմ աւելացնիլ, ես գինը տուել եմ:

—Սրա գինը հինգ հազար ռուբլի է, բայց ինչ օգուտ, որ առնողը ինքը մասնագէտ է:

—Ուրեմն զիջում էք, թէ ոչ:

—Մի բան աւելացրէք:

—Ես չեմ կրկնում խօսքս, ասացի կրպակից դուրս գալով, ուր Ռաքէլը ինձ էր սպասում:

—Որ հաւանել էք, տարէք: Լաւ ապրանքը լաւ գնահատողի բաժին է, միայն թէ ինձ վնաս մի տաք, մի բան աւելացրէք, ասաց ակնավաճառը և գոհարի տուփը առաջարկեց:

—Տանում եմ, միայն վաղը ժամի 11-ին կարող էք ներկայանալ դրասենեակ...

—Ոչինչ, ոչինչ...

—Ցտեսութիւն, ասացի և ուղղւեցինք ծովափ:

Գոհարը մեկնեցի Ռաքէլին, որի ուրախութեանը սահման չկար: Նա հրճւանքից թռչկոտում էր, նրա հոգին երանութեան մէջ էր...

—Դա իմ առաջին նւէրն է, ասացի, Ռաքէլ, լաւ պահիր, դա թող լինի մեր սիրոյ թալիսմանը:

—Սա մինչև գերեզման իմ թևից մարդ չի կարողանայ բանալ: Ճիշտ որ թալիսման է, գունաւոր քարեր, եռանկիւնի շրջանակ, ուր կարելի է զետեղել քո պատկերը:

—Իմ և քո պատկերը միասին, այնպէս չէ՞ հոգիս...

Նահանգապետի այգում չկարողացանք երկար զբօսնել, շտապեցինք տուն, մեր առանձնարանը:

Գրասեղանիս վրայ նամակ էր դրած, իսկոյն բացի և ուրախ ուրախ կարդացի: Տէր Խորէնը գրել էր, որ կոնսիստորիան կարգադրել էր Ռաքէլին ընդունել մեր եկեղեցու գիրկը, մկրտել և մետրիքա-

կան տալ։ Երբ թարգմանեցի բովանդակութիւնը, նա իսկոյն փաթաթուեց վզովս, այնպիսի ջերմ համբոյրներ տեղաց աչքերիս, բերանիս և այնպիսի ջերմութեամբ ծծեց շրթունքներս, որ կարծես թէ զեղեց սիրտս ու հոգիս բերկրութեամբ։ Այնպէս էր փաթաթուել ու կախուել վզիցս, որ բորբոքումից չէր կարողանում բաժանուել...

—Զափաւորիր զգացմունքներդ, հոգիս, ասացի երբ մի կերպ թուլացաւ ու ընկաւ բազկաթոռի մէջ, ես գիտեմ, ես համոզուած եմ, որ ամբողջ էութեամբդ ինձ պաշտում ես։ Մի՞թէ դու չե՞ս համոզուած, որ ես քեզանից աւելի եմ բորբոքուած սիրովդ...

—Ա՜խ, հոգիս, եթէ գիտենայիր, թէ այստեղ ինչ է կատարւում...

—Ես գիտեմ, որ այդ սիրտը բաբախում է ինձ համար, ասացի ու համբուրեցի կուրծքը, որ բաց էր արել Ռաքէլը ազատ շնչելու համար։

11 սեպտեմբերի։

Երէկ երեկոյեան ամբողջ ժամեր անցկացրինք Ռաքէլիս հետ հրճուանքով և ծրագիր կազմեցինք մեր ապագայի մասին։ Որոշեցինք Բագու մկրտուել և Թիֆլիսում, ազգականներիս ներկայութեամբ պսակուել, փառահեղ հարսանիքով։ Այնպիսի մանրամասնութիւնների մէջ մտանք և այնպիսի ընդարձակ ծրագիր կազմեցինք, որ այդ բոլորը չեմ կարող երկու օրուայ ընթացքում գրի անցկացնել։ Հազիւ կարողանում եմ կեանքիս էական կէտերը և հոգեկան աշխարհիս անցքերը արձանագրել ապագայի համար։ Ե՞րբ ժամանակ կարող եմ գտնել մանրամասնութիւնների մէջ մտնելու։

.....Ծրագրներս դեռ աւարտած չէինք, որ աղախինն եկաւ իմաց տուեց, թէ ընթրիքը պատրաստ է։ Ժամի 9-ին նստել էինք ծրագիր կազմելու, ժամի 12-ին գնացինք ընթրելու։ Երեք ժամը մի քառորդ ժամի տպաւորութիւն թողեց։ Զարմացանք, երբ յիշեցրին թէ կէս գիշերն անցել էր... Ընթրիքի սկզբին ձեռքս առայ կոնեակի բաժակը և ասացի.

—Ռաքէլ, քո անգին կեանքը. դու շատ ապրես ինձ համար։ Սրանից յետոյ ինձ համար հ ա ր ա մ է ուրիշ կինը։ Խոստանում եմ ցմահ ապրել միայն քեզ համար։ Ասացի ու համբուրեցի այն շրթունքները, որոնք սիրտս լցրել էին բերկրութեամբ։

—Ես արդէն համոզուած եմ, հոգիս, որ դու մի այնպիսի անդրդուելի կամք ունիս, որ մինչև գերեզման չես դրժելու խոստումդ։ Ես էլ խոստանում եմ և երդւում իմ ու քո գլխով, թէ ինչպէս մինչև այսօր ոչ ոք չէ յանդգնել նոյն իսկ իմ բաց կուրծքս տեսնել կամ մատիս ծայրերն անգամ համբուրել, քեզանից զատ ոչ ոք այլևս չպիտի տեսնի իմ առագաստն ու մերկ անդամները։ Պիտի ապրեմ միմիայն քեզ համար։ Այս սիրտս պիտի ջերմանայ միայն քո աչքերից ցոլացող ճառագայթներով։ Լից ինձ համար էլ, ես էլ ուզում եմ խմել քո անզուգական կեանքը։ Այս եօթն օրուան մէջ դու այնպէս քաղեցիր և բուռդ մէջ ամփոփեցիր իմ անսանձելի սրտիս ջղերը, որ ես ամբողջապէս քեզ անձնատուր եմ եղել, պիտի մնամ ցմահ և քեզ համար զոհուելուց աւելի մեծ հաճոյք չպիտի կարողանամ երևակայել։

—Քեզ ինչ տամ, հոգիս, կոնեակ թէ շարտրեօզ։

—Քո ձեռքով թոյն էլ տաս, հրճուանքով կուլ կտամ, հոգիս... Տուր, ինչ որ կամենում ես...

Լցրի բաժակը շարտրեօզով և տուի։ Մինչև վեր-

ջին կաթիլը խմեց և պատին խփելով բիւրեղի բաժակն ասաց.

—Թող այսպէս փշրւի սիրտս, եթէ մազաչափ կասկած ծնի այնտեղ քո զգացումների և ազնւութեան մասին:

Ընթրիքը երկու ժամից աւելի երկարեց: Այդ միջոցին մենք լրացրինք մեր ծրագրի պակասորդները: Վճռեցինք նոյնպէս պսակից յետոյ անմիջապէս ճանապարհորդութիւն կատարել Սև ծովով՝ Կ. Պօլիս, Աթէնք, Ալէքսանդրիա, Գահիրէ, Եաֆա, Երուսաղէմ և այնտեղից Հռոմ, Փարիզ և Բերլինի ու Վիէննայի վրայով վերադառնալ Բագու.

Մենք նստած էինք իրար մօտ մի բազմոցի վրայ, առաջներս դրւած էր սեղանը: Ամեն մի առիթով ես էի դառնում ու գգւում Ռաքէլիս, կամ նա փոխադարձաբար: Ըմիչքները թէև մեզ չէին հարբեցրել գինեմոլների նման, բայց արդէն բաւականին ծանրացրել էին, այնպէս որ, երբ տեղիցս շարժւում էի, կարծես ծնկներիցս ծանր կապարներ կախւած լինէին: Թէ ես, թէ Ռաքէլը գիշերւան թեթև հագուստով էինք, սպիտակ քաթանի բարակ խալաթներով, բայց այդ խալաթն անգամ ծանրացել էր վրաս: Մարմաշ շապիկս կարծես երկաթի զրահ լինէր, որը սեղմում էր հոգիս:

—Ա՜հ, ասացի քանդելով վզիս և կրծքիս կոճակները, կարծես հոգիս բանտարկւած է դրանց մէջ, գիտեմ թէ սիրտս շղթայել են այս օղակներն ու կոճակները:

—Մանաւանդ նախապաշարման կոճակները, այնպէս չէ՞, հոգիս, ասաց ծիծաղելով Ռաքէլը և տեղից վեր կենալով թևիցս քաշեց որ իրեն հետևեմ:

—Ո՞ւր ես քարշ տալիս, ասացի:

—Ներս գնանք, թո՛ղ աղախինը գայ սեղանը հաւաքի: Այնտեղ կարող ես այդ շղթաներդ էլ համարձակ թափել, ասաց Ռաքէլն ու միասին մտանք ննջարան:

—Դու շղթաներս փշրեցիր, էլ ուրիշ վիշտ չունիմ... Ցոյս ունիմ, որ չեմ ունենալու, քանի որ սրտիդ բաբախումները ընդհարւեն ջղերիս ու ականջներիս: Միայն թէ...

—Միայն թէ նախապաշարման կոճակները... մօրս աւանդութիւնը...

—Դա սուրբ է ինձ համար, հոգիս, թէև դու էլ համոզւած ես, ես էլ, որ դրանք սնոտիապաշտութիւններ են... Ես մինչև գերեզման քոնդ եղայ այն օրից. երբ քեզ սիրեցի...

—Ես էլ քոնն եմ, քեզ եմ անձնատուր եղած և քո կամքից ու ցանկութիւնից կախւում ունի ամեն բան: Մեզ կրօնականի աղօթքը չպիտի շղթայէ, մեզ արդէն շղթայել է ցմահ այն սէրը, որն արծարծւել ու տարածւել է մեր երակներում, ուղեղում, նոյն իսկ ոսկորների ծուծի մէջ:

Այս ասելով այնպէս գրկեց վիզս և այնպիսի ջերմ համբոյրով սկսեց ծծել շրթունքներս, որ մեր վրայից թափւեցին հագուստներս և գլորւեցինք անկողին...

Առաւօտ մինչև ժամի իննը քնած մնացել էինք: Զարթնեցի սաստիկ ծարաւած: Իսկոյն խալաթս հագայ, գնացի լողարան սառը ջրի աւազանը մտայ: Ամբողջ քառորդ ժամ լաւ լողացայ, զովացայ, թարմացած ու կազդուրւած յետ դարձայ, պատւիրելով աղախնին, որ ջուրը փոխէ և պատրաստէ տիկնոջ համար: Ռաքէլը դեռ քնած էր, այն մանկական անուշ նիրհով, ինչպէս քնում են երեք տարեկան ան-

մեղ երեխաները։ Նրա անտխական դէմքը, վարդաթոր շրթունքները այնպէս հրապուրեցին, որ սառը ձեռքերովս վզովը փաթաթւեցի և համբուրեցի շրթունքները։ Իսկոյն աչքերը բացեց։

—Բարի լոյս, հոգիս, ես արդէն զովացայ, դու չես ուզում թարմանալ։

—Աչքիս կոպերը դեռ այնքան ծանր են, որ չեմ կարողանում բանալ։ Զգացի, որ մօտիցս հեռացար, նոյն իսկ դուրս գնացիր ննջարանից, բայց չկարողացայ սթափւել։

Երբ թէյ էինք խմում, աղախինն ասաց, թէ տէր Խորէնը տոմսակ է ուղարկել և դրել է գրասեղանիս վրայ։ Իսկոյն բերել տւի, կարդացի.—«Ժամը 11-ին նշանակւած է օրիորդ Ռաքէլի մկրտութիւնը։ Խնդրում ենք բարեհաճէք կնքահօր հետ ներկայանալ Ս. Լուսաւորիչ եկեղեցի»։

—Հոգիս, պէտք է շտապել, մենք ևս ուշացել ենք։

—Տէր Խորէնը ևս ուշացել է... Էլ օրիորդ Ռաքէլը գոյութիւն չունի։

—Դեռ մետրիքական մատեանում օ ր ի ո ր դ Ռաքէլ պիտի արձանագրեն, որպէսզի պսակների մատեանում տ ի կ ի ն արձանագրեն։

Մենք հագնւեցինք, պատրաստւեցինք և ես հեռախօսով պահանջեցի քաղաքի գրասենեակից հաշւապահին, որ շտապի ժամի 11-ին ներկայ լինել Ս. Լուսաւորիչ եկեղեցի։

Ճիշտ ժամանակին հասանք երեքս էլ։ Տէր-Խորէնը նորից խոստովանեցրեց Ռաքէլին, ստորագրութիւն առաւ և ընկերակիցների հետ շուրջառւորած խորհուրդը կատարեցին։ Հաշւապահս շւարած մնաց։ Նա չէր իմանում, թէ եկել էր նշանածիս կնքահայրը

դառնալու։ Ռաքէլը ապուշ կտրած նայում էր արարողութեան։ Ջրի լւացումը և միւռոնի օծումը նրան զարմացրին։ Քահանաները երկար ու ձիգ երգեցողութեամբ կարդացին աղօթքները ինչ որ սահմանւած է մաշտոցում։

Երբ տուն դարձանք, տէր Խորէնի և կնքահօր հետ սեղան նստանք, Ռաքէլն հարցրեց.

—Ի՞նչ նշանակութիւն ունի տէրտէր, այն ջուրը, որ լցրիք իմ գլխին։

—Դա Ադամի մեղքից ազատւելու և մաքրւելու լւացման համար է սահմանւած։

—Իսկ օծումն ինչի՞ համար է, որ օծեցիք անդամներս։

—Դա եկեղեցական զէնք է, որով զինում են հաւատացեալին, որ նա իր անդամները միշտ եղբայրական բարութեան համար գործածէ և ընդդիմադրէ չարութեան։

—Ուրեմն դրանք ինձ մաքրեցին թէ Ադամական հրէական մեղքից և թէ զինեցին չարութեան դէմ,—ասաց Ռաքէլը խոհուն դէմքով։

—Այո, մենք միայն զէնքը տալիս ենք և յորդորում, որ դրանք ընդունողը միշտ զգաստ մնայ, չը գլորւի փորձանքների մէջ և մաքառի ունայն հրապոյրների դէմ։

—Բայց ինչ է պատճառը, որ դրանցով զինւած 500 միլիոն ժողովուրդը դարձեալ ապականութիւնից չի հեռանում։

—Մենք բռնի չենք կարող ապականութիւնից հեռացնել, քանի որ մարդն ազատ ինքնակամ է ըստեղծւած։ Ամեն հոգի ինքը թող քննէ, զատէ և իր դատողութեամբ գնայ այն ուղիով, ինչ իրեն աւելի հաճելի է։

—Բայց այն արգելքը, ասաց Ռաքէլը, որ կանխապէս դնում էք ազատ կամքի տէր մարդու առաջ, չէ՞ որ հէնց այդ արգելքը նրան գրգռում և մղում է դէպի այն ապականութիւնը, որից իբր թէ ուզում էք խուսափեցնել։ Ադամը ինչպէս կարող էր իր ուշքը դարձնել Եդէմի հազարաւոր ծառերի միջից անպատճառ գիտութեան ծառի վրայ և սրա պտուղն ուտելու համար դրախտից զրկուել, եթէ այդ մասին նրան կանխապէս մատնանշած և պտղի ուտելն արգելած չլինէր։

—Այդ դէպքում, եթէ Ադամը անհնպատակ կերպով մօտենար և ուտէր գիտութեան ծառի թուզը, ոչ ոք նրան չէր կարող մեղադրել, թէև այդ յանցանքը նրան դրախտից արտաքսելու ծանրութիւն ունէր, նրա մտքի աչքերը պիտի բացուէր և գլորուէր բարձրից, ասաց աէր Խորէնը։

—Բայց դժւար թէ Ադամը կամ Եւան ուշք դարձնէին այդ ծառի վրայ, եթէ նրանց կանխապէս ծառը արգելքով մատնացուցած չլինէին, ասաց Ռաքէլը ծիծաղելով։

—Բաժակներդ վերցրէք, ասացի խօսքը փոխելու և վէճը դադարեցնելու համար։ Խմենք նրանց կենացը, որոնք արգելքը գիտեն, բայց այնքան մեծ կամքի ոյժ ունին, որ արհամարհում են խստութիւնը, հրապոյրը և իրենց գլուխը բարձր են պահպանում...

—Կեցցէ՜ն մեծահոգիները, կրկնեցին բոլորը,

12 սեպտեմբերի։

Ռաքէլս ջերմ սրտով կպել է հայերէն դասերը սովորելու։ Նա արդէն սկսեց կարդալ։ Երբ ես նրան ծաղրեցի, նա շատ խելացի կերպով պատասխանեց.

—Եթէ Բուլղարիայի թագուհին պարտք է զգում բուլղարերէն սովորելու, եթէ Կարմէն Սիլւան ոչ միայն ժողովրդի հետ խօսում է ռումիներէն, այլ նոյն իսկ գրում է նրա ընթերցող դասին բաւականութիւն պատճառելու համար։ Եթէ ազգասէր Գերմանիայի իշխանուհին Յունաստան մտնելու պէս թողնում է մայրենի լեզուն և սովորում է յունարէն, այդ դու որքան կասմոպոլիտ ես, որ ծաղրում ես կնոջդ, որը քո տունդ մտնելուց յետոյ քո տոհմի անդամը դարձաւ և պարտաւոր է ոչ միայն գրել-կարդալ, այլ մինչև անգամ խօսել ազգային լեզուով։

—Ոչինչ չունիմ, ասացի Ռաքէլիս, բայց այժմ մեզ մօտ ամեն տեղ պետական լեզուով ենք խօսում բոլորս։ Էլ ինչ հարկաւորութիւն կայ այդքան տանջուելու։

—Ես պետական լեզուն տիրապետում եմ, բայց մի հայի տան մէջ անհրաժեշտ է, որ տանտիկինը մայրենի լեզու էլ գիտենայ և խօսի շրջապատողների հետ։ Ձեր ազգականների տանը կարող են հայերէն խօսել և ես արձանի նման պարտաւորուած պիտի լինիմ լսելու և պապանձելու, իսկ օտարների մօտ պիտի կարմրեմ հայերէն չիմանալու համար...

—Արգելք չունիմ, ասացի, հոգիս, սովորիր, եթէ ցանկանում ես, վարժապետ էլ վարձեմ։

—Դրա էլ ժամանակը կայ, ասաց Ռաքէլս շարունակելով ընթերցանութիւնը։

Ռաքէլս ոչ միայն համոզմունքով է կպել հայերէն սովորելու գործին, այլ իրեն նշանաբան է դրել անպայման լաւ ուսումնասիրել մեր գրականութիւնը։ Թէ որքան պիտի յարատևէ այդ ընթացքը, չգիտեմ, բայց ընդունակ է, արդէն իւրացրել է անհրաժեշտ բառեր և կրկնում է, որ հիմնաւորուի մտքումը։

Առաւօտ թէյից յետոյ ես պատրաստւած էի վաղ Սուրախանի հանքերը գնալ և վերստուգել կատարւածները: Ռաքէլս սկզբում ուզեց ինձ ուղեկցել, բայց յետոյ չգիտեմ ինչ մտածեց, չեկաւ: Ես գոհ էի, քանի որ նրա պատճառով ես պիտի կաշկանդւած գործ անէի, ամեն մի անկիւն չպիտի կարողանայի մտնել ու քննել. մանաւանդ, որ ժամանակ չը պիտի ունենայի նրա ներկայութեամբ հորերի վիճակները, ամբարներն ու հեղկմուղները մանրամասնութեամբ հետազօտել:

Վերջերս զգալի չափով նաւթի արտադրութիւնը պակասել է սովորականից 7—5 տոկոս: Եթէ պատճառները չստուգեմ և չպարզեմ, կարող է աստիճանաբար բերքը նւազել: 7—5 տոկոսի կորուստը 10—15 օրւան ընթացքում այնքան զգալի է, այնքան սպառնալից, որ անհրաժեշտ է խելացի կերպով առաջն առնել: Այնպիսի ճարպիկ գործակատարներ կան, որ օրը ցերեկով, հանքատիրոջ աչքի առաջ կարողանում են 2—3000 պուդ նաւթ իւրացնել, ծախել ուրիշներին, փողերը գրպանել, իշացնելով վերահսկողներին: Այսպիսի պարագաները կասկած են բարձրացրել սրտումս: Ես կարդալով առաւօտ վաղ ներկայացւած ծանօթագիրը, այլևս կորցրի սառնասրտութիւնս:

Սուրախանի հասնելու պէս սկսեցի խուզարկել ամեն բան, նոյն իսկ ամբարների շարքերը մտայ և անձամբ հետազօտեցի ամեն բան: Գրքերը ստացականները, ցուցակները, ամեն բան կարգին էր, ասճանաբար պակասել էր ամեն օր երեք տոկոսից ընկնել և հասել էր 7 տոկոսի: Ծառայողների, մշակների բերանից ուզեցի խօսք քաշել, ճար չգտայ, այնպիսի նենգամիտ պատասխաններ էին տալիս, որ ան-

հնար էր նրանց ներքին աշխարհը թափանցել: Ողջ օրն զբաղւեցի և Ռաքէլիս հեռախօսով յայտնեցի, որ ինձ չսպասէ մինչև ժամի հինգը: Թէև սիրտս ձգւում էր դէպի քաղաք—Ռաքէլիս մօտ, բայց մտատանջութիւնս ինձ կապել, կաշկանդել էր, չէր թողնում ամբարներից, հորերից հեռանալ: Անհնար եղաւ որևէ հետք գտնել, իսկ ծառայողներս ինձ ուզում էին հաւատացնել, թէ արտաբերութիւնը նւազել էր:

—Այս երևոյթը չի կարող շարունակւել, ասաց հոր փորողը, երբեմն պակասում է, բայց մի քանի ժամանակից յետոյ դարձեալ աճում է արդիւնաբերութիւնը:

—Մովսէս, ասացի ցածր ձայնով, տասը տարի է, որ ես այս գործով եմ զբաղւում: Տարէցտարի, ամսէամիս, նոյնիսկ օրէցօր իմ արտաբերութիւնն աւելացել է, Այս տասնեհինգ օրում ինչի՞ պիտի պակասի: Մինչև ձախորդութեան պատճառը չըմբռնեմ, չեմ հանգստանալ:

—Գործ է, պարոն, ասաց Մովսէսը, մէկ կաւելանայ, մէկ էլ կպակասի, դրա համար մտածելու կարիք չկայ: Դուք մտածեցէք նոր հոր գտնելու և մի շարւանի հանդիպելու մասին:

—Ես շարւանի երազով չեմ ապրիլ և չեմ էլ ուզում ինձ խաբել: Այն հորերն, որոնք անխափան օրական 12 հազար պուդ նաւթ են արտադրում, նրանք երբէք շարւանի հետ չեմ փոխի:

—Այդ ճշմարիտ է, բայց դուք լաւ գիտէք, որ միշտ պակա-հորերի արտադրութիւնը հետզհետէ սում է:

—Այդ ես գիտեմ, բայց չէ որ նոր երկու հոր էլ աւելացրինք և այսօր դարձեալ անցեալ տարւան չափ չենք ստանում:

—Է՛հ, ասաց Մովսէսը, նաւթի հորը բախտի բան է, շատրւան կայ նաւթ կտայ, շատրւան էլ կայ այնպիսի աղի ջուր կտայ, որ ոչ միայն անպէտք է, այլ տասնեակ հազարներ վնասի կենթարկէ տիրոջը։ Այս գործն անողը լայն սիրտ պիտի ունենայ և պիտի համբերէ։

—Ես կհամբերեմ, Մովսէս, ասացի գործակատարիս, եթէ ես համոզւեմ, թէ բախտից է, որ պակասել է արտադրութիւնը, բայց ես կասկածում եմ, թէ մի գուցէ լաւ չեն հսկում…

—Հոգիդ մի սևացնի, պարոն, ասաց Մովսէսը դրական ձայնով, այստեղ և ոչ մի անհատ չը կայ, որ քեզ դաւաճանէ։ Ամենքն էլ քեզ այնպէս են պաշտում, որ իրենց կեանքը պատրաստ են քեզ զոհաբերելու և քո շահերը պաշտպանելու։ Նաւթի քչանալը լոկ քո բախտից է։

—Բախտս մինչև հիմա բարձրանում էր, այժմ ինչի գլորւեց, ասացի խնդալով ու դուրս եկայ հանքերից։

—Իսկոյն հագնւեցի, մաքրւեցի, կառքս նստայ իջայ կայարան քաղաք գալու, բայց հանգստութիւնս աւելի կորցրած և մտատանջ։ Նախապաշարւած չեմ, գոնէ ես համոզւած եմ, բայց Մովսէսի կրկնած «բախտիցդ է, բախտդ դարձել է» խօսքերը մեխւել էին գանկումս և ինձ ստիպում էին, միմիայն բախտի խաղերի մասին մտածել։ Մինչև տուն հասնելս միտքս ամբողջովին ամփոփւած էր այս խնդրի շուրջը, ես չէի կարողանում ցրւել տխուր երևակայութիւնները իմ մտքից և անվերջ խորհում էի միայն «բախտի» մասին։

Երբ այս մռայլ մտքերով պաշարւած տուն մըտայ, Ռաքէլս ինձ դիմաւորելու պէս, այնպէս ը-

թափւեցի, որ ամեն բան մոռացայ։ Բաւական էր Ռաքէլիս մի ժպիտը, մի հայեացքը, մի ակնարկը ցրւելու այն բոլոր տխուր մտքերը, որ մռայլում էին հոգիս և յուզում սիրտս

Յոգնած ու խոնջած այնպէս էի քաղցել, որ անմիջապէս ճաշի նստանք և անձնատուր եղանք ըսպասին։ Ես թէև երկրպագու չեմ բագոսին, ոչ էլ Ռաքէլս, բայց այնքան քաղցր է ինձ համար նրա լցրած բաժակը, որ միայն չորս հինգ ժամից հազիւ զւարթացած, ծանրացած վերկացանք սեղանից երկուսս էլ, գնացինք անձնատուր եղանք Մորփէոսին։ Թէ երբ էինք քնել, շատ լաւ չեմ յիշում, միայն այսօր առաւօտ վաղ սթափւեցի, լողացայ և ապա զարթեցրի Ռաքէլիս։

14 սեպտեմբերի։

Այսօր ինձ համար անսպասելի հիւր եկաւ։ Առաւօտ վաղ հեռախօսով կանչեցին և հարցրին, թէ երբ կարող եմ ունկնդրութեան ընդունել Կիևի առաջին կարգի վաճառական Լազանսօնին։ Ես պատասխանեցի, որ այդ պարոնը կարող է դիմել գրասենեակս, եթէ առաջարկներ ունի։ Ոչ, ասացին, նա անձամբ ցանկանում է ինձ տեսնել և ինչ որ կարևոր խնդրի առթիւ բանակցել։ Կտրական կերպով մերժեցի, յայտնելով, որ բոլոր առևտրական գործերս վարում է լիազօրս, քաղաքի գրասենեակում, կարող են նրան դիմել և բանակցել։ Այս մերժումից յետոյ միայն Լազանսօնը ասաց, թէ ուզում է տեսնել իր աղջկան Ռաքէլին և նրա առթիւ ինձ մի խօսք ունի յայտնելու։

Իսկոյն կանչեցի Ռաքէլիս, որ անձամբ լսէ իր

հօրը և ինքը ժամադրութիւն նշանակէ։ Ռաքէլս ըսկզբում այլայլուեց, չէր ուզում հեռախօսով բանակցել հօր հետ, բայց շուտով լըջացաւ և հօրն յայտնեց, թէ ինքը հեռախօսի մօտ է կանգնած և նրան լսում է։

Հօրը լսելուց յետոյ պատասխանեց.

—Խնդրում եմ, հրամեցէք, այսօր ժամի մէկին մեր տունն եկէք, ամուսինս էլ տանը կլինի։ Միայն թէ Լևէնսօնի երեսը չեմ ցանկանում տեսնել, կարող ես քրոջս՝ Սառայի հետ գալ. Ապա դարձեալ լսեց նրանց և ասաց.

—Ես ուրախութեամբ կգայի անմիջապէս քեզ տեսնելու, բայց Լևէնսօնի տունը ինձ համար դժոխք է դարձել, ներս չեմ կարող մտնել։ Ես ձեզ կսպասեմ, քրոջս հետ անպատճառ շնորհ բերէք, ժամի մէկին։ Ցտեսութիւն...

—Ախար ես հանքերը պիտի գնամ, ինչի՞ խոստացար, թէ ես էլ տանը կլինեմ ժամի մէկին։

—Մի՞թէ դու չես կարող շուտ վերադառնալ այսօր։

—Գուցէ դառնամ, բայց ո՞վ գիտէ, եթէ արգելքներ եղան։

—Այսօր շտապիր շուտ վերադառնալու, ինձ այնքան էլ հաճելի չէ քո բացակայութեամբ նրանց ընդունել և անտեղի խօսակցութեան առիթ տալ։ Անշուշտ քո ներկայութեամբ ոչ մի աւելորդ խօսք չեն համարձակուիլ ասելու։ Խնդրում եմ, հոգիս, զոհիր քանի ժամ ինձ համար և եկ պաշտպանիր ինձ նրանց անտեղի յարձակումներից։

—Բայց լաւ մտածիր, թէ որքան փափուկ է խնդիրը։ Ես երբէք չէի ցանկալ ականատես հանդիսանալ հօր և դստեր որևէ վիրաւորական խօսակցու-

թեան։ Քո պատիւը իմս է, քո դէմ կատարուած վիրաւորանքին ես չեմ կարող հանդուրժել և եթէ բորբոքուած րոպէիս նրանց անարգեմ, գուցէ դու էլ վիրաւորուես։ Աւելի լաւ է, որ ես բացակայ լինեմ, դու բացատրիր, յայտնիր, որ նրանց հետ ամեն կապ խզած ես և մենք արդէն ամուսնացած ենք, սպասում ենք օրինական ձևականութիւնների կատարման։

—Գուցէ ես թուլանամ, չկարողանամ պատիւս պաշտպանել և կամ նրանք քո բացակայութիւնից օգտուելով ինձ անարգեն. Արամ, ահա թէ ինչու եմ խնդրում, որ դու հովանաւորես կնոջդ։

—Լաւ, հոգիս, կգամ, պատասխանեցի, բայց դու այնպիսի դիրք բռնիր, որ նրանք չհամարձակուեն անարգական ընթացք տալու։ Ցտեսութիւն, ասացի Ռաքէլիս համբուրելով և դուրս եկայ։

Ռաքէլս ինձ սովորականի համաձայն մինչև դըրսի դուռն առաջնորդեց և վերջին համբոյրը շրթներիս դրոշմելով ճանապարհ գցեց։ Կառքս ինձ էր սպասում և ես սլացայ դէպի կայարան։ Շտապում էի գնացքին հասնել, որպէսզի կարողանայի շուտ էլ վերադառնալ. Եւ կառապանս մտրակում էր անգլիական նժոյգներին, որոնք սրարշաւ կառքս տանում էին դէպի կայարան։

Ճանապարհին մտածում էի այդ օրուան անսպասելի այցի մասին։ Հանքը, նաւթային գործերս, արտաքերութեան պակասորդը, գործակատարներիս խաղերը, նոյն իսկ Ռաքէլիս մոռացել էի, նրանք մնացել էին ստուերի մէջ, խելքս ուշքս ամբողջապէս զբաղուած էր այդ տհաճ այցելութեամբ։ Կարծում էի, թէ ծերունի հրէան՝ Լադանսօնը որևէ եղանակով պիտի վրէժ լուծէր և աղջկան— Ռաքէլիս ձեռքից կոր-

գելու միջոցների պիտի դիմէր։ Յայտնի բան է, նա չէր կարող երբէք նպատակին հասնել, քանի որ Ռաքէլս ինձ այնքան սիրում էր, որ առանց ինձ չէր կարող ապրել։ Հետևաբար Ռաքէլը չէր դրժիլ սէրը, բայց հրէական նենգամտութիւնից և վրէժխնդրութիւնից ես սարսափում էի։

Վագոնի մէջ ամբողջ ժամ, մինչև Սուրախանի ես մտածում էի այն հրէա դաժան տիպարների քըստմնելի արարքների մասին, որ կարդացել էի Շէքսպիրի, Լեսինգի, Եօժէն-Սիւի և ուրիշների գըրուածքներում։ Լազանսօնի անունը, առաջին կարգի վաճառականի դիրքը, նրա գործունէութիւնը, այն էլ Ռուսաստանի սրտում, մտքիս մէջ պատկերացնում էին հրէշային տեսարաններ։ Այնքան յուզւեցի, որ զղջացի Ռաքէլիս խօսք տալու համար, բայց և այնպէս խոստմանս դէմ չէի կարող գնալ և նրան վըշտացնել։ Միշտ այն միտքն էր ինձ տանջում, թէ մի հրէա, որ հասարակ գինուորութիւնից հասել է առաջին կարգի վաճառականի կոչման և ունի մեծ վաճառատուն, անշուշտ նա օժտւած կլինի նոյնպէս նենգամտութեամբ և կը կարողանայ նպատակին հասնել, ընկճել հակառակորդին, եթէ ձգտի մտադրութիւնը իրականացնելու։

Այս մտատանջութիւններն ինձ այնպէս էին պաշարել, որ ոչ հանքերը կարողացայ զննել, ոչ ամբարները ստուգել, ոչ էլ գործակատարներիս քննել… Ցնորւածի նման ման եկայ, տեղի անտեղի գոռացայ, բարկացայ, այլևայլ պահանջներ առաջադրեցի և անզգալաբար կառք նստայ ու քաղաք վերադարձայ։ Արդէն ժամի մէկից քառասուն րոպէ անցել էր, երբ ես մտայ դահլիճ, ուր Ռաքէլը խօսում էր քրոջ՝ Սառայի և հօր՝ Լազանսօնի հետ։

Ինձ ներկայացրին նրանց և ծանօթացրին։ Ծըպտերես դիմաւորեցին իրենց փեսային քենիս ու աներս։ Որքան որ խնդով և դիմախաղով տքնում էին ինձ հաճելի դառնալ, այնքան դառնացնում էին սիրտըս, քանի որ նրանց հայեացքի, աչքերի շարժւածքի մէջ օձի թոյն էի տեսնում, ատելութեան աղուն էր ցոլում։ Թէև նրանց դէմ արհամարհական դիրք չբռնեցի, բայց այնքան էլ բարեհաճ դիմարտայայտով չկարողացայ կապւել նրանց հետ։ Փորձառու հրէան զգաց, թէ մի մեղկ արարածի հետ գործ չունի, ուստի բոլորովին ձայնը, խօսքերը փոխեց ու ասաց.

—Ճշմարիտ է, ինձ այնքան հաճելի չէ, որ իմ դուստրը թողնի Իսրայէլի զաւակների վրանները և մտնի օտարի բնակարանը, բայց ձեր բարութեան նկարագիրը լսելուց և անձամբ ձեր դէմքը տեսնելուց յետոյ. ես պարտաւորւած եմ զիջելու, համաձայնելու, փառք տալու Եհովային։ Ոչինչ չունիմ, մենք բոլորս էլ մարդ ենք, միևնոյն հողից ծնւած, տարբերութիւն չկայ մեր մէջ, եթէ ամենքս էլ այս պարագան հասկանանք։ Ատելութիւնը միմիայն տգիտութիւնից է առաջանում։ Երբ դուք զանազանութիւն չէք դնում հայի ու հրէայի մէջ, ռուսի ու թուրքի վերաբերմամբ, նշանակում է դուք համայն մարդկային հաւասարութեան գաղափարին էք ծառայում, հետևաբար ոչ մի ազգի ատելու և հալածելու տրամադիր չէք։ Հրէան այնպիսի այլադաւանների դէմ է, որոնք հրէային հալածում են հրէա ծնւած լինելու համար և երբէք չի զիջանիլ իր աղջկան տալ այդպիսի նախապաշարւած օտարականի։ Իսկ ձեզ նըման մարդասէր անձնաւորութեան մասին ո՞վ կարող է հակակրութիւն տածել։ Եթէ ձեզ նման ազնիւ բարքի, վեհ գաղափարի տէր մարդիկ իմ չորս աղ-

ջիկներս էլ ուզէին, ուրախութեամբ կտայի և ամբողջ գոյքս էլ նրանց կբաժանէի։

—Ներեցէք, ասացի նրան ընդհատելով, ես երբէք ձեր աղջկան չէի ուզենալ, եթէ նա ինձ օժիտ խոստանար, ես նրա հոգեկան ընդունակութիւններից յափշտակուած, ուզեցայ նրան ընկերակից ունենալ։

—Ահա այդ խօսքերդ ինձ բոլորովին մխիթարում և ոգևորում են. դրա համար ես փառաւորւում եմ, որ քեզ նման փեսայի եմ արժանացել։ Ես էլ ուրիշ փափագ չունիմ, ոչ էլ արգելք, ապրեցէք, երջանիկ օրեր ունեցէք և մեր Յակոբ Նահապետի նման աճեցէք, բազմացէք և զարգացէք։ Միայն մի բան եմ խնդրում, որ շուտով օրինաւորապէս էլ պսակւէք... Գիտէ՞ք ինչ կայ... Ես հրէա եմ, բայց նախապաշարուած մարդ չեմ։ Ինձ համար պսակն ու ծիսակատարութիւնը նշանակութիւն չունի, բայց ամեն ազգ ունի իր օրէնքն ու պահանջը։ Մենք ոչ անտառում առանձնութեան մէջ կարող ենք ապրել, ոչ էլ անապատներում ու այրերում։ Մենք պիտի ապրենք մի շրջանում և պիտի հպատակւենք շրջապատող օրէնքներին ու կարգերին։ Եթէ օրէնքի ու կարգի դէմ գնանք, հասարակութեան շրջանից ու կարծիքից պիտի հալածւենք։ Այս պատճառով ցանկալի է, որ դուք շուտով օրինական դաշինքով ամուսնանաք։ Նոյնպէս մտածէք, որ ես էլ մարդ եմ. ուղիղ է միլիօններ չունիմ, բայց ունիմ շրջան, վաճառատուն, մրցակիցներ։ Յոյս ունիմ, որ չէք թողնիլ նախանձորդներս ինձ բամբասեն և ասեն, թէ Լազանսօնի դուստրը ապօրինաբար ապրում է Բագւում Միրզայեանի հետ։ Խղճալ պէտք է, ինձ նման մի ծերունու պատիւը չը պէտք է արատաւորել։

—Այդ մասին հոգս մի անէք, պատասխանեցի

ընդհատելով ծերունկին, արդէն դիմել եմ ուր հարկն է և սպասում ենք կարևոր արտօնագրին։

—Հայրիկ, ասաց Ռաքէլը միջամտելով, մի կասկածիր, աղջիկդ իր պատիւը պաշտպանել գիտէ և չի թոյլ տալ, որ իր որևէ տգեղ արարքով դու երբևէ կարմրես։

—Յոյս ունիմ և համոզուած եմ, միայն թէ ես աւելի մխիթարուած և հպարտացած կհեռանայի Բագւից, եթէ այդ բոլորը կատարուած տեսնէի։

—Կլինի, անշուշտ շատ շուտով կլինի, ասացի, որպէսզի ծերունկը քարոզներին վերջ տայ։

Ռաքէլս ստիպեց հօրն ու քրոջը մնալ մեզ մօտ ճաշելու, բայց նրանք ընդդիմացան, խոստանալով մի քանի օր յետոյ գալ մեզ մօտ ճաշի և հանդիսապէս ներկայ լինել մեր պսակին։

Անչափ գոհ էի, որ նրանք պատրաստւեցին շուտով դուրս գնալու։ Երբ ճանապարհ էի դնում ծերունկին, գաւթում վերջին մնաս բարևին դարձեալ նա կրկնեց.

—Ես պահանջում եմ, որ դուք աշխատէք և անպատճառ շատ շուտով օրինական ամուսնութեան հասնէք։ Մի կտրէք ծերունի հօր սիրտը, որ միմիայն իր զաւակների բարիքի մասին է մտածում։

—Անպատճառ, անշուշտ կկատարւի այդ էլ, հայրիկ, ասաց Ռաքէլը նրանց ճանապարհ դնելիս։

—Անշուշտ, անշուշտ, ասացի և ես։

16 սեպտեմբերի։

Հակառակ ջանքերիս, երէկ միջոց անգամ չը գտայ արկածներս արձանագրելու։ Ամբողջ օրը Սուրախանի անցնելուց յետոյ, երբ տուն վերադարձայ,

փոխանակ Ռաքէլիս, ինձ դիմաւորեց Սառան և առաջնորդեց դահլիճ, ուր Լադանսօնը բազմած Ռաքէլիս հետ խօսակցում էին:

Հակառակ իր կազմուածքին, հասակին ու դիրքին, ծերուկը արագ շարժւեց, բարձրացաւ տեղից, մօտեցաւ ինձ, դիմաւորեց և մտերմական տօնով առողջութեանս և գործերիս յաջողութեան մասին հարցեր տեղաց:

Յայտնի բան է, ես նրան շատ քաղաքավարի պատասխանեցի և հարցերին մասամբ բաւականութիւն տուի: Իսկոյն Ռաքէլս խօսակցութիւններս ընդհատեց և առաջարկեց գնալ սեղանատուն:

—Այսօր շատ ուշացել ես, ասելով ինձ նշան արաւ շտապել և քրոջը թևն առնելով սեղանատուն դիմել, իսկ ինքը ծերուկին առաջնորդեց.

Այդ օրը ժամի վեցից մինչև գիշերուայ ժամի երեքը մնացինք սեղանատուն: Թէև ինձ շատ ձանձրալի էր, բայց քաղաքավարութիւնն ստիպում էր լռել և համակերպել կնոջս ցանկութեան, մանաւանդ որ ծերունին պիտի երրորդ օրը մեկնէր, հետևաբար նրա մի օրւայ ձանձրոյթին պէտք էր դիմանալ: Այս պարագան այնպէս յուզեց, որ մինչև անգամ անցուդարձի մանրամասնութիւնը չեմ յիշում, որ արձանագրեմ: Հերիք չէր վերոյիշեալ ձանձրոյթը, ինձ զայրացնում էր Լադանսօնի պարբերական յորդորները, — շուտափոյթ օրինականացնելու մեր ամուսնութիւնը: Բոլոր խօսակցութիւնները, առակները վերջանում էին օրինական ամուսնութեան օր առաջ կատարելու խնդրով:

Կարծես ես չէի զգում թէ անհրաժեշտ է օրինականացնել մեր ամուսնութիւնը և նրանք պէտք է ինձ խրատներ կարդային: Այս հանգամանքը այնպէս

քայքայեց ջղերս, մանաւանդ սեղանին վեց ժամ մեխուած նստելն ու խօսակցելը այնքան ինձ տանջեցին, որ առաւօտ ժամի չորսին անկողին մտայ և մինչև տասը քնեցի: Գրասենեակ, հանք, գործարան այցելելով ամբողջ օրս կորցրի և միայն գիշերը ժամանակ գտայ արկածներս արձանագրելու:

Այս իրիկուն երբ վերադարձայ հանքերից, Ռաքէլս նստած էր պատշգամբում և սրտատրոփ ինձ էր սպասում: Ինձ տեսնելու պէս նա անմիջապէս հապճէպ ցած իջաւ և մուտքում ինձ գրկելով ասաց շնչասպառ:

—Ինչո՞ւ այսքան ուշացար. երեք անգամ հեռախօսով հարցրի, ինձ ասացին, թէ մեկնել ես, բայց դու չերևացար:

—Թև չունէի, որ Սուրախանից թռչէի և երեքչորս րոպէից տուն հասնէի: Ամբողջ երկու ժամ ճանապարհ է:

—Երկու ժամը երկու ամսից երկարեց ինձ համար, հոգիս, ասաց Ռաքէլը թևից կախուած: Ահա 28 ժամն էլ անցաւ, որ մենք իրար համար չենք ապրել: Առաւօտ վաղ առանց մնաս բարև էլ թողիր, գնացիր, քնից անգամ ինձ չարթնացրիր:

—Ինչո՞ւ անուշ քունդ հարամէի, ինչո՞ւ քաղցր երազներդ ընդհատէի: Ժամի չորսին անկողին մտնողին, միթէ կարելի է տասներորդ ժամին ձայն տալ, մանաւանդ որ իրիկունը ոգևորւել էիր, հօրդ ներկայութիւնը քեզ յափշտակել էր, կոնծեցիր ու կոնծեցիր:

—Հայրս բարի մարդ է, ներողամիտ, ո՞վ է իմանում կը կարողանամ նրան այլևս տեսնել թէ ոչ: Ես ուզեցի նրան հասկացնել, որ չափազանց բախտաւոր եմ իմ ընտրութեամբ, որ նա խաղաղ հոգով

տուն դառնայ և այլես իմ մասին չը մտածէ։

— Չը գիտեմ թէ որքան բարի է, քեզ չհաւատալու իրաւունք չունիմ, բայց պէտք է անկեղծաբար ասեմ, որ անչափ էլ ձանձրալի է։ Ամբողջ տասը ժամ նրա խօսակցութիւնը իմ գլխիս վրայ կարդալու շուրջն էր պտտում։ Միթէ նա չէր մտածում, որ մի բարձրագոյն կրթութեան հասած մարդ, որը քիմիայի դոկտորի աստիճանին է հասել, գռեհիկ զինուորի խրատներին կարիք չունի։

— Հոգիս, Արամ, խնդրում եմ մեծահոգի եղիր և նրան ներիր գռեհկութեան պատճառով, ասաց, վզիցս կախուելով Ռաքէլս և այնպիսի ջերմ համբոյրներով շրթունքներս ծծեց, որ նրան ոչինչ չէի կարող մերժել։

Շորերս փոխեցի, աւազան մտայ, լողացայ, զովացայ և երբ թարմացած դուրս եկայ, արդէն սեղանը պատրաստ էր, նստանք ճաշելու։ Իւրաքանչիւր նշանս այնպէս էր ըմբռնել Ռաքէլս, որ կարիք չունէի ասելու բառերով ուզելու, բացատրելու. նա իսկոյն կատարում էր և գոհունակութիւնս նկատելուն պէս, շրթունքները երկարում էր ճակատս, կամ աչքերս համբուրելու։

— Հոգիս, ասաց երբ աղանդերով բաւական յագեցրի ստամոքսս. իրիկունը քեզ անչափ տանջեցին քոյրս ու հայրս, որ ես ինքս նրանց փոխարէն հալւում ու մաշւում էի։ Մոռացիր, աղաչում եմ, իսպառ մտքիցդ հանիր այդ տխուր պատահարը։

— Դրանք, այդպիսի տգեղ երևոյթներն երբէք չեն կարող ապառաժանալ իմ մտքում. բայց տխուր և տմարդի էր նրանց վարմունքը։ Ի՞նչ էին ինձ կրկնում անվերջ, միթէ ես և դու խելք ու դատողութիւն չունինք, որ այնքան անգամ հոլովեցին մեզ միևնոյն նախադասութիւնները։

— Է՜հ, ինձ մի տանջիր նրանց արարքի համար, աղաչում եմ, մի կրկնիր. բայց աւելի քան աղերսում եմ, որ այդ անցքը իսպառ մտքիցդ հանես։

Այս ասելով մի մի բաժակ շարտրեօզ լցրեց մեզ համար, խմեցինք մինչև վերջին կաթիլը։

Ճաշը չէինք վերջացրել, երբ հեռախօսով Լագանսօնը կանչեց աղջկան իր մօտ։ Ռաքէլս ոչ միայն մերժեց հօր խնդիրը, չգնաց Լէէնսօնի տունը, չզիջաւ հօր հետ առանձնակի տեսակցել նոյն իսկ որևէ հիւրանոցում։ Թէև վաղուց ես նրան լիովին ազատութիւն տուել էի, իր ցանկութեան համաձայն վարուելու հօր, ազգականների հետ, միայն դարձեալ առանց տատանուելու կրկնեցի.

— Գնա՛, լսիր հօրդ, գուցէ որևէ կարևոր բան ունի ասելու։

— Ոչ. պատասխանեց Ռաքէլը, ես նրանից լսելու ուրիշ բան չունիմ. ուստի դարձեալ սեղան նստանք շարունակելու մեր ճաշը։ Երբ սուրճ էինք խմում, Սառան մօտեցաւ հեռախօսին և սկսեց բանակցել քրոջ հետ հօր թելադրութեամբ։ Չգիտեմ հեռախօսի միջոցով նա ինչ ասաց, միայն Ռաքէլս յուզուած պատասխանեց.

— Աւելի լաւ է, որ ես թունաւորեմ կեանքս, մեռնեմ, չքանամ, այրուեմ ու ցնդեմ օդի մէջ, քան թէ կասկած ունենամ Արամիս մասին։ Այս պատճառով ձեր բոլոր խօսքերին, պատմութիւններին և խորհուրդներին կարիք չունիմ։

Այս պատասխանը ինչ ներգործութիւն ունեցաւ, չեմ կարող գուշակել, կամ թէ նրան ինչ. պատասխան տուին, ես չը հետաքրքրուեցի իմանալու, միայն Ռաքէլս ասաց.

—Արամիս ազնուութեան և մաքրութեան մասին ոչ մի կասկած չունիմ և երբէք թոյլ չեմ տալ, որ մէկը իր չար լեզուով թունաւորէ ականջներս ու սիրտս։ Չեմ ուզում քեզ—ձեզ բոլորիդ այդպէս լսել։

Այս պատասխանը տալուց յետոյ Ռաքէլս եկաւ գլուխս խառնեց, համբուրեց և սեղանատնից դուրս գալով մտանք գրասենեակ սուրճ խմելու և բազմոցների վրայ հանգստանալու։

17 սեպտեմբերի։

—

Առաւօտ վաղ սովորական ժամին սառը ջրով լողանալուց յետոյ, երբ պատրաստւում էի թէյ խմելու, աղախինը ներս բերեց մի ծրար, որի հասցէն ուղղած էր Ռաքէլիս։ Նամակը տարայ ննջարանը և նրանով մի քանի անգամ շոյեցի Ռաքէլիս քիթը և նրան զարթեցրի։ Աչքը բանալու պէս ասաց․

—Վատ երազներ շատ եմ տեսել, երևի այս նամակն էլ նրանց շարունակութիւնն է․ ինչպէս որ մոռացայ երազներս, եթէ առանց կարդալու մոռացութեան տամ և այս գիրս, ի՞նչ կորուստ պէտք է ունենամ։

—Ոչ, ասացի, կարևոր է։

—Ո՞վ պիտի ինձ կարևոր գիր ուղարկէ։ Ինձ համար կարևորագոյնն ու անհրաժեշտը միմիայն Արամիս սէրն է, մնացածները ոչինչ։ Դու օրէցօր ինձ այնպէս յափշտակում ես, որ քեզանից դուրս ամեն բան ինձ համար կորցրել է իր հրապոյրը, ասաց ու պատռեց նամակը և մի կողմ շպրտեց։

—Ոչ, ասացի, հոգիս, դու իրաւունք չունիս նամակը պատռելու և չկարդալու․ գուցէ մի թշուառ օգնութիւն է ուզում, կամ մի ուրիշը մեր կեանքին

շատ անհրաժեշտ մի բան է յայտնում։ Գոնէ պէտք տեսնել, թէ ո՞վ է գրել, ասացի ու պատռած նամակը վերցրի և նրան տւի։

—Ես գուշակել եմ, որ մի յիմար բան կը լինի, բայց կամքդ կատարելու հաճոյքիս համար կարդամ։

Ծրարի միջից գիրն հանելու պէս, երբ հրէական տառերը նշմարեց և ստորագրութիւնը տեսաւ, Ռաքէլս ասաց․—Հօրս գիրն է, տեսնենք ինչ է գրում։

Նամակի թերթի չորս երեսն էլ լցւած էր։ Սկսեց կարդալ ու թարգմանել։

«Աչքիս լոյս Ռաքէլ։

«Դու գիտես թէ հայրդ որքան հոգում է քեզ համար։ Ես հանգստութիւնս կորցրել եմ, քանի որ դու առանց օրինական ամուսնութեան անձնատուր ես եղել ամուսնիդ և ապրում ես նրա բնակարանում։ (Ախար ես գիտէի, հոգիս, ասաց Ռաքէլս զայրացած, զգում էի. որ յիմար բան պիտի բովանդակէր այս թուղթը։ Լևենսօնը գիշեր-ցերէկ դաւեր է սարքում և խեղճ ալևորս չի ըմբռնում)։ Ես քեզ անչափ սիրում էի, որ յանձն առայ ամեն ստորութիւն, քեզ այցելելուց յետոյ սեղանիդ էլ մասնակցեցի։ Բայց դու, մանաւանդ նշանածդ ինձ ոչ մի դրական բան չասացիք և սրտակոտոր ճանապարհ դրիք։ Այս միտքն այնքան ինձ յուզեց, որ ես հանգստութիւնս կորցրած չգիտէի թէ ինչ տրամադրութեամբ տուն վերադառնայի, մօրդ, քոյրերիդ և եղբայրներիդ ներկայանայի։ Ի՞նչ կարող եմ պատասխանել նրանց, երբ ամեն կողմից երեսիս տան քո արարքը։ Ի՞նչ ասեմ մրցակիցներիս, հակառակորդներիս և դրացիներիս, եթէ երեսիս դէմ նախատեն և իմ աղջկանս հարճ անուանեն։ Գիտեմ, որ դու երբէք չես յօժա-

րիլ, որ իմ սպիտակած մազերը, ալեոր գլուխը, կորանայ դէմքը սեւանայ և ստորանայ քո արարքով։

«Ինձ վերջնական պատասխան չուիք, ոչ դու ոչ քո նշանածը, թէ երբէք օրինականացնելու ձեր ամուսնութիւնը. ինձ միայն պատասխանեցիք, թէ սպասում էք հոգևոր իշխանութեան թոյլտուութեան։ Ձեր թերի և անորոշ պատասխանը ինձ կասկածանքի մէջ գլորեց և ես ստիպուեցի տեղեկութիւններ հաւաքել, օրէնքները քրքրել տալ և հոգևոր իշխանութեան գործերից կարևոր նիւթեր քաղել. վերջապէս ես հասայ տխուր եզրակացութեան։ Աղջիկս, ես այս նամակը գրում եմ ձեր բարիքի համար, յատկապէս քեզ, Ռաքէլ, որ դու զգաստանաս և քո կեանքդ ու ապագադ չթունաւորես։ Այս գրածս թէև երկուսիդ բախտաւորութեան մասին է, բայց դու դրա մասին ոչինչ չը յայտնես նշանածիդ և նրան մի վրդովիր, այլ այնպէս արա, որ կարողանաս համոզել և օր առաջ հոգևորականների միջոցով օրինականացնել ձեր սիրոյ կապը։

«Ես չեմ գրում կեանքդ խաւարեցնելու համար, սիրելի Ռաքէլս, այլ քեզ յիշեցնում եմ, որ ամենից առաջ դու պիտի մտածես պատւով ապրելու մասին։ Այդ վիճակով երկրի, պետութեան և հասարակական կարգերով քեզ ոչ ոք չի այցելիլ և ոչ մի տեղ չեն ընդունիլ, ձեր կապակցութիւնը ստորութիւն համարելով. մանաւանդ որ վաղը կարող է Արամը թեւիցդ բռնել և դուրս շպրտել, իսկ դու հնարաւորութիւն չես ունենալ պաշտպանուելու. այն ինչ, ամուսնական պսակից յետոյ դու այնպէս կը կապուես Միրզայեանց գերդաստանի հետ, որ ամենքի յարգանքին կարժանանաս։ Այսօր դու հարճի իրաւունք անգամ չունիս, այն ինչ ամուսնական խորհրդից յետոյ ամուսնիդ

համահաւասար ընկեր կդառնաս։ Այս բոլոր պարագաներն ինկատի առնելով պիտի գիշեր-ցերեկ տքնես և իմ գլուխս քո գլխից հետ ազատես այն խայտառակ վիճակից, ուր գլորել ես անխոհեմ ընթացքովդ։

«Դու ինձ ասացիր, թէ հոգևոր իշխանութեան թոյլտուութիւնն ստանալուց յետոյ, անմիջապէս պիտի գնաք Թիֆլիս և օրինականացնէք ձեր կենակցութիւնը, բայց հոգևոր կառավարութիւնից ինձ գաղտնաբար հաղորդեցին, որ Միրզայեանցը չի էլ դիմել թոյլտուութիւն խնդրելու։ Քո կնունքի և մկրտութեան մասին տրուած յայտարարութիւնից յետոյ, այլևս ոչ մի թուղթ չի տուել, մանաւանդ որ ամուսնական պըսակի թոյլտուութիւն ոչ թէ բարձր իշխանութիւնից պէտք է ստանալ, այլ տեղական հոգևոր կառավարութիւնն էլ կարող է տալ, քանի որ դու այլևս օտար չես այդ եկեղեցուց։

«Ուստի այս բոլորը քեզ յայտնելուց յետոյ, ես սպասում եմ, որ դու իմ յուզւած հոգիս խաղաղացնես և հանգիստ սրտով ճանապարհ դնես դէպի իմ տունը։ Արա, ինչ որ անհրաժեշտ է, խօսիր, ինչպէս հնարաւոր ես համարում խայտառակ վիճակից քեզ, ինձ և ամբողջ գերդաստանս ազատելու համար. հակառակ պարագային ես պարտաւորւած պիտի լինեմ քո անունը ջնջել տալ իմ ընտանեկան ցուցակներից և քո յիշատակը դուրս վանել իմ սրտից, անիծելով քո ծնունդը։

«Հաւատացած եմ, որ դու այնքան խոհեմ և հնազանդ դուստր ես հօրդ համար, որ նրան անվըրդով պիտի ճանապարհես խոհեմ և խելացի ընթացքով։ Միրզայեանցն ասաց, թէ պատրաստւում է պըսակւելու, թող շտապի, դու խելօք քայլերով նրան շտապեցրու։

«Անհամբեր վերջնական պատասխանի եմ սպասում։ Ձեր վճիռը և մանաւանդ հոգևոր իշխանութեան մատենական արձանագրութիւնը ինձ նոր կեանք ներշնչելով պիտի ճանապարհեն դէպի օթեւանս, որտեղ ինձ սպասում է մայրդ։

«Այն օրը դու և քեզ հետ բոլոր ազգականներդ ու ցեղակիցներդ բախտաւոր կլինենք, երբ քեզ կը տեսնենք Միրզայեանների տոհմական պսակին արժանացած։ Եղի՛ր Եսթեր, նմանիր նրա օրինակին, մահը աչքդ առած հասիր և հասցրու մեզ պատուաբեր խաղաղութեան։ Կորէ՛ր արտասուքս, Ռաքէլ...

«Քո վշտացած հայրդ՝

ՇՄԱՒՈՆ ԼԱԴԱՆՍՕՆ»։

—Կարդալ ուէ՛ր, դէհ, այժմ տար այս անարգանքը։ Ես ասացի, հոգիս, պատուիր և մի վրդովիր ինձ, մի թոյլ տալ, որ Լևէնսօնի մեքենայութիւններով մրրկի մեր խաղաղութիւնը, իսկ դու համբերութեամբ լսեցիր մինչև վերջը։ Ես համոզուած եմ, որ ամբողջ նամակը թելադրել է Լևէնսօնը, սրա համար դու բոլորովին մի տխրիլ և մի մռայլիլ, ասաց ճակատս համբուրելով Ռաքէլը և նամակը պատառ պատառ անելով լցրեց լուացարանի կեղտոտ ջրի քուղան։ Ես մոլորուել էի, չգիտէի, թէ ի՛նչ պատասխանէի, կամ ի՛նչ անէի։ Դէմքիս կնճիռներն ու դիմարտայտս այնքան խոր ներգործութիւն ունեցաւ Ռաքէլիս վրայ, որ նա կրկին մօտեցաւ, գրկեց գլուխս և ասաց.

—Արամ, ինչի՞ ես վրդովւել, մի՞թէ ինձ վրա՞յ ես զայրացել... Ինչի՞ ես ուշադրութիւն դարձնում մի զառամեալ ծերուկի գրածներին, որոնք թելադրել է իմ ոխերիմ հակառակորդը։

—Ես դրանց մասին երբէք չեմ մտածում, քանի որ նամակի էական կէտերը հիմնովին սուտ են։ Եթէ նրանք գլխաւոր գործակալ Խորէն քահանային դիմած լինէին, նա նրանց կներկայացնէր փաստագրերը և մատեանները, որոնք ուղարկուած են ո՛չ թէ Շամախի, այլ Էջմիածին։ Երևի հոգևոր կառավարութեան գրագիրներից մէկին 2—3 րուբլի են տուել տեղեկութիւններ հաւաքելու և նա նրանց գրպանից օգտւելու համար սուտեր է շարադրել։ Ես այդ մասին չեմ մտածում բնաւ, քանի որ այսօր դու կարող ես անձամբ գնալ տէր Խորէնի մօտ և մատեանները վերստուգել։ Քեզ խօմ չեն կարող խաբել, քանի որ դու այժմ հայերէն տառերը ճանաչում և կարդում ես։ Գրուածներն ամբողջովին նշանակութիւն չունին, ինձ վրդովւում է նրանց բռնած սուր ընթացքը։ Ի՛նչ իրաւունքով լրտեսել են տալիս հոգևոր կառավարութեան թղթերը, ի՛նչ նպատակով օէնքներն են ուսումնասիրում, կամ նենգութեամբ նամակներ գրում ու տքնում թունաւորել անմեղ սրտեր։ Մենք ապրում ենք ամուսնական կեանքով. մեր ամուսնութեան օրինականութեան մասին հոգս քաշելու ի՛նչ առիթ ունին։ Ի՛նչ պատճառներից դրդուած նրանք իրաւունքի խնդիր են բարձրացնում և տքնում են մեզ ստիպել անյապաղ պսակւելու։

—Հոգի՛ս, ասաց Ռաքէլը վզիցս կախւելով, արհամարհիր, ոգէտին և գձուծին չեն լսում և չեն պատասխանում։ Ես երբէք ո՛չ հօրս ներկայութեամբ և ո՛չ էլ բացակայ ժամանակ չեմ նախատել ու անարգել, բայց միշտ էլ վատակարծիք եմ եղել, նախ որ նա մոլեռանդ հրէա—ամենանեխւած տեսակի ոգէտ է, գրեթէ անգրագէտ։ Փողից դուրս նա ոչնչի չի հաւատում և այս մտքերը նրան չեն պատկա-

նում. իսկ թէ Լևէնսօնը ինչպէս մտածում է վրէժ լուծել, այդ մասին քեզ պատմելու կարիք չեմ գտնում։

—Թող հրճւէն, ասացի Ռաքէլիս և ոտքի ելայ, պատրաստւեցի հանքերս գնալու։ Երբ դռնից ինձ ճանապարհ էր դնում, Ռաքէլս շրթներս համբուրելով ասաց.

—Այս մասին այլևս ոչ մտածելու և ոչ էլ խօսելու ես, այնպէս չէ՞, սիրելիս։ Մոռանանք խպառ այսօրւայ նամակն էլ, գրողն էլ, թելադրողն էլ։

—Էլ ոչ մի խօսք, ասացի ու գնացի դէպի Սուրախանի։

19 սեպտեմբերի։

Ես այնպէս եմ յափշտակւած Ռաքէլիս սիրով, որ ոչ մի պատճառ չի կարող զգացմունքս թուլացնել։ Ոչ միայն փիլիսոփայաբար արհամարեցի Լագանսօնի նամակն ու Լևէնսօնի նենգամտութիւնները, այլ սէրս աւելի սաստկացաւ այդ միջնադէպով։ Երեկ Սուրախանի ճանապարհին, հանքերում և գրասենեակում ամբողջապէս մտածմունքներիս միակ նիւթն էր թէ ինչ կլինի դրութիւնս, եթէ այս բուռն սիրուս չհամապատասխանէ Ռաքէլս, կամ ինչ կլինի իմ վիճակը, եթէ այդ նենգամիտները կարողանան թունաւորել նրա հոգին ու յափշտակել, հեռացնել ինձանից։

Ամբողջ օր ու գիշեր մտածութեանս, հրճւանքիս և զգացմունքներիս միակ աղբիւրն ու առարկան Ռաքէլս և նրա անհուն սէրն է։ Ես գուրգուրում եմ այդ գանձս աւելի քան իմ բոլոր գոյքս, նոյն իսկ անձս։ Մինչև Ռաքէլի հետ կապւելը, նրա սիրուն

սիրելը, ես միայն հարստանալու, գործերս ընդարձակելու, նորանոր նաւթահողեր գնելու համար էի մտածում, սրանցից դուրս հաճոյք և բաւականութիւն չէի գտնում, բայց այդ օրւանից յետոյ ամեն բան փոխւեց, ամեն մտածմունք այլակերպւեց։ Հանքային աշխարհը, նաւթի հորերը, շատրւաններն ու փոխադրող կայարանները այլևս ինձ համար այն գրաւչութիւնը չունէին, ինչ որ ունէին սեպտեմբերի երեքից առաջ։ Երկու շաբաթւայ մէջ այնպէս այլափոխւեցի, որ ես այլևս այն նիւթապաշտը չեմ, ինչ որ էի այս սիրուց առաջ։

Ճշմարիտ է, որ 15 օրւան ընթացքում ամեն օր այցելել եմ հանքերը, զննել եմ գործերը, քննել եմ անցուդարձը և վերստուգել եմ հաշիւներն ու գրասենեակը, բայց այդ բոլորը կատարել եմ անսիրտ, հապճէպ, անուշադիր, կիսատ-պռատ և զգացմունքս, կրքերս ինձ դրդել են շտապել տուն։ Բնակարանս ինձ ծառայել էր ննջարանի, որտեղից միշտ խոյս էի տւել արթնութեանս ժամերին, այժմ ինձ համար այնպիսի բուրաստան է դարձել, որ նրա բոյրը մագնիսի նման ինձ տուն է ձգում։ Ես որ ոսկուն երկրպագում էի և միշտ շռայլութիւնից երես էի թեքել, այժմ Ռաքէլիս հաճոյք պատճառելու համար ծախսելուց ախորժ եմ զգում և ոչինչ չեմ խնայում նրան բաւականութիւն պատճառելու համար։

Չեմ կարողանում ըմբռնել, թէ իմ այս այլափոխութեան պատճառն ինչ է, ինչու ես այսպէս նւիրւեցի այս կնոջը, ամբողջապէս հակւած եմ նրան բաւականացնելու համար, նրան պաշտում եմ կուռքի պէս։ Անշուշտ սիրում եմ նրան անսահման սիրով, բայց այդ սէրը ինձ ինչի՞ պիտի տարկացնի,

կամ այնպէս հմայէ ու կախարդէ, որ կեանքս, արեւ և հրճուանքս կենտրոնանայ Ռաքէլիս վրայ։ Ոչինչից այն քաղցրութիւնն ու բաւականութիւնը չեմ ստանում, ինչ հոգեկան հաճոյք պատճառում է ինձ նրա ներկայութիւնը։ Յաճախ տանից դուրս գալուց յետոյ, սիրտս այնպէս է դէպի Ռաքէլս հակուած եղել, որ եթէ դատողութիւնս չկռուէր զգացումներիս դէմ, չամաչէի թուլամտի, մեղկասրտի տիտղոսից, առանց որոշուած կայարանն հասնելու, տուն կվերադառնայի։

Միշտ տքնել եմ զսպել բուռն կրքերս և սանձել զգացումներս, բայց մեծ դժւարութեամբ եմ մաքառել և չափաւորել ցանկութիւններս։ Քանի՜, քանի՜ անգամ վճռել եմ չթուլանալ և հետևել գործերիս լրջութեամբ, բայց այնպիսի տաղտուկ եմ զգացել, որ հարևանցի ակնարկով բաւականացել և շտապել եմ անձնատուր լինել հաճոյքներիս։ Նախատում եմ ինձ կամազրկութեան համար, բայց յամառ հակառակութիւններս ուժասպառ են եղել սրտիս հակումներից, որոնք ինձ ձգել ու տարել են իրենց հետ։

Անշուշտ այս բոլորը կատարւում է այն բուռն սիրոյ ներգործութեամբ, որը տիրել է ինձ ամբողջապէս։ Ես կարծում եմ, թէ միմիայն ժամանակը աստիճանաբար պիտի մեղմացնէ բորբոքուած զգացումներս և միայն այդ մեղմացած շրջանում պիտի կարողանամ հետևել առողջ դատողութեանս։ Այս յոյսով ապրում եմ և ձեռք չեմ քաշում այն հաճոյքից, որն ինձ մղում է սիրուս գիրկը։

Այնքան մեծ բաւականութիւն, այնպիսի հոգեկան հրճուանք եմ ստանում Ռաքէլիս ներկայութիւնից, այնպէս եմ հարբում նրա բոյրով, ոգևորւում նրա խրախոյսներով ու գգուանքներով, որ այդ քաղցրութիւնը կեանքիս մէջ երբէք չեմ ունեցել, երբէք

չեմ ճաշակել։ Այս պատճառով առանց տատանւելու, առանց երկար մտածելու անձնատուր եմ եղել ցանկութեանս, քանի որ այս վայելքի համար եմ ապրում և այսպիսի վայելք ձեռք բերելու դժւար թէ երկրորդ անգամ առիթ ունենամ։ Այս վայելքից ինձ զրկելը, կեանքի այս քաղցրութիւնը չճաշակելը աւելի քան անմտութիւն համարելով՝ առաջ եմ մղւում։ Թէ ինչ վախճան կունենայ, աչ մտածում եմ, ոչ էլ խորհելու ընդունակութիւն ու տրամադրութիւն ունիմ։

Ամեն վիշտ, ցաւ, մտածութիւն, կորուստ, կիրք ու անարգանք մոռանում եմ, երբ Ռաքէլս ուրախ դէմքով, խնդով ու ծիծաղով ինձ դիմաւորում է տանս գաւթում, համբուրում է շրթունքներս, գրկում է գլուխս ու փարւում կրծքիս։ Ամեն բան չքանում է իմ աչքից ու սրտից, երբ Ռաքէլս հրճուանքով ինձ ներս է տանում, փոխում է փոշոտ շորերս, օգնում է լւացւելու, լողանալու, հագնւելու և սեղանիս ըսպասին կանգնած տքնում է համեղ պատառներով քաղցս յագեցնել և ընտիր գինիներով ծարաւս մարել։

Ես մինչև այս սէրը անմեղ չեմ եղել, հինգ-տասը կոյսերի հետ սիրահարւել և սառել եմ, բայց ոչ մէկից չեմ ստացել այն հոգեկան բաւականութիւնը, ինչ բաշխեց Ռաքէլս։ Ոչ ոք մինչև օրս իմ սիրտս ու հոգիս չէ գրաւած եղել, ինչպէս գրաւեց հրէուհիս։ Այնպէս է տիրել սրտիս ու զգացումներիս, որ երբեմն մտածում եմ, թէ մի գուցէ ինձ հմայել է։ Բայց այնքան սնոտապաշտ մարդ չեմ, որ կարողանում կախարդութեան հաւատալ. մանաւանդ որ ես հակւեցի ու կապւեցի Ռաքէլիս հետ, նա երբէք միջոց չունեցաւ ինձ կարթելու և կաշկանդելու մասին մտածելու։ Հինգ-տաս տարի է, ես կեանքի մէջն եմ,

Մոսկւա, Թիֆլիս և Բագու այնքան օրիորդներ ու տիկիններ տքնել էին ինձ հրապուրել և չէին յաջողել։ Ես որ չէի ընկել այն թովիչների ճանկը, այս անբիծ աղջիկը ե՞րբ կարող էր ինձ հրապուրել, եթէ հոգով ու սրտով ինքս հակւած չլինէի։

Նախապաշարւած չեմ, չեմ կարող հաւատալ նախասահմանութեան, բայց զգացումներս, բնազդս ինձ ստիպում են ենթադրելու, թէ Ռաքէլս իմ բախտս էր, ինձ էր վիճակւած։

20 սեպտեմբերի։

Կեանքս սովորական եղանակով անցնում է, թէ տանս մէջ և թէ հանքերում։ Հոգեկան հաճոյքներիս անձնատուր եղած, մեր ժամերից մեծագոյն մասը անցկացնում ենք տանը և երբեմն երբեմն կառքով բզօսնում քաղաքում, կամ մակոյկով ծովի վրայ։ Ամենագլխաւոր հրճւանքս այն է, որ ինձ հետ և դժոխք իջնելու պատրաստ է Ռաքէլս։ Նա որ ծովային հոտից գարշում էր, մի քանի շոգենաւային և մակոյկի զբօսանքից յետոյ վարժւեց այդ անախորժ հոտին, այլևս դէմքը չի ծամռում։ Հանքերում գազի հոտը նրան խեղդում էր, բայց այժմ ժամերով ինձ հետ մնում է վիշկաներում առանց արտասւելու և կծկելու։

Այսօր մենք գնացինք շոգենաւով զբօսանքի մինչև Կոյս կղզին՝ Բագւի փարոսը։

Մենք նստած էինք շոգենաւի յետևում, դիտում էինք, թէ ինչպէս նաւը փրփրալի ալիքներով ճեղքում էր ծովն ու անցնում, իսկ սահանքից անմիջապէս յետոյ, ճերմակած ու յուզւած աղի ջուրը միանում էր։ Երբ ես այս տեսարանը դիտելով էի զբաղւած, Ռաքէլս ինձ ասաց․

—Արամ, նաւը իր ոյժով տքնում է կիսել ու բաժանել ծովը, բայց փրփրած ալիքները նաւի սահանքը անցած ակնթարթին դարձեալ միանում են, միապաղաղւում։

—Այո՛, ճիշտ մեզ նման, ասացի ծիծաղելով․ թէև բաժանւում ենք իրարից մի քանի ժամով, բայց զգացումներս կապարային ծանրութեամբ ամենայն ոյժով յարձակւում են իրար վրայ և միախառնւում ծովի փրփրած ջրերի նման։

—Տարօրինակ ես, հոգիս, միանման ենք մտածում, ասաց Ռաքէլս ժպտալով։

—Ի՛նչ զուգադիպութիւն…

—Ոչ թէ զուգադիպութիւն, այլ հիպնոսական ներշնչում, ասաց ծիծաղելով։

Կղզի հասնելուց յետոյ, բարձրացանք Կոյս-Փարոսը, որտեղից վերջալոյսը դիտեցինք Բագւի արևմտեան կողմը բարձրացած լեռների վրայից մայր մտնող արևի հետ։

—Էլ ինչ է արեգակը մայր մտնում, երբ առանց մեզ չի կարող ապրել և տասներկու ժամ յետոյ նորից պիտի մեզ մօտ վերադառնայ, ասացի ես քմծիծաղով։

—Գնում է լողալու և կազդուրւելու, որ առաւօտ վաղ աւելի կայտառ ոյժերով մեզ գրկէ, լուսաւորէ, ջերմացնէ ու կենդանացնէ, պատասխանեց Ռաքէլս ժպտալով։

Ինձ ամենից շատ կաշկանդում էր մեր մտքերի և խոհերի համանմանութիւնը, որոնք մեզ պաշարել էին։ Ինչ որ ես էի մտածում, նոյն առարկան էր զբաղեցնում Ռաքէլին և իմ հաճոյքներիս գոհացումը

նրան անսահման բերկրանք էր պատճառում։ Երբ կղզուց տուն էինք դառնում, արդէն վերջալոյսին տեղի էր տուել մուլթ գիշերը, երկինքը աստղերով զարդարուել էր, իսկ Բագուն իր բիւրաւոր նաւթային կանթեղներով ու «Կաւկաս-Մերկուրիի» նաւամատոյցի էլէքտրական լուսանման ճրագներով այնպէս էր պճնուել, որ կարծես թէ մուլթկապոյտ կամարի հետ մրցման էր մտել և չէր ցանկանում ոչնչով յետ մնալ։

Այս միջոցին զբօսողներից մէկը վերցրեց մի կտոր ճարպոտ ու նաւթոտ վշի ջնջոց վառեց ու գցեց նաւից ծով ու բռնկեցրեց ջրի երեսին նաւթն ու գազը։ Մինչ այդ նւաղած լուսաւորութեամբ մենք զննում ենք ծովի մեղմիկ ալիքների ծփանքը, ցոլքը, իսկ ծովի մակերևոյթի հրդեհը այնպիսի մի բոցեղէն լուսաւորութիւն առաջացրեց, որ աչքերս և ուշքերս չէինք կարող նրանից և նրա անդրադարձ փայլերից հեռացնել։ Զբօսողներին հաճոյք պատճառելով աւելի մեծ յաճախորդ գրաւելու յոյսով նաւապետն նաւն ուղղեց Բիբի-Հէյբաթի առաջ և թոյլ տուեց, որ ծովային այդ բոցեղէն տեսարանը աւելի մօտից ընդարձակ ծաւալով զննէ ժողովուրդը։ Վշի ջնջոցներ էին բաժանում նաւաստիները հետաքրքրուողներին, որոնք բռնկեցնում և իսկոյն ծովն էին գցում։ Իսկ ծովի տակից անվերջ բարձրացած գազն ու քարիւղի թեթև մասերը ահաւոր բոցերով տարածւում ու ծաւալւում էին ծովի երեսին։

—Արամ, միայն գազն ու գազօլինը չի վառւում, ասաց ծիծաղելով Ռաքէլը, այլ ծովի ջուրն էլ ընկերակցում է այդ բոցերին գոլորշիացումով և շոգիացումով։

—Այստեղ կասկած չկայ, այս բոցերի ճերմա-

կութիւնն արդէն ապացուցում է, որ քարիւղն ու ջուրը միասին են բոցակալւած, Ռաքէլ ջան։

—Եթէ այդքան ներհակ տարրեր կարող են միանալով այսպիսի գեղեցիկ լոյս ցոլալ, ինչո՞ հայն ու հրէան իրենց կենդանի միտքը միացնելով չը պիտի գերազանցեն անկենդան տարրերին։

—Կասկած չկայ, այնպիսի հրաշալիք պիտի արտադրեն, որ ասուն աշխարհը ապշի, ասացի ու մթի մէջ գրկեցի Ռաքէլիս թիկունքը և սեղմեցի սրտիս։

Երբ տուն հասանք, մտանք ննջարան, անմիջապէս աչքիս ընկաւ մի նամակ, որ դրուած էր յարդապէս սեղանի վրայ։ Ռաքէլս անմիջապէս վերցրեց, երեսի գիրը նշմարելու պէս պատռեց ու վայր գցեց։

—Դարձեալ հայրդ է գրել։

—Այն հրէշը ձեռք չի քաշելու ինձանից։

—Նրան արդէն Общій паркъ-ից ընդհանուր կառավարիչը—Կարապետեանը դուրս է արել։ Թէև Մէնդէլսօնը Ֆէգէլին թիկնած ուզեցել է պաշտպանել փեսայիդ, բայց երբ իրեն էս սպառնացել է, խելեայն համակերպել և հպատակւել է մեծաւորին։

—Ուրեմն ծրագիրը փոխած կլինի հրէշը, ասաց գայրացած Ռաքէլս։

—Պէտք է նամակը կարդալ։

—Զարժէ այդ ստորաքարշի համար ջղերս բորբոքել ու քայքայել։ Արհամարհելուց աւելի լաւ միջոց չկայ։

—Դու գիտես, բայց տեղեկութիւն ունենալն աւելի նպաստաւոր է, քան թէ...

—Լաւ, կարդամ, ասաց և շորերը փոխելով նըստեց ճրագի մօտ, սկսեց կարդալ ու թարգմանել։

Ծերունին գազազել էր, որ երեք օրում պատասխան չէր ստացել։ Նա սրտի մաղձը և թոյնը

թափել էր դատեր գլխին։ Վերջապէս նա աւելացրել էր։

«Դու այլևս իմ զաւակը չես, ես այսօր ջնջեցի քո անունդ իմ ընտանիքի անդամների ցուցակից և իմ սրտի տախտակից։ Ես Ռաքէլիս գերեզման դրի և թաղեցի, նա յաւիտեան չքացաւ ինձ համար։ Երանի թէ հողը փորած և ձեռքովս էլ խորած լինէի, քան թէ թողնէի նրան ապօրինի կենակցութեան մէջ, որտեղից պիտի գարշանքի անդունդը գլորւի։ Տուն հասնելուն պէս նոտարական կարգով էլ քո անունդ պիտի դուրս գցեմ ժառանգորդներիս ցուցակից։ Այլ ևս չվերադառնաս ու պղծես իմ օթևանս քո անարգ ներկայութեամբ։ Իմ դռներս փակ կմնան ընդմիշտ քո առաջ։ Ես բողոքեցի, սիրտս բացի Եհովային և հաւատացած եմ, որ Նա ծնողների խրատներն ու յորդորներն արհամարհողներին և նրանց անարգողներին երբէք խաղաղ և անդորր կեանք չի տալ։ Անիծուէր այն օրը, որ դու ծնար ինձ համար, անիծուէր այն ժամը, որ ես գոյութեանդ պատճառ դարձայ»։

—Ախր ես քեզ ասացի, թէ կարդալու կարիք չկայ, իսկ դու ինձ տրամադրեցիր, որ պատառած նամակը վերցնեմ ու նորից կարդամ։

—Ցաւում եմ, որ պատճառ դարձայ, հոգիս այս յոյզերին։ Մոռացիր ամեն բան և հոգեկան խոր հոգոցներով յայտնեցի.—Ես երէկ իրիկուն հեռագրել տւի տէր Խորէնին, որը վաղն էջմիածնից պատասխան և արտօնագիր կստանայ մեզ պսակելու, որով ծերուկդ ցմահ պիտի զղջայ իր տմարդի արարքի վրայ և պիտի ատէ Լևէնսօնին, որ նրան այդ աստիճանի յուզել և բորբոքել է։

—Մոռանանք հոգիս, մոռացիր բոլորը և վճռենք, որ այլևս չենք կարդալու նրանց թղթերը։

21 սեպտեմբերի։

Գիշերս երազումս ինձ ներկայացաւ Նաստեան, Մոսկւայի առևտրականի աղջիկը, որն ուսանող ժամանակս ոչ միայն ջերմ հոգով ինձ անձնատուր եղաւ, չորս տարի կենակից դարձաւ հետս, այլ մատակարարեց իմ ապրուստս և պիտոյքներս։ Վաղուց ես նրան չէի երազել և համարեա թէ մոռացել էի։ Երբ նրա յիշատակը մոռանում եմ, այնպիսի դաժան դէմքով ինձ երազւում է, որ դառնացնում է սիրտս և ստիպում է երկու երեք օր մտքովս նրա հետ զբաղուելու։ Ճշմարիտ է, նա այժմ չկայ լոյս աշխարհում, նա գոյութիւն չունի, բայց այնպիսի խոր տպաւորութիւն է թողել ինձ վրայ իմ պատանեկան և երիտասարդական սկզբնական շրջանում, որ ես չեմ կարող առանց արտասուելու, առանց յուզւելու յիշել նրան։ Նաստեան ոչ միայն կեանքով, գոյքով ինձ նւիրւած էր, այլ նա իր ամբողջ գոյքը ինձ թողեց ու այնպէս մտաւ ցուրտ գերեզման։ Այս պարագան ինձ աւելի պինդ կապեց Նաստեայի յիշատակի հետ, քան թէ ուրիշ բան։

Ես ցաւում եմ, որ այն ժամանակ ոչ սիրտ ունէի և ոչ էլ հնարաւորութիւն օրագրութիւն կազմելու, բայց եթէ հնարաւորութիւն ունենայի գրելու, քաղցր յիշատակարան պիտի լինէր ինձ համար։ Թէև թղթի վրա չեմ արձանագրած, բայց մտքիս ծալքերում անջինջ կերպով դրոշմւած է այն բոլոր յոյզերն ու բորբոքումները, որոնց ականատես և դերակատար եղայ։ Երազս անչափ կարճ է, ինչպէս միշտ Նաստեան ինձ յայտնւել է տեսիլքում և անհետացել։ Նա խռոված դէմքով մատը թափ տալով ասաց.

—«Երբ ես քեզանից պահանջում էի պսակւել, դու ինձ պատասխանում էիր, որ եթէ պսակւենք, էլ չենք կարող իրար այնպէս պաշտել, ինչպէս սիրում են տարփատենչները. իսկ այժմ պսակւում ես հրէուհիդ հետ, առանց վախենալու, որ պսակւելուց յետոյ անձնական իրաւունքների տեսակէտից կարող էք ընդհարւիլ, սէրն ատելութեան և իդիլիան դժոխքի փոխարկել»։

Այնքան մռայլած դէմքով արաւ այս յանդիմանութիւնը, այնպիսի ժանտ դիմարտայայտով խռովեց հոգիս, այնպէս փոթորկեց գանկս և յուզեց սիրտս, որ խելոյն արթնացայ։ Զգացի, որ երազ էր, բայց այնպիսի մի տխուր երազ, այնպիսի բորբոքով տեսիլ, այնքան խորը խոհերը մղող պատկեր, որ անկողնիս մէջ դողդողում էի։ Լաւ էր, որ Ռաքէլս քընած էր և չտեսաւ, թէ ինչպէս դողում էի, որքան սփրթնել էի և ինչ աստիճանի մռայլել։

Քունս կորցրի, կորցնելով խաղաղութիւնս։ Հոգիս պաշարեցին անչափ տխուր մտքեր և ես անվերջ ոլորւում էի անկողնումս և հառաչում։ Երբեմն ինձ թւում էր, թէ անհերքելի ճշմարտութիւններ կան Նաստեայի յանդիմանութեան մէջ։ Օրինական ամուսնութիւնը այնպիսի իրաւունքներ պիտի տար կնոջս, որ այդ «իրաւունքներից» առաջացած պահանջներից մենք ակամայ պիտի իրար ատէինք։ Այն ինչ որևէ ատելութիւն երբէք չի կարող ծնել, զարգանալ, եթէ որ մենք իրար վրայ իշխանութիւն չը կարողանանք բանեցնել։ Եթէ ես զգամ, որ իմ որևէ բռնութիւնս կարող է նրան ստիպել՝ ինձ թողնել ու հեռանալ, ես միշտ տրամադիր կլինեմ խոյս տալու ամեն տեսակ բռնութիւնից, նրանից չզրկւելու համար։ Փոխադարձաբար Ռաքէլս էլ չի մտածել ինձ այնպէս կաշկան-

դել, որ ես ստիպեմ նրան թողնել ու գնալ։ Այդ օրինական շղթան միշտ ամուսնացեալ կողմերին այնպիսի յաւակնութիւններ է ներշնչել, այնպիսի իրաւունքների պահանջներ է առաջացրել, որ այդ պարագաներին սէրը փոխարկւել է ատելութեան։

Իսկ ատելութեան զարգանալուց յետոյ, էլ ինչ հարկաւոր է ընտանիքն ու ամուսնական կապերը, քանի որ դժոխային կեանքով չպէտք է ապրել այս աշխարհում, որտեղ կեանքն այսքան կարճ է և երկրորդ անգամ աշխարհ գալու և վայելելու յոյս չը կայ։ Սիրոյ բացակայութեան դէպքում ամուսնական շղթայով եղած կապանքից ինչ բաւականութիւն. էլ ինչ քաղցրութիւն այնպիսի կենակցութիւնից, ուր ատելութեան հետ պիտի տիրէ կեղծիքն ու արհամարանքը, զզւանքն ու նողկանքը։

Բայց այս դատողութիւնները համապատասխանում են սրտիս զգացումներին, այն ինձ դրդում է հաւատալու, որ Ռաքէլս երբէք ինձ չի դաւաճանելու, պսակւած թէ անպսակ երբէք առիթ չի լինելու, որ ինձ հակառակի, որ ինձ ատէ ու արհամարհէ։ Այնքան անկաշառ, անշահախնդիր մեծահոգի և անպահանջ է եղել մեր միութեան նոյն իսկ երրորդ շաբթում, որ այդ համեստութեան տէրը երբէք չի կարող կերպարանափոխւել պսակւելուց, նոյն իսկ տարիներ անցնելուց յետոյ։ Նա, որ հաւատացած է իմ ազնիւ խօսքին, նա որ ինձ վստահեց իր անձը և չխնայեց ոչինչ, նա որ այսպիսի անհուն սիրով և համակամութեամբ ինձ հետ կապւած է, նա երբէք չի կարող իր տեմպերամենտի հակառակ ընթանալ, ինձ ատել ու «ամուսնական շղթայով» տարկացնել։ Մանաւանդ որ ես, Արամ Միրզայեանցս ազնիւ խօսքով խոստացել եմ նրա հետ օրինական-եկեղեցական

պսակով ամուսնանալ. ինչպէս կարող եմ դրժել խոստումս։ Ոչ, ցնորամիտ երազ էր, որ ինձ յուզեց և բորբոքելով գլորեց այս տխուր մտքերի մէջ։ Ես վճռել եմ, ես ասել եմ, ես խոստացել եմ և պիտի կատարեմ, եթէ դրանով նոյն իսկ կեանքիցս զրկուեմ։ Այո, աւելի հեշտ է ինձ այսօր կեանքիցս զրկուել, քան թէ խոստումս դրժել և Ռաքէլիցս զրկուել. միթէ ես կարո՞ղ եմ առանց նրան ապրել։ Ոչ, առանց Ռաքէլիս չապրելը նախապատիւ է, առանց սրտի ու հոգու այսպիսի անսահման բաւականութեան չապրելը իրականութիւն է։

Ո՜հ, ես ինչ էի, մի կարծրացած մեքենայ, որին Ռաքէլը կեանք ու հոգի ներշնչեց, որին նա ապառաժանալուց փրկեց։ Ոչ միայն իմ տանից աւելի տարփածուները, այդքանից աւելի հետամտողները և սիրաբանողները, նոյն իսկ Նաստեան երբէք չեն ներշնչել կեանքումս գոնէ մի ժամով, մի րոպէով այն հմայքն ու հրճւանքը, ինչ Ռաքէլս անսահման չափով ինձ պատճառել է այս տասնեւթ օրւան մէջ։ Աւելի լաւ չէ՞, որ ես մի տարի, վեց ամիս, նոյն իսկ երեք ամիս այս քաղցրութիւնը վայելեմ, ապա մեռնեմ, չքանամ, քան թէ ես իմ ձեռքով այս երանելի ժամերս թունաւորեմ և կեանքս յաւիտեան զրկանքի մատնեմ, հառաչեմ ու չորանամ։ Ա՜հ, այդ Նաստեայի նախանձոտ ոգին էր, որ բորբոքւած եկաւ երազումս հանգիստս խռովելու, սիրտս ալէկոծելու և հոգիս մրրկելու, որպէսզի ինձ հնարաւորութիւն չտայ կեանքի մէջ հաճոյք վայելելու, ինչպէս Մոսկւայում զրկել էր ինձ ամեն մի հաճոյքից քանի կենդանի էր։

Բայց ցանկութիւններիս և կրքերիս ներգործութեան տակ ես ինչո՞ւ եմ ուզում ինձ խաբել։ Մի՞թէ

այդ երազից էլ մի երկու շաբաթ առաջ, նոյն իսկ օրինաւոր ամուսնութեան խոստումը կատարելուս ժամանակն էլ, մտքիցս չանցա՞ւ այն դժոխային միտքը, թէ մի գուցէ պսակի արարողութեան հետ զրկւեմ ես այս անփոխարինելի գանձից, անհուն բերկրանքից, սրտիս ու հոգուս տիրած հրճւանքից։ Մի՞թէ այս անիծեալ շղթան, որ անքակտելի կապերով միացրել է միլիոնաւոր սիրահարներին, նրանց մեծագոյն մասին սէրը չէ՞ փշրել, հոգին չէ՞ խռովել, չէ՞ յուսահատեցրել։ Մի՞թէ խելագարի նման սիրահարւածները վարդագոյն պսակի շղթաներով կապւելուց յետոյ, իրենց չեն զգացել կպրէ աւազանում, որտեղից դուրս ճողոպրելը իրենց կեանքի գնով անգամ չի ձեռք բերւել։

Բայց ինչի՞ թոյլ տամ, մեր այս սիրոյ դրախտը, բերկրութեան բուրաստանը հնոցի ու կրակի բոցերին մատնւի և մենք—ես ու Ռաքէլս պատրոյգ դառնանք այդ հրդեհին։

Ո՜հ, որքան երանելի կլինէր, եթէ Ռաքէլս այնքան հայերէն գիտենար, որ վերցնէր օրագրութիւնս կարդար, ըմբռնէր հոգուս խորքերում բարձրացած այս փոթորիկը և թոյլ չտար, որ մենք զոհ գնայինք պսակի պողպատեայ հրէշային սեղմումներին։ Ես ինչպէս պիտի կարողանամ սիրտս պարզել նրան, բացատրել այս բոլոր պարագաները և համոզել, որ նա յետ կենայ օրինական ամուսնական դաշնագրի պահանջից և չը թունաւորէ, այրէ ու խանձէ մեր կեանքը։

Ի՞նչ երեսով ես նրան բացատրեմ այս միտքս, ինչ խօսքերով ես նրան հասկացնեմ, որ անազնիւ խոհերը չեն դրդում ինձ այս քայլը կատարելու։ Ամբողջ քսան դար մարդիկ այնքան են խաբել այդ

թոյլ արարածներին, այնպէս շահագործել ու թշուա-
ռացրել, որ այսօր արտասովոր կեանքը կնոջ համար
մահից աւելի դառնութիւն և տանջանք է. մանաւանդ
որ պսակի ազնիւ խօսք տալով, նրա վստահութիւնը
գրաւելուց յետոյ, որքա՜ն ստոր պիտի երևամ ես
նրա աչքերում, երբ դրժեմ խոստմանս և առաջար-
կեմ ապրել նրա հետ ցմահ սիրով, բայց առանց օ-
րինական պսակի։

Նա երբ կունենայ այնքան համբերութիւն, այն-
քան լայն հայեացք և հեռատեսութիւն, որ կարողա-
նայ ամուսնական շղթայի շառաչանքից զզուել և սի-
րոյ վարդիթերի կապանքով ապրել ցմահ։

22 սեպտեմբերի։

Այսօր որքա՜ն տանջւեցի, որ խօսք բանամ և
կարողանամ մտքերս հաղորդել Ռաքէլիս, բայց հա-
մարձակութիւն չունեցայ։ Վախենում եմ, փըշ-
րեմ նրա սիրտը, որը փշրւելուց յետոյ այլևս նոյն
իսկ պսակի խորհուրդն էլ չի կարող նորից վերակեն-
դանացնել։ Ինչպէս անեմ, որ կարողանամ նպատա-
կիս հասնել և բուրաստանս անապատի չը փոխել։
Ո՜հ, որքան գժւեցի, որ սկզբում հնարաւորութիւն
չունեցայ այս մտքերս նրան հաղորդելու և ապա նը-
րա սէրը գրաւելու։ Այնպէս դասաւորւեց մեր սէրն
ու միութիւնը, մեր խոստումն ու վստահութիւնը,
որ հնարաւոր չէր այս պարագաները բացատրել և
այս սրբազան սէրը այսօր վտանգի և դժոխքի չը
մատնել։

Սկզբում կարծում էի թէ միջոց կունենամ ա-
պագայում բացատրելու և համոզելու, բայց երբէք
չէի կարող յուսալ, որ Լևէնսօնի կռւից յետոյ, Ռա-

քէլիս հայրն էլ պիտի գար և ինձ այդպիսի պարագա-
ների մէջ պէտք է թողնէին, որ ոչ միայն չհամար-
ձակւէի սիրտս և դատողութիւններս պարզել Ռաքէ-
լիս, այլ իրար յետևից պիտի պարտաւորւէի անվերջ
խոստանալ հրապարակով, թէ պիտի օրինաւորապէս
ամուսնանամ ըստ առաջին հնարաւորութեան։

Իսկ այժմ, այժմ էլ ինչ կարելի է անել։ Սիրտս
ու հոգիս այնպէս է բռնկւած Ռաքէլիս սիրով, այն-
պէս եմ ես հակւած դէպի նրան, որ առանց Ռաքէ-
լիս դժւար թէ ապրեմ։ Ռաքէլից բաժանւելը ինձ
համար մահու խնդիր է, չկայ նա, չի կարող ապրել
հոգիս։ Ճար չունիմ, պիտի պսակւեմ, եթէ գիտենամ
նոյն իսկ, որ պսակիս հետևեալ առաւօտ նա պիտի
բռնանայ ինձ վրայ և պիտի թունաւորէ ու կործա-
նէ մեր սէրը։ Այս դէպքում գոնէ սիրտս խաղաղ
կլինի, որ ես իմ կողմից արեցի ամեն զիջում, բայց
բախտս ինձ չօգնեց և ես տուժեցի, Ռաքէլս ինքն
ինձ զոհեց, այժմ զոհւելու պարտականութիւնը իմ
հերթիս է ընկել։

Այս մտքերով տանջւում էի, հարիւր անգամ
պատրաստւեցի, որ սիրտս բանամ ու պարզեմ Ռաքէ-
լիս, բայց չը յաջողւեց։ Հաստատապէս համոզւած
էի, որ մի այսպիսի հարց պիտի կործանէր իմ բախ-
տը։ Ճաշի էինք նստած, որ յանկարծ սպասաւորն ի-
մացրեց, թէ տէր Խորէնը ներս է գալիս։ Իսկոյն
Ռաքէլս ոտքի ելաւ հիւրին դիմաւորելու, որի համար
անմիջապէս սեղանի մօտ աթոռ դրին և ապա սար-
քեցին, որ մեզ հետ սեղանակցի։ Տէրտէրը տեղա-
ւորւելուց առաջ դարձաւ Ռաքէլիս ասաց.

— Մուժդէ, տիկին, արդէն հեռագիր ստացայ, որ
սինօդից պաշտօնական թուղթ են գրել և մեզ թոյ-
լատրել ձեզ պսակելու։

Այս աւետին այնպիսի անհուն հրճուանք պատճառեց Ռաքէլին, որ նա կարծես թեւեր առած թըռչկոտում էր ամպերի բարձունքում։ Ամբողջ ճաշի ժամանակ խօսքը դառնում էր պսակի խնդրի շուրջը և տէր Խորէնը յոյս ունէր, որ մինչև հինգ օր կը ստացուին պաշտօնական թղթերը։ Երբ տէր Խորէնը հեռացաւ և մենք ազատ մնացինք, Ռաքէլը վիզս փաթաթուելով ասաց.

—Ես այժմ Լևէնսօնին ցոյց կտամ, թէ ո՛վ է խաբեբան և ո՛վ է խօսքի ու սրտի ազնուականը։ Այսօր ես երկու տողով մի նամակ պիտի գրեմ մօրս, որ նա իմացնէ հօրս, թէ արդէն ստացուած է պսակի թոյլտուութեան հրամանագիրը և մենք մի քանի օրից օրինաւորապէս պիտի ամուսնանանք հակառակ Լևէնսօնի քսութեանը, որն հօրս մոլորեցնելով, ինձ անիծել տուեց։

—Արհամարհիր հոգիս, ուշադրութիւն մի դարձնիլ այդպիսի ստոր արարածի ցած արարքի վրայ։ Մի՞թէ պսակը,—օրինական ամուսնութիւնը կարո՞ղ է մեր սէրն աւելացնել. մի՞թէ մենք առանց այդ նախապաշարեալ ծէսի անսահման սիրով իրար հետ չէ՞նք միացած. մի՞թէ այսօր օրինաւորապէս ամուսնացած Լևէնսօնը և Սառան մեր սիրոյ մի տասներորդի չափ իրար սիրո՞ւմ են, կամ Բագւում կարո՞ղ ես գտնել մի այնպիսի զոյգ, որ իրար աւելի սիրեն, քան թէ մենք։

—Այդտեղ, Արամ ջան, երկու կարծիք չի կարող լինել։ Ես հոգով համոզուած եմ, որ աշխարհում չէի կարող գտնել մի ուրիշ արարած, որն ինձ սիրէր այնպիսի անկեղծ և անհուն սիրով, որին դու ինձ արժանացրիր։ Նոյնպէս գիտեմ, որ դու էլ իմ սիրուս և անձնուիրութեանս մասին երբէք կասկած

չունիս, քանի որ համոզուած ես, թէ առանց քեզ կեանք չունիմ, առանց քո շնչին ու շքին չեմ կարող ապրել։ Ինձ համար օրինական պսակն ու խորհուրդը բոլորովին նշանակութիւն չունին, ինձ պէտք է միայն քո սէրը, իսկ այդ սէրը ամեն բան է ինձ համար։ Պսակն ինձ հարկաւոր է նրա համար, որ Սառային, Լևէնսօնին և նրանց աքբանեականներին ապացուցեմ, թէ ես հարճ չեմ, ես ժամանակաւոր տարփածու չեմ Արամիս համար, այլ նրա ցմահ կենակիցը, մանաւանդ որ այսօր իմ սիրտս այնքան խառնուեց, ո՛չ կարգին կարողացայ թէյ խմել, ո՛չ էլ ճաշել։ Երեք օր է, ես սպասում էի դաշտանիս, բայց նա կանգ է առել և զգում եմ, որ արդէն դու հայր ես դարձել ու ես էլ ինն լուսին յետոյ մայր պիտի դառնամ, իսկ այդ զաւակի առաջ ես և դու երբէք չպիտի կարմրենք, որ նրան ունեցել ենք ապօրինի կենակցութեամբ։

Այս աւետիքն այնպէս ինձ հրճուեցրեց, այս պատասխանն այնքան իմ սրտովս էր, որ ես համբուրեցի Ռաքէլիս ճակատն ու չհամարձակուեցի ընդհատել այն ուրախութիւնն ու հոգեկան բերկրանքը, որ նրան առթել էր տէր Խորէնի բերած լուրն ու ապագայ մայրութեան զգացումը։

23 սեպտեմբերի։

Գիշերս մինչև լոյս մաղձի բորբոքումով և ստամոքսի կծկումներով տառապեց Ռաքէլս։ Որքան որ հրճուանքը մեծ էր, այնքան էլ տանջանքը անպակաս։ Գիշերը դայեակ հրաւիրեցի, որն եկաւ խնդաց, զանազան հոտոտելիքներ տուեց, ծաղրեց Ռաքէլի թու-

լութիւնը, խրախոյս ներշնչեց ու գնաց։ Թէև դայեակի խորհուրդները մի առժամանակ հանգստացրին յղացած կնոջս, բայց մի երկու ժամը վերջը նորից շարունակեցին։ Պարկեցինք, վերկացանք, անընդհատ դեղեր ուրի, թեւը մտայ ման ածեցի, բայց մինչև լոյս պարբերական ընդհատումներով շարունակեց այս տեսարանը։

Առաւօտ Ռաքէլս քիչ հանգստացաւ։ Սուրճերս ընդունելուց յետոյ, ես շտապեցի Սուրախանի, հանքերս գննելու, ուր չէի գնացել երեք օրից ի վեր· բայց զուր, ուշք ու միտքս տանն էր, Ռաքէլիս շուրջը։ Չէի մտածում ոչ նրա տանջանքի, ոչ նրա յղացածի, ոչ էլ ուրախութեան մասին, այլ միայն խորհում էի, թէ ինչ միջոցով մեր անկեղծ և նուիրական սէրը չսպանել կործանիչ պսակի շղթաներով։ Ժամանակակից կիների բռնած դիրքը, ամուսինների դժոխային կեանքը աչքի առաջ ունենալով, նրանց ատելութիւնը, ապահարզանների և իրար դէմ վարած դատերի քրոնիկոններն այնպէս էին զզուեցրել, որ այդ մահացու շղթայից խոյս տալու համար պատրաստ էի ամեն զոհողութիւն կատարելու· բայց ինչ օգուտ, Ռաքէլիս խելքն ու միտքը և կրքերը նրա քայլերը մղում էին դէպի եկեղեցի, դէպի պսակի ծիսակատարութիւն, որ վրէժ լուծէ շրջապատողներից, իրեն տարփածու անուանող հակառակորդներից· Երբեք չէր մտածում, թէ այդ սխալ քայլով նա ինչ մեծ վտանգի էր մատնում մեր նուիրական և անփոխարինելի անբիծ սէրը, որով կապուած էին մեր սրտերը և պատրաստ էին միախառնուած զուրգուրալ 40—50 տարի, մինչև մեզ գերեզման հասցնելը։

Ի՞նչը կարող էր կասեցնել Ռաքէլին այն ձըգտումից, որ նա ձեռք վերցնէր ցնորամիտ ծիսակատարութեան հանելու մտքից։ Իրիկուան ժամի չորսին տուն հասայ և սկսեցինք ճաշել։ Իր անհուն գոհունակութիւնը, ուրախութեան անսահման չափը ցոյց տալու և ինձ էլ իր հոգեկան հրճուանքին ու բերկրութեան մասնակից անելու համար չէր խնայում Ռաքէլս. թէ ինչ միջոցներով ու ձևերով արտայայտուի։ Ցնծում էր անվերջ, թռչկոտում էր ծիծեռնակի նման, ժպիտն ու ծիծաղը, երգն ու առածը շրթունքներից չէին խոյս տալիս։ Ամեն մի առիթից օգտուելով այնպէս էր ծծում շրթներս, այնպէս ջերմ համբոյր էր դրոշմում աչքերիս, որ ինձ առանց շղթայի ու չուանի կապանքների մէջ էր գլորում և չէր թոյլ տալիս, որ մտատանջութիւններս ոչ թէ խօսքով, գոնէ դիմախաղով իրեն զգացնեմ։

—Հոգիս, ասաց ճաշից յետոյ Ռաքէլս,—մեր պսակադրութեան մնացել է 5—10 օր, պէտք չէ՞ Թիֆլիս գնալուց առաջ պատրաստութիւն տեսնել։

—Մեզ ինչ պատրաստութիւն է հարկաւոր, ինչե՞րս է պակաս, ինչի՞ կարիք պիտի քաշենք, այն էլ Թիֆլիսում, պատասխանեցի։ Տունս կահաւորուած ու պատրաստ է, ծառայ-աղախին ռոճիկ են ստանում և խնամում են միակ ազգական հօրաքրոջս, որը պահպանում է բնակարանս։ Քեզ կարևոր սպիտակեղէնը կարող ենք վաճառատնից պատրաստի առնել։ Խոհանոցի և մառանի ծախսերը կյանձնեմ մեր Գիգոյին։ Ի՞նչ մեծ վնաս կտայ, եթէ մի քանի հարիւր րուբլի իւրացնէ հօրեղբօրս որդին։

—Այդ բոլորը յայտնի բան է, շատ դիւրին է, միայն թէ...

—Ի՞նչ միայն թէ...

—Պէտք չէ՞ պսակի շոր կարել տալ։

—Թիֆլիսում չորս կարողուհի կը գան տուն և

ուզածդ հագուստը մի օրում կը պատրաստեն, թէ ճաշակաւոր կտորից, ամենավերջին տարազով և թէ այնպէս կը յարմարեցնեն կազմւածքիդ, որ Պարիզի արհեստաւորների աշխատանքից չես կարող զանազանել, ասացի նրան հանգստացնելու նպատակով։

—Ապա հարսանիքի օրը չե՞նք որոշելու, հրաւէր չե՞նք գրելու մօտաւոր ազգականների և բարեկամներին, ասաց աչքերը դէմքիս յառելով և սրտիս խորքերը կարդալ տքնելով։

Վերից վար, ոտքից մինչև գլուխ նրան չափեցի և ձիգ նայւածքով ուզեցի հոգու տրամադրութիւնը և սրտի բաբախումը կարդալ։ Մի այնպիսի գրաւիչ ու կարեկցութեան արժանի դէմք ցոյց տուեց, որ ես քարացայ, չը յանդգնեցայ նրա սիրտը կոտրել այդ հրճւանքի ժամերին։ Այդ վայրկեանին Ռաքէլիս դէմքը վարդի այն կոկոնին էր նմանում, որը տքնում է ճեղքել իր կանաչ շապիկն ու դուրս գալով արևի լոյսին գւարթանալ ու կարմրել։ Այնքան քնքոյշ էր ամեն մի շարժումը, որ զննողը կարող էր նմանեցնել ձւից դուրս եկած այն փափլիկ ճտին, որի ամեն մի ճռճռումն ու ձայնը շրջապատողներին հրճւեցնում է.

Եւ ինչպէս շէրամը անձամբ իրեն բոհէզի ցանց ու բանտ է պատրաստում, որ մէջը մտնի ու դիականայ, այնպէս էլ Ռաքէլս կարծես թէ տենչում էր իր համար շղթայ ու զնդան պատրաստել, որ մէջը կապւի, կաշկանդւի, մնայ։ Որչափ որ խելացի, ծանրաբարոյ, լրջամիտ էր մինչև այժմ, պսակւելու պատրաստութեան մասին մտածելուց յետոյ նոյնքան այլափոխւեց։ Կարծես թէ այն Ռաքէլը չէր, ինչ որ էր քսան օրւան ընթացքում, այլ բոլորովին մի նոր հոգի էր յայտնւել նրա մարմնի մէջ։

—Այդ բերկրանքդ տեսնելու և հրճւելու համար ամեն շաբաթ ես ուրախութեամբ հարսանեկան խընճոյք կպատրաստեմ, տօն կը կատարեմ քեզ համար, սիրելիս։

—Ամեն շաբաթւայ հարսանեկան պատրաստութիւնը չի կարող ինձ ու քեզ այն ցնծութիւնը տալ, ինչ որ կեանքի մէջ մարդ մի անգամ ինքնաբերաբար զգում է հարսանեկան պատրաստութեան շըրջանում։

—Ռաքէլ ջան, ճիշտն ասա, այս հրճւանքդ հակառակորդներիդ պապանձեցնելու առիթից է բղխում, թէ հարսանեկան պատրաստութիւնից։

—Աւելի շատ ինձ զւարթացնողը հարսանեկան պատրաստութիւնն է, որն ինձ թևեր է տւել թռչելու, բայց հոգեկան անհուն ուրախութիւն եմ զգում, քանի մօտենում ենք այն րոպէին, երբ պապանձւելու և խայտառակւելու են հակառակորդներս, որոնց չարախօսութիւնը սիրտս ծակել էր և հոգեկան տանջանքներս սաստկացրել։

—Դու մեծահոգի էիր, այժմ ինչի՞ ես թեթևանում։ Ինչպէս ուզում են թող գտեն, վերջն էլ ամաչեն։

24 սեպտեմբերի։

Գիշերս չկարողացայ քնել։ Ամբողջ ժամանակը մտածեցի, թէ ինչ հնարով հասկացնեմ այն անդունդի ահաւորութիւնը, ուր ուզում է գլորել Ռաքէլս։ Ամուսնական դաշնադրութիւն, պսակ և հարսանիք, փոխադարձ պարտաւորութիւններ մարդուն այնպէս են կաշկանդում, այնքան են ստորացնում, որ իսկոյն սէրն ու անկեղծ ուրախութիւնը ցնդում են առանց

այլևս վերադառնալու։ Ես նոյն իսկ մի օր չեմ կարող ապրել, եթէ այս երեք շաբաթուան մէջ վայելած անբիծ սէրը չքանայ մեր մէջ։ Էլ ինչ արժէք պիտի ունենայ կեանքը, երբ սիրոյ գոյութիւնն անհետանայ։

Ամբողջ գիշերը ծրագրներ էի կազմում, որ մի կերպ կարողանամ հասկացնել Ռաքէլիս, թէ ուր էր տանելու մեզ նրա երևակայական վրիժառութեան եղանակը։ Ամենևին կասկած չունիմ, չեմ ունեցել նրա սիրոյ, մանաւանդ անկեղծութեան մասին։ Ես համոզուած եմ, որ նա ինձ սիրում է, նոյն իսկ իր անձի չափ, եթէ ոչ աւելի։ Այդ սիրուց հրաժարուելը նրա համար գոյութեան և չքութեան խնդիր է, բայց ամուսնական անքակտելի շղթայով կապուելուց, սովորական իրաւունքի խնդիրները բարձրացնելուց, ներքին գործերի մէջ կամքը առաջ տանելու դրդումները զարգանալուց յետոյ, անշուշտ կարող է աստիճանաբար սառչել այս դրախտային սէրը, որը մեզ կեանք և բերկրանք է տուել մինչև օրս։ Պսակի արարողութեամբ, այս բերկրանքս կորցնելու միտքը ինձ տանջում է, խռովում է հոգիս, մռայլում է հայեացքներս և մրրկում դատողութիւնս։ Ռաքէլս այնպէս է աշխատում զօր-գիշեր, այնպէս է մտածում, որ կարծես թէ պսակը նրան պիտի սիրոյ գագաթնակէտին բարձրացնի. երբէք չի երևակայում, թէ դժոխքի դուռն է մօտենում, կամ իր արարքով ինչպէս է ինձ տանջում։

Եթէ Ռաքէլս զգայ, թէ անդորրութիւնս խռովում է իր անհեռատես պսակի պատրաստութեամբ, գուցէ չափաւորէ կրքերը։ Բայց հոգեկան հրճուանքից այնպէս է հարբել, որ չի կարողանում կարդալ սրտիս խորքերը։ Նա որ դեռ երեք օր առաջ այնպէս

էր թափանցում իմ ներքին աշխարհը, որ մենք երկուսով ամեն րոպէ միևնոյն առարկայի մասին էինք մտածում և համանման դատում, այսօր ուրախութիւնից այնպէս է կուրացել, որ չի տեսնում ներքին տառապանքս և ամեն րոպէ նորանոր արարքով ինձ յուզում է։

Ինչքան լրջութեամբ մտածում եմ, որ սանձեմ կրքերս և Ռաքէլիս այս յափշտակութեան հասած ուրախութիւնը չընդհատեմ, բայց չեմ կարողանում անդորրութիւնս պահպանել և առողջ դատողութեանս յաղթել։ Զգացումներս, սիրտս ինձ ստիպում են լռել և չը խանգարել այս անմեղ երեխայի հրճուանքը, թողնել, որ նա հասնի իր ցանկացած այն լապտերի բոցափայլ, բայց կիզիչ կրակին, սակայն դատողութիւնս յանդիմանում է թուլութիւնս և ստիպում է փրկել ինչպէս Ռաքէլիս, նոյնպէս և ինձ այդ լափող հրդեհի բոցերից։

Քանի՜ քանի՜ անգամ մօտեցել և ուզեցել եմ բանալ մրրկած սիրտս Ռաքէլիս, պարզել նրան մըտքիս անցածները, համոզել, որ ձեռք վերցնէ այդ պսակից և օրինական ծիսակատարութիւններից, բայց չի յաջողուել, քաջութիւն չեմ ունեցել նրա առաջ բանալ հոգուս ծալքերը և անձնատուր լինել նրա վճռին։ Երբեմն նոյն իսկ հոգուս խորքերում կասկածներ են ծագում Ռաքէլիս բռնած դիրքի մասին։ Նա որ առաջ մի հայեացքով կարդում էր միտքս և հաճութիւնս գրաւելու համար իսկոյն կատարում բաղձանքներս, այժմ էլ չի ուշք դարձնում ներքին աշխարհիս վրայ մի սուր հայեացք ուղղելու։

Դողում եմ, որ չլինի թէ Ռաքէլիս վշտացնեմ և նրա անզուգական ուրախութիւնը ընդհատեմ որևէ անախորժ ընթացքով։ Սարսափում եմ մտածելով

այն վայրկեանի մասին, թէ ինչպէս պիտի ընդունէ Ռաքէլս իմ այս մտածութիւնները։ Նա այնքան վըստահ է շրթունքից դուրս եկած խոստումներին, այնպէս հաւատացած է ազնւութեանս, այնքան անկասկած է պարզութեանս մասին, որ երբէք չի կարող երևակայել, թէ իմ ներքին աշխարհս այսքան փոթորկւած է և ես նրանից ծածկում եմ։

Պարզ բան է, սա իմ կողմից անազնւութիւն է, որ Ռաքէլի նման անձնւէր կնոջից ծածկում եմ իմ յոյզերս, բայց այնպիսի անել կացութեան մէջ եմ, որ հնարաւորութիւն չունիմ դուրս գալու այս սուր վիճակից։ Առանց պահանջին և դրդման, հանգամանքներն ինձ ստիպեցին հրապարակապէս խոստանալ իրեն օրինաւորապէս ամուսնանալ։ Առանց նրա գիտութեան կամ թախանձանքին, դիմեցի նախ առաջնորդին և ապա սինօդին, որ մեզ պսակելու արտօնութիւն տան. առանց Ռաքէլիս խնդրին ես նրա հօրը, քրոջը և հակառակորդ փեսայի առաջ պարծեցայ, թէ շուտով պիտի պսակւեմ, այս բոլորից յետոյ, ես ինչպէս դրժեմ խօսքս և չվշտացնեմ, չսպանեմ նրա ինքնասիրութիւնը և սիրուս դատաստանի առաջ արդարանամ, անմեղ դուրս գամ։

Իմ խոստման համաձայն Ռաքէլս այսօր պատրաստւում է յաղթանակել։ Նախ նա տիրել է սըրտիս, իշխելով հոգուս՝ նա տքնում է խայտառակել իրեն բամբասող, անարգող և չարակամ հակառակորդներին։ Այն ժամին, երբ Ռաքէլս պատրաստւում է պապանձեցնելու և ամչեցնելու իրեն հակառակորդներին, ես մտածում եմ նրան այնպէս ստորացնել, նրա հակառակորդների ձեռքը այնպիսի զէնք տալ, որ անմեղ մանուկը յաւէտ համարձակութիւն չունենայ դուրս գալ այդ թշնամիների առաջ, իսկ

այսպիսի մի ճահիճ գլորելուց յետոյ, ես էլ ինչպէս կարող եմ նրանից սէր յուսալ, ցմահ սիրել և սիրւել։

Իսկ պսակը, ամուսնանալը և այնպիսի ընտանիք կազմելը, ինչպէս հազարաւորները մեզ շրջապատել են, միթէ հնարաւոր է ինձ համար տանել։ Այս սէրը, որ վայելում ենք տարփաւորներս, միթէ կարելի՞ է պսակւելուց յետոյ շարունակել. միթէ պսակի մի շղթայ կարո՞ղ է մեզ կապել ցմահ, եթէ մեր սէրը լուծւի, չքանայ և դրան յաջորդէ ատելութիւնը։ Որքա՞ն պիտի զղջամ ես, ինչպէս պիտի ողբամ ես բանը մի օրւան հրճւալի կեանքս, եթէ իմ ձեռքով, իմ կամքովս, իմ սրտովս սիրուս հետ մտնեմ եկեղեցի և այնտեղ դարբնեմ մեր անդամները կաշկանդող ատելութեան շղթան։ Ամուսնական անքակտելի պըսակի իրաւունքը ո՞ր հրեշտակին հրէշի չի փոխարկել, որ մեզ խնայէ։

Գուց ինձ իմ «եսը» խիստ տանջում է և չի թողնում, որ ես զիջում անեմ, անձնազոհ լինեմ, կիսեմ իշխանութիւնս, իրաւունքս իմ պաշտելի Ռաքէլիս հետ. բայց որքան մտածում եմ, ինչքան լուրջ կերպով դատում եմ, խիղճս արդար եմ գտնում։ Այստեղ ոչ թէ փառասիրութիւնն է գործում, այլ սիրտս, որ դողում է կորցնել այն անսահման սէրս ու հրճւանքս, որ գտայ երեք շաբաթւայ ընթացքում. այն անփոխարինելի և անգնահատելի գանձը, որի վրայ դողում եմ, որը չեմ փոխի ամբողջ աշխարհի փառքի հետ։ Սիրել, սիրւել, պաշտել ու պաշտւել Ռաքէլիս նման մի էակի հետ և յանկարծ այն անհուն ու անսահման բերկրութիւնից զրկւել։ Եւ զըրկւել միմիայն նրա համար, որ աշխարհիս երեսին մարդիկ մի օրէնք են սահմանել, այր և կին ցմահ իրար հետ կապելու և այդ կապանքներից առաջա-

ցած իրաւական օրէնքներով նրանց սէրն ու հրճւանքը մահացնելու։

Որքան մտածում եմ, թէ իմ իշխելու և տիրելու կրքերս են ինձ կուրացրել, սիրուս զիջողութիւններ անելու պարտաւորուած չլինելու համար է, որ չեմ ուզում պսակւել, խիղճս ու դատողութիւնս բողոքում է այդ մտքերի դէմ։ Ես դողում եմ միայն Ռաքէլիս այս գգւանքից և ջերմ սիրուց չը զրկւեմ։ Եթէ ես համոզւեմ, որ պսակը չի ցնդեցնելու մեր սրտից ու գանկից այն սէրը, որը գտել ենք երեք շաբաթից ի վեր, երբէք մի րոպէ չեմ ուշացնիլ, իսկոյն կտամ այն անհուն հրճւանքը Ռաքէլիս, կգնամ եկեղեցի և գլուխս կթեքեմ աւետարանի տակ, որ նրա իղձերը անյապաղ կատարւեն։

Բայց այդ իղձերը անկասկած եմ, որ պիտի սպանեն մեր սէրը։

25 սեպտեմբերի։

Ինչ էլ որ պատահի, վճիռս անդառնալի է. պիտի այսօր խօսք բաց անեմ Ռաքէլիս և պիտի սրտիս մէջ անցածն ու դարձածը նրան հաղորդեմ։ Սէրը երկւութիւն և կեղծիք չի կարող տանել. յափշտակութիւնս ինձ կուրացուց և քարացուց, բայց արդէն ժամը հասել է։ Երկու կամ առաւելն երեք օրից էջմիածնից թղթերս կհասնին, իսկ թոյլտւութեան հրամանն ստանալուց յետոյ, այլևս անհնար կլինէր Ռաքէլիս ցանկութիւնները զսպել առանց ընդհարումի։ Եթէ ընդհարւեցինք, այլևս ուղղելն անհնար է։

Առաւօտ շատ վաղ վերկացայ սովորականիս համաձայն։ Ռաքէլս դեռ քնած է և ինչպէս թւում է

քաղցր երազների մէջ է։ Գուցէ նա քնի մէջ արդէն պճնւել է հարսանեկան քօղով, գտնւում է տաճարի մէջ, կողքիս կանգնած և հասնում է այն փափագին, որի մասին տենչում է ինձ խոստում տալուց յետոյ։ Խեղճ մանուկ, երբէք չի երազում այն խեղդող մտքերի մասին, որը գազանի նման չոքել է կոկորդիս և ինձ շնչասպառ է անում։ Ա՜խ, երանի թէ ինձ յաջողւէր այնպէս հիպնոսել ու ներշնչել Ռաքէլիս, որ նա ըմբռնէր հոգիս, զիջէր և խոյս տար այն սոսկալի թռիչքից, որը վտանգ է սպառնում մեր անփոխարինելի սիրուն։

Ուզում եմ զարթեցնել և խօսել, ժայթքել սրտիս վրայ կուտակւած այս կրակը, որը այրում ու լափում է հոգիս։ Գնացի, մօտեցայ մահճակալին, զննեցի դէմքն ու մերկ կուրծքը, դողացի ու սարսռացի, բայց չհամարձակւեցի ոչ գրկել նրան, ոչ էլ սթափեցնել։ Այնքա՜ն գրաւիչ է քնի մէջն անգամ, որ խելագարեցնում է ինձ։ Սոսկում եմ այն մտքից, որ մի սխալ քայլով կարող եմ փոշիացնել այն բիւրեղի սրւակը, որն ամփոփում է սէրս, կեանքս, գոյութիւնս և յոյսերս։ Մատներիս ծայրերուն ման դալով յետ դարձայ գողի նման։ Կարծես ես ապրել եմ մի ուրիշի յարկի տակ, գողանալու օտարի գանձը։

Այս անտանելի վիճակ է։

Վշտիցս կուչ եկած, թողնում եմ տուն, գնում եմ հանքերս և գրասենեակս, բայց յուզւած ու փոթորկւած գանկս ո՛չ մի տեղ ինձ խաղաղութիւն չի տալիս։ Սիրտս լալիս է, հոգիս խռովել է, կեանքս դառնացել։ Չգիտեմ, թողնեմ այսօր էլ փախչեմ իմ տանից, իմ այն հրճւանքի օթևանից, որն ինձ այսքան ժամանակում այսպէս փոխեց, թէ սպասեմ և երանութեանս օթևանը դժոխքի փոխարկեմ։ Յոյս

չունիմ, թէ պիտի կարողանամ յաջողեցնել և Ռաքէլիս համոզել, որ նա չկործանէ մեր բուրաստանը իր ցնորամիտ տենչերով ու իղձերով։

Գրիչս չեմ կարողանում շարժել, մտածում եմ, բայց առողջ դատողութիւնս ինձ վաղ է լքել ու թողել։ Ծխում եմ, բայց բաւականութիւն չեմ ստանում, ծխում եմ Թուրքի նման կուլ տալով ծխի թանձրացած փնչերը և չեմ հարբում։

Ռաքէլիս մահճակալը շարժւեց, երևի նա զարթնեց, գնամ նրան տեսնեմ։

—Արամ, խօ այսօր հանք-չպիտի գնաս, ասաց ննջարանից։

—Ոչ, այսօր նօտարին պէտք է տուն կանչել տամ, պատասխանեցի, թղթեր ունիմ պատրաստել տալու։

—Այդ ինչ ստիպողական թղթեր է, որ նօտարը տուն պիտի գայ կազմելու, ասաց դռան միջից գլուխը ներս մտցնելով։

Նա չէր հագնւած, լոկ գիշերային շապիկով էր, իսկ մազերն այնպէս էին տարածւած նրա ուսերի, թիկունքի ու կրծքի վրայ, որ նրանց ծայրերը հասնում էին ազդրներին։ Մերկ թևերը ինձ երկնցնելով գրկեց գլուխս և ճակատս համբուրելով ասաց.

—Բարի լոյս, կեանքս։

—Քեզ երկար արև, հոգիս, ասացի շրթներն համբուրելով, այսօր շատ քնեցիր.

—Ա՜խ, եթէ զգայիր, թէ ինչ քաղցր երազների մէջ էի. մենք գնում էին, գնում էինք նաւով, պարզ երկնքի տակ, ջինջ ծովի վրայ, բոցափայլ արևը մեզ ջերմացնում էր, զեփիւռը հովացնում և գնում էինք, անվերջ գնում։

—Կգնանք, հոգիս, կճանապարհորդենք։ Ահա այդ

ճանապարհորդութեան պատրաստութեան համար կարևոր է ինձ նօտարը, որ փոխանորդագրեր կազմել տամ, կարգադրութիւններ անեմ, ապագային չը զղջանք։

—Զղջալու ինչ պիտի ունենանք, կեանքս, խօ ընդմիշտ չենք հեռանում Բագւից, երկու-երեք ամսից վերադառնալու ենք, ասաց Ռաքէլս ու նստեց ծնկանս վրայ։

—Երանի թէ հնարաւոր լինէր հանքերս ու հողերս ծախել և իսպառ չվերադառնալ այս ապականւած վայրը, որը թունաւորում է կեանքս։ Որքան բախտաւոր կլինէինք, եթէ տեղափոխւէինք Նապոլի կամ Նիցցա և ընդմիշտ ազատւէինք այն դժոխային բամբասանքներից և կախարդական նախանձոտ հայեացքներից, հակառակորդների զրպարտութիւններից և այնտեղ մեր օրերը մթնացնենք շունչ չնչէւած։

—Մենք չենք կարող հողագնդի վրա բացառութիւն կազմել, կեանքս, ասաց մազերս շոյելով։ Աշխարհս միայն այն ժամանակ քաղցր է, երբ մարդ դառնութիւններից յետոյ, կարողանում է գնահատել քաղցրութիւնը, բայց դու մի վիշտ, մի մորմոնք ունիս, որ երկու-երեք օր է, ինձանից կարծես թէ ծածկում ես։ Մի՞թէ քեզ վշտացրել եմ, որ ցաւդ չես կիսում ինձ հետ, յոյզերդ չեն բաղխում զանկիս ալիքներին,

—Այո, հոգիս, լաւ ես նկատել. ես ինձ յանդիմանում էի երեք օրից ի վեր, որ քաջութիւն չունէի քեզ խոստովանելու հոգեկան տանջանքս։

—Եւ դու առանց ամաչելու ինձանից ծածկում էիր, թաքցնում էիր ախուր խոհերդ։

—Գիտես ինչ կայ, հոգիս, ասացի զսպելով սըր-

տես բաբախումները, ես աշխարհի վրայ միակ եմ, ոչ քոյր ունիմ, ոչ եղբայր. ոչ հարազատներ, ոչ էլ սրտացաւ։ Վաղուց զրկուել եմ ծնողներից, որոնք ինձ տուն և մի փոքր կարողութիւն թողել էին Թիֆլիսում։ Այս իմ միակութեան մխիթարիչն ու սփոփանքը միայն դու եղար և քո սիրուդ եմ պարտական հոգեկան վերածնութիւնս։ Այս պարագաներն ինձ ստիպում են ամենից առաջ քեզ հետ բաժանել իմ բարիս ու չարս, քեզ հետ համահաւասար տէր դառնալ ինչպէս հոգեկան նոյնպէս կենսական բոլոր կարողութեանս. Մենք աշխարհինն ենք, աշխարհը մերը, մենք ենթակայ ենք կեանքի ներգործութեանը, այսօր կանք, վաղը կարող ենք չլինել։ Մի ցրտահարութիւն, մի աղէտ, մի որևէ փորձանք կարող է մեզնից մէկն ու մէկին արևից զրկել։ Դրա համար ես անհրաժեշտ եմ համարում, որ այսօր իմ բոլոր գոյքս քեզ հետ բաժանեմ, ամբողջ հողերիս, հանքերիս, գործարաններիս կալուածագրերի կէսը հաստատեմ քո անուան։

—Եւ այդ դատարկ բանը երեք օր է որոճում էիր և ինձնից ծածկում։ Ո՛չ, առանց քեզ ես կեանք չեմ ուզում։ Քանի որ դու կաս և կապրես, ինձ համար ոչինչ չի պակասիլ, իսկ քեզ կորցնելուց յետոյ ինձ ոչինչ պէտք չէ. քանի որ ես էլ դժւար թէ կարողանամ առանց քեզ ապրել։

—Դու մի՛ շուտափոյթ վճռիլ ամեն բան։ Նախ մտածի՛ր, որ մենք աշխարհումն ենք ապրում, որտեղ միայն թշնամիներ, հակառակորդներ և նախանձորդներ ունինք. Վաղը Թիֆլիսում, հարսանեկան ճաշկերոյթին կամ մի ուրիշ տեղ, եթէ ինձ թունաւորեն կարողութիւնս յափշտակելու համար, ոչ միայն դու պարտաւորուած կլինես Լևէնսօններին և Մէնդէլսօններին

ստրկանալ և հոգեկան տանջանքների մատնուել, այլ միջոց անգամ չես ունենալ վրէժ լուծելու։ Քեզ ով կօգնէ այս աղտեղի կեանքում, որ ոչ միայն կարողանաս ապրել, այլ նոյնիսկ սիրտդ հովացնել։ Մանաւանդ որ դու այժմ մայր ես, բացի քո գլխի համար խորհելուց պիտի հովանաւորես ու պահպանես այդ մանկիկը, որի գոյութեան պատճառ դարձանք։

— Ամենևին ոչ, ես այդ խօսքերդ ու խրատներդ երբէք չեմ ցանկալ լսել, ականջներս և սիրտս թունաւորել։ Եթէ դու կաս ու կապրես, ինձ ու իմ ապագայ մանկիկին ոչինչ չի պակասիլ, իսկ առանց քեզ ես էլ, մանկիկս էլ, աշխարհն էլ գրողի ծոցը։

– Հոգիս, մի բորբոքուիլ, մի՛ վրդովուիլ, այս բոլորը կատարւում է համայն աշխարհով, որպէսզի ապահովէ մարդու կեանքը։ Ես այնպէս եմ ցանկանում, դու քեզ իրաւունք մի՛ համարիլ մերժելու այս առաջարկս, որը նախ իմ կեանքի ապահովութեան համար է, ապա իմ կամքի գործադրութեան։ Քո կեանքն ու քո ապագայ մանուկի կեանքն ապահովելը իմ պարտքս է։

—Ի՞նչ բան է, որ տղամարդիկդ միշտ կեանքի ապահովութիւնը կարողութեան մէջ էք տեսնում։ Ի՞նչ եմ անում առանց քեզ այդ հարստութիւնը, ինչիս է պէտք հազարները, եթէ սիրտս մեռած է։ Ես կարծում էի, թէ հրէան է միայն կարողութեան մէջ կեանքի ապահովութիւնը տեսնում, բայց կեանքի մէջ, ֆինանսական աշխարհի մէջ ամենքն էլ հրէայի ակնոցով են ամեն բան դատում։ Եւ չեմ թոյլ տալ, որ իմ անուանս դարձնես որևէ կարողութիւն։ Դու ինձ աղքատութեան մէջ սիրեցիր, 35 րուբլի ռոճիկից չը խորշեցար, ես նախապատիւ եմ համարում քո շուքի տակ ապրել առանց հարստութեան և եթէ

քեզ կորցնեմ, ուրախութեամբ կսկսեմ դարձեալ օրավարձով ապրել, քան ձեռք մզել այն հարստութեան, որի հաւաքող ակից ու աղբիւրից զրկուած եմ։

— Ո՛չ, հոգիս, մենք ամուսնանալուց յետոյ, մեր ամբողջ գոյքը պիտի հաւասարապէս երկուսիս սեփականութիւնը դառնայ, որ մենք իրարից առաւելութիւններ չունենանք։ Սիրոյ յարատեւութիւնը իրաւունքների հաւասարութիւն է պահանջում։

— Դու ինձ իրաւունք տուր քո տան մէջ հովանաւորուելու, քեզ հետ կենակցելու, քո շւաքի տակ ապրելու, ես դրանից աւելի իրաւունքի կարիք չունիմ։ Դու ինձ սիրիր, ինչպէս սիրել ես մինչև այսօր, դու ինձ խնամիր և պաշտպանիր, ինչ որ արել ես քաջութեամբ երեք շաբաթում, ես ուրիշ իրաւունքների կարիք երբէք չեմ զգալ։ Միայն և միայն քեզ իրաւունք չեմ տալ, որ ուրիշ տարփածու ունենաս, այդ իրաւունքս էլ ո՛չ ոք չի կարող սահմանափակել, էլ ինձ ինչ պէտք է գոյքի և կալուածի հարստութիւն։

— Ռաքէլ, ես դողում եմ, որ մեր սէրը անհաւասարութեան, կամ կամայականութեան զոհ դառնայ և մեր այս երանալի օրերը դժոխքի փոխարկուի։

— Ես քո կինն եմ, քո ազախինն եմ, քո ընկերուհին եմ, քո տիրուհին եմ, քո հոգին ու կեանքն եմ, բայց երբէք չեմ ուզում լինել քո հաշւնկերը։ Դու ինքդ ես իմ կայքս, կարողութիւնս և գոյքս, Փակիր այդ խօսքերը և հեռախօսով իմացրու որ նօտարը չը գայ։ Ես ո՛չ մի պայմանագիր չեմ ստորագրիլ, ասաց Ռաքէլս ու գնաց լողարան մտնելու։

---

26 սեպտեմբերի։

Իրիկունը, ճաշից յետոյ անհնար եղաւ Ռաքէլիս համոզել, որ նա ընդունի ամբողջ գոյքիս կէսը։ Ես պատրաստ էի նրան տալ նոյնիսկ ամբողջ կարողութիւնս, միայն թէ համաձայնէր ինձ հետ ցմահ ապրել առանց պսակի, առանց օրինական ամուսնութեան։ Բայց որ այդպէս վճռական կերպով մերժեց կարողութեանս կէսն ընդունելու առաջարկը, պսակի խնդիրը չկարողացայ բարձրացնել։ Ամբողջ օրը ծրագրում էր հարսանեկան հանդէսի, արդուզարդի, հացկերոյթի և ճանապարհորդութիւնների մանրամասնութիւնները։

Այդ բոլորն այնքան յուզեցին հոգիս, որ թախիծն էլ չի հեռանում ճակատիցս։ Բայց այնպիսի խաղեր է անում, այնպիսի ձևեր է կատարում, որ ինձ ժպտացնում, ծիծաղեցնում և ուրախացնում է բոպէական խինդերով։ Չեմ կարողանում որևէ կերպով նրա սիրտը կոտրել, չեմ կարող նրա տխրութեան պատճառ դառնալ, բայց եթէ թոյլ տամ, գիջանեմ եկեղեցի մտնելու և պսակ ընդունելու, հաւատացած եմ, որ այդ պսակի հետ մեր սէրն էլ գերեզման է մտնելու։ Ինձ մաշում ու հալածում է այն միտքը, որ մենք պիտի կազմենք այնպիսի ընտանիքներից մէկը, որտեղ այր ու կին իրար քիթն ու մրռութն են կրծում։ Այս զւարթ օրերին, այս հրճուանքին միթէ պիտի թոյլ տալ, որ յաջորդէ դժոխային կեանքը։

Երեկ նօտարին համարեա թէ տնից դուրս արաւ Ռաքէլս․ ո՛չ մի կերպ չկարողացայ համոզել, որ ընդունի կալուածներիս կէս բաժինը որպէս սեփակա-

նութիւն և ընկերակցի հարստութեանս։ Անվերջ կրկնում էր, թէ նա չի պսակւում իմ կարողութեան վրայ, այլ հարսնանում է իր պաշտելի Արամին։

Ես նրա այդ յամառութիւնը չկարողացայ կոտրել, այս բանն ինձ վիշտ եղաւ։ Դեռ պսակ չը գնացած, նա իր կամքին տէր կանգնեց և ինձ ստիպեց խոնարհելու։ Սա արդէն աւելի ևս զօրացուց կասկածներս, թէ պսակը պիտի ջնջէ մեր սէրը և նրան գլխիս դահիճ կանգնեցնէ։

Ես այնպիսի դատափարակութիւն չունիմ, որ բռնակալ դառնամ կնոջս գլխին և նրան ինձ ստրկացնեմ, մահացնելով մեր սէրը և նրա ինքնուրոյնութիւնը։ Նա ասաց՝—ես քեզ եմ ուզում, քո անձն եմ պաշտում, ոչ թէ քո հարստութիւնը. դու ես իմ պաշտամունքը, ոչ թէ ոսկիդ ու հանքերդ, կամքիդ և սրտիդ առաւելութիւնները ինձ համար բաւական էին քեզ երկրպագու դառնալու համար։ Ի՞նչիս են հարկաւոր քո հանքերն ու գանձերը։ Ես ուրախութեամբ կծառայէի, վարձս կը յանձնէի քեզ, որ չոր հաց բերէիր և միասին սիրով ուտէինք ու ապրէինք, միայն թէ դու ինձ սիրէիր։

Ես այս կնոջից ինչպէս հեռանամ։

Ես այս կնոջ հետ ինչի պսակւեմ և այս դրախտը, բուրաստանը այրեմ, մոխիր դարձնեմ։ Այնքան ընկճւած եմ, սէրն այնպէս է ինձ գերել, որ չեմ կարողանում դիմադրել նրա պահանջներին, համակերպում եմ և չեմ համարձակւում վրդովել։

Առաւօտ է։ Ռաքէլս դեռ քնած է։ Մտորումներս, քունս կտրել են։ Այս կինն ինքը պիտի կործանէ իմ և իր կեանքը։ Ա՜խ, որքան դժւար է կնոջ ճակատում մեխւած և մինչև ուղեղը հասած գամը դուրս քաշել։ Ամբողջ կեանքը կգոհէ, կըթշւառանայ,

կխելագարեցնէ ինձ, միայն թէ նախապաշարումից, սնոտիապաշտութիւնից ձեռք չի վերցնիլ և հասարակական սովորոյթներին չի դաւաճանիլ։

Մի պսակի շրջագգեստը, մի փունջ ծաղիկը, մի զոյգ ոսկեզօծ կօշիկը կարծես թէ նրան պիտի բախտաւորեցնեն։ Երէկ այնքան է աշխատել, արդուզարդով զբաղւել, որ առաւօտ քնից չի կարողանում ըսթափւել։ Երկու անգամ գնացի, գրկեցի, ցնցեցի, նոյն իսկ հարցերիս պատասխանեց, բայց չկարողացաւ աչքերը բանալ, դարձեալ թմրած ընկաւ։ Ահա սթափւել է, հիմա կգայ, հաւաքեմ օրագրութիւնս, որ չտեսնի։ Արդէն կարդում է։ Երանի՜ չէր, որ նա կարողանար կարդալ օրագիրս և ըմբռնէր ներքին վիշտս։

Դարձեալ մերկ, միակ շապիկով, թեթև հողաթափով այսօր մտաւ գրասենեակս։ Տիպը սովորական էր, բայց զւարթութիւնն ու բոցավառութիւնը աւելացել էր։ Անմիջապէս գրկեց, բարի լոյս ասաց և նստեց ծնկներիս։

—Ինչի՞ ինձ շուտ զարթեցրիր, չթողիր քնից կշտանամ։ Մի՞թէ մոռացել էիր, որ գիշերն ուշ անկողին մտայ և խիստ յոգնած էի։

—Էլ ինչի՞ վերկացար, քնէիր ու կշտանայիր։

—Զարթելուց յետոյ, էլ ե՞րբ կարող էի նորից խոր քուն ընկղմել։ Ժամը քանի՞սն է։

—Ութից քսան է անցել։

—Գիտես, հոգիս, այսօր պիտի իմ երկու արկղս Թիֆլիս ուղարկես, որ մեր գնալուց առաջ հասնի։

—Պատճա՞ռը։

—Այնպիսի կարևոր իրեր կան, որ նրանք մեզ անհրաժեշտ են Թիֆլիսում։

—Թէ անհրաժեշտ են, էլ ինչի՞ ես ուղարկում, պահիր այստեղ:

—Թիֆլիսի համար պէտք է, պիտի շուտ ուղարկել, որ չուշանայ:

—Միթէ չենք կարող բագաժով մեզ հետ տանել:

—Տասնեվեց պուդ է, ահագին փող կգնայ:

—Էլի՞ ժառանգական ախտից չե՞ս կարող ձեռք վերցնել: Թքեմ փողի վրայ, 20—30 րուբլի պիտի ճանապարհի ծախս վճարել, դու դրա համար մտածում ես, իսկ ամբողջ կեանքիդ ու ապագայիդ մասին խօսք ու խորհուրդ չես լսում:

—Այս խորհուրդդ կը լսեմ, բագաժով տանենք հետներս այս արկղները, բայց աղաչում եմ, այս աչքերիդ սիրուն, ասաց համբուրելով ճակատս,—ուրիշ անգամ ինձ էլ չառաջարկես կալւածներիդ կէսը ընդունել և քեզ հետ առևտուրի մտնել: Իմ առուտուրս այս է, միայն այս, ասելով այնպէս ծծեց շրթունքներս, որ ցնցեց ամբողջ ջղերս: Ինչի՞ս է պէտք հանք, հող, ամբար, աւազան, կայարան, երբ առանց դրանց տէր լինելու, դրանց տիրոջ տիրուհին եմ: Ինչ որ քուկդ է, իմս է, ինչ էլ որ ես ունիմ, քոնն է: Էլ ինչի՞ ես քեզ հետ ընկերակցութիւն կապեմ, որ հաշիւների համար իրար գլուխ կոտրենք:

—Կեանքը, փորձանքները, վտանգները, ո՞վ կարող է ասել, թէ մինչև առաւօտ կարող ենք ապրել, ասացի իւրաքանչիւր բառս շեշտելով:

—Այն օրն որ քեզ կորցնեմ, էլ ինձ այս հարստութիւնը պէտք չէ, իսկ եթէ դու ինձ կորցնես, արա ինչպէս սիրտդ կուզէ, միայն մի մոռանալ Ռաքէլիդ յիշատակը ցմահ:

—Ե՞ս, Ռաքէլիս մոռանամ, քո յիշատակը ջնջուի իմ սրտից: Ինձ համար կին չկայ, բացի Ռաքէլից:

—Է՜հ, տղամարդի՜կդ, մինչև ինձ գտնելդ գուցէ հազար աղջիկ խաբած կլինես:

—Չեմ խաբել, բայց ծանօթներ շատ եմ ունեցել: Դու գիտես, որ Արամդ մարդ չի կարող խաբել, նրա խօսք անփոփոխելի է, խոստումը կատարուած: Հինգ տարի Մոսկւայում Նաստեան ինձ խնդրեց իրեն հետ ամուսնանալ, բայց ոչ մի անգամ բաւարար պատասխան չստացաւ:

—Որպէսզի Ռաքէլին գաս գտնես և նրա հետ ամուսնանաս: Բայց ինչի՞ թուղթն ուշացաւ, ինչի՞ թոյլտուութեան թուղթը չեկաւ:

—Բան չունիս, երանի՜ թէ յաւիտեան չգայ այդ թուղթը և մենք այս երջանիկ ժամերը ցմահ վայելենք:

—Ի՞նչ, ինչ ասացիր....

—Միթէ առանց այդ թոյլտուութեան, առանց ալէլույեաների և ծիսակատարութեան աւելի բարեբախտ օրեր չենք կարող վայելել: Օրինական ամուսինների տներն ու ննջարանները միթէ երբևիցէ տեսել է այն հրճւանքն ու ցնծութիւնը, ինչ որ անցնում է մեր այս յարկի տակ:

—Դու ինչի՞ ես օրինակ վերցնում վատերին, կամ ինչ գործ ունինք մենք հետևելու ուրիշներին:

—Անիծւի այն կապը, որ մարդկանց լրբացնում է: Ա՜խ, որքան կործանարար է ընտանիքի, մանաւանդ պատւազգած ամուսնու համար այդ շղթան, որից բաժանւելու հնարաւորութիւն չունի. ինչ սանձարձակ է կինը, այդ կապանքից յետոյ, եթէ քիչ լիրբ է և անզգամ, կամ որքան գազան է մարդը, եթէ հոգին չի ազնւացած վեհ գաղափարներով:

—Էլ ինչ սկսեցիր բարոյական խրատներդ: Երէկ ինձ քարոզում էիր նմանել աշխարհին, հետևել նրա

կարգերին, սովորութիւններին և օրէնքներին, քեզ հետ բաժանել կարողութիւնդ, հարստութիւնդ։ Երբ չընդունեցի, ինձանից վշտացար, իսկ այսօր չես հաւանում աշխարհի կարգերին և օրէնքներին, ուզում ես բացառութիւն կազմել և անպսակ ապրել։ Ի՞նչ ես ասում, քեզ չեմ հասկանում, ասաց ու վերկացաւ գնաց, շարունակելով.

—Գնամ հագնւեմ, կգամ քեզանից բացատրութիւն պահանջելու։

Աղօրիքի մի քար կարծես վերցրին սրտիս վրայից։ Վերջապէս կարողացայ սիրտս բաց անել և յայտնել այն, որը քանիերկու օրից իվեր գանկս փոթորկում էր։ Թողի, որ հանգիստ հագնւի ու վերադառնայ։ Ռաքէլիս չուղեկցելը նրան աւելի բորբոքեց և տասը րոպէից վերադարձաւ մօտս։

—Ուրեմն եթէ պսակւենք, քո կարծիքով այս երանելի օրերը չպիտի՞ կարողանանք շարունակել ու վայելել մեր երջանիկ ժամերը։

—Ես կասկածում եմ, ես վախենում եմ հոգիս, որ այս հրճւանքս և ուրախութիւնս կորցնեմ այդ անիծեալ դաշնագրից յետոյ։ Ա՜խ, եթէ դու հասկանայիր, թէ որքա՜ն բախտաւոր եմ ես, ի՜նչ երանութեան հասայ քո գրկում, մեր սէրն ինձ ինչպէս ոգևորեց ու թևեր տւեց, դու էլ կզգուշանայիր այդ երջանիկ ժամերը կորցնելուց և կարհամարհէիր այն վտանգաւոր թուիչքը, որը մեզ կարող է գլորել այն անդունդը, որի յատակումն է գարշելի ճահիճը։

—Արամ, Արա՛մ, այդ ի՞նչ ես մտածում։

—Ինձ համար, հոգիս, բացի մեր բախտաւոր կեանքից ուրիշ բան նշանակութիւն չունի։ Ես թքել եմ ամբողջ կարողութեանս վրայ, համայն աշխարհի օրէնքների և կարգերի վրայ, քո մի համբոյրը, մի

գգւանքը, մի ժպիտը չեմ փոխիլ դրանց հետ, բայց վախենում եմ, սարսափում եմ, երբ մտածում եմ, որ պսակի խորհրդից յետոյ մարդկային սէրը ատելութեան է փոխւում և երջանկութիւնը վշտահեղձութեան...

—Ո՛չ, Արամ, ո՛չ, պսակ, դաշնագիր, ամուսնութիւն՝ չեն կարող դժոխքի փոխարկւել, եթէ կողմերը սիրում են անկեղծ և անձնւիրաբար։ Երեկ դու երեկ ինձ փորձել ուզեցիր, թէ արդեօք աչք չունիմ քո կարողութեան վրայ, արդեօք ինձ քեզ հետ կապողը հարստութիւնդ չէ և համոզւեցիր, որ ես Արամիս եմ սիրում, ոչ թէ նրա գոյքը. իսկ այսօր ուզում ես հոգիս փորձել։ Ես քեզ կասեմ, որ ես ոչ ծէսն եմ սիրում, ոչ աշխարհի կարգն ու գիրքը, ոչ էլ դրանց երկրպագուն եմ։ Այն րոպէին, որ տեսնեմ, թէ դու ինձ էլ չես սիրում, թէ սէրդ այլես ատելութեան է փոխւել. ես այդ րոպէից կը քաշւեմ այս յարկից, որ չվրդովեմ հոգիդ, թէև այդ հեռանալը ինձ մահ պատճառէ և սիրտս կտոր կտոր ճեղքէ ու դուրս թափէ։ Ասա ինձ, երևի ինձանից ձանձրացա՞ր։

—Ձեռքդ սրտիդ դիր, խղճիդ հարցրու և դու ինքդ պատասխանիր իմ փոխարէն, Ռաքէլ ջան, թէ արդեօք մինչև մահ Արամը կարո՞ղ է ուրանալ ու մոռանալ այս սէրը, որով դու ինձ բոնկեցիր և ես քեզ բորբոքեցի։ Ասա ինձ, միթէ չե՞ս տեսնում, չե՞ս զգում, թէ ես ինչպէս այրւում ու տապակւում եմ քո սիրով։ Մի՞թէ իմ միակ տենչանքս չէ, որ մինչև գերեզման այս ընթացքով իրար սիրենք։

—Այո, այդ ես գիտեմ, այդ բանի մասին կասկած չունիմ. բայց ես քեզ հետ մի դաշինք ունիմ, միայն մի խօսք, ազնիւ խօսք ես տւել ինձ և այդ

խօսքիդ կատարումն եմ ես պահանջում: Դու ինձ խոստացար օրինաւորապէս ձեր եկեղեցու կարգով ամուսնանալ և չթողնել ինձ կարմրել ոչ մերձաւորների ոչ էլ հեռաւորների մօտ հարճի և տարփածուի անուն կրելով: Ես քեզանից պահանջեցի կատարել մօրս տրուած խոստումը և դու ինձ խոստացար: Այժմ ինչ ես ասում, դրժում ես:

—Այո, խոստացայ և ցմահ էլ քո ամուսինն եմ, բայց եթէ հնարաւոր է գնանք, ճանապարհորդենք անմիջապէս Եւրոպա և ամեն տեղ տարածենք, թէ մենք պսակուեցինք Վիէննայում, բայց ձեռ վերցնենք այդ պսակից, որը կարող է սպանել մեր սէրը, ատելութիւն գցել մեր մէջ այդ պսակի շղթայով:

—Հերիք կատակներ անես և ինձ յուզես, Արամ, միթէ դու թոյլ կտաս, որ իմ առաջ խոստմնազանց մնաս և քեզ վրայ ունեցածս վեհ գաղափարը աղարտես:

—Հոգիս, մի բորբոքուիլ, մի զայրանալ: Ես քեզ բացատրեցի իմ կասկածներս և երկիւղս: Աշխարհը մեզ օրինակ: Ես քեզ աղաչում եմ, մեր սիրոյ, մեր զաւակի սիրուն ինձ մի մերժիլ, լսիր ինձ և թողնենք այս պսակը, ուղղակի գնանք Վիէննա, Պարիզ, Նիցցա քիչ զբօսնենք....

—Երբէք ես խոստմնազանց և երդմնազանց մարդու հետ այլևս չեմ կարող ապրել:

—Ռաքէլ....

—Այլևս ոչ մի խօսք, ես այս րոպէիս գնում եմ:

Այստեղ ընդհատւում է ձեռագիրը, որի պակասորդը լրացրել էր Արամ Միրզայեանցը «Լիայի» արկածի մէջ:

ԺԳ.

ՀԻՒՍՆԻ ՇԻՐԱԶԻՆ

Երբ Ֆիրդուսին Իրանի դիւցազներին էր ճառում Ղազւինում, երբ Սադին իր Վարդաստանն ու Բոստանն էր երգում Շիրազում, երբ Հաֆիզն իր Գինու Քառեակներն էր նուագում, երբ Խայամն իր Սէրն ու Սոխակը մեղեդում, սրանց շրջապատող աշակերտները դարէդար իրենց մեծ վարպետների անջնջելի յիշատակին հետեւելով, նորանոր մաքեր էին արծարծում մոլեռանդ և խաւար այն ժողովրդի մէջ, որն անվերջ երկրպագել էր ինչպէս վարդին ու սոխակին, խաղողի ողկոյզին ու նռան գինուն, լոյսին ու ճըշմարտութեան, գեղեցկին ու չքնաղին: Եւ որքան մեծ էր խաւարի որբանեակների՝ սէիդների, մոլլաների և սրանց հովանաւորած խաների ու շահերի հալածանքը, նոյնքան հսկայական էին բանաստեղծների ոգեւորութիւններն ու արտադրութիւնները:

Եւ ոչ մի բանաստեղծ, ոչ մի նուագերգակ, ոչ մի պատմիչ չէր կարող ազատուել անգութ դահիճների ճիրաններից, չէր կարող գրողին սպասել իր հայրենի բնակարանում, իր զարգացած ու զւարճացած

պարտէզներում, վարդաստաններում, այլ ամենքը իրենց օրհասին դիմաւորում էին նկուղներում, անտառներում, անապատներում, կամ ծննդավայրից ու հայրենիքից շատ հեռու, օտար ու խոպան երկրներում, հարազատների բացակայութեան, նրանց կարօտով տոչորւած։

Այսպիսի հալածւածներից էր իր պաշտելի ծննդավայրում Հիւսնի Շիրազին։ Ծնելիս այնքան գեղատիպ գտան նրան դայեակն ու արենակիցները, որ նրան Հիւսնի (չքնաղ) անւանեցին։ Ոչ միայն դէմքով, կազմով գեղեցիկ էր Հիւսնին, այլ մտքով անչափ գերազանցեց իր բնատուր շնորհքներին։ Նա դեռ տասը տարին չբոլորած երգում էր Սադիի և Հաֆիզի բանաստեղծութիւնները և բերանացի արտասանում Ֆրդուսիի դիւցազներգութիւններից հատւածներ հարիւրաւոր ունկնդիր գլուխների առաջ, ուրոնք այնպէս էին հրապուրւում Հիւսնիի ոգևորութիւնից, որ արձանական լռութեամբ լսում և հիանում էին գեղատեսիլ բանաստեղծի սրտագրաւ արտասանութեամբ, հոգեպարար ձայնով և վայելչական դիմարտայայտով ու շարժումներով։

Հիւսնին երբէք չդրժեց ոչ իր վարժապետների գրքերին, ոչ նրանց մտքերին և ոչ էլ իր ճառերին ու գրչին. Նա անվերջ տքնեց, որ իր հայրենակիցների մէջ սթափեցնէ սառած զգացումները, սէրը դէպի չքնաղն ու վեհը, ձգտումը դէպի լոյսն ու բարին։ Նա իր նպատակին հասնելու համար ամբողջ տասնեակ տարիներ գոհեց և ուսումնասիրեց այն բոլոր փիլիսոփայական գրւածքները, որոնք քառասուն դար շարունակ քարոզել և Իսլամի երևալուց յետոյ աէիդների ձեռքով գերեզման էին հոււել։

Հիւսնին ինչպէս բուռն սիրով պաշտում էր ի-

րենց ծնող Ֆարսստանի բնութիւնը, Նրա լեռներն ու ձորերը, անտառներն ու պարտէզները, աղբիւրները, վտակները, գետերն ու լճակները, այնպէս էլ սիրում էր այն կենդանութիւնը, որ տիրում էր այդ երկրում։ Նա ինչպէս հետևում էր բլբուլի երգին, կաքաւի պարին, եղջերուի վազքին, այնպէս էլ հիանում էր իր հարազատների անտիպական գեղեցկութեամբ, սև սև աչքերով, սաթանման ծամերով, վարդագոյն այտերով, մարգարտաշար ատամներով, նռանագոյն շրթունքներով, չինարի հասակով և նորաբողբոջ կրծքով։

Հիւսնին բորբոքւում էր, որ Ֆարսստանի ազատ դրախտը դժոխքի էր փոխարկւել շնորհիւ մարդկային մտքի և բարքի այլանդակութիւններին։ Նա ատում էր իւլէմներին, որ արգելել էին ֆարսուհուն ազատ, բաց ճակատով դուրս գալ հարազատների շրջանում, Նախատում իրենց եղբայրներին կեանք ներշնչելու։ Նախատում իրենց եղբայրներին և մոլլաներին, որոնք հարէմական բանտեր էին սարքել, ուր տառապեցնում էին իրանց քոյրերին ու դստրիկներին դժոխային տանջանքներով։ Հիւսնին գզւում էր հարբեցողներից, խաշխաշի երկրպագուներից, որոնք այդ դիւական թոյներով այլանդակւում էին բնութեան պարգևած հրեշտակային տիպարը։

Հիւսնին իրեն նպատակ դրեց քարոզել այն բարբարոսների, վայրագների և անգութների դէմ, որոնք բնութեան պարգևած սքանչելիքները իրենց քմահաճոյքով և մոլութիւններով ապականել և երկիրը դժոխքի էին փոխարկել։ Այս պատճառով տասանումներից, տարիներով ուսումնասիրութիւններից յետոյ, եկաւ յանգաւ Սոֆիական վարդապետութեան վրայ, սրա մտքերի քարոզիչը և սրա վեհ գաղափարների

երգիչն ու բանաստեղծը դարձաւ։ Նա սոֆիների
վարդապետութիւնը իր տեսակէտով ըմբռնեց և այդ
տեսակէտով էլ այնպիսի մեծ զարկ տուեց նրան, որ
անչափ ունկնդիրներ, աշակերտներ ունեցաւ և հիմ-
նեց իր դպրոցը։

Հիւսնին համայն տիեզերքը միակ աստուածու-
թեան բազմաձև արտայայտութիւններն էր համա-
րում։ Իւրաքանչիւր երևոյթի մէջ աստուածային մի-
ութեան մասնական յայտնութիւնն էր քարոզում։
Երկիրս էլ այդ գերագոյն միութեան մի յայտնու-
թիւն էր ընդունում։ Բնութեան մէջ նկատուած ամէն
մի կենդանութիւն Հիւսնին համարում էր մի որոշ
յայտնութիւն։ Որքան որ բնական գեղեցկութիւնը և
մտքի արտայայտութիւնը խտանում է որևէ կենդա-
նութեան մէջ, այնտեղից գերագոյնը աւելի ուժեղա-
ցած է յայտնւում։ Հիւսնիի քարոզութեամբ աշխար-
հի վրայ ոչ միայն մարգարէները, առաքեալները
աստուածային մասնական յայտնութիւններ էին, այլ
ամէն մարդ, ամէն անասուն, ամէն բոյս ու ծաղիկ,
այդ գերագոյնի մանրէային յայտնութիւններն էին։

Այս պատճառով քարոզում էր Հիւսնին.—մար-
դիկ ոչ միայն պէտք է պաշտեն բնութեան ամէն մի
արտայայտութիւնը, պիտի իրար սիրեն, որպէս միև-
նոյն արտայայտութեան մասնիկները, այլ պէտք է
տքնեն իրենց երկիրը դրախտի վերածել։ Հիւսնին
սիրում էր համայն բնութիւնը իր գեղեցկութիւնով,
սիրում էր մարդիկ իրենց բնական ու հոգեկան չքք-
նաղութեամբ. պաշտում էր ինչպէս քնքուշն ու վսե-
մը, նոյնպէս հոգու և մտքի վեհ կարողութիւնը։ Նա
երկրպագում էր ամէն մի չքնաղ էակի, ամէն մի
բարձր գաղափարի, ինչպէս աստուածային խտացած
յայտնութեան։

Յայտնի բան է, այսպիսի մի հսկայ բանաստեղ-
ծին բոլորովին հաճելի չէր, որ որևէ բռնակալ խան
կամ մոլլա կեղեքէ ու կողոպտէ համանման մարդու՝
աշխատաւոր մշակի անդուլ տագնապներով արտաբե-
րած բարիքը, իր ամբարները լցնէ չարքաշ շինակա-
նի ցորենն ու որիզը, իւղն ու մեղրը։ գինին ու կա-
թը, կերպասն ու բէհէզը, կարպետն ու գորգը և գա-
րաքաշ աշխատաւորը ընտանիքի հետ սոված սա-
մոքսով, մերկ անդամով, հողոտ ու փոշոտ մարմնով
օրերը մթնացնէ, անիծելով այն կեանքը, այն օրհ-
նեալ ջեռուցիչ արևը, որով ապրում և շնչում է։

Հիւսնին ամէն օր նորանոր բանաստեղծութիւն-
ներով, վառ գոյներով այնպէս էր երգում ու բացա-
տրում ժողովրդին իր տանջողների անգութ դէմքե-
րը, նրանց աղտեղի ընթացքը և կործանարար բար-
քերը, որ անպայման պիտի ենթարկւէր խիստ հալա-
ծանքի։

Բայց հալածանքը չէր կարող նրան կասեցնել,
նա հոգեբուխ երգերով սթափեցնում էր թմրած ժո-
ղովրդին և նրան հրաւէր կարդում, որ անդուլ աշ-
խատանքով անապատի ու աւերակի վերածուած հայ-
րենիքը վերակենդանացնէ և վերակազմէ Ֆարսստա-
նի դրախտը, որը կործանել էին անգութ և անմիտ
օրէնսդիրներն ու առաջնորդները։

Այնքան ոգևորիչ էին նրա բանաստեղծութիւն-
ները, որ ոչ միայն շարունակ հազարաւոր մարդիկ
նրան ունկնդրում, սովորում և տարածում էին մեծ
բանաստեղծի չքնաղ մտքերը, այլ բազմաթիւ աշա-
կերտներ նրան հետևում և ուսումնասիրում էին նոր
վարդապետութիւնը։ Երբ Հիւսնիին շրջապատում էին
իր սիրելի բարեկամները, չարատանջ ժողովուրդը և
վսեմին ձգտող աշակերտները, նա արհամարհելով

մոլլաների և խաների սպառնալիքները անվերջ իր քնքոյշ երգերով ու բանաստեղծական դարձւածներով նրանց դրդեցնում էր, մոռանալով այն անսահման տառապանքը, որի մէջ գլորել էին նրան անգութ հալածողները։

Բայց այնքան մեծացաւ Հիւսնիի բանաստեղծական հռչակն ու երկրի ամեն կողմ այնպէս սփռւեց նրա մտքերը, որ այդ գրչի զինուորից սարսափեցին հակառակորդները—թէ խաները և թէ մոլլաները, և վճիռ արին այդ դերագոյնից շնորհւած ճարտար բանաստեղծի լեզուն ու ձայնը խպառ կտրել։ Սրա համար նրանք դիմեցին Շիրազի մեծ միւջթէիդին, որը Հիւսնիի գործերը քննելուց յետոյ վճռեց թէ՝

«Այն մարդը, որ բացի Աստծուց ուրիշ ստեղծւածների մէջ աստուածային յայտնութիւն է գտնում, այն մարդը, որ Աստծուն ընկեր և բաժնեկիցներ է քարոզում, այն մարդը, որ փթման և նեխման ենթակայ իրերը Աստուածամասն է համարում, այդ քեաֆիրը—հայհոյողը արժանի է քարկոծի»։

Երբ այս վճիռը արձակեց միւջթէհիդը, Շիրազի հաքիմ խանը վճռի պատճէնները կպցնել տուեց քաղաքի հրապարակների պատերին և հրաւէր կարդաց Հիւսնիին և նրա աշակերտներին զղջալ իրենց անմիտ քարոզութիւնների համար, մեղայ կանչել և միւջթէհիդի ներողամտութեան դիմել։ Հակառակ դէպքում նա իրաւունք էր տալիս մոլի ամբոխին քարկոծել քեաֆիրներին։

Հիւսնիի եռանդուն աշակերտներից երկուսին, որոնք ծաղրել էին միւջթէհիդի վճիռը, հերքել էին նրա որոշումները նոյն իսկ Ղուրանի ու հադիսների յօդւածներով, խաների ու կղերի ոգէտ ու կաշառւած սպասաւորներն ու աշակերտները նոյն օրը այն-

պէս քարկոծեցին, որ նրանց դիակները թաղւեցին ամբոխի շպրտած քարերի տակ։

Այս գազանային տեսարանից ահաբեկւած Հիւսնի Շիրազի աշակերտներից շատերն ուրացան ու հեռացան իրենց ուսուցչից, ոմանք փախան հեռու աշխարհ, ուրիշները ուխտատեղիներ և նոյնիսկ ապաստանեցան շիական սրբավայրերում։ Ոմանք փոփոխեցին ու ծածկեցին իրենց մեծ վարժապետի մտքերը և տքնեցին յարմարեցնել շիական վարդապետութեան, որպէսզի ազատւեն վարձկանների հալածանքից։ Թուլասիրտները սկսեցին նոյն իսկ հայհոյել այն վարժապետին, որին պաշտել ու երկրպագել էին տասնեակ տարիներով։

Շիրազի հաքիմ խանի և միւջթէհիդի հալածանքից գլուխն ազատելու համար ինքը Հիւսնի Շիրազին էլ թափառական դէրվիշի տարազ հագաւ, ցուպը ձեռքն առաւ, քեաշկիւլը ուսին գցեց և դուրս եկաւ այն սիրելի ծննդավայրից, որը նրան կեանք ու հոգի էր ներշնչել, և սկսեց քարոզել իր վեհ մըտքերը Շիրազից դուրս, հեռաւոր նահանգներում և երկրներում։

Թէև նրա հարիւրաւոր աշակերտները թողին, դաւաճանեցին իրենց պաշտելի ուսուցչին ու հեռացան, բայց նրա սիրելի և հաւատարիմ աշակերտը—Մուսայի-Սադըգը չբաժանուեց իր վարժապետից մինչև մահը։ Ոչ յորդորը, ոչ ուսուցչի խրատը և ոչ էլ Մուսայի-ազգականների սպառնալիքը չկարողացան Սադըգին բաժանել իրեն գաղափարական ուսուցչից, որին անձնուիրաբար ծառայել էր ուզում երիտասարդ աշակերտը։

Ամբողջ Իրանը միասին թափառեցին և քարոզեցին ուսուցիչն ու աշակերտը։ Գիւղացիները նրանց

երկրպագում էին վեհ գաղափարների, վսեմ քարոզ-
ների և սրտացաւ մտքերի համար։ Ամեն յարկի տակ
սեղանները բաց էին Նւիրական մտքի քարոզիչնե-
րին, ամեն տեղ նրանք բաւականանում էին չոր
հացով, մի բաժակ կաթով, ձւով, թարմ բանջարնե-
ներով և քաղցրաբոյր պտուղներով։

Ամեն տեղ վարժապետն ու աշակերտը քարո-
զում էին մարդու մեծարանքը, աշխատաւորի յար-
գանքը, մշակի պատիւը և գեղեցիկի պաշտամունքը։
Եւ երբ սրանց քարոզութիւնները հասնում էր կղերի
ու խաների ականջները, սկսւում էր հալածանք մեծ
բանաստեղծի և նրա աշակերտի դէմ, որոնք թող-
նում էին իրենց ապաստանած գիւղն ու աւանը և
մտնում էին հեռաւոր նահանգը։ Եւ այսպէս անվերջ
կտրեցին անապատներ, անցան լեռներ, բոբիկ ու
մերկ սրունքներով, խոնջած ու մաշւած անդամնե-
րով։ Ամեն տեղ նրանք իրենց երգերով ու ճառերով
նախատում էին անգութ բռնակալներին, անողորմ
դահիճներին, անկուշտ պաշտօնեաներին և նենգա-
գործ իւլէմներին, որոնք հարստահարում, ողբացնում
էին թշւառին, տառապեցնում անճարին։

Եւ թէև Հիւսնին ու Մուսան հալածիչներից ա-
զատւելու համար, թողնում հեռանում էին իրենց ա-
պաստարաններից, բայց նրանց մտքերը թշւառի գան-
կում ու սրտում տպւորւած մնում էր դարէդար։

Եւ հալածւածները թողին Իրանն, այցելեցին
Թուրան, վերջապէս հասան Բուխարա - այն մեծ քա-
ղաքը, որն ութ հազար փողոց ունէր, ութանասուն
հազար բնակարան, հազար հիւրանոց և երեսուն հա-
զար կրպակ.

Այս քաղաքում ապրող յիսուն բիւր ժողովուրդը
այդքան էլ աւանակ էր պահում իր ծառայութիւն-

ները կատարելու համար, թող բիւրաւոր դրամատե-
րը, Ջորիները, Նժոյգներն ու ուղտերը, որոնք Բու-
խարայից դուրս էին կրում և ներմուծում զա-
նազան ապրանքներ։ Այնքան մեծ էր Բուխարան և
այնքան ընդարձակ, որ քաղաք հասած կարաւանը մի
գիշեր պարիսպների տակ պիտի սպասէր և ապա հե-
տևեալ առաւօտ քաղաք մտնէր, որպէսզի կարողանայ
բեռը դատարկել և նորը բառնալ ու դուրս գալ։

Այդպէս էլ վարւեց Հիւսնի Շիրազին, նա գիշե-
րեց քաղաքի պարիսպների տակ և իր հաւատարիմ
աշակերտին քաղաք ուղարկեց, որպէսզի սա մի քիչ
հաց ու մածուն բերէ իրենց ընթրիքի համար և ա-
պա լուսադէմին քաղաք մտնելն։

Հիւսնի Շիրազին իր ապարօշը դրեց գլխի տակ
պարկեց, աբան երկծալ փռեց կէսը տակն արաւ,
կէսը վրան ու տարածւեց յոգնած մարմնի ոսկոր-
ներն ու մկանները հանգստացնելու տենչով։ Նա շատ
սպասեց, գիշեր եղաւ, կէս գիշերն անցաւ, քնեց ու
զարթնեց, դատարկ ստամոքսից տանջւած, բայց
Մուսայի-Սադըրը չեկաւ ու չերևեցաւ.

Մուսայի-Սադըրը Բուխարա մտնելուց յետոյ ըս-
կսեց քննել շուրջը։ Նա մտն եկաւ շուկան, հրապա-
րակները, մեծ մզկիթները, արքունիքը, ամեն տեղ
դարձեալ տեսաւ աշխատաւորը զրկւած ու հալած-
ւած, թշւառն անարգւած ու նախատւած։ Այնտեղ ևս
նոյն վիճակին էին մատնւած մարդիկ իրենց համա-
նմանների ձեռքով, ինչ դրութեան մէջն էին Շիրա-
զում, Իսֆահանում և Ղազւինում։ Բուխարայի մէջ
մարդը անարգւած ու արհամարհւած էր աւելի, քան
թէ նրա աւանակն ու դրամը և չքաւորի աղջիկնե-
րը աւելի էժան էին գնահատւում, քան թէ աւա-

նակների քուռակները, գառներն և ուլերը։

Յուզւած ու բորբոքւած Մուսայի-Սադըղը մի բանաստեղծական երգ ասաց իրան շրջապատող ժողովրդին, երկու կտոր պղինձ դրամ վարձ ստացաւ։ Նա անմիջապէս գնաց հացթուխի կողմ թաժայ հաց գնելու ու մածուն առնելու, որ տանէ և կշտացնէ վարժապետին։

Այդ միջոցին մի մերկանդամ սոված աղքատ նրան ձեռքն երկնցուց և հացի փող խնդրեց։ Մուսան իր սև փողի մէկը նրան տւեց յուսադրելով և քաջալերելով. այդ ժամանակ յանկարծ լսեց մուէզզինի էզանի ձայնը, որ երգում էր մինարէի բարձունքից յետինքի ժամը և միւսլիմաններին հրաւիրում էր ժողովարան աղօթելու. Մուսայի-Սադըղը կանգնեց, դառն մտքով պատած, մռայլւած ականջ դրեց ու լսեց իրար յետևից կրկնւող—«Ալլահ—էքբէրները»։ Լսեց, լսեց ու չկարողանալով կրքերը զսպել, ձեռքից գետին գցեց միւս սև փողը, ոտքը դրեց վըրան ու բարձր ձայնով ասաց.

—Ա՛, մոլլա, ինչ ես գորգոռում, ինչ ես կանչւռտում, քո երկնքում փնտրածը ահա այստեղ, ոտքիս տակն է։

—Ի՞նչ, ինչ, ինչ, գոռացին մի տասնեակ բերաններ, որոնք շրջապատել էին այդ տարօրինակ օտարականին։ Երկնքում փնտրածը քո ոտքի տակն է՞։

—Այո՛, մոլլա՛, այո՛, կռապաշտ, քո երկնքից կանչածը ոտքիս տակն է։

—Լռի՛ր, անօրէն քեաֆիր, դու հայհոյում ես, լռի՛ր, լռի՛ր ու պապանձւի՛ր։

—Խեղճ մարդիկ, մի՞թէ չէք հաւատում, որ նրա երկնքում փնտրածը իմ ոտքիս տակն է։ Այո, ես այդ փաստով կհաստատեմ։

—Քարեցէք, ով հաւատացեալներ, քարկոծի ուէք այս քեաֆիրին, նա Ալլահին հայհոյեց։

Այս ասաց ու առաջին քարը նա խփեց Թշւառ բանաստեղծի գլխին, որը թէև խելաբժուժ, կանգնած տեղից առանց շարժւելու նորից կրկնեց։

—Քո երկնքում փնտրածը ոտքերիս տակն է, մոլլա...

—Քարեցէք, հաւատացեալներ, քարեցէք այս անօրէնին, գոռացին ու այնքան քար խփեցին Մուսայի-Սադըղին, որ նրա մարմինը ծածկւեց այդ քարերով։

Եւ դեռ քաղաքի այլևայլ ծայրերից վազում էր ոչխարամիտ ամբոխը իր պարտքը կատարելու, իր քարը գցելու միւէզզինի կանչած Ալլահին անարգողին։ Այդ քարերի կոյտից մի թումբ կազմւեց, որը թքի ու նախատինքի վայր դարձաւ խուժանի համար։

Հետևեալ առաւօտ վաղ զարթնեց Հիւսնի Տիբաղին և անչափ զարմացաւ, թէ ինչի հաւատարիմը չվերադարձաւ։ Նա բարձրացաւ, գցեց գզգզւած աբան ուսերին, ապարօշը դրեց գլխին, հագաւ մաշւած քօշերը և գաւազանին յենւած կամաց կամաց քայլերը ուղղեց դէպի քաղաք։ Նա գնում էր դողդոջուն քայլերով, գնում էր յուզւած հոգով, անդադար աչքերը չորս շրջելով աշակերտին էր փնտրում. բայց սիրելի աշակերտը չկար ու չկար։ Տրջեց շուկան, ման եկաւ հրապարակները, մտաւ ժողովարանները, պարտէզները և թէյատները, բայց Մուսայի-Սադըղին չգտաւ։

Երբ ճարն հատած սկսեց հարցն ու փորձը, ամենքն էլ ասում էին, թէ այդպիսի մարդ չէին տեսել։ Նա սովորութեան համաձայն մտաւ հասարակաց

այգին, մեծ մզկիթի գաւթում, ունկնդիրներին մի քանի ճառով հետաքրքրեց և եղած առաջարկների համաձայն մի քանի ինքնաբուղխ բանաստեղծութիւններ ասաւ, գոհացրեց շատերին և նրանց նախաճաշին ու ճաշին մասնակցեց։

Բայց չքնաղ բանաստեղծը կորցել էր իր անդորրութիւնը։ Նրա դէմքից չէր հեռանում տխրութեան քողը և մռայլ դէմքը մթագնում շրջապատողներին։ Մինչև անգամ չէր կարողանում ախորժակով մասնակցել ընդհանուր սեղանին, որտեղ ամեն մարդ ընտիր պատառ էր առաջարկում օտարական մեծ բանաստեղծին։

Երբ ճաշը վերջացաւ, մեղրով օշարակ բաժանեցին, բուխարացի գիտակներից մէկն ասաց.

—Միրզա Հիւսնի աղա Շիրազի, ինչո՞ւ ես տըխուր, ինչո՞ւ մութ ամպերը չեն հեռանում քո ճակատից և հոգեկան տանջանքները պատել են սիրտդ։

—Երէկ իրիկուն աշակերտիս ճամբեցի քաղաք, որ քիչ հաց բերի պարսպի տակ ընթրելու և նա չը վերադարձաւ այլևս։ Նրա բացակայութիւնը հոգիս տանջում է, փնտրում և չեմ գտնում։ Արդեօք ձեզանից ոչ ոք նրան չի՞ տեսել։

Ամենքը բացասական նշան արին, ուսերը թօթւեցին և դէմքերը ծամռեցին, միայն մի մարդ ասաց.

—Աղա Միրզա Հիւսնի, քանի՞ տարեկան էր աշակերտդ, և առանձին ի՞նչ նշաններ ունէր դէմքին։

—Քսանը հինգ տարին նոր էր բոլորել. բարձրահասակ, նրբակազմ, լայնաթիկունք երիտասարդ էր։ Պեխերը նոր-նոր էին գալարւում, իսկ կզակը զարդարւած գանգուր սև քնքուշ մօրուսով։ Ապարօշը կապուտ էր, աբան Մուսուլի դւթիկ մազից հիւսւած, փայլում էր սաթի նման։

—Այո, ճիշտ նա էր, դրան երէկ քարկոծեցին։

—Քարկոծեցի՞ն, ո՞րտեղ, ինչո՞ւ համար։

—Նրա համար, որ հրապարակից սկսեց հայհոյել Մուէզզինին, որը յետինքւան ազան էր կարդում և հաւատացեալներին աղօթքի էր հրաւիրում։

—Սխալ կլինէք, նա այնպէս չէր դաստիարակւած, որ մարդու հայհոյէր։

—Ես իմ ականջովս լսեցի, ինչ էք ասում Միրզա, մի՞թէ ես ուրիշներին աւելի պիտի հաւատամ, քան թէ ականջներիս։

—Ի՞նչ ասաց, ինչպէս հայհոյեց։

—Նա գոռում էր, Մուէզզին,- «Քո երկնքում փնտրածը իմ ոտքերիս տակն է»։ Եւ քանի քանի անգամ կրկնեց այս խօսքերը։

—Այդտեղ ի՞նչ հայհոյանք կայ, բարեկամ, դա հայհոյանք չէ։ Արդեօք նայեցիք, ինչ կար ոտքի տակ։

—Մուէզզինը մինարէից Ալլահին էր կանչում, նրան նախատելը մի՞թէ հայհոյանք չէ։

—Ոչ, նա ուրիշ միտք ունեցած կլինէր։ Պէտք էր նրա ոտքի տակ նայել։ Ո՞րտեղ է նրա քարակոյտը, գնանք ու նայենք։

—Գնանք ու նայենք,—ասացին բոլոր ունկնդիրները, որոնք հմայւած էին Հիւսնի Շիրազիի ճառերով բանաստեղծութիւններով։

—Գնանք ու տեսնենք, գոռում էին ամեն կողմից։

—Գնանք, տեսնենք, թէ ինչ կար ոտքերի տակ։

Բազմութեամբ հաւաքւած գնացին ու բոլորւեցին Մուսայի-Սադըգի քարակոյտի շուրջը, որտեղ երիտասարդներն սկսեցին քարերը յետ գցել։ Մուսայի-Սադըգի ոտքը դրած էր պղնձի դրամի վրայ, որը բարձրացնելու պէս Հիւսնի Շիրազին յուզւած ասաց.

—Բարեկամներ, հաւատարիմ աշակերտս, Մու-

սայի-Սադըղը երբէք չէր կարող մարդ ատել և իր նմանին նախատել ու հայհոյել։ Նա ցանկացել էր Բուխարայի կոյր ամբոխին հասկացնել, թէ ժողովարանների պաշտօնեաները ոչ թէ երկնքի ու երկրի Արարչին են ծառայում, այլ այդ սև փողին, որը ժողովրդի բարեկամ բանաստեղծը տրորում է իր ոտքերի տակ։ Եթէ ժողովրդին սիրէին այդ վարձկանները, եթէ Ալլահի պատկերով ստեղծւած մարդը յարգւէր այդ ժանգոտ փողապաշտներից, Բուխարայի փողոցները չէին թափառիլ բիւրաւոր մերկ ու տկլոր մուրացկաններ, իրենց աղիողորմ ձայնով կարեկցութիւն մուրալով ունևորից։ Նա ուզեցել էր այդ թշւառներին հասկացնել, թէ նրանց Ալլահի և շէրիաթի անունով կեղեքող, կողոպտող և սգացնող իւլէմներն ու բէգերը ոչ թէ երկնքի Ալլահի սիրու համար են կատարում այդ, այլ իրենց ագահութիւնն ու շռայլութիւնը բաւականացնելու համար։ Երկնքի ու երկրի Արարչի սէրը միայն կարող է սիրեցնել տալ այն բոլորին, որոնց մէջ շնչում է նրա հոգին։ Այո, մօլլայի, մուէզզինի, բէգի ու խանի երկնքում փընտրածը և երկնքից ուզածը այն սև փողն է, որ մարդասէր բանաստեղծը տրորել է իր ոտքերի տակ։

—Հէյ վա՜խ, հէյ վա՜խ, հառաչեցին շրջապատողները մռայլած և խռոված ձայնով։

—Ձեր ախն ու վախը արդէն շատ ուշ է, ասաց յուզւած Հիւսնի Շիրազին և շարունակեց իր ճանապարհը։

ԺԴ.

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Մութ աստղաշատ պարզ և ցուրտ գիշեր էր։ Խաւարը տիրել էր քաղաքին։ Փողոցների լոյսը այնքան աղօտ էր, որ անցորդը չէր կարող զանազանել գետնի ցեխն ու ջուրը, սառցի կտորներն ու թափւած քարերը։ Բոլոր կրպակներն ու խանութները փակւած էին, ոչ մի լոյս չէր ցոլում նոյն իսկ տների լուսամուտներից, որոնք ներսից և դրսից փեղկերով ծածկւած էին։

Ամեն մարդ քաշւել էր իր տունը, փակել էր դռները և անձնատուր եղել իր ընտանիքի հոգսերի խնդրին։ Ունևորը բազմել էր ճոխ սեղանի, չունևորը տղոց գլխին գցել էր վերմակը, շնթռկեցրել, ինքն էլ հառաչում էր։ Մի քանի լօթի տղաներ սահնակներով փողոցներն էին չափչփում և երբեմն երբեմն խռովում մեռելային լռութիւնը։ Տեղ տեղ տներից դաւուլի ու զուռնի խուլ ձայն էր լսւում և երբեմնակի էլ գիշերապահների սուլոցները։

Այդ մթի մէջ հին գերեզմանոցում ժողովուել էին գամփռ շները, առաջները գցել էին մի մեծ ջանդակ և գրմռալով կրծում էին։ Շներից մէկը ատամներով ազդրի մսից պատառ կտրելիս, յանկարծ ժանիքը փշրուեց ու դարձաւ ընկերին հարցրեց.

--Ախպէր, էս գոմէ՜շ է, ինչ է, որ էսպէս ամուր միս ունի։

—Է՜հ, դուն էլ, ինչ գոմէշ, ինչ գեաւա, էս տեղոց տեղ մի մեծ փիղ է։

—Ախպէր, ասաց երրորդը, ինչ փիղ, ինչ մամոնայ, էնոնց մսի համը ես առել եմ, էս մէկը ուրիշ բան է, խելքս չի հասնի։ Տեղոց տեղ սար է, ոսկորները երկաթի պէս՝ չի կոտրիլ, ջլերը գերանի պէս՝ չի ճեղքի, մսերը քարի պէս՝ չի ծամուի։ Շատ ու քիչ բարեկենդան էրել էի, հըմը էսպէս սեղանի հէչ դէմ չէի առել։

—Ախպէր, փորը լցած է փլաւով, հըմը ի՜նչ փլաւ, վրէն բոչկով գինի խմես, կուլ չի էրթա, հատիկները գիտես թէ քար է, եղի տեղ էլ վրէն կիր է լցած։ Կիրը ջիգեարս կվառէ, հըմը իշտահս կբանայ, կուզուեցնէ...

—Ջիգրի համը տեսա՞ր, հարցրեց մի ուրիշը, ախպէր, գիտես թէ աւազեղէնի սարը քանդել են, աւազը լցրել են փլաւի հետ էս անաստունի փորը։

—Ախպէր, երկու կտոր ջիլ էի ճարել, ուզեցի թէ կուլ տամ, բգիս կայնաւ, քաշեցի, քաշեցի, տէյմօր հանեցի, հոգիս դուրս եկաւ։

—Ախպէր, ոսկոռ չէ, թամամ յերկաթ, յատկէքս փշրուեց, հըմը էնքան համով է, որ էլի չեմ կրնայ յետ քաշուի, սիրտս կէրի, հըմը էլի կուզէ ուտել ու կուլ տալ։

—Ախպէր, էսպէս էլ փլաւ էղնի, հատիկները

տեղոց տեղ քարի մանրուանք, հըմը ինչ կսես, շաքրից անուշ է։ Կուլ չի էրթայ, մարդու խրթլաղը կը քերքրէ, հըմը որ փորն իջաւ, պրծաւ, մեղր ու կարագ կդառնայ։

—Է՜հ, հոգիներդ կսիրեք, ձէներդ կտրեցէք ու ձեր գործին աշէք, թէ չէ մայլի շները կիմանան, վրայ կթափին, ձեռքերէս կխլեն։

—Վա՞խ է գլխից անցէ, որ գայ ու մեր բակը հաչէ, տեղոց տեղ բզիկ-բզիկ կենենք։

—Տօ հաչոցի ձէն որ իմանան, դուռ ու դրկից դուրս կթափին, ջանդակը մեր ճանկերէն դուրս կը քաշեն։ Հոգիներդ կսիրեք, անձէն, անծպտուն կուլ տուէք, փառք տուէք Աստծուն։ Տներդ քանդուի, էլ ինչ կուզէք։

—Հաջի ախպէր, էս բողարին խելք հասկցուր, անջախ սուկին պոկեցի, որ ուտեմ, բերնէս քաշելն ու կուլ տալը մէկ էղաւ։

—Էլի քաշէ, դու ջահել ես, յատկէքդ չալիդից էլ ամուր է, մի ուրիշը պոկէ, ո՞վ է քեզի դէմ ընկնողը։ Ընկերութիւն է, էդոր հըմար ղալմաղալ հարկաւոր չէ։

—Ախպէր, հերիք ձէնձնէք, հոգիներդ կսիրեք, գրմռոցներն ու հաջոցները թողէք։ Ձէներդ կտրեցէք, հալալ բարեկենդան էնենք։

—Լաւ կսես, հաջի ախպէր, էս ջահէլները բան չեն հասկնայ, լաւն ու գէշը չեն ջոկէ։ Ախպէր, սարի պէս ջանդակը առաջներդ գցած է, կերէք, ինչքան կուզէք, ո՞վ է ձեր բերանը կապողը։ Թէ դուք իրար խալալ չտաք, ո՞վ կրնայ մեզի խալալ տայ։

—Հըմը փլաւ էր հա՛, հատիկները քարի պէս ամուր էր, հըմը մարգրտից անուշ։

—Տօ ինչ զարհումար կուզէ էղնի, լաւ է, գէշ

է, ձեր բախտն է, ձէնները կտրեցէք, գործերուդ աշէք։

—Ախպէր, ինչ ձէնս կտրեմ, քանի որ լաւ Թիքայ պրծուցի, Բօղարը քաշեց կուլ ւուեց։ Ես էնոր ւուէյմօր փորը չԹափեմ, չեմ դադարելու... Հաֆ... հաֆ... հաւար...

Մահլի շները վրայ Թափւեցին, կռիւը պրծաւ։ Իրար բզկտեցին, բայց բերանները Ջանդակից չը վերցուցին։

Մինչև լուսացաւ, Ջանդակն էլ հալեցուցին, կմախքը անկւած մնաց...

ԺԵ.

ՎԻՇԱՊ

ՀԷՔԻԱԹ

Ժամանակով, հսկաների դարում, Հիմալայի բարձունքում ապրում էր ահեղ վիշապը, որի համբաւը սարսափ էր ափռել ողջ աշխարհի դիւցազների սրտերում անգամ։ Ոչ միայն նշանաւոր քաջերը չէին յանդգնում նրա դէմ կռւի դուրս գալ, ոչ միայն հերոսների գնդերը սիրտ չէին անում խմբովին արշաւել վիշապի բնակավայրը, այլ նրա սահմաններից հաւաչելով խոյս էին տալիս Թէ դիւցազները և Թէ դևերը։ Այս երկիրը շրջապատող լերկ ու սրակող ապառաժները ոչ ոքի անցք չէին տալիս վիշապի իշխանութեան սահմաններին մօտենալու, ոչ մի նաւ նրա գետերի ժայռոտ ափերում նաւամատոյց ու նաւահանգիստ չէր գտնում խարսխելու, ապրանք տալու, ոչ մի կարաւան կածան կամ մԹերք վերցնելու, ոչ մի կարաւան կածան չէր գտնում նրա մութ անտառներից, սիզաւէտ հովիտներից և խորխոր ձորերից անցնելու։ Այս երկրի անհունԹաց գետերը, օձապտոյտ հեղեղատները, ահեղ ջրվէժները և փրփրալի սահանքները քշում, դագոչ Ջրվէժները և փրփրալի սահանքները քշում, յետ էին դարձնում ծովից բարձրացող նաւակները, լաստերն ու մակոյկները։ Նրա բարձունքից փչող հողմերը, մռնչող քամիները, սարերի կողերով մագլցող քարայծներին, վիԹերին ու նապաստակներին

էլ գլորում էին անդնդախոր ձորերը, փշուր փը-
շուր անելով անասունների ոսկորներն անգամ։

Այս անհանդուրժելի վիշապի մասին այն դարերի
վիպասանները, գուսանները, անթիվ առասպելներ են
պատմել, անհամար ու յեղյեղուկ դիւցազներգու-
թիւններ են երգել, նկարագրել և բորբոքել են ար-
կածախնդիր հերոսներին, գաղափարական անհասա-
նելուն ձգտող անմահ քաջերին։ Այս գուսանները բա-
ցատրում էին, որ աշխարհ տարածւող հողմերը ըն-
կիզքն են առնում վիշապի եօթը զոյգ ռունգերից,
որոնք տարածւում են եօթը ուղղութիւնով ողջ եր-
կրի շուրջը զովացնելու և հովացնելու տապ արեգի
տօթի մէջ տապակւածներին։ Քաղցրաշունչ զեփիւռը
հողմերի, փոթորիկների և մրրիկների է փոխարկւում,
ինքը վիշապը բարձրանում է ամպերի գագաթներին,
եթէ նա կատաղում է, բորբոքւում, ահեղագոչ որոտ-
ներով, փայլակներով ու կայծակներով այրում, մըր-
կում է պատահածներին, մինչև սրտմտութիւնը մեղ-
մում է, թուլանում է նրա բարկութիւնը։

Այդ գուսանները թւում էին վիշապի եօթը գըլ-
լուխները, եօթը զոյգ հրացայտ աչքերով և ամեն
գլխի վրայ եօթնական ահեղ բերաններով։ Ինչպէս
նկարագրում էին, նրա ցռուկներից բղխում էին սառ-
նորակ, ականակիտ, անապակ, անուշ աղբիւրներ, ո-
րոնք սահում, գլորւում էին ջրվէժների նման խոր-
խոր ձորերը անվերջ խոխոջիւններով, յագեցնում,
թարմացնում էին կենդանական և բուսական աշխարհը։
Վիշապի շրթունքներից հոսում էր կաթը, կովի տը-
ռզած կուրծի պտուկներից ցայտող շիթերի նման, ո-
րոնք դիեցնում ու սնուցանում էին այդ աշխարհի
թռչունն ու կորիւնը, կոդեռն ու խօջկորը, հորթն ու
քուռակը, ուլն ու գառը, մանուկն ու ծերուկը և կա-

թի առատութիւնից մրգւած կարագով ու իւղով դեղ-
ւած էր ողջ երկիրը։ Նրա դնչերից ծորում, ապառա-
ժի նման լերկ կզակից, կրծքից կաթիլ կաթիլ գլորւում
էր հովիտներն ու ձորերը ցօղանման սպիտակ, սաթի
նման դեղին ու փայլուն մեղրը, որը յագեցնում էր
անխուշտ գազաններին էլ, մարդերին էլ և քաղցրա-
ցնում էր ահաւոր գետերի, անհամար լճակների վճիտ
ջրերը։

Նրա պռօշներից գեղալի սահում էր նեկտարը և
փրփրալի թափւում, ինչպէս հնձանի խաղողակից՝
դուրս էր վիժում կենդանարար կարմիր գինին և
զւարթացնում, բոցավառում էր թորշոմած այտերն,
արագացնում չորացած ջղերի արիւնի շարժումները
և հանգած սրտերի տրոփիւններն անգամ։ Լեռնագա-
գաթի նման կոնաձև ցցւած շնաձև կզակների երախից
ժայթքում էր բոցավառ կուպրը, որից բարձրացած
ծուխը գնում միաւորւում էր ամպերին, իսկ բոցա-
փայլ կուպրի կաթիլները անձրևի նման շաղ էին գա-
լիս երկրի վրայ, խանձում, դաղում էին այդ աշխար-
հի անսովոր բոյսն ու կենդանութիւնը։ Ապառաժների
լանջերի ու սարոտների պատառւածներից ցած
գլորւող ջրերի նման, նրա պնչերի ճեղքերից դուրս
էր շպրտւում նաւթը, որից բարձրացած և օդի մէջ
կուտակւած գազերը կուպրի բոցերին ընդհարւելով,
զարհուրելի որոտներով այրւում և զարհուրեցնում
էին կենդանական աշխարհը։ Հրաբխաձև մռութներից
շատրւանի նման դէպի երկինք էր ժայթքում ծծումբ
ու շիկացած նիւթեր, որոնք բոլորաձև երկրի վրայ
անդրադառնալով այրում, քարացնում էին պատահա-
կան ամեն կեանք։

Միայն ընիկները վարժւել էին այս երկրի օ-
դին ու ջրին, սոսկալի կրակներին, կուպրի անձրև-

ներին, զարհուրելի գազերին։ Նրանց համար այդ բոլոր պատահարները սովորական էին, երկիւղ չէին պատճառում և այդ ամենն իրենց համար երկնային ողորմութիւն, պարգև էին ընդունում։ Այդ երկրի ազգաբնակութեան Աստուածը, արարիչը, կենսատուն, հրէշն ու հոգէառը, պահապան ու պատուհասը Վիշապն էր։ Նրան էին պաշտում, նրա պատգամներն էին լսում, նրա հրամաններին հպատակւում և նրան օրհնաբանում էին։ Եւ գոհ էին իրենց վիճակից այդ կիսավայրենի, կիսաքաղաքակիրթները։

Վիշապի հայրենիքի բար ու բերքերի առասպելական առատութիւնը և հրաշալիքները որքան որ բորբոքում էր շրջակայ ազգերի նախանձը, որքան որ գրաւում էր նրանց միտը, ուշքը, հրապուրում նրանց հոգին, նոյնքան էլ այդ երկրի սարսափները՝ այրած կուպրի անձրևը, նաւթի գազից առաջացած բոցային հեղեղները, երկնքում ամպանման արևի լոյսը բռնող ծծումբի և շէկացած ժայռի կտորների բոցերը, կայծերն ու ծուխը և դրանց կարկուտի նման երկրի վրայ թափւիլը, սաստեցրել էր չարաչք դրացիներին, որոնց գիտնականներն ու մեծամեծները երդւում էին առել իրենց հպատակներից և օրէնք էին դրել, երբէք որև է երթևեկութիւն անգամ չունենալ, չը կատարել վիշապի սահմաններում. կրակով այրել ողջ ողջ այն անձերին, որոնք յանդգնէին ժողովուրդը վիշապի դէմ պատերազմի գրգռելու, նրա երկիրը գրաւելու համար։ Այդ օրէնսդիրները իրենց այս պատգամները դրժողների դէմ անէծք էին կարդացել և նզովքներ սահմանել։

Բայց աշխարհում արգելուածից հրապուրիչ, անհնարինը հնարաւորելու մտքից աւելի գիւթիչ, անյայտը ըմբռնելու մտածութիւնից աւելի գրաւիչ,

անծանօթը, անձամբ տեսնելու տենչից աւելի ըղձալի, գաղափարի ետևից ձգտելու աւելի հաճելի, նըպատակին հասնելու կռւից դուրեկան և իդէալի համար զոհւելուց աւել վսեմ ինչ բան կարող է լինել։ Միթէ կարելի է արձանի նման լսել գուսաններին և վիպասաններին, նրանց երգերն ու վէպերը և կաշկանդել մարդկային մտքերը, որ չը խորհեն, չը խուզին վիշապի երկրի ու նրա հրաշալիքների առասպելական աշխարհը։

Դարեր դարերի ետևից սահում էին, քաջեր քաջերի ետևից գլորւում էին վիշապի պետութեան խոր խոր ձորերի և անդունդների մէջ, մոխիր կամ ապառաժ դառնում, հերոսների նաւերը նաւթի ու կուպրի լճակներում սուզւում էին, այրւում։ Դիւցազների արշաւանքները թէև խռովում էին վիշապի անդորրութիւնը, բայց այդ երկիրը մտնողները էլ չէին վերադառնում։ Եթէ յաջողւում էր հերոսներին, դիւցազներին քաջութեամբ կռւել վիշապի հետ, կտրել նրա գըլուխներից մէկը, սրա փոխարէն իսկոյն եօթը գլուխ էին բարձրանում և կլանում բոլոր թշնամի բանակները։ Արշաւողների կորուստը որքան որ զարհուրելի էր վերջանում, այնքան բորբոքւում էր վիշապին ընկճելու տենչանքը։ Ինչքան քստմնելի կտտորածներով և տանջանքներով կուլ էին գնում խիզախ մարդիկները, այնքան աւելի յուզւում, հրապուրւում էին հերոսների հոգիները, որոնք դարերի ընթացքում նորանոր ծրագիրներ կազմելով, դիւական մեքենաներ հնարելով և ճիւաղային զէնքերով սպառազինւած, մահն աչքերն առած գնում էին հետևելու իրենց նախորդներին և թաղւել նրանց ոսկորների մօտ։ Ժամանակի շրջանը պարբերաբար գունդագունդ զոհեր էր բերում Վիշապին, որ առանց սահմանից դուրս

դալու կլանում էր, կլանում առանց յագենալու առանց դժւարանալու։

Եթէ պատահում էին դէպքեր, որ այս յարձակւող խմբերը կարողանում էին մտնել Վիշապի սահմանները, բնակութիւն հաստատել, կարճ միջոցում կամ զոհ էին գնում երկրի բնական արհաւիրքներին, և կամ կուլ էին գնում բնիկներից ու տարրալուծւում։ Եւ բիւրաւոր ու միլիոնաւոր հզօրները, հուժկուները դարերի ընթացքում հնարք չը գտան Վիշապին նուաճելու, նրա ույժը կաշկանդելու, նրա ոգին ընկճելու և նրա երկիրը տիրապետելու։

Ինչպէս Վիշապի երկիրը, նոյնպէս և ինքը՝ Վիշապը կոյս էին մնացել դարեր ու դարեր։ Նրա խելքը, միտքը կենդրոնացած էր իւր ապառաժի սահմանները հովանաւորելու և պահպանելու վրայ. Նրա տենչանքը իրեն վրայ յարձակւողներին ջախջախելն էր, նրա համար իւր տիրապետութիւնից դուրս էլ ուրիշ աշխարհ գոյութիւն չունէր։ Նրա ամբողջ խղճն ու իդէալը իւր հովանիի տակ ապաստանածների բարեկեցութիւնն էր։ Ինքը՝ Վիշապը ոչ կարիք ունէր, ոչ էլ կարօտ էր որևէ առարկայի, իրենից բղխած բարիքով լիացնում էր ամբողջ աշխարհը։

Այդ ժամանակ ամբողջ Ասիային տիրել և հրամայում էր Բողդիխանը, որին երկրպագում էին Խաղաղականից մինչև Պարսից ծովը, Սառուցեալ Ովկիանից մինչև Հնդկականի ափերը ապրող բոլոր ազգերն ու ցեղերը։ Ասիայի մի ծայրից մինչև միւսը՝ լայնքսին թէ երկանքսին, բոլոր ցեղերը խունկ էին ծխում, զմուռ էին բուրում Բողդիխանածնի արձանների առաջ, որի պատգամները, որպէս երկնային պատուիրան սաստանեցնում էին իշխանապետներին, թագաւորներին անգամ։ Միայն Հիմալայի բարձունքում

ապրող Վիշապը և նրա հովանու տակ ապաստանողները իրենց համանման հողածնին աստուածորդի դաւանելու չէին դաստիարակւած և չէին ստիպւած երկրպագել այդ մահկանացուների անդրիներին, խընկարկելով Բողդիխանածնի պատկերները։

Այս հարիւրաւոր միլիոններով մարդերից երկրպագւած Բողդիխանածինը թշւառ, աշխարհի կինարմատներից ամենաանբաղդ մայրն էր, որովհետև այնքան զօրով էր տածում դէպի իւր միակ զաւակը, որ իսկապէս գերի էր դարձել, ստրկացել էր այդ գեռահաս մինուճար որդու՝ Բողդիխանի քմահաճոյքներին։ Գիշեր ցերեկ թշւառ մօր ուղեղը ամբողջապէս զբաղւած էր իւր այդ զաւակի ապագայով, որ նրան հասցնէ իմաստութեան, ճոխութեան և փառքի այն կէտին, ուր հասնելու ձգտել, միայն երազել են նրա յաջորդները։

Բողդիխանածինը այնքա՜ն գեղանի, այնքա՜ն սքանչելի, այնպիսի՜ դիւթիչ կազմւածք ունէր, այնպիսի հեզ և հրապուրիչ աչեր, այնպիսի նրբին քիթ ու քնքոյշ շրթունքներ, ծնօտ ու կզակ, բարձր վիզ, լայն ուսեր, վարդիթերի նման ողորկ ու ցոլուն մորթ, որ առաջին հայեացքով գերմարդկային, հրեշտակային, երկնային գոյութիւն էր թւում ամեն մի մահկանացուի աչքերին։ Նրա քնքոյշ հագուստն ու կապուստը, նրա մազերի խոպոպիկների, հիւսւածքի դասաւորանքի արդն ու զարդը, նորա շարժւածքը, ժպիտը, գրաւիչ ձայնը, աչքերի թերթւածքը, հայեացքի սըլաքները և շրթունքի հպումը հպատակեցնում էին գազանային աչքերը, խոնարհեցնում էին վայրենի գլուխները, պապանձեցնում էին անսանձ լեզուները, բաբախեցնում էին գրանիտեայ սրտերը, հառաչե-

ցնում էին խեցեղէն հոգիները, մագնիսացնում էին պողպատեայ ջղերը և հրապուրում, լացացնում էին ապառաժներին անգամ։

Բողդիխանածնի միածին զաւակը, որին երկրպագում էին համանման դէպքով եօթը հարիւր միլիոն մարդ, իւր մատաղ հասակում՝ տասնևեօթերորդ տարում, թոքախտով էր վարակւել, խօթացել էր։ Երկրի—Ասիայի ամեն կողմից բժիշկներ էին հրաւիրւել, որ դարմանեն, ազատեն զարհուրելի մահի ճիրաններից աստւածորդուն, բայց ճար չէին գտնում, դեղ չէին իմանում, յուսահատ վերադառնում էին իրենց ծննդավայրը, որ Բողդիխանածնի վշտին ականատես և բարկութեան զոհ չը դառնան։ Թէև ամեն օր զանազան աշխարհներից հարիւրաւոր բժիշկներ էին վարում գործակալները դէպի մայրաքաղաք, բայց օգնութիւն գտնելուց յուսահատւել էր թշւառ մայրը։

Որպէսզի որդու գահը ապահովէ, Բողդիխանածինը պետութեան ղեկը ձեռք առնելուն պէս՝ կոտորել էր տուել աստւածորդու զարմի բոլոր արու և էգ անդամներին, մնացել էին կենդանի միայն ինքն ու որդին։ Հիւանդ զաւակին արգելում էին ամուսնացնել, իսկ անժառանգ որդուն եթէ մահը ղըրկէր, պետութեանը կործանում էր սպառնում։ Այն ինչ կրօնական օրէնքները արգելում էին Բողդիխանածնին կրկին ամուսնանալ, նորից զաւակ ունենալու մտածութեան համար անգամ, կարող էին անըրգ-գայ մանդարինները իրենց քարասիրտ դատողութեամբ նրան մահւան դատապարտել։ Թշւառ մայրը այնքան էր սիրում իւր միածնին, այնքան էր գրաււած զաւակովը, որ քիչ էր մնում սոսկալի վշտից ինքն էլ որդու ախտին տիրանար։ Իսկ մանուկ զաւակի թո-

քերը օրից օր նւազում էին, օրից օր թուլանում, մաշւում։

Մի օր մի բաղդախնդիր հէլլէն բժիշկ ահաւոր ճանապարհորդութիւնից յետոյ, եկաւ մտաւ չինական արքունիք, զննեց, քննեց հիւանդին, հարց ու փորձեր արաւ և խորհուրդ տւեց, որ Բողդախանին փըրկելու համար, ուխտի տանեն նրան Վիշապի բարձրավանդակը, հնար գտնեն հիւանդը սնուցանել այդ հրէշի շրթներից հոսած կաթով և դնչերից ծորած մեղրով, այդ երկրի լճակներում լողացնել, այնտեղի անտառներում շրջեցնել, որ Բողդիխանը ազատւի խօթութիւնից։

—Բացի այս ուրիշ հնար չը կայ, ասաց էսկուլապի աշակերտը Բողդիխանածնի ներկայութեան և սառնասիրտ դուրս եկաւ։

Նախարարները, մանդարինները ժողով արին, բայց միջոց չը գտան, թէ ինչպէս Բողդիխանին ուղարկեն այդ զարհուրելի և վտանգաւոր լեռները։ Վըշտաբեկ մայրը ետ կանչել տւեց հէլլէն բժշկին և ասաց։

—Մեծ լոխման, ինչպէս միածնիս փրկութեանը դեղ ցոյց տւիր, նոյնպէս հնար գտիր, թէ ինչպէս կարողանամ այդ երկիրը մտցնել զաւակիս, որտեղ անգուստ վիշապի շնչի արտավիժած կրակի բոցերից, ամեն րոպէ վտանգի կարող է ենթարկւել աշխարհի երկրպագութեան կենդրոնակը։

—Բողդիխանածինը թող շատ ապրի, ասաց բըժիշկը, այդ երկիրը անմատչելի է քաջամարտիկներին, բայց ձեր հայեացքի առաջ ո՛չ միայն կը խոնարհի, կը հպատակւի, կը սարկանայ անյաղթելի, աննւաճ վիշապը, այլ նա ձեր տեսքից դիւթւած, ձեր սիրտը գրաւելու, իւր ներքին հուրը հովացնելու հա-

մար, կը հանգչեցնէ արտավիժած կուպրի, նաւթի ու ծծումբի հեղեղները, կը երկրպագէ ձեզ, կը խոնարհի մինչև ձեր ոտքերը։

— Անզգամ խաւարածին, պապանձւիր, ասաց Բոզդիխանածինը, առաջարկդ ոչ միայն անազնիւ, այլ մինչև անգամ սրբապիղծ է, որի համար սրբազան պարտք եմ զգում քեզ ողջ ողջ այրել տալու։ Փուչ կենդանի, ինչպէս յանդգնեցար Բոզդիխանածնի կուսութեան, անմեղութեան դէմ այդպիսի յանցանք մտածել, մանաւանդ թէ յայտնել...։

— Ո՛վ Բոզդիխանածին, ներէիր մահապարտիս, քանի որ յանդգնեցայ ականջներդ յուզել գարշելի ձայնովս, մեղսալի բառերովս։ Հազար անգամ ներողութիւն եմ հայցում մեղքիս համար։ Բայց համարձակւում եմ դարձեալ աղերսել, որ բարեհաճէք ձեր հայեացքը չը դարձնել ինձնից, մի քանի րոպէ ևս ձեր լսելիքը սրել և ուղղել ձայնիս հոսանքին լսելու պաղատանքս, որը ոչ թէ կեանքս փրկելու, այլ մատաղահաս զաւակիդ թոքերը բուժելու, նպատակին հասցնելու համար եմ շատախօսելու։ Թող իղձս կատարւի, առողջանայ Բոզդիխանը, վիրալի սիրտդ թող բացւի, փարատի ցաւդ, վիշտդ, դէմքիդ վրայ բուն դրած թախիծը, ո՜վ Բոզդիխանածին, և դադարի այդ քնքոյշ շրթունքներիցդ կիզիչ հառաչանքները, ես կը հասնեմ փափագիս, մինչև անգամ եթէ այս սրահից դուրս չեկած դատապարտես, որ աչքերս կապոյտ երկինքը դիտելուց և թոքերս անապակ օդը ծծելուց իսպառ դադարին։

— Մայրական սէրս, դէպի տենչալի նպատակիս, վեհ գաղափարներիս ցանկող սիրտս ստիպում են, որ ականջս ուղղեմ գաղիր գրգռոցիդ։ Սա՛, բայց կարճ ու հակիրճ։

— Ո՛վ Բոզդիխանածին, երկրպագում եմ քեզ հոգուս խորքերից ծնկաչոք և աղերսում, որ զաւակիդ փրկելու, տենչանքիդ հասնելու համար, զիջէիր գոնէ լոկ ժպտալ, մի միայն քաղցր հայեացք ուղղել վիշապին։ Ձևացրէք, թէ անտարբեր չէք դէպի նրա վառ զգացումները։

— Լռիր, խաւարածին, պապանձւիր, սևահոգի, Բոզդիխանածինը չի կարող երբէք կեղծել...։ Տարէք, բանտ գլորեցէք այս ճիւաղին, ասաց բոցբոքւած, վշտաբեկ մայրը և դարձաւ առանձնարանը։

Հէլլէն բժշկին թէև փակեցին զնդանում, բայց շուտով խորհրդաւոր հրաման ստացան, որ նրա վրայ յատուկ խնամք տանեն։ Հէլլէնը զգաց, որ հասել էր նպատակին, Բոզդխանածինը պիտի գործադրել տար իր ծրագիրը։ Թշւառ մայրը շատ մտածեց, անչափ հառաչեց, արտասուեց, և աղիողորմ ողբաց, բայց անճարացած ժողովի հրաւիրեց նախարարներին, փոխարքաներին, խորհրդական մանդարիններին և նրանց յայտնեց բժշկի ծրագիրը։

Թէև մանդարիններից ոմանք խորհուրդ տւին, որ այդ բաղդախնդիր հէլլէնին չը լսեն, վտանգի չը ենթարկեն մօր պատիւը, Բոզդիխանին, բայց նկատելով Բոզդիխանածնի բժշկի առաջարկութեան կողմը հակւիլը, չը համարձակւեցան պնդել իրենց կարծիքի վրայ։ Եղան այնպիսի ժողովականներ, որոնք մինչև անգամ կասկածեցան ինքնակոչ խորհրդական բժշկի գուշակութիւնների վրայ. բայց խնդիրն այնքան փափուկ էր, պատասխանատուութիւնը այնքան ծանրակշիռ, որ իրենց համոզումները չը փաստաբանեցին։ Թէր և դէմ վիճելուց յետոյ, Բոզդիխանը առողջացնելու, ցեղը փրկելու և իրենց դիրքը, պաշտօնները ամրացնելու համար, զիջան, համաձայնեցան միջոց-

ների մէջ խորութիւն չը դնելու և որոշեցին, որ Բոզդիխանը ուխտի գնայ վիշապի երկիրը և վերջինից խնդրեն, եթէ մերժէ՝ ստիպեն, որ նա իւր կաթով, կարագով, մեղրով ու նեկտարով սնուցանէ ու բուժէ իրենց աստուածորդուն։

Բոզդիխանածինը զանազան նուէրներ պատրաստել տուեց, պատգամաւորների հետ ուղարկեց վիշապին և ասաց, որ նրան հաղորդեն, թէ ինքը բացի բարեկամական անկեղծ սէրը, ոչ մի ուրիշ նպատակ չունի և խնդրում է, որ վիշապը հաճի նորան իւր զաւակի հետ՝ որպէս ուխտաւորների, հիւր ընդունել։ Պատուիրեց որ յայտնեն, թէ իւր մանուկ զաւակը հիւանդ է, գիտնականները և բժիշկները խորհուրդ են տուել ուխտի գնալ և վիշապի երկրի օդով, ջրով, կաթնով, մեղրով, նեկտարով ու խորխով նրան սընուցանել, որ բժշկւի։

Աշխարհի սկզբից մինչև այս ժամանակ միայն զինւած, զրահաւորւած հետի և հեծելազօր գնդեր էին մտել վիշապի երկիրը և սկսել կոտորել, կողոպտել, աւերել, արիւն թափել և սուգ տարածել, մինչև վիշապի և նրա ապառաժների հետ բախւիլը, ջախջախւիլը և ջարդւիլը։ Իսկ սրանց համեստ և խոնարհ երևոյթից վիշապը մնաց շւարած, մանաւանդ որ խընդրակները հեզահոգու տարազ էին հագել և նուէրներով էին ներկայացել։ Անչափ հրապուրեց վիշապին Բոզդիխանածնի այցի նպատակը, որի անասելի գեղի և անպատմելի քնքշութեան համբաւը վաղ էր լսել։ Գեղանիների նկարագրութիւնները շատ էր լսել, երիտասարդական սիրոյ մասին շատ բան էին պատմել, բայց վիշապը սիրոյ գաղափար չէր կարողացել իւրացնել։ Այս այցը այնքան հետաքրքրեց նրան, որ անմիջապէս զանազան նուէրներ տուեց պատգամաւորներին, ընդունելով Բոզդիխանածնի առաջարկը և վերադարձրեց։ Յետոյ խնդրակներ ուղարկեց, որ գնան հրաւէր կարդան ուխտաւոր Բոզդիխանին և ուխտաւոր բոզդիխանածնին։

Այս անակնկալ մարդասէր հրաւէրը կասկածներ յարուց Բոզդիխանածնի և նրա խորհրդականների սրտում, որոնք երկիւղ էին կրում, ենթադրելով թէ մի գուցէ կանխապէս հէլլէն բժիշկը վիշապի հետ դաւ պատրաստած լինեն։ Դրա համար իսկոյն գնդանից հանել տուին բժշկին, ներկայացրին խորհրդին, ուր Բոզդիխանածինը ասաց.

—Խաւարածին, երդւում եմ Բոզդիխանի նւիրական գլխով, որ եթէ որև է դաւաճանութիւն բացւի, քեզ կը դատապարտեմ յաւիտենական տանջանքի։ Ասա, ինչի՞ց ստիպւած վիշապը ոչ միայն սիրով ընդունեց մեր առաջարկը, այլ մինչև անգամ պատւիրակներ ուղարկեց մեր ետևից։

—Բոզդիխանածինը շատ ապրի, պատասխանեց բժիշկը, եթէ թոյլ կը տաք և կը հաճիք ինձ լսել, համարձակւում եմ յայտնել, որ վիշապը արդէն գըրնում է ձեր ուռկանում։ Այժմ նազանի ժպիտով, քաղցր խօսքերով կարող էք նրան սարկացնել։

—Անդունդը, դժոխային սառնամանիքի անդունդը գլորել կը տամ քեզ, խաւարածին, եթէ դաւաճանես։ Եթէ խորհուրդներդ ինձ խաբեն, յոյսերդ երեսները շուռ տան, յաւիտենական տանջանքի կը դատապարտւես, առանց Գրողի երեսը տեսնելու։

Մահը, տաջանքը նշանակութիւն չունին, գերերջանկուհիդ, ես առանց տրտունջի պատրաստ եմ այդ բոլորը տանել այսօր իսկ։ Բայց եթէ իրականանան գուշակութիւններս։

—Քեզ կը բարձրացնեմ խորհրդականներիս դասը, խաւարածին։

—Միայն խորհրդականներիդ, նախարարներիդ շարքը, մրմնջաց հէլլէն բժիշկը հեռացող արքայամօր ետևից, յետոյ դանդաղութեամբ ետ դարձաւ, հառաչեց ու դիմեց իւր զնդանը։

Բողդիխանածինը հրաման տւեց, որ շուտով պատրաստեն կառքերը, վրանները, բեռնակիր երիվարները, ջորիները, գրաստներն ու ուղտերը, ապրանքատար սայլերն ու պատգարակները։ Ամբողջ ամիս պատրաստել էր տալիս այն նւէրները, որոնք հասցնելու էր վիշապին և նրա ճետերին։ Երբ ամեն բան կարգին էր, պատգամներից ժամանակ հարցրին, բարեյաջող բոպէին նստան դեսպակները, սենեկապանուհիները, աղախինները յատուկ ջարգեանները տեղաւորւեցան, խորհրդականները, նախարարները առանձին առանձին կառքեր բազմեցան, ճանապարհւեցին դէպի արևմուտք՝ վիշապի բնակավայրը։ Կալանաւոր հէլլէն բժշկի համար յատուկ պատգարակ էին պատրաստել և հետևում էր կարաւանին, թէև դեռ պաշտօնապէս չէր մտել պաշտօնականների, պալատական խորհրդականների դասը։

Երկու ամիս յետոյ կարաւանը մօտեցաւ վիշապի իշխանութեան սահմաններին, որտեղից Բողդիխանածնի կարապետը վիշապի խնդրակներից մէկի հետ առաջ անցան հիւրերի գալուստը աւետելու։ Վիշապն անհուն ուրախութիւնով լցւած հարազատներին ընդառաջ ուղարկեց ուխտաւորներին դիմաւորելու։ Անհաւոր բազմութիւնը մեծ շքով, անհուն հրճւանքով, թափօրներով, ծնծղաներով, երգիչներով, կաքաւիչներով, սրինգներով և յատուկ աւետաւոր մունետիկներով երկիր մտան Բողդիխանածինը, իւր

զաւակի հետ, բարձրացան ձորերից դէպի սարահարթը, բարձր լեռներից մէկի լանջին, վիշապի բնակավայրի դէմուդէմ վրանները կանգնեցրին։

Բողդիխանածինը բերած անհաշիւ նւէներով, բողդիխանի, նախարարների և խորհրդականների հետ ներկայացաւ վիշապին մեծ երկիւղով, խոնարհեցան, երկրպագեցին, համբուրեցին նրա ոտքի կոխած քարերն ու ապառաժները, ներկայացրին ընծաները, կատարեցին ուխտեր, քաղցր աղերսանքներ և զրոյցներ տեղի ունեցան, կաթով, կարագով, մեղրով ու նեկտարով մեծարւեցան, կազդուրւեցան և վերադարձան վրանները հանգստանալու։ Այստեղ ձորերում որսւած եղջերուի, շամբերում սպանւած կնճի մսերից առատ խորովածներ ու տապակւածներ էին պատրաստել, կարմրախայտ և գեղարքունի էին խաշել, որոնք մեծ ախորժակով կերան, ստամոքսները բեռնաւորւած ընկան թմրեցան։ Երբ արթնացան, այնքան սոված էին, որ իսկոյն կաթ ու կարագ, մեղր ու խորոված պահանջեցին։ Այնքան կուշտ ու կուռ ուտելուց յետոյ, երբ խմում էին սառնորակ ջրերը, իսկոյն ախորժակները բացւում, քաղց էին զգում։

Այսպէս շարունակեցին ամբողջ մի ամիս։ Ուտում, խմում, քնում, սթափւում, դարձեալ պահանջում էին։ Արդէն զգալի կերպով ուժեղացան, թարմացան, կազդուրւեցան, ոչ միայն առողջները, այլ նկատելի աստիճան կայտառեցաւ նոյնպէս հիւանդը՝ Բողդիխանը։ Աշխարհի երկրպագութեան սոյն կենդրոնակի այսպէս շուտ և արագ ապաքինումը անչափ ցնծման ու հրճւանքի առիթ դարձաւ ուխտաւորներին, մանաւանդ մօր սրտի համար։

Բայց այս հրճւանքն, ուրախութիւնը էժան չը նստեց Բողդիխանածնին, ներքին ցաւի ու վշտի ա-

ռարկայ դարձան վիշապի նրա վրա ուղղած հայեացք-
ները, արձակած հառաչանքները։ Վիշապը, որ կեան-
քում սիրոյ մասին գաղափար չէր ունեցել, կրակւել,
ամբողջ մարմնով զգացում էր դարձել։ Նրա հոգու
աչքերը բացւել էին, սթափւել էր դարևոր մռայլւած
վիճակից, անտարբեր չէր կարողացել տանել Բոդդի-
խանածնի ժպիտները, ակնարկներն ու նազանը։ Մը-
տերմական յարաբերութիւնը կամաց կամաց համա-
կրութեան ու անզուսպ սիրոյ էր փոխարկւել։ Օրից
օր բորբոքւում էին վիշապի կրքերը, նա կուրացել
էր Բոդդիխանածնի հայեացքների սլաքներից, ամբող-
ջապէս նւիրւել էր կոյր հրապուրանքներին։

Բոդդիխանածինը, որ համաձայն հէլլէն բժշկի
թելադրութեան և յորդորներին, պարտաւորւել էր,
միշտ ժպիտով, դրաւիչ խօսքերով և նազանի հայեաց-
քով դիմաւորել հիւրընկալին, միակ զաւակի ապա-
քինելու սիրուն և նպատակին հասնելու տենչանքով,
կանխազգում էր, որ կարող էր զարհուրելի փոթոր-
կի առիթ դառնալ և վտանգել ոչ միայն իւր գլուխը,
այլ նոյն իսկ անփոխարինելի զաւակը, ցեղն ու պե-
տութիւնը։ Թշւառ մայրը անճարացած խաղում էր
այդ դերը, կեղծում էր, զսպում էր կրքերը, որոնք
նրան յուսահատեցնելու աստիճանի ճնշել էին։ Նա
վարպետօրէն շփկնում էր, խնդում էր, ժպտում, ծի-
ծաղում, մինչև իսկ սիրախօսում, խրախուսում վի-
շապի սէրը, սրան խրում էր կոյր կրքի ովկիանը,
բաղդի անւին յանձնելով ապագան։ Սիրոյ խաղն այն-
տեղ հասաւ, որ մի օր վիշապը յարմար բոպէին թեր
պարզեց, ուզեց գրկել համբուրել Բոդդիխանածնին,
բայց խաւարածին բժշկի անակնկալ այցը ազատեց
արքայամօրը այդ անել վիճակից։ Վիշապը զայրու-
թից այնպէս գրգռւեց, այնպէս քրտնեց, այնքան գո-

լորշիներ բարձրացան նրանից, որ խակոյն մշուշով
պատեցին ձորերն ու լեռնալանջերը, որ էլ անհնար
էր. իրար տեսնելը և հիւրերը ձեռք ձեռքի տւած ո-
լոր մոլոր ճանապարհներով իջան և հազիւ կարողա-
ցան գտնել իրենց վրանները։

Նախարարների խորհուրդը ձանձրանալով այդ
վայրենի վայրերից և նկատելով Բոդդիխանի կազդու-
րումը, առաջարկեց վերադառնալ մայրաքաղաք, ուր
պետութեան ներքին ու արտաքին գործերը նրանց
էին սպասում։ Բոդդիխանածինը անչափ փափագում
էր ժամ առաջ հեռանալ այդ վտանգալի վայրից, իսկ
Բոդդիխանը յամառած չէր ուզում թողնել այն հողն
ու ջուրը, բերքն ու բարին, որոնք իրեն ազատել
էին մահւան ճիւաղային ժանիքներից։ Երբ աւագանին
մոլորւած հնար չէր գտնում աստւածորդուն համո-
զելու մայրաքաղաք վերադառնալու համար, Բոդդի-
խանածինը ժողովի կանչեց խաւարածնին և նրա
խորհուրդը հարցրեց։ Հէլլէն բժիշկը բոլոր պարագա-
ները լսելուց յետոյ ասաց.

—Ո՛վ Բոդդիխանածին, մի՞թէ պարզ չէ, որ
Աստւած է խօսում իր որդու բերանով և սրա կամքն
ու հրամանը սուրբ է բոլորիս համար։ Մի՞թէ չէ՞ք
լսել, որ աշխարհային ահաւոր ույժերը, բարբարոսնե-
րի արշաւախմբերը, հերոսները, քաջերը, դիւցազնե-
րըն ու աւարառուները, Ալէքսանդրի բանակները,
Հռոմի լէգէոնները իրենց զէնքերով, մեքենաներով
և հնարագիտութիւններով չեն կարողացել նւաճել
այս լեռները, չեն համարձակւել անցնել այս սարե-
րից, մտնել այս երկիրը։ Ներս մտնողներն էլ շու-
տով կուլ գնացել են կամ փախել են ահաւոր զո-
հերով և կամ ստրկացել են բնիկներին։ Առանց որևէ
կորուստի, առանց տանջանքի, առանց զոհողութեան

ընկաւ այս երկիրը ձեր ոտքի տակ և այժմ դուք ուզում էք թողնել, հեռանալ։ Մի՞թէ այս սքանչելի խրամները, ձորերը, հովիտները, դաշտերն ու սարահարթերը, անտառներն ու այգեստանները ձեզ չե՞ն հրապուրում։ Մի՞թէ այս անբաւ բերքերը, պէս-պէս ու անչափ որսերը, անմահական ջրերը, կենդանարար օդը, կենսատու նեկտարը չե՞ն գրգռում ձեր նախանձը։ Եթէ մայրաքաղաքում (տէր մի արասցէ) Բոդդիխանը նորից հազի, բարակցաւի մատնւի, իսկ վիշապը չցանկայ կրկին անգամ ձեզ հիւրընկալել, ու՞մ էք դիմելու, որ աստուածորդուն բժշկէ։ Այդ ինչ խորհուրդ է, որ ձեր ձեռքն ընկածը ձեր կամքով՝ ուզում էք յետ դարձնել։ Այն էլ աշխարհի մի այնպիսի կտորը, որտեղի օդն ու ջուրը այսպիսի հրաշքներ են կատարում, թոքեր են վերակենդանացնում։

—Բայց մի մոռանալ, օտարական, որ մենք հիւր մտանք այս երկիրը, ասաց մի մանդարին, ինչ օրէնքով գրաւենք մեր հիւրընկալի գոյքը։ Զէ՞ որ այդպիսի ընթացք հակառակ է երկնային պատգամներին։

—Մարդիկ աշխարհում ամէն տեղ հիւր են, ասաց ժպտալով խաւարածինը. իսկ այդ հիւրերը գրաւել, վայելում են աշխարհից որքան տեղ որ կարողացել են իւրացնել։ Այսօր մեր իշխանութեան տակն է ամբողջ Ասիան։ Ոչ ոք բնական օրէնքի ընթացքը չի կարող կտրել, իսկ գրաւածից ոչ ոք չէ ձեռք քաշել տիեզերքի գոյութեան ընթացքում։ Մանաւանդ այսպիսի ճոխ, առողջարար և հրաշալի երկրից ձեռք քաշելը ապուշութիւն կարող են համարել մեր ժառանգները և նախատել իրենց նախորդներին։ Չինական երկրի ծիւրած ու թոռոմած զինուորականներին եթէ եօթը տարին մի անգամ այս երկիրը օ-

դափոխութեան ուղարկենք, եթէ մեր զինուորների գնդերը տարին մի քանի ամիս այստեղ բնակուեն, նրանց ուժի առաջ կխոնարհի աշխարհը։

Այս բացատրութեան վրայ լռեցին նախարարները, գունատուեց Բոդդիխանածինը և անշշուկ ամէնքը ընկղմեցին խոր մտածութիւնների մէջ։ Քիչ յետոյ դարձեալ մի մանդարին խզեց այդ լռութիւնը և ասաց.

—Բայց մեր երկիրը, ժողովուրդը առանց պետի և կառավարիչների, կարող է շփոթութիւնների և աւերածութիւնների մատնուել, նախարարների և Բոդդիխանի դարձը անհրաժեշտ է։

—Այդ բոլորովին տարբեր խնդիր է, ասաց խաւարածինը, Դուք բոլորդ Բոդդիխանի հետ կերթաք, իսկ Բոդդիխանածինը մի քանի խորհրդականների հետ կմնայ, որ այստեղ հաստատէ իշխանութիւնը, զօրանոցներ շինէ, ամրոցներ ու բերդեր հաստատէ, ամրացնէ, նւաճէ սարերն ու ձորերը, գրաւէ այգիներն ու անտառները, ստրկացնէ բնիկներին։ Երբ բոլորը կատարէ, այն ժամանակ Բոդդիխանը երբ ցանկայ, կը կարողանայ գալ այստեղ, որպէս իր ոստայնը կամ ամառանոցը, նրա աստիճանաւորների դասը և խորհրդականները առատապէս կօգտուեն այս երկրի անհուն բարիքից, որքան որ ցանկան։

—Ո՛չ, խաւարածին, ո՛չ, երբեք չեմ կարող այս երկրում մնալ, ինձ համար դժւար է ասաց Բոդդիխանածինը։ Եթէ ես զգացումներիս և ջղերիս դէմ կուեմ, ստիպւեմ մնալ, գուցէ ծիւրութիւնը յետ գայ նոյնպէս իմ թոքերս, ես էլ հալումաշի ենթարկւեմ, ինձ էլ չի կարող օգնել այս երկրի օդն ու ջուրը, կաթն ու մեղրը։ Մանաւանդ ես զաւակիցս չեմ կարող անջատւիլ, երկնային պատգամներն ինձ պարտաւորե-

ցնում են միշտ Բողդիխանի շուրջը պտտել և հսկել։ Առանց ինձ Նրա մշտադարուն ժառանգութիւնը կարող է դժոխքի փոխարկուել և կործանուել։

—Ես ձեր սուրբ կամքին հակառակելու, փաստերդ հերքելու ոչ կոչումն ունիմ, ոչ էլ հնարաւորութիւն։ Նրանք այնպէս նուիրական, այնքան արդար են, որքան արևի պարզ լոյսը։ Բայց Բողդիխանի կեանքի փրկութիւնը, ցեղի յարատևութիւնը, այս երկրի բերքով ձեր զաւակի առողջութիւնը ապահովելու անհրաժեշտութիւնը, պետութիւնը ճոխացնելու, զօրքը զօրացնելու և չինական ազգաբնակութեան արիւնը թարմացնելու, ոսկորը վերակենդանացնելու հարցը ինձ պարտաւորեցնում է, որ ձեզ թախանձեմ, մնալ միաժամանակ, կարևորագոյն գործը կատարել, ապագան ապահովել և ապա յաղթանակով, ուրախ սրտով դառնալ մայրաքաղաք։ Վիշապի անթիւ շնորհները պիտի վերակենդանացնէ, պիտի վերածնեցնէ նախ ձեր զաւակին, ապա աւագանուն ու զօրքին, որոնց կեանքը թունաւորուած է, արիւնները ապականուած, ջղերը քայքայուած և ոսկորները փթած։ Ձեզանից է կախուած, ո՜վ Բողդիխանածին, կամ ձեր անձը վտանգի ենթարկելով փրկել ձեր զաւակը ու Նրա սեղանի փշրանքով ապրողների վոհմակը, և կամ անձերիդ ապահովութեան և հանգստութեան համար վտանգի ենթարկել Բողդիխանին և Նրա երկրպագուներին։ Շատ պարզ է, և դուք էլ համոզուած էք, որ եթէ հեռանաք, վիշապը պիտի վիրաւորուի, անարգանք համարէ ձեր ընթացքը, գուցէ և վրէժն էլ լուծէ։ Այժմ վճռեցէք, ինչպէս որ թելադրէ ձեր առողջ միտքը։

—Ո՜վ դժոխային ճիւաղ, այս ինչ մեքենաներ լարեցիր, այս ինչ թակարդ գլորեցիր ինձ։ Ոչ կարող

եմ դուրս գալ, ոչ էլ ոյժ ունեմ տոկալու։ Կեանքդ կթունաւորեմ, եթէ անմիջապէս հնարք չես գտնիլ ինձ վիշապի ճիրաններից փրկելու։

—Շուտով ձեր ոտքերի տակ կառնէք վիշապին, եթէ հետևէք խորհուրդներիս։ Մի քիչ համբերութիւն, մի քիչ խոհեմութիւն, մի քիչ ժպիտ, անուշ բառեր... և մի քիչ էլ խորամանկութիւն...

—Ոչ խաւարածին, ոչ, հրէշի ծնունդ, ես իմ նախկին վիճակս եմ ցանկանում, իմ անբիծ սիրտս ինձ դարձրու։

—Ուրեմն ինչի՞ ինձ լսեցիք, ինչի՞ բերիք ձեր որդին առողջացրիք այս երկրում։ Եթէ էլ չէք մտածում Նրա ապագան ապահովելու, վեր կացէք, գնացէք։ Էլ ես մեղք չունիմ, եթէ այս ձորերից դուրս չեկած, վիշապի վրէժխնդրութեան զոհ դառնաք։ Իմ դեղս օգնեց, բուժեց Բողդիխանը, մնացորդի մասին ո՞վ իրաւունք ունի ինձ մեղադրելու։

—Ոչ, Բողդիխանածին, ասաց մի մանդարին, այլևս ուշ է. մենք չպէտք է մտնէինք այս երկիրը, իսկ այժմ ձեռքից թողնել անարգանք և մեծ անպատւութիւն է։ Մանաւանդ որ հեռանալը վտանգ էլ է մեզ սպառնում։ Մենք Բողդիխանի հետ կերթանք, իսկ դուք հելլէն բժշկի հետ կմնաք, մինչև երկիրը կատարելապէս տիրելը և ժողովուրդը հպատակեցնելը։

—Ես ձեզ խօսք եմ տալիս, որ դեռ դուք մայրաքաղաք չհասած, վիշապից և նրա լեռնականներից հպատակութեան խոստում կորզեմ։

—Պէտք է լսել բժշկին, ձայն տուին նախարարները և նրանց կարաւանը պատրաստեց ճանապարհ ընկնելու։ Հետևեալ առաւօտ Բողդիխանը և նախարարները ներկայացան վիշապին, շնորհակալութիւն յայտնեցին և հրաժեշտի իրաւունք ստանալով, վե-

րադարձան իրենց երկիրը։ Իսկ բժիշկը, Բողդիխանածինը, սրա նաժիշտները, սենեկապանուհիները, ծառաներն ու խորհրդականները մնացին լեռներում իրենց վրանների տակ։ Հելլէն բժիշկը արդէն սկսել էր կառավարել այս լեռներում և Բողդիխանածինը ամեն մի քայլափոխը կատարում էր սրա խորհրդով։

—Վեհափառ, ասաց մի քանի օր յետոյ Բողդիխանածինը վիշապին, ես այնպէս կապւեցի ձեր երկրի օդին ու ջրին, բարիին ու բերքին, մանաւանդ ձեր սպասին, որ էլ չեմ կարողանում հրաժեշտ խնդրել և ձեր աչքից հեռանալ։ Այնպէս կաշկանդւեցի ձեր սիրով, որ առանց ձեր ներկայութեան ուրիշ տեղ ապրել չեմ կարող։ Բայց անտանելի է ինձ համար վրանների կեանքը, մանաւանդ որ շուտով ձմեռը կգայ և ես անսովոր եմ ձեր լեռների դաժան սառնամանիքին։ Խնդրեմ ինձ շնորհ անէք, թոյլ տաք, որ ապարքներ, պալատներ շինել տամ, բաղանիսներ և աղօթարաններ կառուցանեմ, ուր թէ ինքս հանգիստ ապրեմ և թէ կարողանամ ձեզ էլ հիւրասիրել։

—Երկիրը քո ոտքի տակն է, ժողովուրդն էլ սպասիդ կանգնած, արա, ինչ որ կամենում ես, ասաց վիշապը ծիծաղ դէմքով և հրճւանքով։

—Ասում են, թէ այստեղ զարհուրելի փոթորիկներ է բարձրանում, պէտք է հաստատուն շինութիւններ կառուցանել, որ հողմերը նրան չկործանեն։

—Ինչպէս որ կամենում ես, արգելք չի կարող լինել։

Բժշկի տւած ծրագրի համեմատ մի ահաւոր ամրոց և մէջը տասը հազար սրահանոց ահագին ապարանք շինել ուեց Բողդիխանածինը։ Կահեց, կահաւորեց Չինաստանից բերել տւած թանկագին զարդե-

րով և կարասիներով, սրահները լցրեց Չինաստանից հրաւիրած նաժիշտներով, աղախիններով, զօրքերով ու զօրականներով։ Ամեն անգամ երբ վիշապը գանգատներ էր լսում իր ենիկներից իրենց կրած տանջանքների, չարչարանքների մասին, այդ շինութիւնների վրայ բանւորների կրած տառապանքների համար, Բողդիխանածնից հարցնում էր, թէ ինչ է կառուցանում։

— Համբերեցէք, քիչ էլ սպասեցէք, շուտով ապարանքը վերջանայ, ապա ձեզ կհրաւիրեմ, կհիւրասիրեմ ասելով, խօսքի թելը կտրցնում էր Բողդիխանածինը և մի կերպ հեռանում էր դէպի իր շինւածքները։

Մի սքանչելի բըրի գագաթի քէօշքը դեռ չվերջացրած, բժիշկը մի ուրիշ ձորակում շինւելիք ծաղկանոցի հիմերն էր փորել տալիս. մի այլի ափերն ամրացնում, այնպէս, որ վիշապի հալածաններին, երկրի ենիկներին առաւօտից մինչև երեկոյ աշխատեցնում էին այդ անվերջ հիւսւածքների վրայ։ Եւ այս շինւածների աւարտումը տարիներ տևեց։

Խեղճ մշակները հանքերում քար էին կտրում, կոփում, մաքրում, սրբատաշում և թիկունքով բարձրացնում էին հանքերից լեռների լանջերը և այնտեղից շինութեան գլխին՝ մի քանի հարիւր ոտք սանդուխներ բարձրանալով։ Չինացի վարպետները կանգնած հրամայում էին, իսկ ենիկ խեղճ ժողովուրդը մօրակի երկիւղից սոսկացած բանում էին առաւօտից մինչև արևի մայր մտնելը։ Այս թշւառներն էին կիրը վառում, պատրաստում, աւազը խոր խոր ձորերից շալակով կրում շինութեան մօտ, անտառից տաշած էին կտրում, ձևում, շինում, յղկում, կեր-

տում և ներկում։ Ամենքն անմռունչ, անտրտունջ
վազում էին գործի, քրտնաթոր և վաստակած, շըն-
չասպառ և ուշակորոյս, կատարում էին լրիւ բոլոր
պատւէրները։ Որքա՜ն քարհաններ մնում էին իջած
հանքերի փլատակներում, որքան փայտահատներ
ճզմւում էին կուսական անտառներից կտրած և գլո-
րած գերանների տակ։ Քանի՜ քանի՜ մարդկանց հե-
դեղն է տարել, ջրից աւազ հանելիս, քանի՜ քանի՜
մշակներ խեղդւել էին կիրը հնոցից դուրս քաշելիս։
Այս բոլորը տեսնում էր, լսում էր, զգում էր վի-
շապը, բայց Բողդիխանածնի սիրուն, հարազատների
կրթութեան և զարգացման համար, միշտ համբերա-
տար ներող աչքով էր դիտում, մոռանում և մոռա-
ցնել էր տալիս, հաւատացած լինելով, որ այդ բոլոր
չարիքները պատահում էին անզգուշութիւնից և յոր-
դորում էր լռութեան տալ և խպառ մոռանալ։

Իսկ Բողդիխանածնի ծառայողները, սպասաւոր-
ներն ու վերակացուները օրից օր աւելացնում էին
թշւառ լեռնականների բեռը, հարկեր ու տուրքեր
էին սահմանում և ապրուստը դժւարացնում։ Բողդի-
խանածնի սպասաւորների կերակրի համար ամեն
մի ընիկ պարտաւոր էր օրական մի մի ձու, մի-մի
բաժակ կաթ, մի մի նկանակ և մի մի ճուտ մատա-
կարարել։ Կանայք պիտի նրանց համար բաճկոն ու
գուլպայ հիւսէին, օրիորդները պիտի կտաւ ու բեհեզ
գործէին, պառաւները լւացքները կատարէին. մի
խօսքով առաւօտից մինչև իրիկուն անդադրում պի-
տի աշխատէին, որ գոհացնէին այդ ձրիակեր հիւրե-
րին։ Դեռ այս հերիք չէ, ուժեղ տղամարդիկ ստիպ-
ւած էին այդ անկոչների պատգարակները ուսերին
դրած՝ առաւօտից մինչև իրիկուն վազել այս ձորից
այն սարը, այս բարձրավանդակից այն բլրակը։ Ան-

երես հիւրերը այդ բոլորից յետոյ, դարձեալ աջ ու
ձախ մորակում էին, անպայման երկրպագութիւն
էին պահանջում ընիկներից։

Վիշապը նկատում էր բայց այնպէս էր դիւթւել, որ
անզգայացել էր, իսկ ձրիակերները այնպէս էին լըր-
բացել, ընդդիմութիւն չնկատելով այնպէս էին հա-
մարձակւել, որ օրից օր դաժանանում էին։

Բողդիխանածինը խաւարածին բժշկի խորհրդով
ամեն տարի մի քանի անգամ գնում էր մայրաքա-
ղաք և վերադառնում։ Ամեն տարի Բողդիխանը հա-
զարաւոր խնկարկուներով գալիս էր ամարանոց,
թարմանում և երկրի հրաշալի բերքերը, քաղցրահամ
որսերը, աննման գործւածքները, ճոխ հարստութիւ-
նը, բովերի արծաթն ու ոսկին, հանքերի շողակն ու
յակինթը ժողովում տանում էր արքունիք՝ Ջինաս-
տան։

Թէև վիշապն էր այդ երկրի տէրը, թէև վիշա-
պին էին երկրպագում ընիկները, թէև նա էր իշ-
խում այդ լեռներում, բայց կարծես արդէն ընկճւած
հպատակի վիճակ լինէր նրա պետութիւնը և չինացի-
ները նրանց հետ վարւում էին իբրև իրենց ստրուկ-
ների հետ։ Եւ վիշապը դարձեալ ուշադրութիւն չէր
դարձնում, քանի որ սիրոյ հմայքով նրան հրապու-
րել, կուրացրել, թմրեցել էր Բողդիխանածինը։

Բողդիխանածինը ոչ միայն ձևական խնդիրնե-
րով տիրել էր վիշապի լեռները, բարձրաւանդակնե-
րը, ձորերն ու հովիտները, ոչ միայն իւրացրել էր
նրա երախից բղխած բերքն ու բարիքը, բոլոր ու
անտառը, այլ այնքան էր համարձակւել, որ նրան—
վիշապին էլ հրամաններ էր տալիս։ Եւ սիրոյ քողը
այնպէս էր պատել վիշապի աչքերին, որ նա ոչ տես-
նում էր ժողովրդի տառապանքը, ոչ լսում էր նրա

ողբն ու կոծը, ոչ զգում էր, թէ իր քիթը սանձել էր տւել Բոզդիխանածինը և նրա եղանակով պարում էր արջի նման։

Բոզդիխանածինը այսպէս վիշապին գերելուց յետոյ՝ նրա իշխանութիւնը իւրացնելուց չբաւականացած, մտածում էր մի կերպ բոլորովին ազատւել քծնելուց, սիրաքանելուց և անվերջ կեղծելուց։ Խաւարծինը, որ արդէն աւելի քան խորհրդականի և մտերմի դեր էր կատարում Բոզդիխանածնի մօտ, իր տիրուհու նպատակը իրագործելու համար, խորհուրդ տւեց, որ վերջինը վիշապին խնդրէ, աղերսէ, թողնել ամպերի և լեռների բարձունքը, իջնել բնակւիլ նոր շինել տւած ապարանքը։

—Վեհափառ, ասաց Բոզդիխանածինը դուրս գալով վիշապի առաջ, աղերսում եմ, որ ձեր խոստման համեմատ, բարեհաճէք գալ պալատ, որը ձեզ համար յատկապէս պատրաստել եմ տւել եօթ տարւան ընթացքում։ Աղաչում եմ ձեզ, արդէն եօթերորդ տարին լրացել է և դուք փոխելու էք ձեր շապիկը, հաճեցէք լսել ձեր աղախնի խնդիրը, թողէք վիշապային շապիկը, հագէք բոզդիխանական խալաթ, որպէսզի սենեկապանուհիներս և նաժիշտներս չսոսկան ձեր տեսքից։

Վիշապը ինչպէս միշտ զիջել, Բոզդիխանածնի և ոչ մի խնդիրը չէր մերժել, ընդունեց և այս առաջարկը։ Նա հանւեց վիշապի շապկից, զգեց ուսերին իշխանական ծիրանի, եկաւ և մեծ հանդիսով մտաւ պատրաստւած ապարանքը, որտեղ նրան ընդունելու համար մեծ պատրաստութիւն էր տեսնւած։ Այս հանդիսի համար Չինաստանից հրաւիրւած էին շատ մանդարիններ, խորհրդականներ, փոխարքաներ և նախարարներ, նոյն իսկ Բոզդիխանը, որոնք բազմազունդ զօրքերով, նւագածուներով, երգիչներով ու կաքաւիչներով ընդառաջ գնացին վիշապին, վերցրին նրան իրենց ուսերին պատգարակով, իջեցրին լեռնագագաթից և պալատ հասցնելուց յետոյ, սկսեցին մեծ տօն կատարել, ուրախութեան երգերով օրն անցկացնել։ Ամբողջ լեռները դղրդում էին ցնծութեան աղաղակներից, ձորերն ու ապառաժները արձագանք էին տալիս երաժշտութեան խմբերին, ժողովուրդը ոգեզմայլած աղաղակներ էր բարձրացնում, երգում էր, կաքաւում թռչկոտելով։

Այս ուրախ ժամերին միայն Խաւարածին բժիշկըն ու Բոզդիխանածինը սաստիկ մտատանջութեան մէջ էին։ Հեյլէն բժշկին դառը մտքերը և տխուր պատկերները այնպէս էին պաշարել, որ իր տիրուհու ոչ մի հարցը չէր կարողանում ըմբռնել և պատասխանել։ Բոզդիխանածինը աւելի էր շփոթւել նըկատելով իր խորհրդականի ցրւած վիճակը։ Ի՞նչպիսի միջոցների չդիմեց այս զոյգը, որ ցրւեն իրենց հոգին պատող տխրութեան քօղը, ծպտւեն ուրախութեան դիմակով, հնար չգտան, կեղծիքները իրենք իրենց մատնում էին։ Քանի՜ քանի՜ անգամ առանձնանալով իրար յորդոր և խրախուսանք կարդացին, որպէսզի շրջապատողներից չնկատւեն, բայց դժոխային կասկածներն ու տարակուսանքները չանհետացան։

Գիշերը, մէջ գիշերին հետևող սոսկալի խաւարի մէջ, երբ ամբողջ լեռներին տիրել էր հանդարտութիւնը և խաղաղութիւնը, երբ դադարել էին զրոյցն ու ծիծաղը, սրինգն ու թմբուկները, լռել էին երգիչների և զուսանների լեզուները, մրափում էին պարողներն ու կաքաւիչները և նիրհում էր ազգաբնակութիւնն ու հիւր եկած բազմութիւնը, վիշապը

տարածուած նրա համար պատրաստուած բազմոցի վրայ, մտածում էր այն բիւրաւոր անցքերի մասին, որոնք դարերի ընթացքում եկել, սահել, անցել էին իր աչքերի առաջից։

Այդ մռայլ մտքերը նրան յետ տարան դէպի հին հին դարերը, ներկայացան նրան իրեն վրայ յարձակւող հսկաները, քաջերը, դիւցազներն ու դևերը, նրանց նենգութիւնները, խորամանկութիւնները, պարտութիւնն ու կործանումը։ Այս ցանկալի անցքերին յաջորդող վայրկեանները այնքան նրան յուզեցին, որ նա տարածուած տեղը թմրեց, անզգայ մրափեց։

Այս րոպէին սպասողները երկու հակառակ դըռներից ներս մտան և թաթերի վրայ զգուշութեամբ քայլելով, մօտեցան վիշապին խաւարածինն ու Բողդիխանածինը և սկսեցին թախանձել, որ բարձրանայ, ծիրանին ու վերարկուն հանի, բեհեզի սպիտակ խալաթն հագնի, ածելւի և ապա անկողին մտնի քնելու։ Թէև վրդովւեց, բայց վիշապը Բողդիխանածնի այս առաջարկն էլ չմերժեց։

Հագաւ նրանց ներկայացրած ձիւնի նման ըսպիտակեղէնները և թոյլ տւեց, որ խաւարածինը սափրէ իր կզակն ու վիզը։ Մինչ հելլէն բժիշկը մեծ ճարտարութեամբ սրում էր ածելին և վարսում երբէք երկաթ—պողպատ չը տեսած վարսերը, յոգնած վիշապը աչքերը փակած ննջում էր բազմոցին նստած։ Բողդիխանածինը նշաններ էր տալիս, բայց խաւարածինը մեքենաբար վարսում էր։

Վերջապէս հելլէն բժիշկը առիթից օգտւելով, ածելին ուժեղ կերպով քաշեց վիշապի կոկորդի վըրայից, կտրեց ջղերն ու մկանները մինչև ողնաշա-

րը, որտեղից հեղեղի նման սկսեց հոսել կարմիր արիւնը։ Բողդիխանածինը ցանկանալով շուտով վերջ տալ վիշապի կեանքին, իւղած թոկը գցեց նրա գըլուխը և սկսեց դէպի յետ քաշել։

Յանկարծ կտրւած կոկորդից եօթը վիշապի գըլուխներ դուրս ցցւեցին, որոնց երախից ցայտած ծծումբն ու կրակը, կուպրն ու նաւթը անմիջապէս այրեց դաւաճաններին։ Բոլոր պաշտօնակատարները, զինւորներն ու զօրականները, սենեկապաններն ու նաժիշտները մի ժամւայ ընթացքում մոխիր դարձան։ Նոյն գիշերը որքան որ չինացի հիւրնկալւածներ կային, միևնոյն ժամում հրին ու կուպրին ճարակ դարձան, մի մարդ էլ չազատւեց, որ գոնէ բօթը Չինաստան հասցնէր։

Վիշապը սթափւեց, զզջաց իր ցոյց տւած անչափ հիւրասիրութիւնից ու մարդասիրութիւնից, թողեց տասը հազար սրահնոց ապարանքը, յետ դարձաւ դէպի իր լեռների գագաթը, բազմեց իր գահոյքի վրայ շարունակելու դարևոր իշխանութիւնը։ Ժողովուրդը ազատւեց Չինական զարհուրելի տանջանքներից, անհաշիւ գործերից, տուրքերից ու հարկերից, աշխատեց իր վաստակը ծախսել իր մանր ու խոշորի վրայ։

Իսկ Գաւռա-Գէտունները, որոնց սիրտը խոցոտել էր Բողդիխանածինը խաւարածնի մեքենայագործութիւններով, այդ հրէշային էգի չարագործութիւններից և անգթութիւններից զզւած, անջատւեցին իրենց կանանցից, կուսակրօնութեան ուխտ արին, մտան այն տասը հազարանոց ապարանքը մշտնջենական օրհներգութիւններ երգելու, ծնծղաներով, փողերով ու սրինգներով անվերջ նւագելով՝ արթուն և զգաստ պահելու վիշապին, որպէսզի անխափան

հսկէ իրենց երկրի սահմաններին։ Այն պալատը, ուր դաւադիրները չարագործութիւններ կատարելու վայր էին սահմանել, կուսակրօնների մշտնջենաւոր ապօթարանի վերածեցին, որպէսզի այդ տեղից հերթով դիտեն երկրի անցուդարձը, չը թողնեն, որ մի ուրիշ կին մօտենայ վիշապին, նրան հրապուրելով մեղկացնէ, թմրեցնէ և պատճառ դառնայ ժողովրդի սարկանալուն և չարաչար հարկերի ու տուգանքների տակ տանջուելուն։

Այդ կուսակրօնները վիշապին տեղապահ ընտրեցին իրենց միջից Դալայ-Լամային, որը որևէ օտարականի թոյլ չի տալիս մինչև անգամ ուխտի այցելութիւն կատարելու դէպի իր իշխանութեան յանձնուած սարահարթը գտնուած սրբութիւնները։



ԺԶ.

ԱԲԵՂԱԹՈՂ

6 փետր. 1909 թ. Էրզրում։

Վաղուց մեր քաղաքում էլ սահմանադրութիւն յայտարարուած է, բայց ըէակցիայի բռնակալական սարսափն այնքան խիստ է, որ մինչև օրս էլ ոչ ոք չի յանդգնում բողոքելու այն կապուտ—կողոպուտների դէմ, որոնք քաղցի, մերկութեան, ցրտի ու ջնջման են դատապարտել բոլորին։ Թէև պետական սահմանադրութեան, «ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան» յայտարարութիւնները խոշոր տառերով թուրքերէն, հայերէն և նոյնիսկ ֆրանսերէն լեզուներով կպցրած է Էրզրումի բոլոր փողոցներում, բայց ոչ ոք չի հաւատում այդ խաբուսիկ և փքուն խոստումներին, ուստի ամենքն էլ անշշուկ հետևում են իրենց գործին, մկների նման միշտ չորս կողմերը զննելով, որ չլինի թէ թագստից կատուն թռչի և իրենց պատառէ։

Այս վիճակի մէջ գտնուողները այսօր աբեղաթողի արտօնութիւններից օգտուելու առիթով, որոշեցին փորձ անել և իրենց բողոքներից մի չնչին մասը ներկայացնել նոր նշանակուած ազատամիտ վալի փաշային իրենց կրած զրկանքների աղերսագրերը, ուստի դիմեցին հետևեալ միջոցներին։

Հեծելազօր զօրանոցից դուրս քաշեցին մի լղար ձի, սուլթան Սուլէյմանի ժամանակներից մնացած—քրքրուած ու կարկտնուած թամքով ու սանձով և մի կաշի քսակում աղերսագիրը դնելով տարան ներկայացրին կուսակալին։ Վալին, երբ տեսաւ այդ ողորմելի կենդանուն, թէև սաստիկ զզւանքից պաչրացաւ, բայց յիշելով, որ աբեղաթողին ոչ ոքի չէր կարող պատժել, ստիպուած մօտեցաւ զառամած ձիուն և ճակատի քսակից դուրս քաշեց խնդրագիրը, որի կէսը արդէն երևում էր և շրջապատողներին ուրախացնելու համար կարդաց հետևեալ աղերսագիրը։

—«Ողորմած և գթառատ ազատասէր վալի փաշա և կարեկից վշտացեալների բէգ։ Ահա երեսուն տարի է, որ մեր զօրապետները չարաչար տանջում են մեզ և մեր անունով պետական գանձի հաշւից գնւած գարին ու առոյտը ուտեցնում են իրենց խանումներին և զաւակներին, իսկ զարմանի երեք քառորդը ուտում են մեր քաղցած վերակացուները. այնպիսի զրկանքների ենք դատապարտւած, որ մեր հալի մասին կարող էք գաղափար կազմել խնդրագիրը ներկայացնող յովտակի վիճակից, որը մի ժամանակ դղրդեցնում էր Օվայի դաշտը, իսկ այսօր մինչև իսկ սոյն աղերսագիրը կրելու ույժից զրկւած է։

Պետական գրաստներ»։

Այս աղերսագիրը կարդալուց յետոյ, թէև շատ կարմրեց նորահաստատ վալին, բայց փաստերն այնքան հիմնական էին և ժամանակն այնպիսի պոլիտիքական նրբութիւններ ունէր, որ չկարողացաւ պատժի ենթարկել ձիուն ու տառց,

—Դու գնա, ես այս խնդիրը կուղարկեմ Մէբուսան-Մէջլիսը, որ խիստ կարգադրութիւն անեն և

յետ խլեն ձեր գարին ու առոյտը զօրապետների խանումների ստամոքսից։

Յետոյ վալի փաշային ներկայացաւ մի լղար եզ, կաշին ոսկորին կպած, աչքերը փոսն ընկած և սրունքները շարժելու ույժից զուրկ։ Բայց եզը ըմբռնելով որ ներկայացնելիք խնդիրը ստամոքսին էր վերաբերում և իր ապագայ պաշարի խնդիրն էր լուծւելու, նա համարձակ խլխլած ատամների մէջ բռնած աղերսագիրը բառաչելով տւեց վալի փաշային։ Վալին չկարողացաւ ծիծաղը զսպել, քրքջալով առաւ եզի խնդիրը և սկսեց կարդալ։

—«Ո՜վ տառապեալների փրկիչ—փաշա։ Իմացել ենք, դուք Ստամբօլից ազատութիւն ու հաւասարութիւն էք բերել, որ քաղցածներին կերակրէք։ Այդ բանը մեզ համարձակութիւն տւեց ձեզ դիմելու և ոչ թէ ձեզանից ձրի խոտ ու գարման խնդրելու, այլ աղերսելու, որ Բելէդիէ մէջլիսի (քաղաքային վարչութեան) վերակացուների շրթունքները շղթայէք, որ մեր մսուրքներից չուտեն մեր բաժին խոտն ու գարմանը։ Մեզ օրական տասն և վեց ժամ տանջում են, աղբ են կրել տալիս, իսկ իրիկունները կերերս էլ խլում, մեզ սովամահի են ենթարկում։ Ուղիղ է, դուք սոված չէք մնացել, որ քաղցածների տանջանքի մասին կարողանաք գաղափար կազմել, բայց եթէ իսկապէս հաւասարութեան պաշտպան էք, խլեցէք վարիչների բաժնի կէսը, տւէք մեզ և կտեսնէք, թէ նրանք ինչ փոթորիկ կբարձրացնեն ձեր գլխին։

Ձեր լծկանները»։

—Գնա, ասաց վալին եզին, ես այսօր կկարգադրեմ, որ անշուշտ այլևս ձեր մսուրքներին չմօտենան վերակացուները։ Կը գրեմ Մէջլիսի-Մէբուսա-

նին, որ օրէնք դնեն, ձեր կերին մասնակցողների կողերը ջարդելու։

—Աղա, քաղցած եմ, ճուր երթամ, մանաւանդ որ հիմի էլ մեծ պաս է, ինձ պիտի յիսուն օր լոբի, կարթսլ ուտեցնեն։ Ճար արա, կողպանք զարկել տուր այս անիրաւ վերակացուների բերանին։ Ստամբոլից ինչ կուզես բերել տուր, այդ քո գործն է, բայց մեր կերը մի թողնիլ, որ ուտեն, թէ չէ քաղցից կմեռնենք, փողոցների աղբը կմնայ և խօլեր կը հրաւիրէ ձեր գլխին։

—Այսօր կուղարկեմ կողպանքները, ասաց վալին, դու գնա։

Երբ եզը յետ էր դառնում վալիի ապարանքից, վառարանը կաղնիկաղ նրան մօտեցաւ։ Վալին ապշեց, թէ ինչը կարող էր ստիպել այդ թիթեղի զանգուածին ապարանքում իրեն ներկայանալու։ Երբ թիթեղի վառարանը մօտեցաւ, վալին թեքուեց, դուռը բացեց և մէջը գտաւ հետևեալ աղերսագիրը։

—«Ո՜վ երկրիս ջերմութեան արեգակ։ Ճշմարիտ է, քո ներկայութիւնը ինքնստինքեան տաքացնում է սահմանադրութիւնով, ազատութիւնով և հաւասարութիւնով, ինչպէս մեր երկիրը, նոյնպէս և ամեն մի խրճիթ և հիւղ, բայց անիծեալ սառնամանիքը դարձեալ տանջում է զօրանոցների թշուառ բնիկներին, որոնք զրկուած են մօր ու կնոջ գրկից և հարազատների կուրծքը նրանց չի տաքացնում։ Այս պատճառով տարեկան հինգ հազար չէքի փայտ է որոշուած պետական գանձարանից, որ մենք պէտք է տաքացնենք զօրանոցները, բայց մեր փաշաները այդ վառելիքից երեք հազար չէքին իրենց ստամոքսն են տեղաւորում, որ չմրսեն, հազար չէքին տնտեսում են, որ նորից ծախեն կապալառուին, իսկ մնացած

մի հազար չէքիով քսան զօրանոցի երկու հարիւր վառարաններն են ուզում կշտացնել։ Ահա այս պատճառով զինուորները առաւօտից մինչև իրիկուն թքում են մեր երեսին, քացով զարկում, մեզ են հայհոյում։ Դուք որ արդարադատ էք և դրա համար խալիֆի Մէբուսան-Մէջլիսի շնորհներին էք արժանացել, ազատեցէք մեզ այս թուք ու մուրից, կամ մեզ վերադարձրէք արհեստանոց, կամ փաշաների որկորից դուրս քաշեցէք մեր փայտը, որ տաքանանք և ուրախացնենք մեզ շրջապատող զինուորներին։

Երկաթի սրտեր»։

—Գնացէք, վառարաններ, ասաց վալին, դուք էլ խաղաղեցէք, ես կգրեմ, մեքենայ կպահանջեմ, որ ձեր փայտը դուրս քաշեմ փաշաների ստամոքսից և ձեզ ազատեմ թքից ու մրից։

Վալին կարծում էր. թէ արդէն հանդէսը վերջացաւ, բայց յանկարծ գլոր-մլոր առաջ եկան պղինձները և եամաղները ահագին աղմուկ բարձրացնելով։ Ամենքը կարծում էին, որ այդ պղնձները ձիու, եզի և վառարանի ծնծաղներն էին կազմում, բայց նրանց վերադարձից յետոյ, երբ պղինձները շարունակեցին իրենց աղմուկը, վալին հրամայեց նրանց կափարիչները բանալ և մէջը տեսնել թէ ինչ կայ, Սպասաւորներից մէկը հետևեալ աղերսագիրը ներկայացրեց։

«Սահմանադրութեան աչք և հեռատեսութեան պսակ վալի—փաշա։ Ահա ութսուն երեք տարի է, որ մենք դարձել ենք նախատինքի և արհամարհանքի առարկայ։ Ամեն մի զինուոր մեզ նախատում է, ամեն մի սպայ մեր վրայ թքում է և ամեն մի տասնապետ մեզ կից է տալիս։ Պատճառը զօրապետներն ու գնդապետներն են, որոնք զինուորների բաժնի միսը,

խուղից, սոխ ու սխտորից, լոբիից ու բակլից, գետնա-
խնձորից ու տակից, բլղուրից ու բրնձից երեք մա-
սը կապալառուի կրպակից գողանում և զօրքին այն-
պիսի չնչին բաժին են թողնում, որ շատ իրաւացի
կերպով մեզ զինուորների նախատինքին են մատնել։
Քեզ զգուշացնում ենք, վալի փաշա, այս աւազա-
կութեան առաջն առ, հակառակ պարագային, մի մո-
ռանալ, որ մենք ենիչէրիների զաւակներ ենք, մեր
պղինձները կհանենք հրապարակ, այն ժամանակ վա՜յ
ձեզ։ Հերիք է քաղցած զինուորներին տանջէք և մեզ
էլ սև երես թողնէք նրանց մօտ։

Ամեն բան չափ ունի»։

Հին ենիչէրիների ղազան»։

Վալին խնդաց քթի տակ, բայց կեղծ ժպտով ա-
սաց.—Ես այսօր ևեթ կգրեմ Միութեան և Յառաջա-
դիմութեան կօմիտէին, որ բոլոր գնդապետներին և
զօրականներին աջ ձեռքերը կտրել տան, որ այլևս
գողութիւն չանեն։ Մէջլիսի-Մէբուսանին էլ կառա-
ջարկեմ, որ օրէնք սահմանեն պետական գանձարա-
նը կողոպտողների և զօրքերի բաժնին ձեռք մեկնող-
ների ձեռքերը կտրելու։ Գնացէք զաւակներս, համ-
բերեցէք, շուտով աւազակների ձեռքերը կտրելու
վճիռ կտայ Մէջլիսը։

—Լաւ, բայց այն ժամանակ ամբողջ երկրի ծա-
ռայողները ձախլիկ կմնան և աւելի գողութիւն կանեն։

—Այդ էլ ճիշտ է, ասաց փաշան ու հեռացաւ։

Ես էլ յօդուածս գրեցի, որ «Բիւզանդիոնին» ու-
ղարկեմ, բայց վախենալով, թէ մի գուցէ կրկին բէ-
ակցիան թագաւորէ և իմ գրիչս ու լեզուս կտրէ,
վճռեցի ուղարկել օտար աշխարհ, այնտեղ հրատարա-
կել և վտանգից ազատ մնալ։

ԺԷ.

ՁԱՒԱԿԸ

Արաքսի ափին, Ջուղա-
յի ձորում, Յովհաննայ սառ-
բատը, ճիշտ Նախավկայի վան-
քի դէմ ու դէմ, քաղաքի անտառացած հանդստարա-
նից դէպի արևմուտք տարածւում էր Նազար աղբօր
այգին, որի ցած պարիսպները ծածկւած էին անկո-
րիզ խաղողի որդերով։ Այգու մի ծայրին գտնւում
էր այգեգործի խրճիթը, որը ծառայում էր ինչպէս
ամառւան, նոյնպէս և ամեն եղանակի բնակութեան
համար։ Այգու մէջ կային ամեն տեսակ մրգատու
ծառեր, բայց նրանք բոլորն էլ տխուր էին. նկատե-
լի էր, որ աշխատաւորի թաթերը մաշւել, թևերը
յոգնել, մկանները թուլացել, էլ անունդ չէին մատա-
կարարում արմատներին։

Աշուն էր. ծառերի տերևները արդէն կարմրել,
դեղնել, չորցել ու թափւում էին։ Միրգը լիքն էր,
հասած ու կարմրած, բայց մեծ մասամբ թափւել
էին գետին և տապ արևի ազդեցութեան տակ թո-
ռոմում ու փտում էին։ Խաղողի շարան, գոյնզգոյն
ողկոյզներն անգամ ջերմութիւնից չորացել ու չամիչ
էին դարձել։

Հոսում էր Արաքսը մեծ սահանքով և անվերջ
մռնչիւններով։

Դատարկ էր բնակարանը, շունչ չկար այգում, և ոչ իսկ պահապան մի շուն, կամ մկան դահիճ. միայն այգու գետի կողմի անկիւնում, սաղարթաշատ Սև-ծառի հովանու տակ, յատակի վրայ փռւած մի անկողնում ննջում էր մի հիւանդ երիտասարդ։ Նա տքում էր, ծանրութեամբ շնչում և երբեմն երբեմն տխուր աչքերը պտտեցնում այգու շուրջը և յուգւած փակում էր։

Վերջապէս իրիկնադէմին այգի մտաւ մի հիւծւած, մաշւած բանւորուհի, որի հագուստին կպած բամբակի մանրուքը ցոյց էր տալիս, որ թշւառ կինը ամբողջ օրը կտաւ էր գործել, ուժասպառ տուն վերադարձել հիւանդ զաւակին տեսնելու և ոտքերը հանգստացնելու։ Նա ուղղակի դիմեց պառկած որդու կողմը, չոքեց նրա անկողնի եզրի վրայ, հանեց գոտուց մի լօշի մէջ փաթաթւած պատառ և ասաց.

—Զաւակս, քուֆթա էիր ուզում, ահա բերել եմ տաք-տաք պատառ, աչքերդ բաց, նստիր և կեր։

—Մայրիկ, հերիք ես քեզ տանջեցի, բաւական է, որքան իմ պատճառով դու քո անձը զրկանքների ենթարկեցիր։ Բաւական չէր, որ մանկութեանս ժամանակ կրծքովդ կերակրեցիր, բաւական չէր, որ մինչև տասնեհինգերորդ տարիդ օժիտդ ծախեցիր, ինձ դաստիարակեցիր, կրթեցիր և մարդու շարքը մտցրիր, ահա տասը տարի է, որ իմ անբուժելի խոցերի համար դատապարտւած ես օրական տասներկու ժամ Սինանենց գործարանում արիւնաքամ դառնալու, թէ ինչ է, հիւանդ զաւակիդ դարմանես և մնդես, Քո պատառդ որ ամէն օր, ահա տասը տարի է, շարունակ ինձ ես բերում, ախ՛ր չէ՞ որ դու էլ կմախքանում ես ինձ հետ...

—Բաւական է, զաւակս, մի վրդովւիր։ Ես քեզ

կեանք տւի, որ դու ինձ կեանք դառնաս։ Առանց քեզ ես կեանք չունիմ և մի օր էլ չեմ ապրիլ։ Իմ գոյութիւնը քո կեանքի ճրագի շուրջն է. եթէ քեզ վտանգ սպառնայ, ես կործանւած եմ։ Եթէ ինձ սիրում ես, եթէ իմ քսանըհինգ տարւան ջանքերը թանկ են քեզ համար, դու ապրիր, դու վերակենդանացիր, դու զւարթացիր, այն ժամանակ ես էլ կը բերկրիմ, ապա թէ ոչ... քեզ հետ ամէն տեղ, քեզ հետ ամէն զոհ... Մի պահ լռեցին մայրն ու որդին։

—Ա՜հ, մի բաժակ գինի. այս պատառդ առանց գինու չեմ կարող կուլ տալ, ասաց հիւանդը անկողնում նստելով։

Արդէն մութն էր, բայց անտես կինը առանց ճրագը վառելու, շտապեց զաւակին բաւականացնել։

—Այս րոպէիս, ասաց անդրդւելի մայրը, մտաւ խրճիթը, վերցրեց քարղանը և դիմեց դրացու բնակարանը, որ մուրայ և կատարէ հիւանդի ցանկութիւնը։

Բայց մօրից աւելի շուտ այգու ցած որմից ներս մտաւ մի բորենի, դննեց շուրջը, քննեց ամէն կողմ և յարձակւեց հիւանդի վրայ։ Ատամները կոկորդը խրելուն պէս շնչասպառ արաւ հիւանդին և քարշ տալով բարձրացրեց որմից ու տարաւ։

Տասն րոպէից ներս մտաւ մայրը։ Նա ապշեց, երբ զաւակից ոչ միայն պատասխան չստացաւ, այլ նրան չգտաւ։ Նա բորբոքւեց, երբ նկատեց անկողնի վրայ կարմիր ու տաք արիւնը. Նա խելագարւեց, երբ գննեց այն հետքը, որ թողել էր բորենին իր ճանկերով զաւակի կոկորդից հոսած արիւնից.

Մօր հեծկլտուքը, արտասուքն ու հառաչը ոչ ոք չլսեց, նրա ճիչերը բաղխւեցին ձորի ապառաժներին. Նա ցնորւած գնաց զաւակի արիւնի հետքերով և խելաբժուժ անձնատուր եղաւ Արաքսի ալիքի յորձանքներին։

ԺԸ.

ՀԱՅՐՈՒՐԱՑԸ

Ես այն ժամանակ տասներկու տարեկան էի և սովորում էի Ալէքսանդրապօլում։ Մեր ուսուցիչներից շատ յարգուած էր աշտարակցի Առաքել Յարութիւնեանը, որ սովորել էր ուսուցչական դպրանոցում և եղել էր Կ. Պօլիս, Եւրոպա։ Նա խօսում և գրում էր վեց լեզու, նա անցել էր բարձրագոյն կրթութիւն և գիտնականի համբաւ ունէր։

Առաքելը մի բարձրահասակ երիտասարդ էր, գրեթէ քսանըչորս տարեկան, վայելչակազմ, գեղեցիկ, քնքոյշ ընչացքով ու մազերով, ձիւնի նման սպիտակ մօրուքով և նուան պէս վարդավառ այտերով։ Նրա արտաքինը այնքան գրաւիչ էր, որ ոչ միայն ուսուցիչ ու վարժուհի նրան համակրանքով էին վերաբերւում, այլ մինչև անգամ քաղաքի ընչատէրերը և պաշտօնականները շուտ շուտ նրան հրաւիրում էին իրենց տները, և նա ամեն տեղ ընդունուած մարդ էր։ Առաքելը ամուրի էր և քաղաքի մէջ շատ աղջիկներ փափագում էին նրա հետ ամուսնանալ, քանի որ նա շատ լաւ ապագայ ունէր։ Ոչ միայն մեծ ռոճիկ էր ստանում, այլ հաւանական էր, որ շուտով նրան բարձր պաշտօններ էլ կը յանձնէին, քանի որ կարող մարդ էր։

Մեր պատմութիւնը տարեմտի օրերին էր։ Առաքելը Աշտարակից ստացել էր գինի, չաչի արաղ, ընկոյզ, խաղող և ուրիշ մրգեր, այդ պատճառով տուն էր հրաւիրել ինչպէս պաշտօնակիցներին, նոյնպէս և ընկերներին, որպէսզի մի լաւ քէֆ անեն։ Տասըքան հոգի բոլորուած ուրախութիւն էին անում, երգում, ուտում, խմում և մէջ ընդ մէջ նոյնիսկ պարում էին։ Այնտեղ կային նոյնպէս օրիորդներ ու տիկիններ, որոնք յատկապէս հրաւիրուած էին, որպէսզի խնճոյքը ուրախ անցնի և չափաւորութեան սահմանից չանցնեն։ Ուրախութիւնն անկեղծ էր, ամենքի էլ սրտերը բաց։ Ոչ մի միտում չկար, ամենքըն էլ տքնում էին խնդութեամբ և քաղցրութեամբ անցկացնել նոր տարւայ «Նոր օրը»։

Սեղանին բոլորուած ընկերները այնքան զգւում էին ձևականութիւններից, որ ոչ միայն իրար սուկական անունով էին կանչում, այլ մինչև անգամ յոգնակի չէին խօսում։ Ոչ միայն զգացածները գեղուն խօսքերով իրար արտայայտում էին, այլ հարցերին պատասխանելու համար մտածելու ժամանակ չէին կորցնում, ծանր և վիրաւորական ոչ մի խօսք չէր թռչում ոչ ոքի բերանից, իսկ անվերջ սրախօսութիւնները միայն ընդհանուր ցնծութիւն էր առաջացնում։

Սեղանի վրայ շարած-սարքած էր ամեն տեսակ ուտելիք· մէջ ընդ մէջ ամեն ժամին բերում էին նոյնպէս որևէ տաք կերակուր, որ ընկերները իրար ձեռքից խլէ-խլէ քաշում լափում էին։ Այնքան կըշտացել էին, որ ոչ ոք ուտելու կարիք չէր զգում, բայց իրար կատակելու և ախորժակները գրգռելու համար քաշքշում, փախցնում էին իրարից, որ աւելի համեղանան պատառները։ Այսպէս սկսել էին քէֆ անել մեր ջահէլները առաւօտեան ժամը տասնմէկից և ժամի չորսին դեռ տեղերից չէին էլ ուզում

շարժւել։ Առաւօտ վաղ պաշտօնական այցելութիւնները տւել էին, իսկ ամբողջ օրը վճռել էին խնդալ, որ ամբողջ տարին օրերը ուրախութեամբ անցկացնեն։

Իրիկնադէմին՝ զանգերի ժամանակ Աշտարակի մի գիւղացի ձիու առաջն ընկած և մի պառաւ էլ ձիուն նստած ճօճալով եկան Ալէքսանդրապօլ, փողոցները չափչփելով, հարցնելով հասան Առաքել վարժապետ Յարութիւնեանի դուռը։ Դեռ պառաւին ձիուց չիջեցրած, ձիապանը ձայն տւեց, դուռը թակեց և սպասեց, որ հարցնի, թէ սխալ չի եկել։ Նրա ձայնի վրայ դուրս եկաւ Առաքելի խոհարարը, որ նոյնպէս աշտարակցի էր և տեսնելով նրանց ասաց.

—Հա՜յ, դու բարով եկար քեռի, հազար բարի, այս քեռակնոջն է՞լ ես բերել։

—Հա, քեզ մատաղ, Սաքօ, ասաց ձիապանը,— արի ինձ օգնիր ու քեռակնոջդ վէր բերենք։

Իջեցրին պառաւին համեստ ձիու վրայից, որը տորտոզալով մտաւ գաւիթը։ Ապա ձիու վրայից իջեցրին դօշակը, վերմակը, բարձը, որոնց մէջ փափուկ նստել էր պառաւը։ Իջեցրին նոյնպէս երկու մեծ կողովներ, որոնք լիքն էին չրով, չամչով, չոր մրգերով և քեօմայով (սուջուղ), որը պատրաստել էր պառաւը իր ձեռքով, յատուկ խնամքով՝ Առաքելի համար։ Երբ ամեն բան իջեցրին տարան գաւիթը, ձիապանն ասաց.

—Սաքօ, ես տանեմ ձին քարւանսարայում ջրբեմ, գարի տամ, ախոռը կապեմ, ապա կգամ։

Սրանց բարձրացրած աղմուկ—շփոթից դուրս եկան հիւրերը, տեսնելու թէ ինչ էր պատահել։ Բայց հիւրերին կանխել էր ինքը՝ Առաքելը, որ ճանապարհորդներին նկատելուն պէս ասաց.

—Տար բոլորին խոհանոց։

Իսկ դառնալով հիւրերին ասաց.

—Գնանք, շարունակենք մեր ուրախութիւնը։

Օրիորդներից մէկը նկատելով Առաքելի յուզմունքը՝ ասաց.

—Այդ ինչ կին է, այն մարդը ո՞վ է։

—Մեր ծառան ու իր կինն է։ Հայրս ինձ բան ու ման է ուղարկել, երևի ծառան էլ իր կնոջը «Եօթը-վէրք» ուխտ բերած կլինի։

—Տեսնես հայրդ քեզ էլի ինչ է ուղարկել։

—Գնանք ներս, ուրախութիւններս շարունակենք, ինչ էլ որ բերած լինի, առանց ձեզ չեմ ուտիլ։

Ընկերակիցները ներս մտան շարունակելու իրենց ուրախութիւնը, իսկ Սաքօն խոհանոցի թախտի վրայ տեղ պատրաստեց, որպէսզի ճանապարհին յոգնած կինը քիչ հանգստանայ։ Թէև Սաքօն անընդհատ սեղանատուն էր մտնում հիւրերի պահանջները բաւարարելու, խոհանոցում կերակուր էր պատրաստում քէֆ անողներին սիրաշահելու համար, բայց և այնպէս չմոռացաւ պառաւին էլ հանգստացնել, տեղաւորել։ Երբ պառաւը նստեց, ասաց.

—Տղայ, Սաքօ, էդ աղէդ մի օթա՞ղ ունի, որ ինձ խոհանոցում տեղաւորեցիք։

—Քեռակին, խի մի օթաղ պիտի ունենայ, հրէս չորս-հինգ օթաղներ ունի։ Թող էս զօնաղները գնան, այն ժամանակ գնայ ներս, լէն-բօլ նստիր, պառկիր։

—Ես նրա զօնաղներին լայեղ չե՞մ, որ ինձ էս ճենճահոտի մէջ թողեց, թէ հագիս շորերը խաս ու ղումաշ չէր, որ ես նրանց հաւասարւէի։

—Քեռակին, ինչի՞ ես բարկանում, այսօր տօն է, առաւօտից քէֆ են անում ու հիմի կվերջացնեն իրանց ուրախութիւնը։ Երբ ամեն մարդ կգնայ իր

տունը, դուն էլ ներս կմանես մի օթաղը։

—Մեծ մեծ մարդի՞կ են ղոնաղները, ղեներա՞լ են։

—Աւելի մեծ, աւելի մեծ...

Պառաւը շրթունքները փակեց. նա սկզբում սաստիկ զայրացաւ, որ իրեն ներս չտարաւ որդին, բայց երբ լսեց, որ հիւրերը «ղեներալից» էլ մեծ մարդիկ են, նա լռեց, ուզեց համբերել մինչև դրանց հեռանալը։ Բայց քիչ մտածելուց յետոյ, ուզեց այդ մեծամեծներին իր գործով հետաքրքրել մինչև ամուսնու վերադարձը։ Նա ոտքի ելաւ, բացեց քթոցներից մէկի բերանը, միջից կապոցները քանդեց և ասաց խոհարարին։

—Սաքօ մի մեծ աման բեր, այս սուջուղը տար ղեներալներին, թող համը տեսնեն։

Սաքօն իսկոյն սկուտեղը տւեց։ Պառաւը լիքը սուջուղ լցրեց և տւեց, որ ներս տանի։ Թէև Առաքելը զայրացաւ, որ Սաքօն առանց իր յատուկ հրամանին, յանդգնել էր պառաւի թորմշած մաներով չինած սուջուղը ներս տանել, բայց բարեկամների ներկայութեանը չէր կարողացել բան խօսել։ Մանաւանդ հիւրերը այնպէս էին վրայ տւել ու խըլշտել այդ բոլորը, որ Առաքելը հնարաւորութիւն անգամ չունեցաւ նրանց ցանկութեան հակառակ վարւել։

Հիւրերը ներս տարւած սուջուղն ուտելուց յետոյ, Առաքելից պահանջել էին, որ մի պնակ էլ ներս բերել տայ։ Յայտնի բան է, նրանց խնդիրը չէր կարող մերժել և Սաքօն երկրորդ անգամ սկուտակը լցրած ներս էր տարել։

Մինչ այդ՝ Առաքելը կորցրել էր իր խաղաղութիւնն ու զւարթութիւնը, նա մռայլւած անվերջ ներս ու դուրս էր անում, ինչ որ ներքին փոթորիկ նրան յուզում էր։ Այս պարագան նկատել էին ըն-

կերները, բայց ենթադրելով թէ նա իրանց շահելու համար է ելումուտ կատարում, նրանք այնքան էլ անհանգիստ չէին լինում։

Այս միջոցին աշտարակցին իր ձին քարւանսարայում կապելով վերադարձաւ տուն։ Երբ ուզում էր ներս մտնել, գաւթում դիմաւորեց Առաքելն ու ասաց.

—Այդ ինչ կեղտոտ ու պատառոտած շորերով ես եկել, մի՞թէ չէիր կարող վրադ-գլուխդ շտկել և այնպէս գալ։ Ի՞նչ գաղափար կը կազմեն հիւրերս ձեզ տեսնելով։ Ինչի՞ ինձ խայտառակում ես քո այդ ցնցոտիներով։ Ոչ ոքի չասես, թէ դու իմ հայրն ես, ասա որ հօրս ծառան ես, հասկացա՞ր...

—Տօ, դու փչամամս ոչ, ես քեզ դրա համա՞ր մեծացրի, որ այսօր ինձ ուրանաս, ասաց գոռալով թշւառ ծերուկը.—Տօ, ես դրա համա՞ր ուսում տւի, որ իմ որդին լինելդ ամօթ համարես։ Տօ, ես ցնցոտիներով ման եկայ, տանջւեցի, դողացի, դիմացայ, կնոջս և միւս զաւակներիս զրկեցի, որ քեզ ուսման տամ, բախտի հասցնեմ ու դու, դու, ապերախտ, այսօր ուրանո՞ւս։ Տօ, դեռ այսօր իմ դատածս գիտես, ուտես, իմ քրտինքով ձեռք բերած փողով պաշտօնազգեստ գնես ու հագնես և բարեկամներիդ մօտ ինձ հօրդ մշակը յայտարարե՞ս։ Տօ, քո մայրդ կարօտիդ չդիմանալով, զահմարի ամսին՝ բքին, բորանին ճանապարհ ընկաւ, Աշտարակից եկաւ գրկելու, համբուրելու, կարօտն առնելու, ու դու, ապերախտ, նրան թողել ես խոհանոցի ճենճերի մէջ, կուշտն էլ չես գնացել, չես համբուրել ձեռքը, դեռ յանդգնում ես նրա բերած բարին ուտել և ուտեցնել հիւրերի՞դ...

Լսեցէք հիւրեր, ղօնաղներ, լսեցէք ազնիւ որդուս, որ ամաչում է ինձ նման մի աշխատաւոր գիւղացու որդին լինելուց. ինձ յորդորում է, որ ես էլ իր նման

կեղծեմ և ուրանամ, թէ նա որդիս չէ, այլ իմ «աղայիս որդին» է։

Այս միջոցին արդէն բոլոր հիւրերը դուրս էին եկել և լսում էին ապուշ կտրած յուզուած ու բորբոքուած հօրը, որ բոլոր ուժով աղաղակում էր.

—Ահա ձեր ազնիւ, անկեղծ ու կրթուած բարեկամը, դրացիներ, եօթը լեզու խօսել գիտէ, եօթը լեզուով գրում է, ամսական 77 րուբլի փող է ստանում և գիղի-պիղիներով կուրծքը զարդարել է, դիպլոմները սենեակի պատերից կախել է, իսկ յոգնած ու երկու օրւայ ճանապարհին տանջուած մօրը ջուր խոհանոցումն է թողել։ Ինչի՞, գիտէ՞ք ինչի, բարեկամներ, գիտէ՞ք ինչ պատճառով, դրացիներ.—Նրա համար, որ հայրը նրա մօրը չի հագցրել, չի կապցրել, գլխին շլեապա չի դրել, ոտքերին Պարիզի կօշիկ չի հագցրել, վրան, գլուխը չի զարդարել մօդայով։ Այո, եթէ ես իմ փողս փոխանակ դրա վրայ ծախսելու, դրա վրայ վատնելու, դրան ուսում տալու համար տանջւելու,—ինքս ուտէի, կնոջս ուտեցնէի, ինքս հագնուէի, կնոջս հագցնէի, այն ժամանակ նա էլ չէր ամաչիլ իմ որդիս լինելուց, էլ չէր ուրանալ իր ծնունդը։ Պառաւ, վեր կաց, վեր կաց, էլ մեզ չի սազ գալ այս «մեծ աղայի» տունն ապրել, ամօթ է մեզ, մենք նրան չենք յարմարւիլ, վեր կաց գնանք գիշերենք քարւանսարայում և առաւօտ վաղ դառնանք մեր գործին։ Մի լաւ, պառաւ, մի արտասւիր, մեղքն իմս էր, ես եմ լալու, որ այսպիսի որդի եմ հասցրել։ Կարօտել էիր, երանի թէ երեսը չտեսնէիր։ Միշտ երազէիր, որ մարդամիջի զաւակ ունես։

Եւ աշտարակցին բռնեց իր պառաւի ձեռքը և առանց որդու երեսին նայելու թողին ու գնացին։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ՀՍՍՌ Арм.ССР им. А. Мясникяна

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՉՔԻ ԸՆԿՆՈՂ

Ուսումնասիրութիւններ տպագրուած այլ եւ այլ հանդէսներում եւ լրագրներում

Ա. Պ ա տ մ ա կ ա ն

1. Ո՞վ է Իսլամի խալիֆը Մշակ 1895 թ. № 110—119
2. Օսմանեան պետ. 600-ամեակը Մշակ 1896 № 31
3. Հաւթւան. Մշակ 1897 № 37—38
4. Պարսկաստանի քրդերը. Մշակ 1899 № 212—221
5. Իսլամ և ռէֆորմ. Տարազ 1898 № 2—16
6. Կալւածատիր. հարկ. Պարսկ. Գաղ. 1903 № 1—10
7. Հալածանք բաբիզմի դէմ. Տարազ 1903 № 25—32
8. Իմամաթ շիա կղերը » 1904 № 2—18
9. Թաղւխաթ » 1905 № 29
10. Բաբիզմ և Բէհայիզմ. Լումայ № 3—8
11. Հողատիրութիւնը Կովկասում. Ալէքսանդրապոլ 1906
12. Ռայա—քրիստ. վիճ. Իսլամի իշխ. մէջ. Ալէքս. 1906
13. Քսան տարի յետոյ. Սուրհանդակ 1909 №
14. Ղօշա-Վանք. Լումայ 1909 № —
15. Տեկոր Արևելեան 1909 № 37
16. ТУРЕЦКАЯ КОНСТИТУЦІЯ Рус. Мысль 1908 № 8 Младотурецкое движеніе и возникновеніе Конституціи Отоман. Имперіи.
17. Алы-алахиты — Александрополь 1909
18. Энджуманы-Тербіетъ, Новыя политическія теченія въ Персіи, „С. Петербургскія Вѣд." № 1 1911 г.

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԾԱԽՒՈՒՄ ԵՆ

ՎԻՊԱԿԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

1.	**ՊԱՏԿԵՐՆԵՐ** *Թիւրքահայերի կեանքից*	1 ր. —
2.	**ՎԻՒՃԵՆԱՑԻ** *Գաղտնիքը Օսման. սահմանադր.*	1 ր. —
3.	**ԸԼՄԱՍՏ** *Բարձր Հայոց կեանքից*	1 ր. —
4.	» *հ. բ.* » »	1 ր. —
5.	**ՋԱՒԱՀԻՐ** *վերջին* 1877—8 *թ. պատերազմից*	1 ր. —
6.	**ՎԻՊԱԿՆԵՐ** *Հայ երիտասարդ. կեանքից*	1 ր. —
7.	**ԲԺԺԱԾՆԵՐ** *Թրքահայերի կեանքից Բ. հատոր*	1 ր. —
8.	**ԿԱՐԵԼԻ՞ Է ՍԻՐԵԼ** *Հայկական պատմ. կեանքից*	1 ր. —
9.	**ՌՈՒԱՍՊԷԼՆԵՐ** » » »	1 ր. —
10.	**ԳԱՏՈՒՀԱՍՆԵՐ** *Պարսկաստանի կեանքից*	1 ր. —

Ընտիր թղթի վրայ հատորը 2 ռուբ.

ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ *Թիւրքահայերի կեանքից*	1 ր. —
ՔՈՒ ԵՂԻԿ » »	— 30 կ.
ՑԽՆՈՑ » »	— 30 կ.
ԲԻՐՑԱՅԻ ԲՈՒԹՔԵԼԸ » »	— 25 կ.
ԺԱՌԱՆԳՆԵՐ » »	— 30 կ.
ԹՈՒԼՈՒՄԲԱՋԻՆԵՐ » »	— 10 կ.
ԳԻՄԱՐՆԵՐ *Երգիծական արկածներ*	— 50 կ.

Դրամատիկական եւ չափական

ՑՈՒՑԱՆ *Թիւրքահայերի կեանքից*	1 ր. —
ՍԱՐՐԱՖ » »	— 30 կ.

Ուսումնասիրութիւններ

ԽԻԼԱՖԱԹ	— 50 կ.
ԻՄԱՄԱԹ	1 ր. —
ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ	— 10 կ.
Мамед-Али Шахъ Движ. въ Персіи	1 р. —
Рахимъ-ханъ » »	— 20 կ.
Имаматъ Религіозное изслѣд.	1 ր. —
Бабиты и Бехаиты	— 60 կ.

Դիմել Александрополь Атрпету *և կամ* Atrpet—Alexandopol—Rossie—Gaucase.

ՀՀ Ազգային գրադարան
NL0322848

21164